

Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐԻԻԵՍՏԻ

ՅԻՍՆԱՄԵԱԿ

Կ. ՏԱՐԻ, ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ 1965, ԹԻԻ 4 - 5

digitised by A.R.A.R.@

**باکین**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اربن كارنيك قزاجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Ք Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՐՔԻ ՆԱԲԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ՆԱԲԱԳԻՐՆԵՐ  
 ԵՂ. ՊՕՅԱԾԵԱՆ, Պ. ՍԱՍՊԵԱՆ

ՆԱԲԱԳՐՈՒԹՅԱՆ  
 ԱՆՂԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԳ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Վ. ՅԵՍԱԿԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԵՏ  
 ED. BOYADJIAN  
 B. P. 1153, BEYROUTH - LIBAN  
 Հեռագրային թիվ 252786/14

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Կ. ՍԱՍՈՒՆԻ
  - Վ. ՕՇԱԿԱՆ
  - Մ. ԻՇԽԱՆ
  - ԵԳ. ՊՕՅԱԾԵԱՆ
  - ԱՐՄԻՆԷ
  - Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
  - Գ. ԹԱԳԻՈՐԵԱՆ
  - Պ. ՍՆԱՊԵԱՆ
  - Յ. ԳԵՂԱՐԳ
  - Տ. ՈՍԿՈՒՆԻ
  - Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
  - ՀԱՄԱՍՏԵՂ
  - Ա. ՀԱՅԿԱԶ
  - Ն. ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ
  - Ս. ՍԱՀԱԿԵԱՆ
  - Լ. ԳԱՐՄԷՆ
  - ԵԳ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
  - ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ
  - Բ. Վ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ
  - Բ. ԹԱՇԵԱՆ
  - Ե. ՄԵԼԻԿԵԱՆԻ ԿԱԶՄԱՆ
  - ՎԵՐԶԻՆ ԷՋԸ
- Արտատպումներ հղած են  
 Ասիական գրագիտություն

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Դ. ՅԱՐԻ, ԽԻԻ 4-5

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ 1965

ՊԵՐՈՒՄ

### Յ Ի Ս Ն Ա Մ Ե Ա Կ

Գիտենք, որ թեթի և զբոյ բացառիկներէն անդին եղաւ ևւ ճակատա-  
դրուած է անդին բլլալու աւանորութիւններու այդ զօտիբը, շորս ասրիներու  
էր զա՛ր մը աւելորութեամբ:

Եւ գիտենք, դիտցանք մանաւանդ այդ օրերէն սազին, յիսուն ասրիներու  
ամէնօրեայ դժնշակ դիտութեամբ մը դիտցանք՝

Որ աւերածի ու մահուան գոյներուն պատրաստութեան համար զկայ թե-  
րեւ երկու ազգ, այլ կայ մէկ ու միակ ազգ մը, - ուրիշներուն մահ ևւ աւե-  
րակ բաշխող թուրքը, որ մնաց միշտ՝

Արեան սնոթին ևւ խաւարի ծառան:

❦

1915, Ապրիլ 24: 1965, Ապրիլ 24:

Ամբողջ հայ գրականութիւնը սուգի մէջ է Յիւնամահի սո օրերուն:

Ու ամբողջ հայ գրականութեան անունով շեւղինք էր պաշտամունքի մամը  
էր վառէ, օգնիչիւով յիատակը ցեղին բիւրաւոր նահատակներուն:

Մէկուկէս միտն նահատակներու անհուն վկայարանին մէջ հայ զբաղ-  
նութիւնը էր անկիւնը ունի, յաւերածին նուիրակա՛ն անկիւն, ցանի սր այդ  
անկիւնէն սկսաւ թշնամին էր սպանդներուն ամէնէն գոթառայինը: Այսպէս—

Պղծմանքի ձայներուն բոլորովին անմանթ, կատարելապէս սանկի ևւ  
ուրեմն կատարելապէս զազան՝ ան ոպաննել ուղեց ամբողջ ցեղ մը, սիտելով ս-  
նոր իմացական ընտրանիէն, երբ այդ ընտրանիին գերընտիրները՝ ազգային մեծ  
յոյսերու խորհրդաւոր ցայլալոյսի մը մէջէն դիւցապետիէն էր քալէին դէպի խո-  
րունկները Հայութեան, դէպի սէրուր ցեղին՝ -

Հոյսին ևւ Գեղեցկութեան ոպասարկու:

Յարգանք ևւ պաշտամունք՝ անոց նուիրական յիշատակին:

Կ. ԱՍՏՈՒՆԻ

*Սեղապրամարտը*  
*ՍԵՐՈՒՆԴԸ*

Ազատութեան յարձակումն հետ Ազատամարտը հայկական լեռներէն փոխադրուեցաւ Պոլիս:

Սահմանադրութեան շրջանը, որ անակնկալ երեսոյք մը եղաւ 1908 Յուլիսին, սուլթանական երեսուն տարիներու բռնակալութեան օրերէն իտեք, գետնատարած եւ ստրկացած ժողովուրդը ռուքի կը հանէր ազատութեան խանդավառութեամբ: Ոչ մէկ տեղ թերեւս այնքան քաղցր չէ հնչած ազատութիւն բառը, որքան արձագանգ գտաւ ան, կարմիր Սուլթանի տիրապետութեան տակ տուայտող ամբողջ երկրամասին մէջ:

Որքան բուռն ու արիւնատ եղած էր բռնակալութեան լուծը, նայնքան խանդավառ եղաւ ազատութեան պռոթկումը:

Ազատութեան շղթայագործումը տարեբային բնոյք մը ստացաւ մէկ քանի օրուան ընթացքին, ու բազմութիւնները առանց դասակարգի խտրութեան բեմ նետուեցան իրենց ազատութիւնը պռապաւ աշխարհին, անդինական աշխարհէն վերադարձողի մը, անյասալի մահէ մը յետոյ յարութիւն առած մարդու հրեւումնալով. բեմերը ողորուեցան ազատութիւն, արդարութիւն եւ եղբայրութիւն քաղցող նշանաբաններով:

Բեմի վրայ էին Թուրքը, Հայը, Յոյնը, Արաբը, Մակեդոնացին, Եղբայրացած ազատութեան գիւնուութեամբ: Բեմերու վրայ կ'երեւէին գիւնուբակներ, Հայ Յեղափոխականը, կրօնական մուսուլմաններն ենթակայացուցիչ շէյխերն ու մոլլաները, գրագէտն ու մտաւարականը, բանտերէն եւ շղթաներէն ազատուածները, որոնք սահմանադրութեան այս իրականութիւնը շնորհող առաջամարտիկներն էին եւ կը յարգուէին բարեկէ: Նոյն խանդավառութեամբ բնութեան գիրկը նետուած էին գիւղացիները, բանուորները ու արհեստաւորները, նոր կեանքի մը խանդավառութիւնը ապրելու համար:

Այս ընդհանուր խանդավառութիւնը հին արիւնատ բարբերու դուռը փակած էր: Իսկ նոր կեանքը անսովոր այիֆով կ'ընթանար ու ամէն մարդ՝ նոր աշխարհ եկածի պէս, անսովոր կեանք մը կ'ապրէր:

Գիւնուութեան շրջան մըն էր, որ ամիսներ տեսց: Փակ բերանները բացուած էին, կաշկանդուած լեզուները կը շարժէին եւ ունկնդիր բազմութիւնները խելայեղ ուրախութեամբ կը լսէին ազատութեան խօսքը:

Սահմանադրութեան այս ազատութիւնը տեղահան կ'ընէր շատերը մէկ տեղէն միւր փոխադրուելու, աւելի լայն հորիզոններու մէջ նետուելու, կարծես իրենց միջավայրը բանտ մը ըլլար ու այդ բանտէն ազատուելը շնորհ մը կ'ըլլար բոլորին, որոնք տասնեակ տարիներով չէին համարձակած իրենց տեղէն շարժելու:

Տեղաշարժի այս հոսանքին մէջ առաջին տեղը կը գրաւէին պատանիներն ու երիտասարդները, որոնք հեռուար նահանգներէն կը խուծէին դէպի Պոլիս, մայրաքաղաքը ազատութեան ու նախ մտաւորական շարժման:

Ուշագրաւ էր հայկական մահանգներէն դէպի Պոլիս տեղաշարժող հայ պատանիներու եւ երիտասարդներու խումներամ բազմութիւնը, որ Պոլիս կը հասնէր ուսում ստանալու եւ եւրոպական շուկան հետ հազարդուելու: Այդ երիտասարդներու երազանքը իրականութիւն կը դառնար եւ անոնք առանց կշռելու պայմանները կը մետուէին դէպի Պոլիս, լայն հորիզոնի մը վրայ իրենց հասակը կռքողելու համար: Միջոցներ ունէին թէ ոչ, տեւէ մէկը հաշուի չէր առնէր: Ու անա, Վանէն, Էրզրումէն, Տարսնէն, Տիգրասակերտէն ու Սեբաստիայէն, Խարքիզիէն եւ Կիլիկիայէն բազմութիւն մը նոր սերունդի ափ կ'առնէր Պոլիս:

Այս պատանիները ու երիտասարդները կը մտնէին Պոլիս. իրենց տարազներով ու բարբերով: Երազանքը ունէին ու երկրի բոլոր կը բերէին իրենց հետ: Բեմերը դեռ կը շարունակէին խանդավառ ճառերը, ու հասարակական կեանքը ամէնօրեայ վերիվայրումի ենթակայ էր, միշտ ազատութեան ծաւալուն շարժումներով:

Հեռաւոր մահանգներէ եկած պատանիներն ու երիտասարդները առաջին իսկ օրերէն կը դիմէին դէպի Կեդրոնական կամ Պերպլեբան վարժարանը, ուրիշները կը մտնէին իրաւաբանական եւ բժշկական համալսարանները:

Բարձրագոյն կրթութեան անհուն ծարաւն էր, որ թարմ սերունդի այս բազմութիւնը կը նետէր միջազգային այդ կեդրոնը: Հայկական գաւառներէն տարօրինակ հասանք մը զգացումներու եւ բարբերու կը բերէր իր հետ, Պոլսոյ հայ կեանքը գունաւորելու աստիճան:

Մասնաջ բարձունքներէն զլորած ժայռի կտորի մը պէս ետ ալ կը նետուէին հեղեղատիւն մէջ ու հազիւ թէ սահմանադրական առաջին ամիսը բարձր, ինքզինքն կը գտնէին Պոլսոյ խանութան մէջ ու լեռնակուն հովիտի մը գաւազանը կը պտտցնէին պատմական Բիւզանդիոնի պազուտաներուն վրայ:

Աշխարհը ոտքի տակ առնող այս երիտասարդներուն համար անկարելիին անծանօթ էր. ու անոնք իրար կը գտնէին Պոլսոյ հին խանութան մէջ, ուր ժամանակին իրենց հայրերն ու մեծ պապերը զարբեցնէին բազմութիւնը կը կազմէին որպէս բռնակիր:

Նոր դաս մըն էր որ հասակը կը ցուցադրէր իր քրտնի Պոլսոյ մէջ, հայկական մահանգներու նորահաս մտաւորականի տիպարով, բարձրովին նակապատկերը բռնակիր զարբեցնէին:

Ու Կեդրոնական վարժարանի լայն սրահը հաւաքատեղին կը դառնար տարազեր այս նոր սերունդին, Կեդրոնականը վերածելով մտաւորական օճախի մը...

Ես ալ այդ բազմութեան հետ կը մտնէի Կեդրոնական վարժարանի սրահը, ուր կը կազմուէր բացառիկ զասարան մը այս նորայայտ ու նորածն զարբեցնէին համար:



Կեդրոնականի անկիւնէն աչքն կը բանայի Պոլսոյ հայոց մտաւորական ընտրանիին վրայ. ու հոգ առաջին օրերուն, մեր դիմացի ամպիւնին վրայ կը տեսնէինք վարժարանի տեսուչ Հինգլեանը, կակիկ, բարի, անթերի մանկավարժ, ու մանաւանդ այս հասակուօր նոր աշակերտները ըմբռնող ներթափանց հոգի մը: Ֆրանսերէն դասերը ինքը ստանձնած էր եւ մեծ համբերութեամբ կ'օժտեցնէր գաւառներէն ժամանած այս տղոց, որպէսզի ի-

րենց քերիները լրացնեն եւ շարունակեն ճամբան դէպի բարձրագոյն ուսում:

Այդ դասարանին մէջ հաւաքուողներէն շատերը աւարտած էին Մշոյ Մուրատ-Մխիթարեանը կամ Վանի կեդրոնականը, ոմանք Սանատարեանի վերջին դասարաններէն կամ Խարքեթի վարժարաններէն կու գային, ուրիշներ կային որ մէկ երկու տարի ուսուցչութիւն ըրած էին Հայաստանի այս կամ այն նահանգին մէջ, ու հիմա լրջութեամբ խռնարեած էին գրասեղաններուն եւ հեւքով կը հետեւէին զիրենք հետաքրքրող դասերուն: Անհաւասար կրթութեան տէր այս բազմութիւնը Հայաստանի շունչը բերած էր իր հետ եւ գերագոյն ճիգ մը կ'ընէր երկար ճանապարհը կտրել անցնելու, որքան կտրելի էր կատարեալ, որքան կարելի էր շուտ:

Կեդրոնական վարժարանի ուսուցչական կազմը եւ վերին դասարաններու աշակերտները կը պատկառէին այս դասարանէն:

Դասարանական առաջին շարքն անցած էր, երբ տեսուչը յայտարարեց թէ հայերէն լեզուի եւ շարադրութեան դասախօսը, Մելիքն Կիրճեան, յաջորդ օրը իր դասախօսութեան պիտի սկսի:

Ոմանք գիտէին թէ նոր եկող ուսուցիչը՝ Հրանդ, գրական անունով յայտնի մտաւորական մըն է, ոմանք բացարձակ անտեղեկութեամբ կը դիմաւորէին հայերէնի ուսուցիչը:

Ու յաջորդ օր Հրանդ հեւքով կը մտնէր դասարան եւ առանց բերք գրաւելու, կը դառնար դասարանին:

- Դու՛ք, Հայաստանի տղա՛ք, բարով էք եկեր մեր այս մայրաքաղաքը, եւ Արարատի ձիւնի մէկ շերտը եւ Մշոյ դաշտի Մեղրագետի մէկ կաթիլ ջուրը այս քաղաքին հետ չեմ փոխեր... Դուք Հայաստանը բերած էք ձեզ հետ, վասպուրականն ու Տարօնը կը շնչեմ հոս, ու դուք հին շարիւղներու զանգերը. դուք Ս. Մեսրոպի թռուներն էք, լոյսը աննշու այս կեդրոնէն ու տարածելու գայն Հայաստանի խաւարակուռ անկիւնները...

Հայաշունչ դաս մը եղաւ մեր առաջին հանդիպումը, բայց մեզմէ շատերը արդէն զարմացած էին Հրանդի առաջին մուտքին, հաստատելով թէ նոր ուսուցիչը առաջին օրերուն խանութը այցելող այն Հայն էր, որ ամէնէն առաջ հետաքրքրուած էր գաւառներէն հասնող այս պատանիներով: Առաջին օրէն Հրանդը եւ այս դասարանը իրար ձուլուած ամբողջութիւն մը եղան:

Հրանդ մեծամարմին եւ թիկնեղ Հայաստանցի մըն էր, տարիքը ուսած, բայց շշոյժ դասախօս մը, որ հայրական բարեացակամութեամբ հետ, Հայաստանի շունչով կը շնչեցէր այս զարիւղ տղոց սիրտը: Անմիջական ու հարազատ էր իր խօսքը, բնորոշումը, կամ վերլուծումը: Ու աշակերտները եռանդով գարծի լծուած էին, կտրծես մէկ տարիէն հնգամեակ մը գրաւելու համար:

Հրանդ, ահամանադրութեան խանդավառ տարիներուն, բարեկամը ու ընկերը եղաւ Հայաստանցի ուսանողներուն, ուսուցչի եւ հավանաբար ինքնահամուէր իր պարտականութեանց ընթացքին:



Երբ Հրանդ որպէս պատուիրակ մեկնեցաւ էջմիածին կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու, իր դասերը ստանձնեց Ինտրան, խորհրդաբար մեհեանի մը վերածելով մեր դասարանը: Միտքիք այս գրագէտը

երբ ամպիւնը կը գրաւէր, հոգեշունչ մթնոլորտ մը կը ստեղծուէր դասարանին մէջ, ու անոր պոստոյական դէմքէն քրիստոնէական միւտանք կը կաթէր:

Հրամդի ամբիջականութիւնն ու հարագատութիւնը չունէր ինտրան, բայց հայերէն լեզուի այլազանութիւնը ճշգրիտ իմաստով գործածելու եւ ամէն բանին եւ նախադասութեան բնորոշիչ իմաստաւորութիւն մը տալու կատարելութիւնն ունէր իր վերլուծումներու ընթացքին: Թափանցում եւ վերլուծում էր անոր դասը, ու այդ պահերուն, հասարակ բառերն ու տարզ նախադասութիւնները իմացական գումարում կը ստանային կամ հակառակ պարագային, կը մերկանային իրենց շփոթութիւններէն եւ իրենց քերութիւններով ակնբայս կը դառնային:

Նայն բծախնդիր վերլուծումը կը տեսնէինք մանաւանդ շարադրութեան դասերու ընթացքին: Մէկ կամ երկու աշակերտ կը հրաւիրուէին կարդալու իրենց շարադրութիւնները, որոնք իր ուշադրութիւնը գրաւած էին: Ինտրայի դիտողութիւններն ու գնահատանքները, ամբողջ դասարանը սրբագրելու եւ նոր ճիգի մղելու բնույթը կը ստանային:

Շատ զգայուն էր, երբ խօսք կ'ըլլար «Ներաշխարհ»ի մասին: Ինտրայի այդ թռչող կողմը գիտէին աշակերտները եւ չէին կրնար դիմանալ չարահոնքիւն մը ընելու իրենց բազմակից: Օր մը աշակերտներէն մէկը խնդրեց Ինտրայէն որ խօսի իր գրած գիրքի մասին, ու գրս մատնանշելով՝

- Ձեր գրքի մասին անընդհատ կը խօսի մեր այս դասընկերը, կ'ազնեմ աւելին լսել ձեզմէ:

Ակնյայտնի հետաքրքրութեամբ աչքերը յառեց իմ վրաս.  
- Ի՞նչ, դուք կարդացած ես «Ներաշխարհ»ը... Ո՛ւր, ինչպէ՞ս, ո՛ր գաւառէն ես:

- Սասունցի եմ, բայց ձեր գիրքը կարդացած եմ հրատարակուած տարին, Տիգրանակերտ եղած միջոցիս:

- Ուրեմն մինչեւ այդ տեղումնքը գացած է «Ներաշխարհ»ը. ես կը կարծէի թէ այդ գիրքը փակուած կը մնայ Պոլսոյ գրախանութիւնում մէջ: Տարի ու կէս անցած է հրատարակութեան թուականէն, ու միայն 35 օրինակ ծախուած է...

Ինտրան լռեց պահ մը: Աղօթէն սփոփուած մարդու մը հրնումնքը կտոր անոր մթնառուներ այժմերուն մէջ:

- «Ներաշխարհ»ը թողումք մերաշխարհ ունեցողներու հետաքրքրութեան, ու մեր սովորական դասը շարունակենք...

Լռելիսայն մտերմութիւն մը կը զգայի մեր գասախօսի գարմանքներուն եւ նայուածքին մէջ: Այդ օրէն ետք, շատ յանալի շարադրութիւնս կարդացի դասարանին մէջ, ու լսեցի Ինտրայի դիտողութիւններն ու բազմակից խօսքերը:

«Նոճեստան»էն ներշնչուած միտքերը սիրուած էր դասարանէն ու դասապանը կ'անցրէր խորհրդաւոր լռութեամբ, կարծես պատարագի մը ներկայ եղած ըլլային բոլորն ալ: Մինչ Հրամդի դասերը Հայաստանաշունչ էին, ու աշակերտները խանդավառութեամբ կը մասնակցէին անոր զեղումներուն, դասի սահմաններէն դուրս ելած:



Ձեռ կրնար չլիշատակել կուրտիկեանը, քուրքերէնի դասախօսը, որ միեւնոյն ժամանակ թուրք յայտնի գրագէտներու ուսուցիչը եղած էր եւ

ամբողջ քուրճ մտաւորականութեան համար անոր մէկ յօսքը լեզուական անվերաբեկի պատգամ մըն էր: Քրմական լրբութիւն մը ունէր եւ անոր լեզուական բծախնդիր խտութիւնը կարգապահութեան կարօտ այս դասարանին հանկի կը թուէր. մանաւանդ տարիքով մեծերուն, որոնք անապարաճի մէջ էին բան մը աւելի սորվելու:

Կայիտ սխալները շտկած վայրկեաններուն, քուրճերէնի հետ գրաբար հայերէնի նախադասութիւն մը կ'ընդելուզէր, ժպիտի շող մը աչքերում մէջ, ինչ որ կը նշանակէր թէ դասարանն ալ կրնայ փոքրիկ ծիծաղ մը ունենալ, պարզապէս անոր համար որ Կուրտիկեանէն հազուադէպօրէն հայերէն բառ մը լսուած էր դասարանին մէջ:

Պարսկերէնի, արաբերէնի եւ քուրճերէնի լեզուագետ մեր դասախօսը հմուտ էր գրաբար հայերէնին եւ սիրուած ու յարգուած դէմք մըն էր Հայ ազգային եւ մտաւորական շրջանակին մէջ:



Կեդրանականի մեր նշանաւոր դասարանը, որ տարեվերջին, 1909-ին պիտի ցրուէր զանազան համալսարաններ, դասերէն դուրս, անհանդարտ ապրումներ կը գլխարկէր:

Երբ ուսանողներս կը հաւաքուէինք վերին ամփիթատրոնին մէջ, դպրացական սովորական խնդիրները կը մտնայինք, եւ ճառերը իրարու կը յաջորդէին: Վանէն եկած երիտասարդները առաջին գծի վրայ կու գային, ափ ի քերամ թռչնելով Պոլսեցի ուսանողները, որոնք ալ վարժուած էին հրապարակային ճառեր լսելու, բայց ճառելու կարողութիւնը չունէին: Միայն Յ. Ճ. Սիրուինք, որ այդ տարին պիտի աւարտէր Կեդրանականը եւ արդէն բանաստեղծութեան փոքրիկ հատար մը լռյս ընծայած էր, զկապարի իր դերէն չէր հրաժարեր եւ երբեմն ալ մրցումն կ'ելլէր գաւառներէն եկող նախասններուն հետ, օակայն առանց հետտորական շնորհի:

Մեր դասարանի հետաքրքրական ձեռնարկներէն մէկը եղաւ յամբարտիպ երկշաբաթաբերքի մը հրատարակութիւնը: Անուըն դրինք «ԶԱՐԹՕՆՔ»: Այդ օրերու եռուն կեանքը բնորոշող բառ մըն էր Զարթօնքը այս երիտասարդներուն համար: Խմորատիպ թերթ հանելու մասնագէտները վանեցիներն էին: Վանի մէջ արդէն գաղտնի հրատարակութիւններ ընելու վարժուած էին: Անոնք Այգեհտանի մէջ լռյս ընծայած էին «ՆՈՐ ՍՈՐՈՒՆՆԻ» ամսաթերթը եւ այդ անուանով կը կոչուէին *նոր սերնդականներ*:

«ԶԱՐԹՕՆՔ»ի յմբագրական կազմին կը մասնակցէին Գուրգէն Մխիթարեան, Մանուկ Ասլանեան, Լեւոն Մօզեան, Արտաշէս Ֆերահեան եւ անոնք գրողը: «Զարթօնք»ի միայն վեց թիւեր լռյս աշխարհ եկան: Ու ամէն թիւ որ լռյս կը տեսնէր, իրարանցում մը կ'առաջացնէր դպրոցին մէջ: Մեզմէ գոհ էին միայն հայերէնի ուսուցիչները: Գոհ էր նաեւ բարեհաւքոյր տնօրէնը, Հիմդիեան, որ սակայն ինքն ինք անգամ յմբագրական մարմինը սաստեց, անիշխամական մեր արտայայտութիւնները մասնաճեղմելով: Բայց այդ օրերուն հայկական նահանգներէն եկող երիտասարդները խրատներ մտիկ ընելու տրամադրութիւն չունէին: Բռնապետութեան երկաթեայ կաշկանդումներէն ձերբազատուելէ յետոյ, ազատութեան ըմբռումը սանձան չուներ իրենց համար:

Տարին ետզիւ լրացած, այս արտակարգ դասարանի տղոց մեծ մասը կ'արձանագրուէր զանազան համալսարաններու դասընթացքներուն եւ ազ-



մըկալից ուսանողական կեանքի հորիզոններէն կը հետեւէին Պոլսոյ մտաւորական կեանքին :



1908-ին լոյս կը տեսնէր «ԱԶԱՏԱՄԱՐՏ» օրաթերթը Ռուրէն Զարեանի խմբագրապետութեամբ :

Գրագէտներու եւ մտաւորականներու փառանք մը կը բոլորուէր նոր խօսք բերող այս թերթին շուրջ : «Ազատամարտ»ի շունդալից երեսու մով ազատութեան իսկական բանքերը բեմ կու գար եւ հրապարակագրական կեանքը կը յեղաշրջէր արմատապէս : «Ազատամարտ»ի խմբագրական կազմին կը մասնակցէին Յ. Շահրիկեան, Ռ. Դարբինեան, Լիպարիտ, Գեղամ Բարսեղեան, Համբարձումեան, Սիրումի : Թերթին կ'աշխատակցէին Արտաշէս Յարութիւնեան, Զապէլ Յսայեան, Սիւսանթո, Դանիէլ Վարուժան, Յակոբ Քիւֆէնեան, Վարսեան, Ակնունի, Զուարեան, Գ. հաժակ, որոնք արդէն Պոլիս կը գտնուէին եւ ամէնօրեայ ծամադրավայր ունէին «Ազատամարտ»ի խմբագրատունը :

Ռուսական բանտերէն եւ հալածանքներէն ազատուող մտաւորականները շունչ կ'առնէին Պոլիս : Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան, Վ. Մինասեան, Արամ Մանուկեան... եւ այլ բազմաթիւ գործիչներ ու մտաւորականներ պիտի երեւային Պոլսոյ բնակրուն վրայ, համահայկական մթնոլորտ մը ստեղծելով ու յամադավանելով բազմաթիւները, որոնք յագեցած չէին նորաշունչ ճանքերէն :

Հայկական մահամզներէն եւ ներքին գաւառներէն Պոլիս խուժող երիտասարդութիւնը այս խանդավառ մթնոլորտին մէջ բարձրախօսի զերը կը կատարէր :

«Ազատամարտ»ի լոյս տեսած օրերուն, Ռուսումի, Զուարեանի եւ Ռ. Դարբինեանի մախաճանութեամբ կը կազմուէր Հ. Յ. Գ. Ուսանողական Միութիւնը : Կեդրոնական վարժարանը վախանցման կայան մըն էր 1908-ին : Այժմ երիտասարդութիւնը արդէն արձանագրուած էր համալսարաններու դասընթացներուն, ու հաճ կը փոխադրէր իր խանդավառութիւնը, ազատութեան գաղափարը աւելի լայն շրջանակի մէջ տարածելու համար :

Գիտութեան եւ գարգացման այդ կայաններէն, աւելի զիստակից ու աւելի կշռադատող, մեր հայեացքը կը դարձնէինք դէպի հայ եւ թուրք մըտաւորական աշխարհը : Ու առաջին օրերէն, իրաւաբանական համալսարանի բնոյն վրայ մեր դիմացը կը գտնենք Գրիգոր Զօհրապը որպէս պատժական օրէնքի եւ փիլիսոփայութեան դասախօս, համալսարանի ամբողջ ուսանողութիւնը առիւնէն :

Գրագէտ Զօհրապէն տարրեր անճանարութիւն մը կը տեսնենք բնուն վրայ : Գիտուն, իր ստանճանճ միւթին հմուտ ու բազմակողմանի գարգացման տէր դասախօսն էր որ յաղթական արշաւի մը կը վերածէր իր դասախօսութեան պահերը : Հոնտոր էր ու տիրական բնոյն վրայ : Այդպէս էր նաեւ Օսմանեան փառլամենտի բեմէն, ուր ամէնէն շատ ուշադրութեամբ կ'ունկնդրուէր անուանի հայ երեսփոխանը : Շաբաթը երեք պահ անէր պատժական օրէնքի այս դասախօսը : Այդ պահերուն միւս դասարանները գրեթէ կը դատարկուէին եւ ուսանողութիւնը կը խուժէր մեր դասարանը ուր հազիւ եօթը հարիւր հոգիի տեղ կար, ու ահա անցքերը եւ պատուհանները խճուռուած էին ուսանողներով, որոնք իրենց միւս դասերը լքած՝ Զօհրապը կ'ունկնէին լսել :

Մենք հայարտ էինք Զօհրապով, ու բնաւ չհիասթափուեցանք անկէ: Անէն տեղ, գրական, հասարակական եւ քաղաքական իր ելույթներու ընթացքին Զօհրապ փայլեցաւ իր սրամտութիւններով, իմաստութեամբ եւ պատրաստաբանութեամբ, միշտ ինքնայատուկ, եւ միշտ նարութեամբ գոնաւոր:



Համալսարանէն դուրս ուսանողութեան կեդրոնատեղին Ազատամարտի վարի սրահն էր: Խուռներամ բազմութեամբ մենք համ էինք, ու մեզի կու գային միամալ նաեւ միջնակարգ վարժարաններու երկսեռ աշակերտները: Գասախօսութիւն, վէճ ու վիճաբանութիւն իրարու կը յաջորդէին, ազմեկալից ելույթներով: Վերի յարկերը խռովի կը մատուէին: Ազատամարտի խմբագրական սեմակները, աւելի վերը Հ. Յ. Գ. Բիւրոյի խորհրդաւար գրասենեակը ուսանողներու այս խռովիչ ուժականութենէն երբեմն կը նեղուէին: Ու ահա վար կ'իջնէր Պաննի Օթոմանի Հրաչը, եւ սաստ մը կ'ուզէր մեզի.

- Եթէ այս անկանոն ընթացքը շարունակէք, ահումբը ուսանողներէն պիտի առնենք եւ առանձին մարմինի մը պիտի յանձնենք:

Առանց պատասխանի սպասելու վեր կ'ելլէր:

Պահ մը լուսթիւն: Ու մենք կը վերսկսէինք վիճաբանութիւնները, աւելի կրճատ, աւելի բարձրագոյն:

Ու ահա Զուարեանի շուքը կը նշմարէինք աստիճաններուն գլուխը: Սրահը խոր լուսութեան կը մատուէր: Յայտ ունէիմք որ մեր բարոյնս պաշտելի առաքեալը կ'անցնի կ'երթայ: Բայց այդպէս չեղաւ: Մտաւ սրահ եւ տեղ գրասեց մեր մէջ:

- Ինչի՞ շուքը էք վիճում, ես էլ ուզում եմ մասնակցել ձեր քննած հարցերին...

Իրարու երես կը նայինք բարբառ ալ շուարած: Բազմաթիւ խնդիրներ մէկը միւսին խառնուած մեզ մեր հանդարտ հունէն հանած են:

Գանի մը կցկտօր խօսքեր ըրինք այն խնդիրներու շուրջ, որոնք տաք վիճաբանութեան դուռ բացած էին:

Զուարեան ուշադրութեամբ մտիկ ընելէ ետք, դարձաւ մեզի.

- Ապա, չէ՞ք անդրադարձում թէ նւան խնդիրների շուրջ գոտում գոչումներով չեն խօսում: Դուք նորահաս սերունդն էք եւ մեր յայտը ձեր վերայ է դրուած: Ով որ վեր է ելնում այս աստիճաններից, մեզ յայտնում է թէ վարը կ'աի եւ սուր ու տմբոց կայ: Վերջ տուէք այդ բարբին ու լքե՛ուեցէք աւելի լուրջ գործերի, մենք ձեզանից շատ բան ենք սպասում...

Գուրգուրանք ու սաստ կար Զուարեանի խօսքին մէջ: Մենք բարբոս գլխիկոր էինք:

Մեկնած պահում ըսաւ.

- Կարծեմ խօսքս հասկանալի է բարբիդ:

Այդ միջադէպէն ետք, մեր ուսանողական սրահը հանդարտ շրջան մը բարբոց: Զուարեանի բարոյական հեղինակութիւնը երկսասարդական ամէն ձեւի ըմբոստութիւն մեղմելու ուժն ունէր:



Ժամանակի ընթացքին նառախօսութիւնները կը նուազէին, ու լուրջ դասախօսութիւններու եւ ինքնագորգացման շրջան մը կը բացուէր: . .

Հ. Յ. Դ. Ուսանողական Միութիւնը ստեղծուած էր «ԵՄԿՈՒՆԿ» ան-  
 սագրի հրատարակութեան: Մենք ուսանողներս, գաղտնալի մեծամտու-  
 քեամբ, ա՛լ չէինք հաւնել Ազատամարտին եւ ոչ ալ Ազատամարտ Շաբա-  
 թաթերթին: Մեր խօսքը կ'ուզէինք լսելի ընել: Ու Երկուեքը կը դառնար  
 Պոլսոյ, Եւրոպայի եւ Պէրսիոյ Ուսանողական Միութիւններու օրգանը: Ու  
 ժամադրովայրը անուանի գրողներուն: Դ. Վարուժանը Երկուեքի էջերէն  
 կը սկսէր իր «Հացին Երգը»: Երիտասարդութեան այս բնիւր ճաշողական ուժ  
 մը ունէր, հոն կ'երեւէին Գեղամ Բարսեղեան, Վահրամ Թաթաւլ, Ահարոն,  
 աւ ապա Սիւսանթօ:

«Երկուեք»ը տարածում ամառներէ մըն էր եւ ունէր երկու հազար  
 հինգ հարիւր բաժանորդներ, խանդավառ ուսանողներէ եւ միջնակարգ վար-  
 ժադաններու աշակերտներէն բաղկացած: Կարծես թէ կեդրոնականի մէջ  
 լայն ընծայուած Զարթօնք խմբակային շարունակութիւնն էր Երկուեքը,  
 քայքայ անլի հասուն եւ անլի լայն հարկաբեկ: Խմբագրական կազմի մէջ  
 էին Գ. Մխիթարեան, Լ. Մուգեան, Հմայեակ Մանուկեան, Արտաշէս Վա-  
 նարեան եւ սողնալ գրողը:

Մեր ազատ դասախօսութիւններուն կը մասնակցէին Ռ. Գաբրիէան,  
 Լ. Նազարեանց, Գ. Խաժակ, Յ. Շահրիկեան որոնք ընկերաբանական, գի-  
 տական եւ տնտեսագիտական խնամուած վերլուծումներ կ'ընէին եւ կը նը-  
 պաստէին ուսանողներու ինքնագրագրամս:

Գրական ասուլիսի շարք մըն ալ կար Եսայեան վարժարանի սրահին  
 մէջ: Յ. Ճ. Սիրունին եռանդուն կազմակերպիչն էր այդ դասախօսական  
 շարքին: Գրիգոր Զօհրայ, Ռ. Զարգարեան, Դ. Վարուժան, Շ. Մխաֆ-  
 եան, Գ. Խաժակ, Զ. Եսայեան եւ Սիպիլ իրենց մասնակցութիւնը կը բն-  
 րէին գրական այս շարժումին:

Ուսանողները ակնցի ծայրով միայն մտիկ կ'ընէին գրական այս ա-  
 սուլիսները, հակառակ անոր որ մեծանուն հեղինակներն էին պատգամա-  
 խօսները: Երիտասարդութիւնը բռնկուն հետաքրքրութեամբ կը հետեւէր  
 ընկերաբանական, իմաստասիրական շարժումին եւ խանդավառ էր ընկերվա-  
 րական մտածողութեամբ: Գրականութիւնը, այդ օրերուն, պարզ ծաղկա-  
 գարդում մը կը թուէր այս նորահասներուն այժմ:

Երիտասարդական տուրք, որ մոյնն է ամէն տեղ եւ ամէն ժամանա-  
 կաշրջանի:



ԱԶԱՏԱՄԱՐՏԻ խմբագրատունը ամբողջական Հայաստան մըն էր:  
 Մտաւարական ընտրանին հոն էր Արեւելեան ու Արեւմտեան Հայաստանէն,  
 գրագէտն ու ընկերաբանը, հոստորն ու քննադատը հոն կը մտնէին ազատ  
 հայրենիքի սեմէն անցնելու պէս: Հոն, վերի յարկի սենեակներուն մէջ կը  
 լսուէր Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն: Զուարեանի եւ Ռոստոմի բարոյա-  
 կան ծանրութիւնը կը եզրանաւորէր մտքի ու գրչի այս հաստատութիւնը:  
 Ակնունին, Արմէն Գարօն, Հրաչ Թիլիսեան, Վառլեան եւ ուրիշ պատաս-  
 խաճատու վարիչներ այդ առանձնութեան մէջ ճաշուած կը մնային:

Միջին յարկը գրուած էր Ազատամարտի քրմայետ Ռ. Զարգարեան-  
 բարեան, քայքայ միշտ քրմական լրջութեամբ: Անոր գրական եւ հրատարա-  
 կագրական հեղինակութիւնը տիրական էր, ու անոր գործածած լեզուն շը-  
 քեղութեամբ կը փայլէր: Պոլսոյ հին քերթերը գունատ շարունակութիւնն  
 էին տխուր անցեալին: Խմբագրատնին գործակիցներն ու աշխատակիցները

նոյնքան հեղինակաւոր դէմքեր էին և բծախնդիր՝ իմացական և լեզուական կատարելութեան եւ բերքին բարոյական նկարագրին :

Ազատամարտի հառազայքումը գրական եւ մտաւորական վերածընունդ մըն էր այնքան աստեղ բնութեան տակ կ'էած Հայութեան Յոր կեանքին մէջ :

Հոն կը տողանցէին Սիւսանթօ, Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան, Ա. Յարութիւնեան, հաժակ, Զ. Շաշեան, Գ. Վարուժան եւ այլ երիտասարդ գրողներ :

Ահարոնեանը հայ գրականութեան քաջ Արամազդն էր, ինչպէս ըլլանորշած էր Զ. Շաշեան Մասիսի այս գաւակը, երբ Մետեյի բանտէն կ'ազատուէր ու օր մըն ալ կը յայտնուէր Պոլսոյ հորիզոնին վրայ : Երիտասարդութիւնը մտիկ կ'ընէր Ահարոնեանը որպէս պատգամախօս, կենցաղ վարչի հեռաւորութեան մը վրայ :

Սիւսանթօն, արձանային գեղեցկութեամբ ու միեւնոյն ժամանակ արձանային անայայտութեամբ կ'անցնէր դէպի վերին յարկերը : Մեծապաշտ էր ու երիտասարդները կ'անտեսէր : Ողբերգական եւ հերոսական քարացած մտածում մը կար տնոր ճակատին ու անժպիտ դէմքին վրայ : Ուղղակի կը մտնէր Զարդարեանի սենեակը, շաշլ գնահատանք մը բնելու անոր մէկ գեղեցիկ նախադասութեան առջիւ, կամ պարկաւրտ այն արտայայտութիւններուն դէմ, որոնք լոյս տեսած էին դեղին մամուլին մէջ : Ու առանց ժամանակ կորսնցնելու վերի խորհրդաւոր սենեակը կ'ըլլէր, ուր յռնարհ պատանի մը կը դառնար, եւ մեհենական աղօթողի մը կերպարանքը կը ստանար : Հոն էր Զարարեան... ու Սիւսանթօն կ'ապրէր այն հին օրերը երբ հանդիպած էր Քրիստափորին եւ Զարարեանին, ու անոնց շունչին տակ դարձած էր դիւցազուններուն անուանի դիւցազներգակը :

Սիւս գրագէտներն ու մտաւորականները վերի այցելութիւններէն ետէ կ'իջնէին ևսանողներու ժխտարից ակումբը : Ապագան էր որ կը բացավառէր այդ սրահին մէջ, ու ակնյայտնի էր թէ մտաւորականութեան այս ընտրանին, գորովայից աչք մը կը պահէր նոր սերունդի այս յորձանուտին վրայ :

Գ. Վարուժան, Ահարոն եւ Գ. Բարսեղեան միշտ ուսանողութեան հետն էին՝ պատանեկան խանդավառութեամբ : Մենք այս բանաստեղծները կը սիրէինք, բայց զանոնք ծեր կը նկատէինք, քանի որ անուանի գրագէտներ էին : Մինչդեռ հետագային պիտի հաստատուէինք թէ անոնք միայն հինգ-սաքը տարուան տարբերութիւն ունէին հետն ուսանողներէն : Անոնք ու անոնցմէ մեծերը հանդէպ կ'ընկերանային ևսանողներու ջրվիժուն կեանքին, հայ նորագոյտ սպրումներուն հազարակից ըլլալու համար :



Գրասխօսութիւն ու քատրոն, վիճարանական հանդիպումներ՝ հասանքէ հասանք, ու կուսակցական եւ բանութեան կազմակերպական աշխատանքներ՝ բարարար շարժով չէին սպառեր կենսունակութիւնը այս ուսանողութեան : Անոնք ամէն տեղ էին եւ բոլոր շարժումներուն մասնակից :

Աւելին, կերակնօրեայ պայտանքը կը սարքէինք դէպի Զամիճայի կամ Ֆրէնկի լիբան բարձունքները : Կերակնօրեայ, երգ ու պար, սէր ու սիրերգութիւն՝ աւանդական պատկերը կու տային Հայաստանի վանքերուն վրայ կատարուած ուխտագնացութեանց : Գառնացի այս ուսանողները ճանճրացած երազական պարերէն, հագեւին Հայաստանը կը վերապրէին :

Պանդուխտի սփռման, որուն յօժարակամ կը մասնակցէին Պոլսեցի մեր ընկերներն ու ընկերուհիները:

Գ. Վարուժան շատ յանախ այս հաւաքահանութեան հետն էր լեռնային ստալտներու ընթացքին: Հրանդ երբ լսէր եւ տեղը գիտնար այս խնդիրներուն (որոնք համեմատ էին, ուսանողական քաղաքի համեմատութեամբ), նարը կը գտնէր պահ մը արեւելու իր սիրած խանդավառ շարժումներուն հետ:

Օր մը, երբ ուսանողները հաւաքուած էին Ֆրէնկի լեռան ծառերուն տակ, ու հայկական պարեր կը պարէին, պարգտին մէջ աննելով Գ. Վարուժանը եւ ուրիշ քանի մը երիտասարդ գրողներ, հեռուէն, գարմանքով լըսեցինք թմբուկի եւ գուռայի ձայնը... Մեղքն կիրճեանն էր: Թաղէ թաղ խանէ խան պտտած էր ու գտած հայաստանցի գուռանին եւ թմբկահարը ու իր հետ առած՝ եկած էր ուրախացնելու Հայաստանցի ուսանողները:

Ու ահա պարգտը կը լայննար, խանդավառութեամբ շարժայի մէջ կ'առնէին Հրանդը եւ իր հետ բերած արտակարգ օտքաթրքը: Հրանդ կ'անցնէր պարգտին գլուխը, ու Հայաստանցի տղաք խելայեզօրէն գետնը կը դարձնէին նկուն շարժումներով:

Բայց Հրանդ դժգոհ էր: Թմբուկը իր ուզածին պէս շրջապատը չէր դարձնում:

- Տղա՛ք, դուք պարը շարունակեցէ՛ք, բնաւ, ու հետեցաւ պարգտուն, հանեց իր բահկոնը, առաւ թմբուկը, անցուց ուսէն եւ կեցաւ պարգտին կեդրոնը: Ու թմբուկը Հրանդի գարկերուն տակ հնչեց համաչափ ու բարձր արձագանգներով: Պարը ինքն իր վրայ գալարուեցաւ, համաչափ ու նկուն շարժումները թմբուկի արձագանգներուն հետ թռչէ ստացան, ու տղաքը պահ մը հոգեպէս փոխադրուեցան Մշոյ Սուլթան Ս. Կարապետի բարձունքներուն վրայ:

Այդ օր, երեւ տեղերը միացած էին Վասիտի ամին բարձրացած այս բլուրին վրայ:



Պալանեան պատերազմը փոթորկալի տնակնկալներու շրջան մը դարձաւ: Հրանդ Մարգր կ'անդամահատուէր, այս անգամ, Օսմանեան Կայսրութեան ծագէն ագտած պալանեան չորս պետութիւններու կողմէ: Թուրքիան ջախջախիչ պարտութիւն կրած էր եւ ընդամենը երկու ամսուան ընթացքին կորսնցուցած էր երոպական Թուրքիոյ եօթը նահանգները:

Ու ահա, Հայկական Հարցը կրկին կու գար սեղանի վրայ, եւ 1913-ին լուծում կը ստանար այն իմաստով, որ հայկական եօթը նահանգները երկու շրջաններու բաժնուած՝ կը դրուէին երեսպացի երկու լիազօր բնիչներու հսկողութեան տակ, ինքնավար Հայաստանին նամբայ մը բանալով:

Հայ ժողովուրդը միակամ էր ու խանդավառ:

Ազատութեան նոր հորիզոններ կը բացուէին արդէն կազմուրուած Հայութեան առջեւ:

1913-ին, կը տօնուէին հայ գրերու գիտի հազար հինգհարիւր եւ տըպագրութեան հինգհարիւր ամեակները:

Կովկասէն մինչեւ Պոլիս, հայկական նահանգներէն մինչեւ հեռաւոր գաղաթները հայ մշակոյթի փառատունը, ազգային խորունկ հպարտութեամբ, կը հնչէր բեմէ բեմ:

Պոլսոյ մէջ ուսանողները կը ստանձնէին նախաձեռնութիւնը եւ Հայ

ընտրանին կը հաւաքէին Փրօթի Շանի քատրոնը եւ ընդարձակ պարտէզը Ս. Մերսուրի գիւտը փաստարանելու, փառք մը որ Հայութիւնը հագար հինգ հարիւր տարիներէ ի վեր արժանաւորապէս կը կրէր, մշակայթի վերելքի իր նամբուն վրայ:

Ակնունին բնմէն բազմութիւնները կ'ոգնուրէր հայ անցեալով, ու սրանք կը դորդար խելայեղ ծափերու տակ:

Հանդէսը կը վերջանար հոգեպարար մթնալուրտի մէջ, ու երբ հասարակութիւնը կը դատարկէր սրանն ու պարտէզը, աստիկանութիւնը կը մտնէր մէր Փրօթի Շան, հանդէսին կարգադրիչները որանելու: Գայուստ էյնէքեան տոմսերու եւ այլ քուղքերու տրցակները ձեռքը, կը ձերբակալուի աստիկաններէն եւ կ'առաջնորդուի դէպի իր բնակարանը, երեւի խուզարկութեան մը համար: Բերայի շիտակին վրայ կը հանդիպիմ Գայուստին, որուն կ'ընկերակցին երկու աստիկաններ:

Գայուստ երբ հղելութիւնը իմծի յայտնեց, աւելցուց քէ տունը ապրանք կայ... Ես աստիկաններուն ներկայացայ որպէս կարգադիր յանձնախումբի նախագահը եւ ըսի քէ այս մարդը (Գայուստը մատնանշելով) պարզ ծառայ մըն է, մուտքի տոմսերը ծախելու:

- Ուրեմն, դո՛ւք հրամեցէք աստիկանատուն մեզի փոքրիկ լուսարանութիւն մը տալու, այս մարդը կրնայ երթալ:

Ու Գայուստ, ազատ շունչ մը առնելով, կը հեռանայ վտանգաւոր ցանցէն:

Սրբ դէպի աստիկանատուն կ'երթայի, դիմացի մայքերէն կ'անցնէին մեր աւանագ ընկերները, - Հրաչ Փափագեան, Լ. Մօզեան, Պօզոս Տէր Պօզոսեան եւ Հայկ Գայնեան (հնչակեան): Անոնք մտնեցան մեզի եւ աստիկաններէն իմացան քէ բացատրութիւն կը պահանջուի հանդէսի կազմակերպիչներէն, ու առանց այլեւայլի իմծի հետ մտան աստիկանատուն: Մենք պատրաստուած էինք ծանր դիտողութիւն ընելու աստիկանագետին, որ քայլ կու տայ անհանգստացնելու քաղաքացիները մշակութային այսպիսի հանդէսի մը առթիւ:

Մեզի սպասման սենեակը մտցուցին: Երկու ժամ անցաւ ու աստիկանագետը չերեցաւ: Դրան վրայ խումբ մը աստիկաններ կը հսկէին, ու մեր հարցումներուն կը պատասխանէին.

- Հիմա՛, քիչ մը յետոյ...
- Կէս գիշերն անցած էր, երբ մեզ հրաւիրեցին իրենց հետեւիլ.
- Կեդրոնը պիտի երթաք հարցախնդրելու...

Վար իջանք եւ մեզ մտցուցին քոց կառներու մէջ: Ձիմուած աստիկաններով շրջապատուած՝ ինքզինքնիս գտանք Պալտայ կեդրոնակալն քանտի երկաթեայ դարպասներուն առջեւ: Մեզ վար իջեցուցին եւ հրմշտկելով ներս հրեցին: Բանտի աստիկանները մեզ առաջնորդեցին բազմաթիւ անցքերէ, միշտ դէպի վարերը, ու զետեան մը նետեցին, ուր գողեր, մարդասպաններ եւ վտանգաւոր շղթայակիրներ տարածուած էին խանաւ պատերուն տակ եւ զետեան կեդրոնը:

- Խաւտը կ'իջնէր մեր վրայ, ու ոչ ոք գիտէր մեր տեղը:
- Հինգ օր այդ զետեանի ոչիւներուն մէջ մնացինք:

Հինգերորդ օրը միայն կրցանք Ազատամարտը առնել ցրուիչէն, որ մեզի հազարէց քէ Ակնունին, Ջօհրապը եւ Վարդգէսը դիմում կատարած են մեր ազատման համար:

Յոյսի նշանը մին էր այդ լուրը, բայց այս յուսարիքը Ազատամարտը տխրութեամբ կը համակէր մեր սիրտը: Թերթը ամբողջութեամբ սու շըրջագծեբու մէջ անուած տեսանք, որ մեզի կը գուժէր Ս. Զաւարեանի մտքը...

Բանտը մտացանք եւ խորունկ վիշտով խոնարհեցանք այն անփոխարինելի կորուստին վրայ, որ մեզ սուգի կը մատնէր:

Կէս գիշերն անցած էր, ու մենք անքուն էինք:

Խոնարհ գնտանի գուռը ճոխնչով բացուեցաւ: Երկու ոստիկաններ մեզի մտնեցան եւ հրաւիրեցին իրենց հետեւելու: Բանտի երկաթեայ դռները մեր առջեւ բացուած էին: Գոց ու մաշկ կառք մը մեզի կը սպասէր: Թխմուսեցանք կառքին մէջ եւ գինեալ ոստիկանները մեկնելու հրամանը տուին:

Կախազանի գատապայտուածները փոխադրելու բնագործարարները կատարեալ էր: Մատնուած էինք անորոշ մտահոգութեան մը:

Ձիճուորական ատեանի ընդարձակ բակին մէջ կեցուցին կառքը ու մեզ առաջնորդեցին սպասարան մը, գինեալ պահակներու շարքի մը առջեւ: Պատերազմի շրջան էր ու Թուրքիան ստիպուած էր պարտութեան դաշինքներ ստորագրել: Կատաղութիւն մը կար Թուրքերու դէմքին վրայ, ու այդ կատաղութեան արիւնտ հայեացքը ուղղուած էր Հայերու: Ղէ՛մ: Այդ վերաբերմունքը կը գգայինք ամէն քայլափոխի:

Ժամ մը սպասեցինք, անորոշ մտնուեցանք: Մեր ժամանակ մասին մերսի խորհրդարար սենեակը գեկուցում ստացած էր: Մուտքը ու ելքը սպաներուն ու ոստիկանապետներուն աւելի էան մաշկ կը դարձնէր այն գուռը որ մեզ ներս պիտի առնէր:

Վերջապէս, կէս գիշերէն ետք, ժամը երեքին մեզ ներս հրաւիրեցին: Ընդարձակ սրահ մը: Պատերազմական ատեանի ամպիոնը բազմած էին էմվեր փաշան, ձեւալ փաշան եւ Պէտրի պէյը. Բովի սեղանները գրաւած էին քանի մը քարտուղարներ, խոնարհած թուրքերուն, մաշկ դէմքերով: Բաւական հեռաւորութեան վրայ աթոռներ շարուած էին ամպիոնի զիմացը, երեւի հարցաձեռնուածներուն համար: Մենք առաջացանք մինչեւ աթոռները, բարեւեցինք եւ կանգնած մնացինք: Մեզի չառաջարկեցին որ նստինք. ու անմիջապէս խօսքը մեզի ուղղելով, ձեւալ փաշան ըսաւ.

- Դուք Իրաւարանական Համալսարանի մեր ուսանողներն էք, մենք կը կարծէինք թէ դուք հաւատարիմ ինքնապաշտպաններ էք եւ կը պատրաստուիք այս երկրի գաւառապետները եւ շատաւորները դառնալու, մինչդեռ դուք հայկական թագաւորութիւն կ'ուզէք եղեր: Ձեր սարքած հանդէսի ընթացքին Հայ եին թագաւորներու նկարները ցրուած էք, չէ՞ք գիտեր թէ Թուրք ժողովուրդը որքան կընայ գրգռուիլ այդ ընթացքէն:

Մեր ընկերներէն մէկը, ընտիր թուրքերէնով յայտնեց թէ մենք միշտ հաւատարիմ եղած ենք, եւ թէ այդ նկարները գրավահաններու եւ թերթ ծախողներու շահագիտական արարք մը ըլլալու է, որմէ մենք ուսանողներու երբեք տեղեկութիւն չենք ունեցած:

ձեւալ փաշան, էնվեր փաշան եւ Պէտրի պէյը թթուած դէմքով մեզի կը նայէին, եւ անոնց աչքերուն մէջ աւելի մեծ սպառնալիք կար, քան խօսքերուն:

ձեւալ փաշան կրկին խօսքը մեզի ուղղեց.

- Ականջնիդ լաւ բացէ՛ք, Թուրք ժողովուրդը մոլեռանդ ազգասէր եւ կրօնաւէր է. մի գրգռէ՛ք անոր գայրոյթը որ կընայ արիւնալի ջարդերով

վերջանալ: Պետութիւնը չի կրնար այդ գայրոյթը գտել... Հիմա կրնա՞ք երթալ:

Խոնարհութիւն մը ըրինք եւ դուրս եկանք արանէն: Ոստիկան մը մեզի ընկերացաւ մինչեւ դուրսի դուռը: Արշալոյսը բացուելու վրայ էր: Կռակ մը գտանք եւ ելանք Բերա:

Նայն օրը գտանք Ակնուցին եւ վարդգէտը Աղատամարտի վերին յարկը եւ Խղելութիւնը հազարդեցիկն անոնց:

Ճէմալ փաշան մեր միջոցաւ ամբողջ Հայութեան ուղղած էր իր խօսքը:



Յաջորդ օր Ս. Զաւարեանի յուզարկաւորութիւնն էր:

Հայութիւնը գանգաւածօրէն սոսի էր փայլու մեր օրերու նօսը Նագովնցիի դագազին ետեւէն: Մասնատրապէս ուսանողներն ու աշակերտները ողողած էին ամբողջ Բերան: Աղատամարտի շէնքէն մինչեւ Քանկալիի գերեզմանոցը շղթայ կապած էին այս ուսանողներն ու ուսանողուհիները: Քսան հեզարէ աւելի բազմութիւն բռնած էր ամբողջ պողոտան եւ շեցուած էր Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր խօսեցան Ա. Ահարոնեան եւ Է. Ակնուցի:

Բանտէն ելած ուսանողներս գարմանձով կը նայէինք Ճէմալ փաշային որ եկած էր անձամբ իր յարգանքը բերելու Գաշնակցութեան եիմնադիրին մահուան առթիւ:

Թրփալիան ֆազաֆալանութիւն...

Ու յուզարկաւորութիւնը կը օկտէր Ս. Երրորդութիւն եկեղեցիէն, ուր արտաշայգ զամբանական մը խօսած էր նաեւ Եղիշէ Արքեպա. Գուրեան, անմահութեան դափնին զնելով անհետացող առաքեալի շիրիմին:

Յարութիւն աւած անմահ Զաւարեանի դագազը ուսամբարձ կը տանէին Ա. Ահարոնեան, Է. Ակնուցի, Գ. Խաժակ, Սիամանթօ, Գ. Վարուժան, Ռ. Զարդարեան, Ա. Վառնեան եւ ուսանողները:

Քանկալիի գերեզմանատան մէջ խօսեցան Գ. Վարուժան, Մշոյ Գեղամ, Գ. Խաժակ եւ ուսանողներու կողմէ՝ տաղերս գրողը:

Զաւարեան ճամբայ կ'ելլէր դէպի յախտենական անյայտը, որ ամբողջ Հայութիւնը, մասնատրապէս նոր սերունդը կը լծնար անոր ազդով:



Սարանեվայի մահափորձը...

Ու 1914 Օգոստոսին կը պայթէր Առաջին համաշխարհային պատերազմը:

Գագազած Թուրքիան կ'իյնար պատերազմի պատար ջուրերուն մէջ, ոտիքի ու արեան ծարաւի:

Վերածնունդ կ'անգրի կանչերը կը դադրէին, խաւարը կ'իջնէր ամէն կողմ, ու մահուան սարսուռը փոթորկալի արագութեամբ կ'անցնէր կենսունակ Հայ ժողովուրդի վրայէն:

Վարդաշողշող սրշալոյսեր աւետող բանաստեղծներ կ'իյնային խողջաղուած, ու անոնց կը հետեւէին մէկ միլիոնէ աւելի նահատակուած Հայեր...

1915-ի Ապրիլին մարդկութիւնը, ամօքահար, կը մտնէր անորակելի ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ անմարդկային պատմաշրջանին մէջ:

Կ. Ս.



ՎԱԶԷ ՕՇԱԿԱՆ

**ԶՕՀՐԱՊ ԵՒ ԵՐՈՒԽԱՆ**



Մասն էր որ մտեցուց շին մը այս  
Հակադիր անձերն ու գրական խառնը-  
լածքները: Մական Զօհրայի գրական  
խառնուածքը արդէն սկսած էր մեռնել  
կրք սպաննեցին զինք ու Արեւմտահայ  
գրականութիւնը մեծ բան մը շիրմնացուց  
իր անհետացումով: 1903-էն 1915, պատ-  
մբաւածքի իշխանը 3 Հատ պատմուածք  
գրած էր միայն: Եթէ պահ մը բազմա-  
տենք զինք Արփիարեանի մը, Եսայիա-  
նի մը կամ Նոյնիսկ Զօպանեանի մը Հետ,  
Զօհրայի գուտ գրական ու ազգային դի-  
մապիծը այնքան կը տժգունի...: Գրե-

բազանց տիլէրանքը մեր մէջն - այսպէս  
կ'որակէր զայն Եղիան, 1951ին (Բիւզան-  
դիան, թիւ 1901) ու գէթ այս անգամ,  
Եղիան ձիւղ տեսած էր: Տեսակ մը Հայ  
Վօլթէտ, որուն Համար գրականութիւնը  
կեանքի բազմաթիւ նուրբ ու ընտրեալ  
ղգայնութիւններէն (որոնց շարքին՝ կրն  
ու Նշտանքը, բախտախաղը, պինին ու  
բաղաբականութիւնը) մին էր միայն:  
Կեանքի ախորժակ մը՝ զոր փորձած էր  
յապեցնել վէպով 1887-ին ու ձախողած:  
Յաջորդ 5 տարիներուն՝ փորձած էր  
պատմուածքը (1888-էն մինչեւ 1893,  
Զօհրայ ստորագրած է 26 Հատ պատ-  
մբաւածք, այսինքն իր ամբողջ արտա-  
գրութեան կէսը) ու լքած կրկին: Ան-  
ցած էր Նրապարտկազրութեան, Քատե-  
րական ու գրական քննադատութեան,  
բաղաբական ու ընկերային Հարցերու  
շտեղջ լայն վառնումի: Մինչ ամէն ան-  
գամ՝ ինչ որ կ'աւելնար կեանքի կերքէն,  
փշրանք մը իր արուի ապրումէն՝ ինչ որ  
չէին կրնար մարսել շիղերը՝ կ'անցնէր  
գրական զգայարանքին: 1893-էն անդին,  
Զօհրայ Հատ ու կտոր պատմուածքներ  
նետեց սովաւար խմբագիրներու կողոր-  
դը, գրուած անուոյ ու ինքնարաւ, ամա-  
թէտրական գրիչով մը, կարծէք թէ բուն  
նպատակը իր Համբան էր, իր շուրջ զը-  
րական Հետաքրքրութիւնը վառ պահելը  
եւ ոչ թէ գրական երկը ինքնին, շին մը  
նման իր Հերոսուհիներուն: Իր Մանօթ-  
Դիւմբը, 1911-12 շրջանին Եւրոպա  
ճամբորդութենէն մաղուածը, էջեր ուղե-  
ւորի մը օրագրէն՝ կրկին գրականութե-  
նէն Հետացում մըն է:

Մարզի վերջոյ այն տպաւորութիւնը կ'առնէ որ Հաւանաբար Զօհրապ' Ս. Սակեանի, Գ. Կոստանդեանի ճամբան բռնած էր ու այնքա՞ն մեծցած՝ որ ալ Հայութիւնը անձուկ ու աննշան կու գար իրեն ու մանաւանդ մահացու՝ իր յախտենական եղբրականութեամբ ու անթափանց պահպանողականութեամբ: Ու ինք, որ 1887-ին քննադատելով ու չհաւնելու ցանկութեամբ սկսած էր իր կեանքը, 1900-ին հասած էր արդէն արհամարհանքին: Կարդացէք «Լուսաւորիչի մը» դրութիւնը (Մասիս, 1898, թիւ 48) «Մեր ճակատագիրն է Հին ու փուճ ըզբաղումներ հետապնդել, սեթեւեթներու, ծեծեղումներու մէջ մնալ ու քայլ չտանել դէպի առաջ»: Ուրիշ յորտա՞ծի մը մէջ՝ մեր ուսուցիչներու մասին՝ գուսուցչութեան անարժան մարդիկ են, աքուզէտ, անկարող, օրուայ աղային առջեւ բամակը ծուած»:

Նոյն հոգեկան հեռացումը կը մատնանշուի երբ բաղդատենք իր առաջին ու վերջին պատմութեանը — 1887ին «Վարդապետին Մականունը» ու 1912-ին «Անհատարիւմը»: Ազգային տագնապը տեղի տուած է գուս մարդկային տաղնապին, բնկերայինը վերածուած է անխառն հոգեբանականին:

25 տարի կայ այդ երկու պատմութեանը միջև ու եթէ նիւթը փոխուած է՝ ոճը, գրական ըմբռնումը, էսթետիքը շատ քիչ փոխուած են: Այսինքն՝ — Զօհրապ գրելու վստահ տաղանդը ունի, ունի զգայնութիւն ու երեւակայութիւն, ունի նաեւ մտածումի պոլիէկ կատուցում մը, կայ կեանքի իրողութեան խորունկ թափանցում: Բայց չկայ, չէ կզած երբեք Զօհրապ գրագէտը: 25 տարիները ոչ մէկ նորոգում բերած են արուեստի իր զգայարանքին մէջ: Ու 1915-ին ան շատոնց կտրած էր իր կուպը Հայ ապրող, տագնապող գրականութեան հետ: Ինչ որ կորսնցուցինք՝ փառաւոր, բացառիկ անձ մըն էր, Պոլսոյ 76 տարիներու լուսագոյն արտագրութիւններէն մին: Ու այս էակը Հաւանաբար շատ աւելի

արժէք կը ներկայացնէր, մեր մշակութի ընդհանուր պատկերին մէջ՝ քան յաջող գրագէտ մը: Տարբեր հարց՝ որ 1915-ը միայն արագացուց կորուստ մը որ սկըսած էր տեղի ունենալ:



Երուխանի պարագան բոլորովին կը տարբերի: Գուաուի կոչում, անտաղանդ շարժաչ դրողն է ան որ դեռ նոր սկսեր էր ապրիլ երբ դեռ կորուստ էր Երուխանէն ի՞նչ գուրս կու գար, թէ անոր արուեստի զգայարանը կրնա՞ր որեւէ զարգացում ունենալ, պատասխանը ժրտական ըլլայ, Հաւանաբար: Գասնը նոր մտած Զօհրապին կարելի է արտօնել որ դէէ իր վէպի հերոսուհիին մասին՝ «Պատանուհիին Հրաչայի գեղեցկութիւնը Անդրակի խելքը գլխին չառաւ, բայց անոր խոռվալից մտերմութիւնը գոյն չըզթայեց...», բայց երբ 30-ը անց Երուխան կը ներկայացնէ իր հերոսուհիին սապէս. «Ան յաւէտ գերծ էր որեւէ յետին, գունահիկ, ոտոր միտումէ. նոր տեղացած միւնի ճերմակ ու անսպակ մաքրութիւնը ունէր», ապա կը տարուինք մտածել թէ արդեօք Երուխան պիտի կրնա՞ր ազատագրուիլ իր պատանութենէն, պիտի գտնէ՞ր բնաւ կիտա՞ք կոչուած ահաւոր իրողութիւնը:



Ամիրայից Ազիկը 1910-ի գործ է: Հոն միպատանը իր ըսելիքը ըսած է ու վէպի հետ հաշիւը փակած: Բայց ըսած է այնքան անխնամ ու թոյլ ձեւով որ կրնանք հարց տալ թէ գրագէտը յատկանշող խղճմտանքը, բծախնդրութիւնը, գրական հասկացողութիւնը, արուեստի չափանիշներու ու պահանջներու հրամայականին իր հնազանդումը կա՞ն իր մէջ: Եթէ կային՝ Հաւանաբար զո՞հ գացին 1908-ի յաջորդող միջակութիւններու յաղթանակին, անտաղանդներու վրէժի:



Կեանքի մէջ (Պոլիս, 1911) ու Հա-  
րազատ արլի (Ռուսան, 1912) – այսքան  
է իր մատենագիտութեան ցանկը: Այ-  
սինքն կը մնայ կրկին մէկ մը որ կը կրէ  
դինք կանխող ժողովրդական վիպասան-  
ներու (Հաճեան, Փափազեան, Թիւթիւն-  
ճեան, Սարաֆեան, Ալիթունեան, Գասիմ  
եւային) գրութիւն անկասկած, բայց որ  
անկեղծ ճիշդ մըն է նաեւ զգացում ու ապ-  
րում բանասիրելու բառերու մէջ. կը  
յայտնէ՞ – կարեւորը հիմա այդ չէ (ա-  
տոր վճիռը տրուած է արդէն) այլ շեշ-  
տել թէ՛ երուխանի մէջ կայ անձ մը,  
պարկեշտ, իրաւ ու տոկուն՝ որ շատ ա-  
ւելի մեծ բարեք կրնար ունենալ մեր գը-  
րականութեան՝ եթէ ապրէր՝ ջան Չօհ-  
րապի նման բարձր անհատականութիւն  
մը:



Երուխան մեր գրականութեան չար-  
քաշ միջինն էր, ամէն փորձութիւններու  
գոհ ու նահատակ, ամէն յամառութիւն-  
ներու ատուկ, մարդ մը՝ զոր իրապէս

կորսնցուց մեր գրականութիւնը, որով-  
հետեւ ան մեռաւ՝ դեռ հազիւ ծնած:

Վ. Օ.



## Ս Ի Ր ՈՅ Յ ՈՒԹ Ա Ր Ձ Ա Ն Ն Ե Ր

Ամէն մէկ քայլիս՝ հիմաւորց շագանակեցնենքու մէջ պահուրտած *վիւաներ* երեսնին կը ցուցնեն: Ճերմակ պիտակներու վերայ անուննին գրուած է. Սօնիա, Մերսետես, Մաթիլտ...: Մեծ մասով կանացի անուններ: Այս պատիկ ապարաններուն տէրերը իրենց կեանքէն սիրոյ գրուած մը յաւերժացնել ուզած են այս կերպով: Կը յիշեմ որ ատենով հայ վաճառական մըն ալ Անգլիայէն ապագարած *ամերիկացի* ծրարներուն վրայ իր սիրած մէկ ազգկան պատկերը փակցնել տուած էր: Սիրոյ եւ վաճառականութեան գիրքընդխառնումին պէս բան մը, այնպէս չէ՞:

Վիլլա Մաթիլտին դրան առջեւ կեցած կ'երագեմ. այս անուցը մէկէն երեսուն տարի ետ կը տանի կեանքիս մէջ. ի՞նչ ռոտմուտ անհուն անջրպետի մը վրայէն: Ո՞վ իմ պատանութեանս արեւը, որ պահ մը բոլոր յիմար երագներս հորիզոնին վրայ սահող փախտական ամպերուն պէս գորովանալով ոսկեգոծեցիր: Ի՞նչ տուի ինքիս ատար փոխարէն. սա ապարաններու տէրերուն ըբածն անգամ չըրի. սիրուն անունդ չյիշեցի չնչին վէպին մէջ, ուր մեր միանալուն ուրախութենէն աւելի՝ բաժնուելու կակիծը պատմեցի: Այն անուշ կակիծը որ հիմա, անակնկալ վերջաշունտին առջեւ, այնուրեք մարդուն տխուր վայրկեանները կը ճաղցրացնէ նորէն, ո՞վ Արմենիսա:

Առտուն՝ դեռ Ներսիսի անտառը իր ցօղաբուրմ շուքին մէջ պառկեր է. պառկեր է գլուխը յերան սարին, սոքերը մինչեւ վարի հովիտները երկնցնելով. երեսակայեցէ՛ք Ալեմուտի անտառին ծառերը աւելի երիտասարդ, աւելի կարգապահ շարքերով:

Դէպի լեռը տանող արահետէն զացի մինչեւ ռուսական մատուռը, նրբամարմին շէնքը՝ համակ բիզանդական նարտարապետութիւն. յերան կողին վրայ, անտառին մէկ բացուածքէն մեծ ու պատիկ աշտարակներուն յոռյանքովը վեր կը բարձրանայ անիկա. ոսկեգոծ գմբէթներուն շրջապէս զեղիւնը շուրջի կանաչութեան հետ զոյններու էն շքեղ միաւորութիւնն է անտարակոյս:

Ներքը, ձախ կողմը, գերեզմանի մը վրայ երիտասարդ ու գեղանի կին մը իր բոլոր հասակովը երկնցած է մարմարին անշարժութեանը մէջ, երեսին վրայ չեմ գիտեր ի՞նչ վեհաշուք խաղաղութիւն մը տարածուեր է: Նասասուի վաղամեծիկ դքսուհին է ան որ միանգամայն ռուս մեծ-դքսուհի մըն էր: Ամուսինը անոր յիշատակին կանգնած է այս մատուռը:

Եւ սհաւասիկ պատին վրայ, գերեզմանին ճովիկը, բաց կապոյտ մարմարէ *Տեսալոյ* մը որ այս հոյակապ շիրիմը կերտող արուեստագետին՝ Հօֆկարթընի գլուխը կ'անմահացնէ: Արձան եւ արձանագործ, արարած եւ արարիչ միեւնոյն յաւերժութեամբ միացած իրարու:

Գ. ԶՕՀՐԱՊ

Մ. ԻՇԽԱՆ

### ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



Վարուժան մեր ամէնէն հարուստ, բազմեքանդ, բազմակողմանի եւ առատաճոս բանաստեղծն է: «Մրրկավարս եւ հսկայ քերթողն է» ինք, որուն բանին պերճութիւնը, պատկերներուն փարթամութիւնը, շունչին լայնութիւնը, մտածումին կորովը, յուզումին զուռ պայց անսական գորութիւնը զինք կը բարձրացրնեն Վիքթոր Հիւգօներու եւ Վերճաններու դասակարգին: Ընչ մը արձակելու, անկորնչելի վանկ մը արատասնելու

եւ միայր մեղեդի մը հնչեցնելու համար աշխարհ եկած է ալլապէս արժէքաւոր բանաստեղծներու խմորէն շաղուած իր խառնուածքը: Աշխարհը իրն է եւ ինքը աշխարհինը: Մուսաներու այցին պաղատանք մատուցանելու պէտք չունի բընաւ, որովհետեւ անոնք իր ինքնամատոյց գերիներն են: Որքան ալ իր քնարը ընդունակ ըլլայ փափուկ եւ քնքուշ հընչիւններ արձակելու, կը զգանք միշտ որ անոր կուրծքին ասկ կը փոթորկին մեծ կրքեր՝ մեծավայելուշ արտայայտութեանց կարտով:

Այս պատճառով Վարուժանի ոճը հրրեմն հեռուորական բայց միշտ պերճաշուք ընթացք մը ունի եւ սովորական բառերը քիչ կու դան կարծես: Վարուժանի վերագրուած բառամուլութեան մեղքն ալ արդիւնք է իր այս ներքին ուժականութեան: Իշխանաբար բարբառող քերթողը կը սիրէ իշխանական ծիրանիներ հազուիլ, որոնք եթէ երբեմն կը ծանրացնեն իր քերթուածները եւ կը քողարկեն զգացումին ջերմութիւնը, բայց մեր հոգիին եւ մտքին վրայ կը թափեն անհուն հարստութիւններ:

Յատկանշական է աչքի առջեւ ունենալ Վարուժանի հետեւեալ յայտարարութիւնը զոր ան ըրած է իր աշակերտներուն (գրի առնուած Առաքել Պատրիկի կողմէ), ըմբռնելու համար թէ բար, ուրիշ խօսքով քերթուածի մը խորքին ձեւ ու մարմին տուող միջոցը ի՞նչ արժէք եւ կարեւորութիւն կը ներկայացրնէ անոր աչքին:

«Ինձի համար բաւերը ասքոզ էակ-  
նիք են՝ իրենց կեանքը, արժէքը ու մա-  
նաւանդ իրենց խորհրդաւոր խնամու-  
քիւններն ունին: Երբ կը մտնեամ ա-  
նանց՝ իմ մեծագոյն մտահոգութիւնս զա-  
նոմք իրենց մշտագոյն առումով եւ տա-  
րզուրեամբ գտնեցիմ է»:

Այսօր մենք զժուար կը Հանդուր-  
ժենք զործածութենէ ինկած եւ գրաքա-  
րի վեհաշուք դամբանին մէջ պատանջ-  
ուած կարգ մը բառեր, որոնք Վարու-  
ժանի բառապաշարին մաս կը կողմեն եւ  
անոր քերթուածներու հաղորդականու-  
թիւնը կը զժուարացնեն: Բայց իր կող-  
մէ անոնց որդեգրումը Հետեւանք է մա-  
սամբ Միտթարեան միջավայրին, ուր  
ստացաւ իր ուսումը, մասամբ նաեւ բա-  
ռերուն ընծայած իր քաջատիկ պաշտա-  
մունքին:

Վարուժան քանի մը էջեր ունի եւր-  
ւիրուած Միամանթոյի քերթողութեան,  
Հիացումով եւ գնահատանքով լի: Այդ  
էջերուն մէջ վերլուծելով «Գիւցազնօրէ-  
ն»ի Հեղինակին լեզուն, կը յայտարարէ-

«Եարմանանի աշխարհաբարը բա-  
ւական մտան է իր անձին, խրոխտ, մը-  
կում եւ վայելուչ: Բարեկեցիկ լեզու մըն  
է՝ շքեղութեամբ հարուստ: Իր դիւ-  
ցագները եւ կարծեմ աւելի հզօր պիտի  
ըլլային, եթէ գանձէք էի մը աւելի հազ-  
ուեցնէր գրաբարին պղինձի բովէն հան-  
ուած գեներալարդով, մարտագոռ քառե-  
րով, յստակ ասացուածքներով»:

Ինչպէս կը տեսնէք վերի երկու մէջ-  
րերումներէն, գրական գաւառանքի վե-  
րածած է Վարուժան գրաբարին Հանքե-  
րը պեղելով արուեստի գէնուգարդեր ըս-  
տեղծելու նախասերութիւնը:

Պէտք է խոստովանել սակայն որ  
Վարուժանի լեզուն աստիճանաբար զոր-  
ունցաւ, թարմացաւ եւ դէպի պարզու-  
թիւն գնաց: Իր վերջին գործին մէջ ժո-  
ղովրդական բառապաշարի տարրերը ա-  
ւելի գերակշիռ են քան գրաբարինը:  
«Հացին նրզը» բաղկացնող քերթուած-

ները բերեցոյցած են թէ որպէս զգա-  
նութեան պայծառութիւն եւ թէ որպէս  
լեզուական կառուցում:

Վարուժան գեղապաշտ արուեստա-  
գէտ մըն է՝ դասական իմաստով, եթէ  
ընդունինք որ դասականութեան պա-  
հանջներն են մտքին տիրապետութիւնը  
զգացումներու վրայ, անձին ստորադա-  
սումը՝ համայնականին, դիտերու եւ գոյ-  
նելու մերկ յտակութիւն եւ շարիերու  
ընդհանուր հաւասարակշռութիւն:

Գեղապաշտի իր հաւատոյ Հանգա-  
նակը խոսացած կը գտնենք Հետեւեալ  
հնչեակին տողերուն մէջ, որոնք ուղղը-  
ւած են «Գեղեցկութեան Արձանին».

Վազիմ ըլլալ էու մարմարիոնդ պեղուած  
Ոլիմպոսի ամենէն խոր արգամդէն:

Եւ իմ մօրնիս տակ զգնու հրեղէն  
Միս մը կնայ, լոյսով, տեմդով սրաբաժ:  
Մերկ ըլլաւ դու բանաստեղծի մ'հոգւոյն  
պէտ,  
Եւ հեթանոս այդ մերկութեանդ ներքեւ  
Տառապի մարդն ու չկըրնայ դաշիւ Էնգ:

Վարուժան աւելի կը նկարէ քան թէ  
կը նուագէ, աւելի կը քանդակէ քան թէ  
կը բանաստեղծէ: Անոր ամէն մէկ քեր-  
թուածը կօմ պատկեր մըն է կամ արձան  
մը՝ վառ դոյներով եւ ցայտուն դի-  
տերով: Ստեղծապործածը ըլլալ նկար թէ  
արձան՝ կը հպատակի երկրաչափական  
կանոններու, ճարտարապետական կա-  
ռուցումի մը պահանջած կարգաւորու-  
թեան: Յստակութիւնը, լոյսը, փայլա-  
տակող պայծառութիւնը անոր արուես-  
տին էութիւնն իսկ են: Իր մօտ գրեթէ  
չենք Հանդիպիր կէս ըսուած խօս-  
քերու, մուշաթօղ պատկերներու, թե-  
րատ ստուերաղծերու: Ամէն ինչ աւար-  
տած ամբողջի մը կատարելութեամբ կը  
սիրէ ներկայացնել:

Գեղեցիկը իրեն համար երազի ու  
լիրոններուն մէջ չի գտնուիր, այլ կեան-  
քի թաւալուն յորձանքին: Երազայինը  
սիրել կարենալու համար, Վարուժան  
չափազանց իրապաշտ է, մինչեւ իսկ ըզ-  
գացապաշտ: Անա թէ ինչու՞ գեղեցկու-

թիւնը մարմնացնող գասական մերկու-  
թեամբ իր քանդակները - ըլլան «Արե-  
ւելեան բաղնիքներ» թէ «Գիտարբուքի սե-  
ղաններ» - ոմանց կողմէ սկիզբը գա-  
տապարտուեցան: սխալ ըմբռնումի հե-  
տեւանքով:

Գեղեցիկը երբեք դռեհիկ եւ հակա-  
բարոյական չի կրնար ըլլալ, որքան ալ  
էր ամբողջ մերկութեամբ ներկայանայ  
մեզի: Յունաստանի բոլոր աստուածներն  
ու աստուածուհիները մերկ էին. անոնք  
մինչև այսօր ալ համալիարհային թան-  
գարաններու պատուոյ տեղերը կը դրա-  
ւեն եւ գեղագիտական յուզումներու աղ-  
բիւր կը հանդիսանան:

Ահա Վարուժանի իրազայտութեան  
ըմբռնումը, իր իսկ կողմէ սահման-  
ուած: -

«Գեղեցիկը դպրոց չունի. գեղեցկու-  
թիւնը բազմանիւն հաստատակեղծ մըն  
է. մեծ արուեստագետի հոգին վերէն  
ուզողեանց նայող արեւուն պէս՝ այդ  
քիւրքի հաստատակեղծում ամէն ամ-  
կիւններէն շողի կ'արձակէ: Եթէ գեղե-  
ցիկը արտայայտելու տարբեր ձեւերուն  
մէջ կը կայանան գեղարուեստական դըպ-  
րացները, ես կը կարծեմ թէ բնութեան  
եւ հոգւոյն գեղեցկութիւնները մէկ կեր-  
պով ճշմարտօրէն կ'արտայայտուին -  
զանոնք մկարել ինչպէս որ են: Իրապաշտ  
գուցէ կարծեմ զիս. կ'ընդունիմ, բայց  
իրապաշտութիւնը դպրոց մը դասանդ-  
անքը կը սխալիմ. իրապաշտութիւնը գե-  
ղեցկութեան հասանելու ամենէն աւելի  
գիծն է: Իրապաշտութեան մէջ պէտք է  
փնտռել միւս բոլոր դպրոցները, որոնք  
իր ստորաբաժանումներն են լսի: Բնու-  
թիւնը իր խորհրդաւորութիւններն ունի,  
իր ամսանձ մրրիկները ունի, կամ իր մի-  
ջօրէի արեւուն միակտար խաղաղութիւ-  
նը. ասանք փոխն ի փոխ մկարելով ինչ-  
պէս որ են, ինչպէս մեր հոգիին վրայ կը  
ցուան, մենք փոխն ի փոխ կ'ըլլանք խոր-  
հրդապաշտ, բոմանթիք, դասական. հե-  
տեւարար գեղեցկութիւնը անթերի աք-  
տադրելու համար ես պիտի սիրի տալ  
այս բոլորը միանգամայն, բնութիւնը իմը

որ է, ինչպէս որ է, մէկ քերթուածի,  
մէկ տունի, նայմիսկ մէկ տողի մէջ մերք-  
ըլլալով միեւնոյն անգամ դասական եւ  
խորհրդապաշտ, բամանթիք եւ գաղափա-  
րապաշտ»:

(Աւետն Էստեանին ուղղուած նամա-  
կէ մը, 1910, Սվազ):

Ոեւէ զննողատ ասկէ աւելի լաւ պի-  
տի շարժողը բնութագրել Վարուժանի  
արուեստը, ինչ որ ըրած է ինք՝ բանաս-  
տեղծը, ինքնավերլուծումով:

Աւելցնենք միայն որ լուսանկարչա-  
յին չէ բանաստեղծին հաւատարմութիւ-  
նը իրականութեան: Եթէ այդպէս ը-  
լլար՝ շատոնց կը մեռնէր իր արուեստը:  
Տիեզերքին վրայ բացուած ինքնայատուկ  
աչք մըն է ան, որ իր ձեւով կը տար-  
բաղադրէ հասնող նառապայթները եւ  
բնութիւնը կը վերարտադրէ՝ անոր սա-  
լով աշուտական իր հոգիին խորհուրդ-  
ները: Կրկիննք անգամ մըն ալ - Վարու-  
ժան բնութիւնը չի բաժնէր մարդէն, ո-  
րով եւ իմաստը՝ իրերէն եւ գաղափա-  
րական ձգտումը՝ գիծերու եւ զոյներու  
խաղերէն: Տեսէք թէ ինչպիսի թռչե-  
ներ կը պարզէ անոր հոգին եւ ինչպիսի  
խորհուրդներ կը սեւեռէ՝ «Վարուժան գի-  
շերքը նկարած պահուն» -

Մտքի մեծերու բոլորին մէջ, պատկած  
կատարը դէզիմ՝  
Ես կը բռնում որ սքտիս դպչի ամէն  
մէկ ճամնայ.  
Ու կ'արքեմս գիմիսվմ Անտունի մեծ  
կարտիմ՝  
Ուր կը մտուիմ ասուպմեր քայլի մը տակ  
անճամայ:

Որքան իրապաշտ, նոյնքան եւ գա-  
ղափարապաշտ մըն է: Ոչ այն միտտիք  
գաղափարապաշտներէն որոնք կեանքէն  
կը կտրուին ընկղմելու համար խորա-  
խորհուրդ ապրումներու վերացականու-  
թեան մէջ: Վարուժանի գաղափարա-  
պաշտութիւնը հարազատ է գիծն ծնող  
ժողովուրդի ճաշխարհայեցողին, պարզ,

պայծառ, ողնախառն ու թեւաւոր, բայց միշտ հաշտ կեանքին հետ: Ազատութեան ծարաւը, բարձունքներու կարօտը եւ լոյսին տենչանքը Հայութեան դարաւոր իտէալն են կազմած: Հայ ժողովուրդը լալալ մատին մէջ վրած է իր ամբողջ պատմութիւնը. եւ երբ կ'ազօթէ՝ ան ուրիշ բան չի գտներ իր Աստուածը որակելու: «Լո՛յս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, ծագեա՛ ի հողին մեր զլոյս քո իմանայի...»: Իր բանաստեղծը՝ Դանիէլ Վարուժան՝ նոյն իտէալին ուխտաւորն է՝ երբ հոյակապ պատկերներով կը փառաբանէ լոյսին գեղեցկութիւնը եւ կը գիտէ՝ «Ի՞նչպի ազգիւրը լոյսին»:

Եթէ երեւակայութիւնը նմանցնենք հրեղէն նժոյգի, թեւաւոր ֆեդասին, որու քամակին բանաստեղծները սլացաներ կը կատարեն, պիտի ընդունինք որ զայն վարեցու, սանձելու զանազան կերպեր կան: Ոմանք անձնատուր կ'ըլլան անոր քմայքներուն եւ թոյլ կու տան որ սանձակոտոր արշաւէ իր ուզած ուղղութեամբ եւ ուզած տեղը: Կը պատահի որ արկածալից այս արշաւի ընթացքին ներշնչումի խեղ նժոյգը կոյս գազաթներ առնէ իր ոտքին տակ, անխոյզ եւ հրաշալի ոլորտներ փոխադրէ ձիաւորը: Կը պատահի նաեւ որ կէս ճամբան շնչապառ իյնայ կամ թաւալլոր վար նետէ իր վրայ աշտանակող մտքի խելախ ասպեալ: Ուրիշներ, ընդհակառակը, կորովի բազուկներով պինդ կը սեղմեն աստուածային նժոյգին սանձերը եւ զայն կը վարեն իրենց փափաքած ուղղութեամբ, իրենց որոշած տեղը: Վարուժան վարպետ եւ փորձ ձիավարի մը տըպաւորութիւնը կը ձգէ մեր վրայ: Իր երեւակայութեան թռիչքը կրնայ մըցիլ

երկնային տարածութիւնները ճեղքող սեւէ թեւաւոր հողիի հետ, բայց երբեք չի խախտեր բնականութեան եւ բանականութեան օրէնքները. նորութիւններ յայտնաբերելու սիրոյն՝ երբեք արտառցութիւններ չի ցուցադրեր: Գիտէ սանձերը միշտ ձեռքին մէջ պահել: Զափի եւ ժուժկայութեան դեղադիտական բնազդով առանորդուող այս ճարտարպետը կրնայ թէեւ այնպիսի աշտարակներ կատարանել, «ուր ծիացող հայկական կարմիր դրօշը արծիւներուն քրտինքը սրբէ»: Բայց կը նախընտրէ որ ընդհանրապէս այդ աշտարակները համեմատական ըլլան իր քերթուածներու շէնքին համաչափութեան: Ասիկա պատճառ մը չէ սակայն, որ Վարուժանի երեւակայութեան հզօր թափը մենք չզգանք անոր ամէն մէկ տողէն, ամէն մէկ պատկերէն եւ նոյնիսկ բառէն: Ո՞վ չզգար սանձուած հողմերուն փոթորկոտ շունչը:

Դանիէլ Վարուժան, տասնամեայ իր գրական վաստակով, նոր սկիզբ բացաւ հայ բանաստեղծութեան անդամստանին մէջ: Անուբանալի է անոր թողած խոր ազդեցութիւնը յաջորդ սերունդներուն վրայ: Իր գործերը պէտք չունին յանձնարարականի. անոնք կարգացուցան եւ սիրուցան երբ հեղինակը կենդանի էր, կը կարգացուին եւ կը սիրուին այսօր ալ, հեղինակին մահէն 50 տարիներ ետք: պիտի կարգացուին եւ սիրուին նաեւ դալիք բազմաթիւ սերունդներու կողմէ:

Հայ հանճարին ամենափայլուն մէկ ճառագայթն է Դանիէլ Վարուժան:

Մ. Ի.





## ՀԱՅՀՈՅԱՆՔ

[(ՀԱՅՈՒԱՅՏ)]

Աստուած, Աստուած Լուսուարչի, Ներսէսի,  
 Ուրեմն ա՛յս էր, փոխարեմն ա՛յս էր միթէ  
 Մեր ազօքֆին, ռեդրամոսին, կրեդրուկին...  
 Արդ ունկնդրէ՛ւ - Բնութեան հազար փառքերէն,  
 Սեղաններէն գոհերու,  
 Ջիմջ աստղերէն կամ սըրտերէն մանկական՝  
 Ուր էեզ դռով կը պանծնէ՝  
 Ինձ ունկնդրէ՛ւ - Յանձն այն  
 Ժողովուրդին՝ որ էեզ սիրեց եւ առանց  
 Քու օգնութեանդ խաչուեցաւ,  
 Յանձն անոր՝ որ ողջակէզ ըրաւ էեզ  
 Ոչխարներէն ամէնէն կայսն, ամէնէն  
 Լըծընկէցն իր ցուլերուն,  
 Եւ իր գինիէն խըմորած  
 Սափարներու մէջ պորփիւր  
 Քու արիւնիդ սահմանեց -  
 Յանձն անոր՝ որուն սըրտին վրայ, դարեր,  
 Իրք ադամանդ կրուսանի,  
 Կայծակնացալ ռոտքդ դըրիք, ուգեցիք  
 Որ կրունկիդ տակ փըշքելով  
 Եղջիւրներն իր դիմամարտ՝  
 Սըրբարանիդ մարմարներուն վրայ միայն  
 Յայտն օճքերը վառէ -  
 Եւ յետոյ ալ իր պաշտումէն՝ կըշտապինդ՝  
 Ջայն, իրք Յիռուս մ'անկերու մէջ քաղլըճած,  
 - էլի՛ լամ... ըրիք քացալսն իր՝ քունտա,  
 Կողին նիգակն՝ հաստաբուն,  
 Յանուն այդ հէզ ժողովուրդի՛ն կ'ըսեմ եւ  
 Սա մըքընչազ ժամուն մէջ ո՛ւր որ ըլլաւ,  
 Ո՛ր աստղին մէջ եւ կամ ա՛ր  
 Թուխ ամպին վրայ շանք ի բռին,  
 Իմ կըռուփս ըզքեզ կը գըտնէ  
 Եւ բերանս իմ կ'հայեայէ՛...» -  
 Ըսաւ : - Իր շուրջը տըղաներն անաբեկ՝  
 Գլուխնին ծածկած քեկերուն տակ իրենց մօր,  
 Բակըսան լալ, եւ կիներն ուլ ազօքել -  
 Իսկ գագանները հեռուոր լեռներէն՝  
 Արարչին սուրբ Անուան համար վրէժխընդիք՝  
 Լուսինն ի վեր երկա՛ր, երկա՛ր ռոնացին...  
 Ջը լըսեց ան, կամ չուգեց  
 Ոչինչ լըսել : Մօտեցալով դիւսահար  
 Լայն անդունդի մ'առլեփին,  
 Մըրմըրքալով, յուսահատ,  
 Ինքզինքը վար արճակեց...

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

Ե. ՊՅԱՃԵԱՆ

**Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ**



յութեան խորագոյն վէրքերն իսկ բու-  
ժելու ի վիճակի եղող: Միակը, այս ան-  
գամ իբրև զէնք՝ փրկելու այս ազգը իր  
բոլոր տեսակի ստրկութիւններէն: Աւ-  
ժիակը միշտ՝ կերակրելու իր ժողովուր-  
դը երկով ու սիգօթքով, իմաստով ու հե-  
քիաթով: Աստուած դտնելու իր բոլոր  
որոշումներով, բոլոր ուխտերով, բոլոր  
տեսակի հին ու նոր բառաստեղծու-  
թեամբ:

Կրօնքները իրենց սոսաքանները,  
սիւներու վրայ ապրող ճգնաւորները,  
խենթներն ու միաթիւնները ունին. իր սիւ-  
նակեացները, իր ցկեանս Հաւատարօր  
նուիրեալները ունեցած է որեւէ մեծ կը-  
րօնքի պէս՝ նաև հայերէնը, արիական-  
ներու այդ մեծազօր հրաշքներէն մին, -  
Արարատի ուրիշ մէկ դարձիւթը, ուրիշ  
մէկ հիմը, ուրիշ մաքրութիւնն ու ու-  
րիշ լոյսը: Հայաստանի հողին եւ քու-  
րին, օգին եւ արեղակին ուրիշ մէկ բա-  
նալին:

Որոշ է ու մեր մտորակին վրայ յա-  
ւիտենական ճակատագրի պէս փորա-  
գրուած, թէ՛ -

Սուանց բան մը պաշտող տարօրինակ  
ու տարերային մարդոց՝ չկայ, ոչի՛նչ է  
որեւէ կրօնք, որեւէ յեղափոխութիւն,  
որեւէ արուեստ: Չկայ, անկարելի՛ է որ  
ազգի որեւէ հաւատք, որեւէ դաւանանք,  
որեւէ վարդապետութիւն: Յիսուաներ ի  
զո՛ւր խաչուած կ'ըլլան, Պուտտաներ ի  
զո՛ւր ամէն ինչէ՛ հրաժարած, Բուդեա-  
փիիէրներ ի դուր կառափնատ առաջնորդ-  
ուած, եւ, հողեկան ու իմացական կար-  
վերու մէջ, Մեսրոպներ ի զուր իրենց  
ուզեղին բոլոր բլթիւնները ձայնի եւ ձայ-

**Պարբէն Զարգարեան:**

Մեծաքանչիւն մեծ կախարչներէն՝  
լոյս ճակատով այս նահատակն ալ, իր  
ընկերներուն պէս: Կախարդ ու կախարդ-  
ուած մանաւանդ: Մինչև ծուծը հաւա-  
տացեալ հակայական մոլեռանդ մը՝ մեր  
լեզուին նուիրականութեան եւ անչափե-  
լի ուժին առջև. ձայներու այն խորհրդ-  
դաւոր դաշնաւորման առջև, որ զեղ ու  
դարձան իբրև միակն է հաւանաբար Հա-

նական լույսի մը վերածած: Ամէն բան իր բարձրագոյն կէտին կը հասնի, կեանք ու սեւեռում ունեցող, հողիին մէջ զինք ճգող թունդ բան մը շարկած խնկանք-մաններու կարեւոր համբանքով մը միայն:

Այդպէս, -

Միշտ ներքին ծանր բեռներով պտը-տող ժարդիկն են, որոնք առօրեաներու եւ լղրճուկ ռամկուժիւններու մէջ շուտ-րած կեանքը պիտի դնեն իր բարձր ու յաւիտենական հունին մէջ: Պիտի չձգեն՝ որ մշտապէս ցեխինը եւ մանրութիւններունը բլլայ ան, քանի որ իր բնական դիժը բնաւ այդ չէ, միւսն է, - ստեղծազորը մեծութիւնը:

✽

Հայոց լեզուին քայտոկ ճգնաւոր-նութիւն, խնկ, մեհնական ու բազմա-կան արամազրութեամբ սիւնակեացե-րէն էր, մշտնջենական մեղրի մը միւսն է մահ անոթին՝ զէպի իր ազդին վարժա-րանները լեզուի մը ոչ թէ փոքրիկ մէկ ջուրը, այլ ամբողջ «Մեղրագետ» մը Համբայ Հանած երիտասարդը, որ Չար-դարեան կոչուեցաւ: Տարաւ ան իր հայ-րենիքին ու հայրենական ժողովուրդին ամէնէն յստակ այդ ջուրը, ծփանք առ ծփանք, ողողում առ ողողում, անով ուսուցիչու համար դպրոցականներուն սիրտն ու իմացականութիւնը: Չօղանեանի ե-րեւակայած հիմնաւորը գետին առջեւ նուիրական ջրտուքի մը համար կեցած այս երիտասարդը, ծնաւ Սեւերէկի մէջ, մեծցաւ՝ Պարբերդի օդով եւ իր օրերուն Պարբերդի համար երկրորդ օդ մը եզած թշկատիւնցիի շունչով: Այդպէս մտա-դրեց իր ժողովուրդի սրբազան լեզուին ջրկերը ըլլալ:

Իր գասադրքերու շարք «Մեղրագե-տ»ը զինք գերազանցող գասադրք չու-նեցաւ տակաւին, զէթ Սփիւռքի մէջ, յիտուն ու աւելի տարի ետք իսկ: Մեղ-րագետներու ժողովուրդ Հայը ունեցաւ իր աշխարհագրական Մեղրագետը եփ-րասի մէջ թափող, գասադրքերու շարք

Մեղրագետ մը, դպրոցներու իր լայն գետաբերանով եւ երրորդ ու իսկապէ՛ս դերազանց մեղրագետ մը՝ - Յայգալոյ-սի խորհրդապաշտին անապական արձա-կը: Միջակ հատոր մը՝ ամբողջ վաստա-կը խորհրդոցի երիտասարդ դրազէտին, ուր Հայաստանի բառերը ճանանչող լոյ-սի վերածուած են, ու դաշտերուն, ու հովիտներուն, ու բարձր Մաստապերուն լոյսերը՝ հեջիաթային բառի: Ուր, այս անգամ լոյսն ու բառը Հայոց Աշխարհին՝ եղած են քաղցրագոյն մեղրը, ջինջ եւ անմահական, Հայաստան կոչուող յաւի-տենական մեղրափեթակին:

Հայրէնի մեծ քրմականերէն էր, մոլորեալ մը:

Ռուբէն Չարդարեան անունով Հայ գրականութեան մէջ քահանայադարձող այս միսթիքը, ցայտալոյսի մը մէջ կե-ցած, ամէն բառ կը տեսնէ ընդարձակ, կարծես անվախճան ցերեկի մը պատկե-րով: Կը տեսնէ բառերը ու կ'օգնէ, որ աւելի լոյս եւ ուժ Հաւաքեն, զի՞, ու գոյն, ու կ'ընթ կուտակեն՝ իրենց վերջնական պահը դտնելէ եւ դրքի մը մէջ հանդիսադրուելէ առաջ:

Բառերը, այսպէս, շարքեղէպի ան-տառի մը կեանքը ունին, Չարդարեանի գրական վաստակին մէջ իրենց անտառ մը քաղցրութիւնը բերող, իբրեւ հայե-րէն լեզուի տօնական օրուայ կեանք եւ սպրում:

Յայգալոյս:

Մի՛ խարուիք դիշեր եւ մթութիւն յիշեցնող այս բառէն: Լեզուի մը պայ-ծառագոյն եւ ջերմագոյն մէկ ցերեկն է ան, իր Բագինի փառաբանութեամբ, իր Եօթը Երգիչները էջերով, իր Ով որ Սալ-թան Մը Ունի Իր Հոգիին Մէջ անճառ-նալի արձակով, Հայրենական Սազը ա-նուշ քնարերգութեամբ: Ու դեռ իր Հըս-չակաւոր Գամբոսով, ու դեռ իր եղբրա-կան գիրքերու դո՛հ Չարմուած Որսարդով, եւ ուրիշ ահաւոր անէծքի մը կարգա-գրութեամբ Քարացածներով: Ինչ գիտ-նամ տակաւին ինչով:

Նաև առարդեան օրերու Հանդիսական րան մը կայ Չարդարեանի արձակին մէջ։ Հին, պայծառ, շքեղ բան մը. բացառիկ օրերու եւ բացառիկ սերտութեան հայկական մաքրութիւն մը կարծես։ Արտաշէսեան լուսացնցող հարսնիքէն մեզի հասած ձայնի վճիտ նօթ մը, եղջերափողի հզօրափայլ շեշտ մը։

Տ

Պարճարդապաշտ մըն է։ Այդ ուղղութեամբ իր մեծ ծարաւները կ'ուզէ յազեցընել ոչ թէ մութով, այլ ամէն ինչէ բխող ընդհանուր լուսափայլութեամբ մը, ամէն իմաստէ, իրէ ու երեւոյթէ ինքզինք դանձող կրթականքով մը, հեղաթ քանով մը։

Մերթ հեթանոս դուստն է եւ մերթ իրանցի կամ արար տերվիչ, տառապած ու տաղանդաւոր՝ որ պապղուն ամուսնեբերուն հին եւ խորհրդաւոր մէկ դիտութիւնը սորված, իջած է դիրք մարդոց հրապարակը։ Բանաստեղծ միշտ ու տերվիչ՝ որ տեղը գիտէ մեր հետաքրքրութեան զաղտնի սկերտուն, որ սերտած ըլլալ կը թուի մարդկային երեւակայութեան իղձերը եւ զանոնք զուրս բերող բուն բառերը, որ, վերջապէս, իմաստուն բնազդի մը օղնութեամբ կարծես, հին մէկ ծանօթն է Գեղեցկութեան եւ Մարդուն միջեւ եղող անբախտելի եւ յաւիտենական կապին։ Արեւելքի ամենահին մէկ բարբառը խօսող այս տերվիչը, որուն ցեղն ու հողը մտորակի հնազոյններէն ու իմաստնացածներէն եղան՝ բանաստեղծաւուդի եւ ժողովրդական իմաստունի երկխաւ տաղանդներէն եղաւ։

Այսքան՝ եթէ պահ մը մոռնանք իր յեղափոխական Հայու դադափայտութիւնը գիծը, որ զիչ զեղեցկութիւն չի բերեր իր ներքին դիմանկարին։

«Թայգալոյս»-ին հեղինակը գրելէ աւելի երեւակայել կը սիրէ կարծես. իր նախագատութիւնները, ճշգրիտ եւ պըսպըղուն, նուազ կը բացատրեն զինք այս սուհանդերձ, քան անոնց մէջ մտած բառ

մը յաճախ, որ կը գտտէ ինքզինք նախադասութեան ամբողջէն, առանձին կապով մը մեղի հետ կապուելու համար։ Հեղինակներ կան, որոնց ընդարձակ խօսքը փոխանակ ընթերցողը ներքնապէս ընդարձակելու, դասն սարսափելի համեմատութեամբ մը կը նեղցնէ, կը կըծկէ, կը զիչէ կարծես. կը պատահի որ ընթերցողը կրճատուի եւ լմմնայ իսկ, իրարմէ բխող եւ իրարմէ ձանձրոյթով հեռացող այդ անզեղեցիկ առատութիւններուն առջեւ. բունի եւ բունադրօսի տեղերէ եւ ոչ թէ ուղեղէ մը եւ սրտէ մը եկած խօսքերուն ճակատադիրն է աստիկա, Ձրհեղեղէն շատ առաջ ու շատ վերջը. այն հեղինակներն են ասոնք, որոնց սիրտը, միտքը, հոգին, տաղանդը եւ տաղանդին բոլոր ըսելիքները ստանձնած է կամ չոր գրիչ մը կամ ալ գրամեքենայ մը. գրելուն գործիքները գնելով, թըւած է այս դժբախտներուն թէ՛ գնած են նաեւ տաղանդ, սիրտ, երազ, երեւակայութիւն, ըսելիք։

Եւ հակառակը, կան ալ ուրիշ հեղինակներ, որոնք կերպը դիտեն ընթերցողը գործակից դարձնել իրենց ստեղծումներուն։ Այս վերջինները կը ջանան իրտ ու նաեւ թելադրական ըլլալ, դիտնալով որ ընթերցողը ընդլայնելու ամէնէն ապահով մէկ կերպն է աստիկա. դասն մեղմով ու ժանաւանդ իր իսկ ուղեղով անհցնելու զեղեցիկ ձեւ մը։

Վերջին հաշուով, բուն դրադէտը ուրիշ է։ Աւելի խոր է ու հեռու։ Աւելի ընդարձակ ու բերրի։ Չէ՛ երկարապատումը; տափակը, մտքի ծածոններով բթացած ու բթացուցիչ թշուառը, գրականութեան ապարդիւն եւ անփափկանքկատ ներկայութիւնը։ Ու չեն նաեւ անոնք՝ որոնք մասալի մը կամ հիշող մէջ տեղն են կամ ալ մատ մը անդին. որոնք տեսթան կը շարադրեն Հոմերոսի մը ծանրախոհութեամբ եւ բոյսի մը շափապուչ։ Ոտտիկանական, լրտեսական եւ նման ուրիշ ճարտարութիւններ իրեւ վէպ ծախող հեղինակներ, ամօթ է որ ընթերցող չունենան. չունենալը հոս ար-

ժէք չէ, այլ հարիւր առ հարիւր ձախողութիւն: Ձախողութիւն չէ սակայն, երբ գրողը մեր առջեւ եւ մերթ մեզմով, կ'աճի դէպի վարերը մարդկային էութեան ու դէպի վերերը անոր բարձրագոյն ձրդատումներուն: Անո՛նք են ամէնէն աւելի գրողէտ, որոնք ունին ընթերցման պահուն գործակից, որոնք ունին զիրենք կարողացող ենթահեղինակ:

Ձարդարեան, երբ մօտէն քննենք զայն, առանց արտաքին միջամտութեան ու միջնորդի, ունի լայն չափով մը իր ընթերցողը հնթահեղինակի վերածելու կարողութիւն: Իսկ այդ բանը ան կը պարտի իր բառերուն, որոնց տարողութիւնը սովորական չէ:

Այսպէս --

Բնութիւն նկարագրող Ձարդարեանի բառերը, մասնաւորաբար Հեքիաթնորուն եւ արձակ բանաստեղծութիւններուն մէջ, ոչ պակաս զոյն են լոկ, ոչ անարկաններու դեղեցիկ չէզոքութիւն, -- դուր եւ ինքնանպատակ --, եւ ոչ ալ մանաւանդ էջ կաճառերէլու կոչում շքեղ, այլ ստուգիկ անշարժութիւն, մէյ մէկ միւնային բան: Ամէն բան անոնց մէջ բիրեղեայ մէկ մանրանկար է Հինցած, Հեքիաթացած, ու Հիմա հեռու, կարծես անկարելի անցեալի մը մէջէն կարօտ առ կարօտ մեղի վերադարձող աշխարհի մը: Աշխարհ մը՝ չեւ զիտեր ե՞րբ քեզմէ խզուած, ատեն մը քեզ բնակիչ ունենալէ ետք, ե՞րբ եւ ինչո՞ւ լքուած ու բաղձալի սակայն, իրմով Հեքիաթ մը կ'տացընելու չափ: Աշխարհ մը՝ որ հեղինակը բառի մը կամ շատ շատ քանի մը բառերու մէջ կը գետեղէ, զոր կ'արձանագրէ իբրեւ իբր եւ մերը նոյն ատեն, շահակիցը դարձնելով մեզ իր գոտած կամ ըստեղծած գեղեցկութեան: Եւ արդէն չըսի՞նք թէ բուն արուեստագէտը շահակցութիւն մը կը ստեղծէ իր եւ մեր միջեւ, Գեղեցկութեան նկատմամբ, կերպը գտնելով մեզ եւս աշխատանքի մղելու:

Իւրաքանչիւր բառ դարձանալի լայնք մը, ընդարձակութիւն մը ունի, մեր շատ մը դազանի, մեզմէ իսկ խուսափած պահունքները պարունակելու խորունկ տարողութիւն մը: Այդ բառերը մեզի նօթ իրենց ծաւալէն ու մակերեսէն զատ, ի յայտ կը բերեն նաեւ ուրիշ ծաւալ մը եւ ուրիշ մակերես: Հեղինակին ուղածն ու սուածը այս անգամ:

Մեր ըսածին օրինակ սուած ըլլալու համար յայտնէք, թէ «Ձարդարեանը» արտորդին եւ «Քարագամները» Հեքիաթներուն մէջ, ուր քիչ մը դէպք է պատմելու, բառերը զրեթէ միշտ կ'անցնին բառարաններուն ու դասադրերուն խրենց սուած սահմանը, դասնալու համար տեղ մը գործողութիւն մը ամբողջ, ուրիշ տեղ շատոնց մեծած աշխարհի մը գաղտնի ծխնիները շարժման մէջ դնող եւ այնտեղէն շերտ շերտ անցեալի կահուղ ճառագայթ բերող ներկայ մը: Երբորդ անգամ մը, տարածութիւն, ժամանակ եւ կեանք խտացուցած այդ բառերը կը պատմեն մեզի ժողովուրդի մը կամ դասակարգի մը ոճն ու ստանձնայտկութիւնը շինող բարեբեկէն: Երբորդ անգամ մը, բառ մը կամ բառեր՝ կու գան վառել մեր կրեակայտութիւնը, ստեղծել լոյս, շերտութիւն եւ հեռանալ:

Կը դժուարանանք Ռուբէն Ձարդարեանին ջով դնել ուրիշ անուն մը հայ դրականութեան մէջէն, որ իրեն չափ ընդունակ եղած ըլլայ այսպէս ըսած անշարժութիւնը քսեցնելու, մերթ նոյն իսկ վազցնելու: Ունի՞նք հաւանաբար, բայց ինք կը թուի մեղի առաջինն ու առաջնակարգը այս ուղղութեամբ: Ինքն է արագութեան պատրանք ստեղծողը ոչ թէ անարագ, այլ բալորովին անշարժ բաներով: Թլկատինցիին այս վայելու աշակերտը կեանքերը անցնելու, խոսվելու, եւ ցնցուած ու ցնցող քանով մը մէջտեղ նետելու շարժանկարային իմրագիծն կը ստեղծէ միջեւ վերջ: Պատրանագէտ մըն է: Եւ Հեքիաթը ինքը ամենամեծ պատրանագիտութիւնը չէ՞ արդէն:

Ճ

Խորքեւ արուեստագէտ, Արեւելք կայ աւելի Ձարդարեանի մէջ քան Արեւ-

մուտք: Իր հեքիաթը արեւմտեան շէ բը-  
նաւ. կը թուի բոլորովին արեւելեան.  
այդպէս կը թուին նաեւ իր արձակ բա-  
նաստեղծութիւնները. իսկ պատմուածք-  
ները արդէն ժողովուրդը ունին իբրեւ  
միջովայր եւ ոճ:

Կը կարգաս Չարդարեանը ու զեղի  
կը թուի, թէ ան արեւի մը առջեւ է  
միշտ, այնքան որ իր խօսքերը հեքիաթ  
կը մտմտան ու անոր հետ անպայման  
լոյս. իր էջերը կարծես պայծառութեան  
լողանքէ մը կ'ելլեն շարունակ. մաքուր  
են եւ գաղտնի օճառներու ու գաղտնի օ-  
ճանեիքներու թեթեւ բոյր մը կայ ա-  
նոնց իւրաքանչիւրին վրայ:

Արեւելքը, - Հայութեամբ մը բա-  
րեխաոնուած իրանօ-արաբականը -, բա-  
նաստեղծ մը գրած է Չարդարեանի մէջ.  
տաք երեւակայութեամբ ու տաք պայ-  
ծառութիւններով շիկացած անձ մը՝ դի-  
նիի, սագի ու սիրոյ բարձրագոյն կո-  
շունքին իր մասնակցութիւնը բերած կոշ-  
նական մը՝ որուն համար կեանքը երազ  
է, արբեցում եւ ներքին անվերջ օրօր,  
անվերջ կշռոյթ:

Ու այս մերթ ժայնացած խոռվք եւ  
յաճախ այ ձայնացած յափշտակութիւն  
է իր հեքիաթներուն մէջ. հինցած, ե-  
փած, իմաստնացած Հայ Հոգի բարձր  
ասութիւն:

Իսկ մեր կարծածէն աւելի ծօտ է  
Չարդարեան իր «Տան Սէրը», «Անւ Հա-

ւր կանչեց» եւ «Պաւս Մը Զուր» պատ-  
մուածքներուն մէջ Հոգին առաջին բեր-  
քը եղող ժողովուրդին:

✽

Յեղափոխական մտաւորականի ցայ-  
տուն տիպարներէն է, կրակ եւ ըմբոս-  
տութիւն ժայթքող կարմիր Հրապարա-  
կագիր մը՝ «Ռեզոլի»ի եւ Յեղափոխու-  
թեան ծաւալուն օրաթերթ «Ազատամար-  
տ»ի խմբագրապետը: Արեւմտահայերուն  
Ուարունեանն է, իբրեւ յեղափոխական  
խօսքի աւետարանիչ: Ու նաեւ տեսակ  
մը արձակ Սխամանթօ է ան, տեսակ մը  
արձակ Վարուժան՝ ըմբոստութեան Հա-  
նարակաց գիծով մը:

Բանակալութեան ու բռնակալներուն  
դէմ ահաւոր մատենապարտութեամբ մու-  
նետիկներ ունեցած է Հայ ազգը, հինէն  
ի վեր, իր մեծ ապստամբներուն կողքին,  
մեծ ապստամբները մեր ժողովուրդին  
մէջ անպակաս ընելու գերագոյն ու մաք-  
րագոյն մտահոգութեամբ մը. ասոնցմէ  
էր եւ ասոնցմէ մնաց Բռնաւորին Արցունք  
թափել տուած եւ Բազիններու փառա-  
բանութեան Հրեղէն արարողութեանց  
պայծառ վարժութիւնները մինչեւ մահ  
կրկնած այս յեղափոխական էմպեալար:

Ե. Գ.



### Բ Ա Գ Ի Ն Ն Փ Ա Ռ Ա Վ Ա Ն Ա Ռ Ի Թ Ի Ն Ը

Անա մե՛նք վառեցինք խարոյկը, որպէսզի խաւար աշխարհին մէջ անոր բոցերը ճարմատելով լոյս տան բոլոր անոնց՝ որ անմխիթար են եւ մոլորած գերութեան ճամբաներուն վրայ:

Մենք վառեցինք բագինը՝ որպէսզի հայրենի գեղերն ու բողոքները անոր նային, որպէսզի տանջուողները իրենց բռունցքները սեղմելով՝ դէպի հոն բարձրանան: Մենք վառեցինք կրակը՝ որպէսզի ազատութեան ճամբան լուսաւորենք:

Քարս բնք ու երդուեալ պահապանը՝ օրհնեալ բագինին գոհած ենք նուիրական կրակին՝ կեանքի բոլոր ցեծութիւններն ու գինավութիւնը, երիտասարդութիւն, վայելիք, գրգռմէք, ու արեւին բոլոր հաճոյքները, բոլոր սէրը:

Մուխը որ կը ծառանայ այս տանարին խորէն՝ մեր սեւ երկրին մտայլ ցում է, անէծքի սիւնն է արհաւիրքի անապատին մէջ թափառական ժողովուրդին եւ յայտնութիւնը յդի ապագային:

Ի գա՛ւր կ'ոռնայ բնութեան փոթորկայից յիմարութիւնը մեր գլխուն վրայ. ի գո՛ւր խաւարին շունչը կը փորձէ մարել հրաբորբոք խանոթները. տա՛ք մոխիրն է որ կը ցրուի միայն հեռունները, կայծերն են որ կը թռին դէպի տարածութիւնները՝ հրդեհելու համար ատելութեան նոր մորեմիներ, կրակ սպառ համար բշտառութեան սեւ անտառին:



Ուխտած ենք կրակով հատուցանել այն պարտքը որ թշնամին համայնատարած հրդեհով ու մոխիրով փոխ տուաւ մեզի:

Ուխտած ենք մեր մայրերուն նամուսին վրայ՝ տալ վրէժ-խրնդրութեան այն հարկը՝ որ աւերման անպատիժ օրերը՝ իբրեւ շղթայ մեր վզին վրայ բեռ դրին:

Մենք ամէնքս ալ անժառանգներ, որք ու ոգւորներ ենք. մեր հտուէն միայն արցունքի. անօթութեան ու տանջանքի ազազակը կը գալարուի. մեր հտուէն անթաղ մեռելներու, անտէր գերեզմաններու յիշատակը միայն կը հետեւի իբրեւ անհանգիստ ստուեր եւ մատով ցոյց կու տայ նահատագրական ուղին:

Ու մենք տենդահար ձեռքերով կը վառենք խարոյկը, մինչեւ որ անոր բոսորագոյն լոյսը ճառագայթէ բոլոր մութ հոգիներէն ներս, մինչեւ որ ստեղծագործ բարկութիւնը սարսէ բոլոր կամփերը, մինչեւ որ ազատութեան վերջին գոհին մարմինը ճեննորի փրկութեան տաճարին առջեւ:

Ո՞վ է որ պիտի կրնայ մարել դառնութեան, գրկամքի, թըշուառութեան այս համայնատարած կրակը... ո՞վ է որ պիտի համարձակի արհամարհել արեան լիճին մէջէն բարձրացող այս ցնարակուն հրաբուխը:



Ինչ որ ոնիրն ու արիւնը պղծեց, պէտք է որ կրակը մաքրէ գայն:

Մենք կը դառնանք հին հաւատքին ու կ'ընկրպագենք նորին հուրին ու իր սարերային գորութեան:

Ահա ստրկութեան սղջակէզը որ կը վառի փայտակոյտին վըրայ:

Դարերու նախատինքն ու ամօքն է որ կրակին սրբազորութեանը կը յանձնենք. ազաւանքի, երկրպագութեան, մտերացկան կեանքի ազրակոյտն է որ կը հրդեհենք:

Եւ բոցերուն տախտակինը կ'անցնի մեր հոգիին մէջէն. կ'ընայ տառապանքի ծանր բեռը մեր ուսերէն եւ իբրեւ փիւնիկ՝ թարմ ածրնմերուն ծոցէն կը վերածնի մեր իտէլը անդադար, կը վերածնի մեր հաւատքը, մեր սերունդներուն անհատնում ուժը:

Բարձրագոյնն ու անյողոյնոյ՝ կանգնած ենք մահուան դէմ՝ մեր անաւոր ցաւին հետ որ մեր փառքն է միանգամայն, եւ հպարտութիւնն ջնջենք վատմութեան աւանդելու դիւցազնութեանց ամէնէն սխրալին, հպարտութիւնն ունինք հետագայ դեռ տառապող մարդկութեան փոխանցելու ազատութեան ամէնէն հզօր սարսուռները:

Ջրում չենք գզար, ո՛չ վշտակութիւն, եւ ոչ մէկ ստրջանք՝ մեր հոգեվարքի պահուն՝ եթէ բարբառս տարը փշրէ մեր վերջին ոսկորն եւ խմէ մեր արիւնին վերջին կաթիլը. մենք տեսնուք թէ ազգերու արդարութիւնը անարգանքի ցիցին զարնուած է, մենք հասնուցանուք թէ տիեզերական խղճմանքը վաղուց իր կուսութենէն գրկուած է:



Թող ուրեմն բռնկի խարոյկը՝ աւելի ուժով, աւելի կատաղօրէն:

Մենք բացինք տանարին դռները, որպէսզի համայնական բռնաբար, նզովքն ու օխը թխեն ապստամբութեան վրէժխնդիր մորիկը, որպէսզի արդարախոյզ պատուհասը հոն իր աստուածային զըրահը հագնի եւ իջնէ կայծակնակերպ՝ հարստահարութեան այն անհամար ամբոցներուն ու բերդերուն վրայ, որոնց պարիսպներուն տակ մեր բխրաւոր ոսկորները ինկած են, որոնց շինութեան ու շաղախին համար մեր արիւնն ու արցունքը զործածուած են իբրև զուր:

Թող ուրեմն վառի կրակը՝ աւելի ուժով, աւելի կատաղօրէն: Վա՛յ ամոնց որ կ'արհամարհեն գոհեաւ հսկայական քայլը, վա՛յ անոնց՝ որ տանջանքի հրեղէն գետին ընթացքը իր զայրոյթէն շեղել կը յանդգնին:

Թող բռնկի ռնիրներու սպանդանոցը եւ բոցերը թող լզնն պղծութեան բաշտ անկիւնները, որովհետեւ ժողովուրդի մը չարչարանքն է որ կ'եփի եւ կ'ետայ դժոխքի մը պէս:

Թող արծաթի կրակը, որովհետեւ յուսահատութեան ու մահուան ցուրտը մեր հոգիէն ներս կ'անցնի, որովհետեւ չարիքին հեղեղանման կարկուտն ու անձրեւը դարձար չունին:

Թող բարբառքի խարոյկը՝ աւելի ուժով, աւելի կատաղօրէն:

Ռ. ԶԱՐԿԱՐԵԱՆ



ԱՐՄԻՆԷ

**Ս Ի Ա Մ Ա Ն Թ Օ**

Իր ծրրկայտյղ ներաշխարհէն փրթած դաշն ո՛ւ վսեմ բառերէն եղաւ եւ իր անունը: Ան իրուեցաւ իր ժամանակի ցընցումներուն սիրտը, սպառեց, լափեց զանոնք: Ու Սիւմանթոն դարձաւ Հայ Յեղափոխութեան բարձրագոյ՛ր ուղղորդուն, պանդխտութեան արամաթաթաւ երգիչը, եղևոնի Քսոմենեցուցիչ պատկերներուն սրտակեղէք բանաստեղծ-վիպողը:

Տարփաւոր մը՝ կիրքով, խելայեղութեամբ սիրեց իր ժողովուրդը, իր հայրենիքը:

Մերժեց ինքզինքը, ուրացաւ իր եսը: Հակայայտաւ: Միլիոններու սիրտը ընդգրկող հակայարո՛փ սիրտ մը եղաւ իրը: Արիւնը լաւան՝ որ իր հրաշէկ յորձանքին հետ քիչ քիչ բերաւ կարմիր հեղեղները: Իր միտքը տեսանողինը՝ որ պաշտօնաբէր տեսիլքին ճշմարտութիւնը աղաղակեց անհամբեր պնդումով ու մշտա՛վառ բոցավառումով:

Տարփաւոր մը՝ տարփանքի մոլուցքով ատեց դաւաճաններն ու շարժարարները: Արդարութեան ու վրէժի այրուցքներէն խելայեղօրէն մոնչեց: Եծա՛հր ու ժա՛նտ» պարպեց փշաքաղող պատկերներով գովացնելու համար դայրոյթէն տանջուող սիրտը:

Այս հզօրագոյն սիրողն ու հզօրա՛լուն ատողը, իր տեսլա՛ւարի ամենահիացած բերբրովը տեսաւ եղևոնին անշափելի ամբողջութիւնը, անշափելի մանրամասնութիւնը: Ու ներաշխարհին մէջ խտացած, թանձրացած՝ անոնք դուրս



սահեղան սառցադաշտերու տեղաշարժին զորդիւնովը, ուժականութեամբը, կըլ՛նոյթովը:

Արեան զոյրչիէն պղտորած աչքերով մարդիկը որ մեր շուրջն են, որոնք իրենց մարմնէն, սրտէն, էութենէն մասեր ձգեցին սպանդին մէջ, մա՛րդ առ մա՛րդ, ու մա՛հ առ մա՛հ անոնք որ մեռան, կախաղանի վրայ ճօճուողը մինչեւ իր վերջին շնչառութիւնը, եւ դիպկոյտերու մէջ հողեվարքը ապրողը մինչեւ իր վերջին հեւքը, այնքա՛ն իրական, այնքա՛ն խիտ ու խոր պիտի չկրնային

ներկայացնել պարհուրանքը պատահածին, որքան ըրաւ այս բանաստեղծը: Անոնք պիտի տային – եւ ապրողները տըւին – իրենց դէտին սահմաններուն շափ սարսափ եւ իրենց ներաշխարհի թիւերուն տեղահանածին շափ արիւն: Ինչ որ դրուուեցաւ ու պատմուեցաւ. եղաւ թերի, անճարակ, ուրուագծային: Հսկայ մը պէտք էր անպատմելին պատմելու համար. համայնապարփակ թեւաւորում մը՝ պարապօճելու համար տրհաւիրքին սահմանութիւնը, մարդարէի յայտնատեսութեամբ մեծ մը՝ պտնելու ու խորհալիքի համար իրականութիւնը: Մեծ եռքերու հրանիթին հսկայ ձեւերուն կըրակին ու գոյներուն մէջ իր վրձինը թաթխող Սիամանթօն պէտք էր:

Առանց անոր եղեռնը, մեր ժողովուրդի պատմական ու Հոգեկան կեանքի ճակատագրական ու հսկայացունց մեծ գէպը, պիտի չունենար իր ճշմարիտ պատմողը, կենդանացնող խորհնացին:

Իր նկարագրութիւնը կ'ընդգրկէ իր ժամանակի նախնիները ու իր նահատակութեան շրջանին սկսող Մեծ Եղեռնը: Որովհետեւ ան իր ներհայեցողութեան անհատատարի, հրաշման պայծառատեսութեամբը տեսաւ, կռահեց ու պատմեց իր նահատակութիւնը. նկարագրեց յաջող լայնածաւալ մեծ շափերու փորձերը ու անսպասելիներուն մէջ թափող, հիւժող, օրվահար դաղթի անծայր կարաւանները:

Անկերթանալի, դադար չունեցող մղձաւանջի մը տաղանակները, խենթեցնող շարժարանքն ու մասսեւեւումը ապրեցաւ ան. եւ իր նահատակութիւնը դիւրին ու թեթեւ պատահար մըն է, համեմատած դժոխքի տառապանքին, որով սնուցեց ան ինքզինքը:

«Արցունքի անձրեւներու տակ ծեծուող» այս հոգին, ողբաց հպարտ ու հանդիսաւոր: Երեկ տաւիդի մը թաւ լորերուն վրայ միայն: Եւ իր ողբը, սըրտածմիկ, ցուցնող, աղեխարշ, սակայն

բնաւ չեղաւ հասարակ լալիանութիւն մը, յացակումած օրօր մը:

Լացաւ իր ժամանակի անարիւն ցաւն ալ – կարօտը –: Տուաւ յուզիչ ու սրտաւրբաւ մտորումներն ու լքուած սէրը հարսին որ իր «մարմնին ու մտքերուն անտէր սարսուռը կ'երդէ»: Քանդակեց դաւարումները Հոյեվարքի մէջ տուայտող հօրը որ չի հաշտուիք փակելու աչքերը առանց իր գաւազը անդամ մը տեսած ըլլալու. կարօտախանձ սիրտը մօրը որ մահացաւ անձկագին սպասումի մէջ գալիքը պատուհանին սեւեռած: Ու ժողմոքեցաւ բանտարկեալին բազմախոց կարօտիք կեանքին, դիւղին, մարդերուն, արեւուն ու սէրերուն կարօտովը. երազեց դարձը՝ բնազական իրաւութեան ու ընկալումի ապրումին ու պատկերացումովը. եւ շղթային ճւղինչն սթափած՝ ողբաց իրականութիւնը դժոխքին ճանդարմետեան մոլորքը, լալին լաց ու կոծը, շեմնող կեանքը ու ջճնող մահը:

Անբեկանելի վճիռով մը ներմղեց իր երիտասարդի սէրերն ու կարօտները: Գիտակից դաժանութեամբ մը փեթթուած ու կոխտուած իր գարունը գեղարմբովաւ շուշաններ» ծլարմակեց տղնակներու արիւնովը լեցուն դաշտի մը շուրջը: Դիւցաղուններու պաշտամունքը կատարող քսանամեայ կոյսերու ձեռքերուն մէջ գաւազի շուշաններ» դրաւ ու «սպիտակ շուշաններ» տեղացուց պաղափարի յաղթանակին երկինքներէն: Ու տերեւները միշտ «վա՛ր թափեցան» յաւերժական աշունի մը թափիծին մէջ պահելով իր հոգին: Անոր աչքերուն՝ կիտներու «հոյանի ուսերը» դողացին խորագաններու մտրակներուն տակ. անոնց կողմը՝ «յուրթի լայն ու լուսաւոր, մոլեգին դիւցաղուններու կարմիր երկունքը ապրեցան»:

Իր երիտասարդ աւիւնը լեռնաւորուած՝ հայ յեղափոխութեան մարտնչումներուն ոգիի զօրաւորը դարձուց զինքը. որ իր մրրկավազ երկվարին թափովը ցնցեց մրափողները, ողոքեց անտարբերները, սաստեց յոգնածները, լուսաբա-

նեց ու համոզեց անգէտները: Մեծերուն յատուկ մեծ խանդաղատանքով սիրեց, գովեց, համոզեց քաջերը: Բոլորը՝ անդադրում, անխոնջ, տարերային հաւատքի մը քաշողութեամբը եւ հատու դարկերովը: Խոհուն հրամանատարի դասաւորող, կազմակերպող տաղանդովը:

Հայնածուսի ու վսեմ են Միամանթոյի արտայայտութեան բոլոր տարրերը:

Ամէնէն առաջ մեծատաղանդ բեմադրիչ մըն է ան:

Հելլէն դիցարանութեան ու հեթանոսական Հայաստանի աստուածներուն ոգիները կը թեւածեն իր քերթուածներուն մէջ: Մանր ու կշուքաւոր շարժումներ, խորհրդաւոր ծիսակատարումներու, մշուշոյ տղիակիզումներու եւ բուրվաւումներու մթնոլորտ մը՝ մեհանի մը սարսուռը եւ առիւնն ու հմայքը կը տարածէ մեր Ղդերուն վրայ եւ վսեմ բաներուն խոովքովը կը յուզէ մեզի:

Լայն պատաններու վրայ թաւորող շարժումն պատկերներու եւ դործողութիւններու յորդում մըն են իր բանաստեղծութիւնները: մարդկային հարազատ հոգեվիճակներու եւ մտածումի ցրցուն թանգալումներու կենսադործումովը մշտնադարձութեամբ ցոլացնող մեր աշխարհուն գէմը: Յիշողութիւնս կ'արիւնեն անոնց արտասանուած աստեն թագմութիւններու ինքնամոռաց լացն ու հեկեկանքը, երբ դեռ թարմ էին վէրքերը:

Վերացական, մաքի յղացները, դադափարները՝ կը բեմադրուին պատկերներով ու դործողութիւններով եւ թարմ, շարժուն, կը սուզուին մեզմէ ներս ըզգայարանական գրգիռներով, կը խանդավառեն, կ'արբեցնեն, մեր սովորական չափերէն դուրս հանելով, լայնցնելով մեր զգացումին ու մտածումին ծիրը:

Օրկար դործողութիւններու շարժանքի կարային պատկերացումներէն աւելի իր բանաստեղծի հանճարը կը փայլատակէ, սլաթովի երեւակայութեամբ մէկ, երկու առդի մէջ, երբեմն բառերու մէջ սեղանուող իր շքեղ պատկերներով: Օղ-

ծանում, զեղծում մըն է, աղբատացնել է զինքը մի քանի օրինակ տալլ Հոսայնքան առատ ու զեղեցիկ են անոնք: Անոր հերոսները «Արշալոյսները կ'արօրեն» անոր դիւղին հրդեհը, «նախիբի փախող հօտին կը նմանի», անոր զարնան առունները մամուռներու մետաքսին մէջէն մանկահասակ մերկութիւններու նման կը հոսին», արօրներուն խոփերը «չանթերու» պէս կը մխրճուին հողին մէջ, հայրենի հողը «յոյսի ոսկին ու զարաղի դինին» կը հրամցնէ: «Բախտանջ» մըն է ինքը որ «սուկեղարի» կը կերակրէ իր երիւարը:

Իր անուկաններն ու պատկերաւոր բառերը որոնք լայնային ու կշուքաւոր կը տարածուին իր երկար սողներուն մէջ, երկար ըսուածքներու եւ առատ անուկաններու մերժումովը նախապաշարուած շատերուն մօտ՝ կասկած կ'արթնցնեն Միամանթոյի արժէքին մասին:

Պուժող անուկանները ցնցոտի ծրէններուն պէս կը թափին, սրանեղող ու տաղտկալի պճնանք մը կ'ըլլան արձագանգող թափուրութեամբ մեր զգայարաններն ու համբերութիւնը յոգնեցընող, աղքատ ապրումի բանաստեղծի մը մօտ: մինչդեռ Միամանթոյի մօտ կը դառնան ներաշխարհի համանուագի մը ձայնակները, արուեստագէտի մը ծեփերը՝ որոնք դրուած են ստեղծելու համար անուագն մթնոլորտ մը, թատր մը, արամագրութիւն մը, որ կարելի պիտի դարձնէ պատգամին ըմբռնումը եւ ապրումին հաղորդումը: Անոնք ահաւոր ուժականութեամբ խանուածքի մը շատրուանումն են, դահալիժող ջրվէժի մը թափը կը հոսի անոնց մէջէն եւ առողջ ու առայգ ընթելէս մը կը զեկավարէ զանոնք:

Անոնք գերանցումի վիճակ մը կը ստեղծեն: Կու տան սակայն հարուստ ու խոր ներաշխարհի մը իւրայատուկ, անխորհրդակ, անպաճոյճ իրականութիւնը, որ ընկճող է, փարթամ ու տարածուն: Ուրիշ ոճ մը Միամանթոն պիտի լըլլար: Հրաշափառ երեւակայութեանը հո-

մազոր ներքին մղումը հանտորական կը դարձնեն բանաստեղծին խօսքը: Ո՛չ այն հանտորութեամբ որ մորթալին զգացականութեան աժան ազրումովը շերտով շէշտ ու ձայնարկութիւն կը շաղէ, թէ անհո՛ւն սրտցաւութենէ՛ մը, խորագո՛յն տառապանքէ՛ մը, անանձնական ու հաստատո՛ւն զիտկապաշտութենէ՛ մը բխող, ու ջինջ մտքերու դասաւորումով ու պատկերներու գեղեցկութեամբ բանաստեղծ հանտորի հրաշունչ պատգամը:

Աբա՛ւ, ազգո՛ւ ու հետզհետէ դա՛դաթնացող ու վարարող իր նարեկեան շունչը հրդեհած է իր ժամանակի սերունդները: Ընդվզումի ու մարտնչումներու առիթ մը ու տրամադրութիւն մը՝ եւ այսօր ալ ա՛ն է որ պիտի մարակէ մեր արիւնը, ամբացնէ հաւատքը, վաղափարին տեսիլքովը պիտի գինովցնէ մեր հողին:

Անոր բանաստեղծական յատկանիշները անշուշտ նոյն խտութեամբ ու բիւրեղացումով չեն ներկայանար իբր բանաստեղծութիւններուն մէջ: Ունի տժգոյն

կտորներ, ունի սկար քերթուածներ ուր կան գեղեցիկ տողեր, ու հոյաշունչ եւ բարձրաթռիչ բանաստեղծութիւններ որոնց մէջ թույլացնող տարրեր կան:

Իբր հանտորաշունչ պոռթկումները ու լայն դրութեանց ընդգրկումները արգելք են բիւրեղացման որ անբիծ, միակտուր, ու ճանաչող՝ կատարելութեան ու արուեստի ապրումը տուող՝ զոհար մը կը դարձնէ քերթուած մը: Սիւմանթոյի արուեստագէտի տաղանդը կը ցրուի, կը բաշխուի ստատորէն: Իբր յափշտակող ու ցնցող գեղեցկութեան յղացքներն ու պատկերները հազուապիւտօրէն կը ներկայանան դտուած, խտացած, դասական ձուլուածքով քերթուածի մը մէջ:

Սիւմանթօն նոր ուղի մըն է, շարժում մը, վերելք մը՝ մեր դրականութեան մէջ: Լայնածիւր աշխարհ մը՝ տարերային մազնիտականութեամբ, այրող ջերմութեամբ ու համասփիւռ լուսաւորումով:

ԱՐՄԻՆԷ



## ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԷՆ

( Հ Ա Տ ՈՒ Ա Ծ )

Ո՛վ գերագոյն եզրայրներ, առաւօտը քաղցրօրէն քաղցր է եւ ամե-  
 թագութ աստղերը կը տարածաւին...  
 Եւ երկնակամարէն ծորացող լոյսը, այսօր, ձեր հերոսի հագեղար-  
 քին համար է սահմանուած...  
 Հիմա հովեր պիտի անցնին տառապանքով հեծեծուն, արիւնով կար-  
 միր, մոխիրով սպիտակ...  
 Հայրենիքէն փախչող հովեր պիտի անցնին, կարօտով, արցունքով  
 եւ յիշատակով բեռնաւոր,  
 Եւ հողին տրտմութենէն տրտում՝ տառակները իրենց փետուրնե-  
 րուն շուշանը վար պիտի թափեն...  
 Եւ սրարշաւ արծիւներ ձեր հերոսի մահգոյժը կատարէ կատար պի-  
 տի պատգամեն...  
 Մինչդեռ չարաշուք խուժանը վարէն, թերեւս, մա՛հ պիտի որոտայ  
 Գազափարի գոհերուդ... :

Եւ ահա կմախակերպ սրկներուն առջեւ կանգ առին, մտեր ուրբեր-  
 նուն տակ եւ հայեացքնին աստղերուն,  
 Եւ որոտումին պէս խօսեցան, իրենց բունցքին մէջ կայծակներ  
 ծրարած եւ բառերնուն հետ ապառաժներ շարժելէն...

- Նախ դո՛ւն յետ թաւակ, ստրկութեան եւ չարիքի արիւնախում  
 խուժո՛ւմ,  
 Դո՛ւն որուն բերանէն դեռ մեր ցեղին արիւնն է, որ աչքերնուն առ-  
 ջեւ վար կը կաթկթի...  
 Դո՛ւն որ մեր հացովն ես սնած ու մեր դարբնած սուրերը մեր սրը-  
 սին ուզած...  
 Դո՛ւն որ ճաւ անխաւս գոյութիւնդ մեր կենսագործութեանը եւ  
 մեր ճիգին կը պարտիս,  
 Դո՛ւն որ մեր աշխատաւոր բազուկին եւ մեր լուսաւոր ճակատին  
 պտուղները քաղեցիր,  
 Դո՛ւն որ դուշտե՛ր մոխրացուցիր եւ մենք որ անխանջօրէն զանոնք  
 Ի՛նչ անբախտներու վերածեցինք...

Դո՛ւն որ մահ սերմանեցիր եւ մե՛նք որ ցեղովին գեղեցկութիւն եւ բարօրութիւն ծնցուցինք...

Դո՛ւն, բարբարոսութեան անխիղճ գործօն, յե՛տ քաշուէ՛, յե՛տ թաւալէ, յե՛տ խաւարուէ՛...

Թող մեր վերջին հայեացքը պայծառ մեռնի՝ մեր ոգեվարի գալարումին արժանի չես դուս...

Եւ դո՛ւ՛ք, դատաւորնե՛ր, դահիճնե՛ր, եւ դու՛ն մեռելադատ Մարգասպան,

Ընե՛նք ձեզի, այս ժամը ձեր գարհուրանքի ժամն է, Հայրենիքին կողք նոր հերոսներու երկունքէն կը սարսռայ...

Այլեւս օրէնք չկայ, ազատակամ ու խիզախ մահը, մահն է ձեր դարաւոր բռնութեան,

Կործանողներու կործանումը փոթորիկներու պէս, անբարեկամներէն պիտի հասնի պիտի գայ,

Միայն Գաղափարն է որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատաւոր, ո՛չ գերեզման եւ ո՛չ դագաղ:

Եւ հիմա, գե՛ղ խեղդող չուանը մեզի տուէ՛ք, մեզի տուէ՛ք, դահապետնե՛ր, դահիճնե՛ր,

Եւ կեցցե՛ն Ըմբաստները, կեցցե՛ն Ըմբաստները, կեցցե՛ն եւ կեցցե՛ Հայաստան...»

.....

Հեթանոս խուժանը անհետացաւ ինչպէս դիակներ պղնձէ հովերում շունչէն հալածական,

Եւ անցնող գեփիւռները իրենց մայրական լացը լացին, անցնող թընչուններն իրենց երգը երգեցին,

Անցնող նառագայթներն իրենց ոսկիէ սլակը եւ դափնին հիւսեցին. Անցնող եղբայր եւ լսին անխօս եոզիները իրենց գարհուրելի վրժները յղացան...

Ու ձեր մարմինները, ո՛վ Անաւորներ, ո՛վ ճշմարիտներ, ո՛վ գերազն՛յն եղբայրներ,

Ձեր մարմինները օդին մէջ առկախ եւ ձեր մեծաբաց աչքերը հայրենի աստղերում,

Օրերով եւ գիշերներով, երկու սիւներում մէջտեղ քիմայոյզ, ճօնեցան եւ ճօնեցան,

Եւ վերջին խօսքերը, անտառին մտան ուռնացան...  
«Կեցցե՛ն Ըմբաստները եւ կեցցե՛ Հայաստան...»:

ՍԻԱՄԱՆԹՕ

**Բ. ՓԱՓԱԶԵԱՆ**

**Հ Ր Ա Ն Դ**



Հրանդ Հեանեաւ սողերով կը սկսի իր «Պանդուխտի նաժակներ»էն առաջինը, «Մասիս» շաբաթաթերթի 1888ի նոյեմբեր 28-ի թիւին մէջ:

«Մտերմակամ սիրով կ'առաջարկես, սիրելիդ իմ Արփիար, որ հաս, Մասիսի համար պանդուխտներու կեանքէն գրեմ: Ի՞նչ գրեմ: Երէկ Պրն. Շախարեան արտամտու մէկ խնամք տուաւ ինձ: Ինչ

երկիւզածութեամբ ձեռքս երկարեցի. եւ որչափ խնամով փոյթ ունեցայ որ զգրվանիս մէջ չվնասուի: Երբ կը խորհիս որ երեսօրեայ համարագրութեամբ անցած է սրտիդ սիրած վայրերէն եւ Սեւ ծովու անդունդներէն, եւ տակաւին իր բուրումն անկարուստ կը պահէ: Իր գո՞յնը, մա՞րթը: Մարած կարմրութիւն մը ունի խնձարն իր այտերուն վրայ, տեսակ մը գիծեր որ տժգոյն դեղնութեամ մէջ կ'անհետին կամ անօրաջ կերպով կը խառնուին: Մարթը քաշուած է, եւ ծերունայ մը խորշամեալ ու երիթացեալ կերպարանքն ունի: Կը ցուիս իր վրայ»:

«Առաջարկութիւնդ ըստ պատշաճի կը յիշեցնէ ինձ այդ խնձարին նկարագիրն, եւ խորհրդատու պատկերն գոր իր վրայ ունի պանդխտութիւնն: Դեղնութիւն, քարշամութիւն, տոռոյգ կեանք մէջ երիթացեալ ծերութիւն: Ի՞նչ բարումն ունի այդ պանդխտութիւնն. եւ ի՞նչ գրեմ»:

Բալուի Հաւաւ դիւղէն, 11 տարեկանին Պոլիս պանդուխտ եկած այս Հայը, որ կրնար խաներու մէջ անցընել իր երիտասարդութիւնը, ծանր բռններու տակ կ'ըստ, կամ խոնար ու մթին սենեակներու սպակոսած օդին մէջ մաշելով, կը բնար (ինչն ալ), իր նկարագրած հարիւրաւոր պանդուխտներուն նման, Պալլըքլէի գերեզմանատան ճամբան բռնել, քանի մը պանդուխտ ղազազակներներու ուսին վրայ, ղարիպ տէրտէրի մը ընկերակցութեամբ, որ պիտի օրհնէր իր գերեզմանը, եւ խաչով պիտի կնքէր ու ըսէր «կնիքս անշարժ եղիցի»: բայց որ

դէպքերու բերումով աւուժ առած եւ ուսուցիչ, տնօրէն եղած էր, տպագրութեան համար «ճիւղի քարտուղար» իր պանդուխտ եղբայրներուն պատմութիւնը գրող, մտածե՛ց արդեօք բոսնէ մը, թէ կրնար պատահիլ որ ինք չունենար միւշուկու անգամ իր նկարագրած պանդուխտներուն «խաչով կնքուած» դերերգմանը...

Այաչի բանտէն ետք, Մեծ Եղեռնի ահաւոր մըրթիկին մէջ փոշիացած Հրանդ, երբ կը գրէր իր առաջին «Պանդուխտի նամակ»ը, մտածե՛ց արդեօք բոսնէ մը, թէ հօթանասունըթ տարի ետք, իր նահատակութեան յիշատակին, երբ իր նամակները կարդային, պիտի առնէին իրմէ նոյն «անկողնուտ բուրումը», ինչ որ Արամեանի խնձորինն էր եղած, երեսնորեայ ճամբորդութենէ մը ետք...

Գիտե՞՞ արդեօք ինք, թէ իր դուրսը ջախջախող, կամ կռնակէն դինք դաշուհարսող ձեռքը պատմութեան անցած է որպէս ներկայացուցիչ ձեռք ցեղասպանութեան, իսկ իր ձեռքը կը մնայ միւշուկու այօր, եւ դեռ երկար ժամանակ պիտի մնայ, եայ պանդուխտներու լուռ նահատակութեան ամբամ պատմիչի ձեռք:

Ինք չի դիտեր: Մենք գիտենք այսօր. իր նահատակութենէն յետոյ տարի ետք կը կարդանք զինքը անգամ մըն ալ, կրկին ու կրկին, ու կը գիտնանք, թէ իր առանց մասնաւոր ճիշդի, առանց դրականութիւն ընելու ձգտումին գրելովն է, որ գրականութիւն ըրած է, գրագէտ դարձած է. արուեստագէտ գրագէտ:

Գրականութեան մէջ մտածումներ, գաղափարներ, տեսութիւններ վեր հանելը չէ որ կը կազմէ արժէքը, մնայունը. այլ զգայնութիւնները կարենալ փոխանցելն է, պատկերին մէջ, դէպքերուն մէջ, շարժումին մէջ. այնպիսի հարազատութեամբ եւ ուժգնութեամբ, որ անոք կրնան վերակենդանանալ, իրենց ջերմութեամբ ու անկեղծութեամբ կըրնան վարակել ընթերցողը, որ հետո է հեղինակէն, կը կարդայ զայն ովկիանոս մը անգին, կամ տասնամեակ մը ետք հեղինակի ստեղծագործութիւնէն, կրթման յիշատակ մը ետք, դարեր ետք:

Արուեստագէտ գրագէտը կ'արտայայտէ այն, ինչ որ յուզած է զինք ու նաեւ իր ժամանակակիցները: Գրագէտը կը տարբերի սակայն իր ժամանակակիցներէն անով, որ ան ոչ միայն կը տեսնէ դէպքերու արտաքինը, կեղեւը, զգնաց, եկաւ, ցաւեցաւ, խնդաց, մեռաւ...»ը, այլ նաեւ, միւրեւի՞թ իր նայուածքը խորերը մարդկային սրտին, կրնայ հասնիլ գրդապատճառներուն, ապրումի ակունքին, ու կը տեղաւորէ շարժումը, արտայայտութիւնը՝ անոնց ծնունդ առողհտ հոգեկան իրական պայմաններուն մէջ: Այդ պարագային է միայն ահա, որ տարիներ ետք, երբ վաղուց անհետացած կ'ըլլան իրենց այժմէականութիւնը կորսնցուցած դէպքերը, ընթերցումը անոնց, կը շարունակէ տակն ու վրայ ընել զաւակները, կամ թոռները հեղինակի ժամանակակիցներուն, կամ մինչեւ անգամ շատ աւելի հեռաւոր սերունդներ:

Միւլթոն Կիւրճեան (Հրանդ) հարազատի, եւ հարազատութեան անգերազանցելի առաւելութիւնը ունի: Հարազատն է իր նկարագրած բոլոր պանդուխտներուն, անոնց հետ միասին եկած է Պոլիս, ճակատագրակից է զրեթէ անոնց, եւ ազգական է, բարեկամ է, միւրեւի է, կամ ինչ որ ամէնէն կարեւորն է՝ սրտակից է անոնց: Ասոր համար ալ կը յաջողէ հարազատութեամբ նկարագրել անոնց կեանքը:

Կեանքը... Պանդուխտը կեանք ունեցա՞ծ է. մարդ համարուած է...: Մինչեւ Հրանդի նամակներուն լոյս տեսնելը «Մասիս» շաբաթաթերթին մէջ, պանդուխտը «ժամի քնակիչ»ն է եղած, «Անբաններու խումբին պատկանող, բնակրող, քար կտորող դրաստ մը համարուած է Պոլսոյ ազգայնայնի պայմաններուն մէջ ապրողներուն համար: Մինչեւ Հրանդի առաջին նամակը...:

Անկէ հտք, նամակները կը յաջորդեն իրարու եւ ընթերցողներու գարմացած նայուածքին տակ կը քակուի կծիկը տաք հոգիներու այրող տառապանքի պատմութեան. կը բացուին լուսամուտներ՝ խանկրու մթին սենեակներու պատ-



տերուն վրայ, ուրիշ ներս կը սահի հայ ընթերցողին նայուածքը ու նայուածքին հետ՝ քիչ մը գուրգուրանք, քիչ մը սէք:

Անկէ ետք, պանդուխտ Հայը կը սկսի զգալ թէ բոլորովին մոռցուած, արհամարհուած արարած մը չէ ինք, թէ իր մասին մտածողներ ալ կան, իրժով աւ իր ճակատագրով տառապողներ:

Անկէ ետք:

«...Կարճամ առաջին օրերը, արագիկն ու ծիծառը հագրի քէ ռոտ գրած մեր սարերուն վերեւ, 3000 երիտասարդ միայն Տարօնոյ գիւղերէն մտնայ ելած են դաշտ, առանց երածնշտի ողջունի ծընողաց ու քնտանեաց: Այս վերջին սիրտփանկէ գրկուելու բուն պատճառն եղած է անցագրի պակասը, այսինքն տասներեւ դռնէկանի»:

Անկէ ետք:

«Այ տեղ չմնաց, տեղ չկայ խամբու մէջ. լցուած են իրարու վրայ ամէն կողմէ, ամէն բազաւէ ու գլուխ, մօր մարդիկ, մօր պատանիներ»:

«...Մեր Մարտիկն ասանց կարգէն է: ...Իր հայրը պանդխտութենէ ի տուն գարձիմ, կարճոյ լեռներուն մէջ առանց գերեզմանի կորսուած է. Թագուհի, այդ սգուն կէտ մայրը, իր չորս մտաւագ քրերնովը քանի տարի տառապելէն ետք, Մարտիկը մամրայ կը հանէ տասըչորս տարեկանին: Այս Մարտիկն հիմա ալ հաս է. հօրսէն մնացած 50 ոսկւայ պարտք ունի վզէն կախուած, տունն ալ ար իրեն կը նայի»:

«...Այն, ես քանիներ տեսնել եմ, քարոյ ու առայց տղաներ, հսկաներ ըլլալու խմորով շինուած, արք տածանի շախտութեանց տակ ամբած ու սքլած մնացին, քանիներ մնջուեցան, կրծոց տախտակները ջախջախուած, անցան գացին վաղամեռիկ՝ հայր, մայր, տուն տեղ աւերակ թողովու եւ դուռներ գոցելով»:

Անկէ ետք՝ Մանօն, Գարեգիններ, Մարգիտը: Մանօնները, Գարեգինները, Մարգիտները. անկարգ, խռոն ի խռոն պատմում մը անհուն վշտի ու ցաւի: «Վիշտերը կարգ ու օրէնք ունի»:

«Սու սակայն որո՞ւ գրեմ. մագնա-

շուք տիկինը պիտի յաման ամա՞ն պանդախտին ցնցոտիներուն վրայ ակնարկ մը ձգելու պատիւն ընել...» թէ ոչ, այն պոլսեցի մօր նման, իր գաւկիճն դադարը տունէն գուրս հանուած ժամանակ, իր ցաւին մէջ Աստուծոյ պիտի պոռայ՝ «Այս քրտիս, խամբու մէջ պէ՛քեա՞ր կը պակսէր»...

Այո, որո՞ւ գրէր Հրանդ, ի՞նչ կարգով գրէր, ո՞ր մէկը նկարագրէր: Գիւղէն մեկնող պատանիէ՞ն սկսէր, թէ Պալեզիի գերեզմանատան հողը պարտատեղի պանդուխտի դիակէն. պարտատեղի պանդուխտն տակ կըսած հօրն ու մօրը մասին գրէր, թէ ոչ խաներու խաւարին մէջ գիւղի արեւը երազող հայ երիտասարդին մասին. իրարու սղնու՛թեան հասնող հայ դարիպնէ՞րը նկարագրէր նախ, թէ ոչ դարիպին իրաւունքը ուսող վաշխատուները, քարացած խղճներով ու անտարբեր աղաները Պոլսոյ ուսումի հետեւիլ ուղող պանդուխտ պատանիի հոգի՞ն բանար մեր դիմաց, թէ ոչ դայն ինքնամտ շեմարան դրկել մերժող սրբազանը նկարագրէր, զի քանձալի մայիտներովն, ար փակած կը մնային իր երեսին հաստ կաշիներուն վրայ» եւ իր ցորտ պատասխաններովը, աւ գրեսցի պատանիին տենչանքներուն ի տես վրցուցած քահ-քահներովը:

Անկէ ետք:

Անկէ ետք այլևս կանգ առնել չկայ: Գրագէտը իր արուեստագէտի սիրտը տիեզերական ընկալուչի վերածած, տեւարար կը ներառնէ Հայկական բարձրաւանդակէն, տունէն ու տեղէն, կնոջմէն ու գաւակներէն, կամ հօրմէն ու մօրմէն սկսած, դրամական պարտքերու, ու կեղեքող տոկոսներու բռնան պատճառով հեռացած, պանդխտութեան ցուպը ձեռք առած հազարաւորներու, հարիւր հազարէն աւելի Հայ դարիպներու ցաւը, սրտաբցունքը, տան կարօտը, աղօթքը՝ «Թոյ անօրի մեռնիմ, աղքատ մեռնիմ, բայց մեր սիրելեաց գրկին մէջ մեռնիմք», դիւրներու հսկումը հիւանդ ընկերներու սնարին քով, երազանքը, ունացող վիշտը, դայրոյթը, անէծքը երբեմն՝ «Լա-

րիպիմ հայր շուտափր, տուն ֆախոզը տուն շուննար», Հոր կամքը տոկալու, կրելու ճակատագիրը՝ «Մեր ճակատագիրը արցունքով շինուած է, դժբախտութեանց դէմ զգուանք եւ արտունջ յայտնելու շինք, այլ պէտք է զանոնք լուսեյեայն կրենք, կրենք տանն ու աղին սիրուն, Ազգի ու սրբութեանց սիրուն» արժանապատուութիւնը բոլորին, եւ Պոլսեցի Հայրենակիցներու իրենց Հանգէպ ցոյց տուած անտարբերութեան դիմաց, իրենց իրար Հանդէպ ունեցած անհուն սէրն ու գուրգուրանքը. լուրի սպասումները, նամակներու տողերուն մէջէն գիւղն ու սիրելիները երեւակայելու ձգտումները. մեկնողներու Հետ անոնց զրկած յանձնարարութիւնները՝ «Մօրս երկաւ ձեռքերը կը համարուիմ, բաւ որ հոգ չընէ, Աստուծով զալ տարի ճամբայ կ'ելնեմ», «Պապիս ցերեակ միրու՛ք պագ եւ բաւ մեր տունը, որ շատ հոգ չընեմ, Քիչ ատենէն կը դառնամ, օրերս եկան հասան, ալ աշխատելու կարող չեմ առջի պէտք» ևւ մանաւանդ անոնց մաշումը, զանդաղ մաշումը մարմնին, Հիւժուժը, Հիւժասը, բայց նաեւ Հողեկան մաշումը, անվերջ մաշումը, սիրելիք ու տան կարօտի, Հայրենիքի կարօտի անվերջ մաշումը... մինչև որ Հիւժուժ մարմինը չկարենայ տոկալ, ու ոսկորները Հանգստանան Պալքլիքի գերեզմանատան մէջը:

Ոչ միայն ներսուած է այս բոլորը, այլ նաեւ իր տեսողութեան Հորիզոնը լայն բացած Հայկական բարձրաւանդակէ լեռներն ու կիրճերը, սարահարթերն ու գիւղերը, գիւղական տնակներէն բարձրացող ծուխի սիւներն ու գիւղի շուներուն Հաջողները իրար Հետ տեսելու, իրար ընդելուզելու Համար: Հրանդ, պանդուխտի զճրի ջարտուղարը՝ տենչազին կ'արձանագրէ, ռոմանթիք սպորումները նուազագոյնի իջեցնելով, կը դրէ իր պայթող սրտի ճնշումը պարպելու Համար միայն, չի գրեթէ գրականութիւն ընելու Համար, եւ իրաւ գրականութիւն կ'ընէ այդ իսկ պատճառով:

Օտարին Համար գրականութիւն չը-

ներ. օտարը, եթէ թարգմանուին կերտեանի նամակները, կրնայ Համ շանել անոնցմէ, շատ հաւանական է որ ճանձրանայ նոյնիսկ ի տես այս միօրինակ միալար նիւթին. եթէ անշուշտ ծանօթ չէ ամբողջ Հայ ժողովուրդի ցաւին, Համայն Հայութեան պանդխտութեան, յիտուն տարի առաջ մէկ միլիոն նահատակներու Հետ անթաղ մնացած Հրանդի, Հրանդներուն հողեկան աշխարհին, այնտեղ մշտապէս վառող, ներքին աշխարհը այրող կարօտին ու Մեծ ՍԳԱՍՈՒՄԻՆ:

Օտարներու շափանդով չի շափուիր, չի կրնար շափուիլ Հրանդ, ոչ թէ որովհետեւ պատիկ կը մնայ. ոչ, Հազար անգամ ոչ, մեծ է, մեծ ալ պիտի մնայ. սակայն զայն ըմբռնելու Համար Հայու սիրտ պէտք է, ինչպէս դարբակին ցաւը ըմբռնելու Համար՝ դարբակ Հրանդի սիրտ պէտք էր:

Հայ գրագէտ է Հրանդ. իր անթաղ մարմնին միակ շիրիմը Հայ սրտերը կրնան ըլլալ:

Օտարը, օտարները գծուար թէ հասկընան զինք, ցաւակից ըլլան իր սրտի մորմոքին: «Օտարն ախ միշտ է օտար»: Եւ որովհետեւ պանդխտանքէն ու մանք, դիմացողներն ու վերապարողները, երբեմն ալ կը յաղողին տուն դառնալ, սիրելիներուն միանալ՝

«Դացէ՛ք: Սիրելի ազգայնք, պատմութիւնը ձերն է. ձեր ցնցոտին, մաշած կարծիքը շատ աւելի կ'արժեն...: Սեւ ծովը քաղ իր երեսը շիտժողէ ձեր առջեւ. ինքուրիւն տարէ՛ք ձեր գաւկնբուն, կեանք տարէ՛ք ապառամներուն եւ ձիւնեղէն լեռանց սուրբուն տակ:

«Երանի անոր, որ այս դարձիմ՝ հօր, գաւկի եւ կամ սիրելիկանի մը կարասուը չքաղուր իր ետեւ: Գերեզմանները կեանքեր են որոնց հետ ցնքից կապակցութիւն մը ունին մարդիկ: Դրսեցի կին մը, որ յատկապէս տուն տեղ քաղով՝ հոս եկած էր իր ցաւագար ամուսինը յոճամելու, գայն քաղելու ետեւ, չկրնար յանձն առնուլ իր երկիրը դառնալ, քէպէտ եւ իր հայրենակիցք շատ քանիք եւ համագումներ ի գործ դնեն: Ընչ երկար

գաղտնիքն անծանօթ կը մնայ: Կիմը սովորութիւն ըրած է եղեր սուկայ այցելութեան երթալ իր ամուսնոյն գերեզմանն ու հոն արցունքներով սփռիլուի: Ոչ ոք գիտցած է գայս, եւ երբ որ մը կը ստիպեն որ իւր խաստովանութիւնն ընէ քահանայի մը առջեւ, կիմը փոփոխած կը հռաչէ. «Ան, որո՞ւ թողում գերեզմանը», ու կուլայ սրտագին... Այդ այրին տակաւին կը մնայ հաս, եւ ոչ ոք իրենցներէն կը յանդգնի ըսել թէ հայրենիք զըրկենք քեզի: Ուրիշ այրի մը, նոյն եւ նման դժբախտութեամբ մէջ, մեկնելէ մէկ օր առաջ կը գտնեն իր սիրականին գերեզմանին վրայ: Կը դիտեն հեռուէն, կը տեսնեն որ հէ՛քը, վերջին համբոյրէն ու արցունքներէն ետքը, հոգի ծրար մը կը շինէ ու կը գետնէ խնամով կարծփին վրայ: Ի՞նչ պիտի ընես եղկելի դու: Կը պահէ սիրով սրտին ու հագւոյն վրայ, ինչպէս հիները կը պահեն մեռելոց անհունները սրբարաններու մէջ, մասնաւոր ժամերու պիտի հանէ, պիտի քակէ ծըրարն ու հասուրսայ ինչպէս մայր մը իր մանկիկն՝ գգուանաց վայրկեաններու մէջ:

1890-ին գրուած այս աղերքն 76 տարի ետք, Հայը կը շարունակէ մնալ անհասկնալի: Այլ մաքսատան օտար պաշտօնեաներ են հիմա, որ չեն հասկընար Հայ մարդոց, Հայ կանանց պայտօսակներէն դուրս եկող ափ մը հողին իմաստը, ու երբեմն նոյնիսկ կ'արդիւնն անոնց դուրս բերուիլը, անտեսելով սըրտին խորքէն եկող արցունքները Հայուն, որ սիրելիներու երկրէն ափ մը հող կը տանի սիրելիներուն: Ափ մը հող՝ որ Հրանդը կը կապէ, Միսմանթօն կը կապէ, Վարուժանը կը կապէ Հայու անցեալին, ու նոր սերունդներու ստեղծելէն առաջ այդ անցեալէն եկող զգայնութիւններ, սպրուաններ, որոնք անպայման օր մը կը բարձրանան սրտին:

Իսկ եթէ ուզենք ափ մը հող տանել Հրանդի դերեզմանէն, տանելու համար օր մը ապաս ու անկախ Հայաստանի պանթէոնը... ուզկէ՞, ո՞ր լեքան ստորտէն, ո՞ր անապատէն պիտի առնենք գայն:

Բ. Փ.



### ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

Ի՞նչ, մեծ չէ՞ այն բեռնակիրը որ տառապանքն ետեւը բռնած, երեկոյին Տրապիզոնի շագենաւը կը նստի, եւ կ'անցնի փոքորիկէն ու ծովէն, կեանքի սիրով, կեանք տանելու յայտով: Երբ տեսնեմ երեկոյին ձեր շագենաւը, որ իր գոռոզ գլուխը դէպի Սեւ Ծով դարձուցած՝ իր շշակով հրածեշտի ողբոյնը կ'որոտացնէ մեր հզօրաց վրայ, ճնշուած հառաչանքի մը ազազակաւ կ'ըսենք, քէ տեսանքներ որ իրենց թշնամադիր *բանաւոր* յօդուածագրէն շա՛տ աւելի վեր են: Լաւ, եթէ այդ «անբանները», «գրաստները» ամենքն ալ մեզի պէս հաշուող բանաւորաց կարգը մտնէին, տուն ու դուռ փակէին յաւիտեան. կի՛ն ու գաւակ մտնային, այսօր դատարկութիւն միայն կը գտնէինք մեր ապառաժներուն ստորադը, ուր երկրին ժամանակակից կազմոյն հետ սկսած է կեանքը: Գացէ՛ք: Սիրելի ազբարներ, պատմութիւնը ձերն է. ձեր ցնցոտին, մաշած կուրծքը շա՛տ աւելի կ'արժեն...: Սեւ Ծովը բոգ իր երեսը չխոծանէ ձեր առջեւ. խնդութիւն տարէ՛ք ձեր գաղկնեան, կեանք տարէ՛ք ապառաժներուն եւ ձիւնեղէն յերանց ռաբերուն տակ:

Երանի անոր որ այս դարձին՝ հօր, գաւկի եւ կամ սիրելիանի մը կորուստը չբողոր իք ետեւ: Գերեզմանները կեանքեր են որոց հետ ներքին կապակցութիւն մը ունին մարդիկ: Դրսեցի կի՛ն մը, որ յատկապէս տուն տեղ թողլով՝ հաս եկած էր իր ցաւագար ամուսինը ինձանելու, գայն թագիկէ ետէք, չկրճար յանձն առնուլ իր երկիրը դառնալ, քէպէտ եւ իր հայրենակիցք շատ ջանքեր եւ համազումներ ի գործ դնեն: Ընդ երկար գաղտնիքն անձամօք կը մնայ: Կի՛նը սովորութիւն քրսած է եզեր ստեպ այցելութեան երթալ իր անուանոյն գերեզմանն ու հոն արցունքներով սփռալու: Ոչ ոք գիտցած է գայն, եւ երբ օր մը կը ստիպեն որ իր խոստովանութիւնն ընէ քահանային առջեւ, կի՛նը փղձկած կը հառաչէ. «Ա՛հ, որո՞ւ բողում գերեզմանը», ու կու լայ օրտագին...: Այդ այրին տակաւին կը մնայ հաս, եւ ոչ ոք իրեններէն կը յանդգնի ըսել քէ հայրենիք գրկենք էնքի: Ուրիշ այրի մը Ուոյն եւ մամն դժբախտութեան մէջ, մեկնելէ մէկ օր առաջ կը գտնեն իր սիրականին գերեզմանին վրայ: Կը դիտեն հեռուէն, կը տեսնեն որ հէզը, վերջի համբոյրէն ու արցունքներէն ետքը, հողէ ծրար մը կը շինէ ու կը գետնիկ յընձանով կուրծքին վրայ: Ի՞նչ պիտի ընես, եզկելի դու: Կը պանք սիրով սրտին ու հոգւոյն վրայ, ինչպէս հիները կը պանէին մեռելաց ամիւնը սրբարաններու մէջ, մասնաւոր ժամերու պիտի հանէ, պիտի քակէ ծրարն ու հատուցտայ ինչպէս մայր մը իր մտնկիկն՝ գգուանաց վայրկեաններուն մէջ: Այո, տեսք եմ, ասկույ ծրարներէ աւելի գերեզմանաց հոգերու ծրարներ կը տարուին: Մայրերն են որք խնդրած են գայն: Տարէ՛ք, այդ ծրարներն ալ տարէ՛ք. մի՛ գրկէ՛ք տառապեալ ծնողներ, սիրելիներ իրենց գաղկնեան ու սիրելիներու ցաւագին սփռումներէն: Մաքսատանց պաշտօնեայք տակաւին քան մը հասկցած չեն այդ հողէ ծրարներէ, այսպէստես ալ չի պիտի հասկնան. մէկը «գրաստ» պիտի կոչէ գեղ, միւսը յիմար, այլ ոք տիմար, եւ այսպէս անհասկնալի պիտի մնաք:

(Հատուած) ՀՐԱՆՔ

Գ. ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



1914. — Չարագուշակ թուական մը, որուն կուտակած թխպահոծ ամպերը շանթարձակ պիտի պայթէին ընդհուպ, հայ ժողովուրդի վիխուն վրայ:

Սկիւարի Ս. Խաչ վարժարանին տընօրէնութեան հրաւիրուեցայ այդ տարին: Հոն գտայ Արտաշէս Յարութիւնեանը, այցելու ուսուցիչներու ցանկին մէջ: Զարմացա՛յ...: Գիտէի որ Մալկարայէն — իր ընկալալայրը — կ'աշխատակցէր պոլսահայ թերթերուն:

Ի՞նչպէս Մակեդոնիոյ լեռնալանջերէն նետուած էր Սկիւարի բարձունքները...

Սրտածմբիկ էր անոր պատմութիւնը: Գաղթական դարձած էր ան յեղակարծօրէն:

Ան ալ ենթարկուած էր հայ մարդուն դատանօրէն տիրական ճակատագրին, որ շուքի մը նման անբաժան՝ կը հետապընդէ զայն անոգոքօրէն, մ'ը ալ զըտնըւի, մ'ը միջօրէականին տակ ալ ծուարած ըլլայ ան հանդարտիկ:

Պալքանեան պատերազմին (1912) արիւնոտ թռչուածէն մագապուրծ ագատած, խուճապահար վախած էր ընտանեօք եւ կրցած էր ապաստանիլ Կ. Պոլիս, հապշտապ լքելով ամէն ինչ, տունտեղ, գործ, տարիներու յոգնութիւնով ու ջրտինքով շահուած համեստ տնտեսութիւն մը: Այս բոլորին մէջ սակայն, ամէնէն աւագելին, իր մեծագոյն հարստութեան, իր մատենադարանին կորուստն էր, կազմուած տարիներու ընթացքին, ա՛յնքան դժուարութեամբ, իր նախասիրած, հատընտիր հաղուագիւտ գիրքերով: Վաղնջական իմաստուններէն չէր որ միխթարուէր, մտածելով թէ չինչ որ կարելոր է, հետս կը տանիմ: Արդի մտաւորականին ձեռքի դաւազանն է գիրքը, կ'իտուած ոտքերը ամբապինդ պահելու համար:

Այսպէս մերկ ու անօթի ինկած էր ան մայրաքաղաքի մայթերուն վրայ: Բարեբախտաբար անձնօթ մը չէր հոն: Գրական շրջանակներու մէջ Ծանօթ ղէմք մըն էր ան: Բարեկամներ շուտով կը ճարեն գործ մը — կեանքի ապահովագրական ընկերութեան մը գործակալութիւնը: Արհամարհելի գործ մը չէր տրուած պայմաններուն մէջ: Այդ պաշտօնին բերումով, մեկնած էր դաւառները: Այցիւրած էր բազմաթիւ հայաբնակ քաղաքներ, մինչեւ կեսաբիւս հասած էր:

Որոնումի, պրոպտումի, ի՞նչ հաղուագէպ պատեհութիւն կայ մտաւորականի մը համար:

Բազմակողմանի Հետաքրքրութեամբ  
օժտուած միտք մըն էր ան: Մինչ իր  
պաշտօնին պահանջները լրացնելու կ'աշ-  
խատէր, միև կողմէն, իր ժողովուրդին  
ուսումնական, լեզուական հարցերովն ալ  
շահագրգռուելու ժամանակ կը դռնէր:

Առիթ մըն էր մօտէն ուսումնասիրե-  
լու թէ բնօրէն իրենց մայրենի լեզուէն  
զրկուած հայ Համայնքներ, որոնք տա-  
րիներէ ի վեր կը ճգնին վերստանալու  
կորսուած թանկ ժառանգութիւն մը, ի՞նչ  
աստիճանի յաջողութիւն ունեցած էին:

Կարեւոր հարց մըն էր այս, ո՞րքան  
ազգային, նո՞յնքան մանկավարժական  
տեսակէտով: Կետարիոյ հայ վարժարան-  
ները կը մտնէ, կը ծանօթանայ տնօրէն-  
ներու, ուսուցիչներու հետ: Երկայ  
կ'ըլլայ դաստիարակութիւններու, կ'ուսու-  
նասիրէ սոցոյ շփումն ու վերաբերումը  
իրենց մայրենի լեզուին հետ: Թելազրու-  
թիւններ կ'ընէ, իւրացնել կարենալու  
համար հայերէնի մասնաշաղկապութիւննե-  
րը: Այլքէ կ'անցընէ աշակերտներու զը-  
բական պարտականութիւնները: Անոնց  
ոմն ու արտայայտութեան մեկերը շատ  
զբաղուած ու թերի կը զանէ: Մայրաքա-  
ղաքին ծամծմուած, Էլիշէացած դրական  
աշխարհաբարը նոյնութեամբ ընդօրէ-  
նակուած ու որդեգրուած էր: Ընթացիկ,  
խօսակցական լեզուին դեռ անընտել էին  
տղաք: Տուն վերադարձին, անոնք ըս-  
տիպուած էին դարձեալ թուրքերէն խօ-  
սիլ եւ դպրոցին տարած աշխատանքը օ-  
ղբ կը ցնդէր այդ մթնոլորտին մէջ, ուր  
տիրապետող էր օտար լեզուն: Մինչև  
որ ընտանիքը հայախօս չլիարար, հնար  
չէր մայրենիքը արմատացնել հայ հո-  
գէին մէջ: Մայրենի լեզուին կորուստը  
բանութեան տակ, անշուշտ կարելի է  
դարձանել, զայն վերագտնելու սիրով ու  
խանդով վստուած, սակայն ժամանակի  
ճշշումը — սովորաբարութիւնը — բանու-  
թեան անդրադարձը, ուժգնօրէն կը մի-  
ջամտէ իրր խոչընդոտ:

Մայրաքաղաք վերադարձին, աս-  
տանդական տեղափոխութիւն մը պար-  
տադրող այդ դործը շատ յօգնեցուցիչ ու  
իր խառնուածքին անյարբեր զանկողմ, կը

փափաքի ուրիշ, աւելի՛ հանդարտ մի-  
ջոց մը փնտռել ապուստի համար:

Զրադումը չէզոք յարաբերութեան մը  
մէջ չէ անշուշտ մարդուն նկարագրին  
հետ, այլ գործօն ազդակ մըն է անոր վը-  
րայ, այդ պատճառաւ է որ մարդ դըժ-  
ուարահաճ կը դառնայ իր գործին ընտ-  
րութեանը մէջ:

Միջավայրին անծանօթ, արհեստի  
մը ընծայած վարժութեանն զուրկ, հայ  
մտաւորականը, ի՞նչ գործ կրնար ընել  
մայրաքաղաքին մէջ, եթէ ոչ, վարժա-  
պետութիւն, տանելի ու անդորր ապա-  
րիչ մը, յարմար՝ անոր բնաւորութեան  
ու կոչումին: Այցելու ուսուցչի պաշտօն  
մը կը յաջողի ապահովել, շարժուան  
մէջ երկուական օր, Սկիւտարի Ս. Խաչ  
եւ Գաարպիւղի Արամեան վարժարաննե-  
րուն մէջ, յօժարելով ստանձնել բարձ-  
րագոյն երկու գասարաններու գիտու-  
թեան դասերը: Գոհացուցիչ էր այս կար-  
դադրութիւնը, որով պատեհութիւն կ'ու-  
նենար իր բնակութիւնը հաստատելու  
Սկիւտարի մէջ, ուր համախմբուած էր  
մայրաքաղաքին հայ մտաւորականու-  
թեան մեծ մասը եւ մասնաւորապէս իր  
սրտամօտ բարեկամները, Շաւարշ Մի-  
սաքեան, Զապէլ Ծառայան, Հրանդ,  
Թէոդիկ:

Այս պաշտօնակցութիւնը պատճառ  
դարձաւ որ մօտէն ճանչնամ դիւքը: Ինք-  
նօրինութեամբ զարդացած միտք մըն էր:  
Հետեւած էր առաւելապէս Փրանսական  
դրականութեան, համակրանք տածելով  
խորհրդապաշտներու հանդէպ: Մասնա-  
ւոր յարում մը ունէր Մ. Մէթերլինկի:  
Իր գրական աշխատանքները կը շարու-  
նակէր: Լաւ ուսումնասիրած էր արեւ-  
մըտահայ զբակառութիւնը, ծագումէն  
մինչև իր օրերը: Դժգոհ էր սակայն,  
ստանեակ տարիներէ ի վեր անոր ներ-  
կայացուցած կայուն, ազդողուն հանդա-  
մանին: Շատ պոյսականացած, ազգա-  
յին ոգևորիչ աւելին, հիմնականութեան  
պարպուած կը դռնէր զայն եւ կը դէպ  
որ այդ կացութիւնը կը տանէր զայն  
դէպի ապագայինացում: Վէճի աւար-  
կան այդ օրերուն տոհմիկ զբակառու-

Թիւն մը ստեղծելու հնարաւորութիւններու մասին էր եւ այդ առիթով, ժամանակին կոչ մըն ալ հրատարակած էր «Վաղուան գրականութիւնը եւ անոր հիմնական պայմանները» խորագիրով, որ մեծ արձագանգ տուած էր մանաւանդ գնաւորի հայ գրական շրջանակներու մէջ:

Այսպէսով, քաջալերած էր գաւառին մէջ ծլած ու ծաղկած մէկ քանի տաղանդաւոր գրողները, որոնք պիտի ջանային նոր հիւթ ու նոր եռանդ ներարկել պաշտօնայ շատ նրբացած գրականութեան երակներուն մէջ:

- Ինչո՞ւ արեւմտահայ գրականութիւնը շեղած էր իր հունէն եւ անոր հովովոր խանդարուած: Որովհետեւ, արտաքին ու ներքին գործը, անզայկի խոչընդոտներ հեռացուցած էին զայն իր ուղղութենէն:

Շահագործական էին իր տեսութիւնները այդ մասին:

Մահմանազիր Զարթօնքը (1860), պատրաստուած, հմուտ, ողջմիտ նախաձեռնողներու խմբակ մը, կարող եղած էր ազգ. գրականութիւն մը կերտելու նախաարարքը հանդերձելու, կարգի բերելու, որպէսզի յաջորդ սերունդները ի վիճակի ըլլան հայեցի գրականութեան մը ծնունդ տալու:

Սակայն չիրականացաւ այդ յուսուիրութիւնը:

Անոնց կարողութենէն վեր՝ արտաքին ուժեր միջամտեցին եւ արգելք եղան որ նորահաս սերունդները կարող ըլլան արդարացնելու անոնց ակնկալութիւնները: Իր զարգացման բնականն ուղիէն խոտորեցաւ արեւմտահայ գրականութիւնը եւ եղաւ հիւթագուրկ կեղեւանք մը: Գլխաւորաբար երկու խոչընդոտներ կարելի է մատնանշել.

Ա.— Թուրք գրաբնութիւնը:

Բ.— Ներքին ցեղանկարները մը:

Ա.— Թուրք քաղաքականութիւնը տարօրէն կասկածոտ դարձած՝ հպատակ ազգերու ազատագրական շարժումներէն, իր ամբողջ ուժգնութեամբը յարձակեցաւ հայ իմացական վատակին վրայ եւ տրակոնական անլուք միջոցներու

կարգին, հաստատեց նաեւ աններող, անհանդուրժելի գրաքննութիւն մը: Այդ պաշտօնը յանձնուած ըլլալով վատասերած Հայերու, որոնք Թուրքէն աւելի դժգոհն ու բնականի բլլալով, կը ջանային իրենց պաշտօնը զերակատարելու եւ ճզմել հայ գրականութիւնը իր անդրանիկ թոփշներուն մէջ իսկ:

Գաղաքականապէս արորուած դարերով, Հայութիւնը, անողոք բռնակալութեան մը ճիրաններն ալ մխրձուած կը դպար հիմա, մինչեւ իր սիրտն ու միտքը: Հոգէտու մղձաւանջ մը կը սուսունէր հայ իմացական ու մշակութային ոլորտին մէջ: Ան հողուով մարմնով շղթայուած ստրուկն էր ալ: Արդիւրեւ չէին ազգայնութիւնը բնորոշող բոլոր բառերն ու ասոյթներն անկամ: Հայ մտաւորականութիւնը անզօր կը դառնար հակադրելու այդ մահացուցիչ կաշկանդումներուն դէմ եւ հրապարակը կը մնար ստերը, ճպուռային շարժողութեան մը մը ասպետներուն: Իրապաշտութեան խունկ ծխող խմբակ մը ի զօ՞ւր կը ջանար ազգային կեանքին թարգմանը ըլլալ: Հանրային մտահոգութիւններու լուսանցքին վրայ միայն կրնար դեղերի տն: Իրա՞ն է, շրջանը տուաւ մէկ-երկու արժանաւոր բանաստեղծներ, բայց անոնք ժայտերու ծերպերուն, ջիւղերուն մէջ ինքնաբոյս փթթող վայրի ծաղիկներ էին: Քնարերգութիւնը բացառելի երեւոյթ մըն է ժողովուրդի մը հոգեզաշտին մէջ: Ան դուրս է օրէնքէ:

Այս պայմաններուն մէջ հնարաւոր չէր գոյատևութիւնը ազգային հիւթային գրականութեան մը, որ, հայ հոգին սընուցանելու, ուսնացնելու ուժը ունենար:

Բ.— Ներքին ցեղանկարները մը յառաջացաւ այս անտանելի կացութեանէն: Զարթօնքի շուրջ խմբուած բարձր դասու մտաւորականութիւնը նորացաւ եւ հետզհետէ՝ ազգային սպասէն ձեռք քաշեց: Ան սկսաւ հետամտիլ ասպարէզներու, որոնք կ'ապահովէին դիրք, վարկ ու նիւթական առաւելութիւններ: Նորահաստաւ բարձր, վարժարաններու հրապոյրը տակցաւ անհամեմատօրէն: Հայ

Երևասարդութիւնը նեղուցեալ ազատ ասպարէզներու նուաճումին, մոռնալով իր ժողովուրդին մշակոյթին ծառայելու նուիրական պարտքը: Այդ մարզը մտա-  
ցած էր բնականօրէն Հայ նախակրթա-  
րանէ կամ միջնակարգ վարժարանէ թե-  
րաւարտ կամ շրջանաւարտ ժողովուրդի  
դաւանքին: Անոնք, զուրկ հիմնական որոշ  
զարգացումէ, Հարկադրուած էին տարի-  
ներով երկու ճակատի վրայ աշխատիլ  
միաժամանակ, նմտանալու, արտադրե-  
լու, կարենալ ծառայելու Համար Հաս-  
տատութեան: Այս նահանջականութիւնը  
չուտով իր անպարզարճը ունեցաւ ազգ-  
ների կեանքին մէջ - ուր պայքար մը  
ժողովուրդին եւ տիրող տարրին միջեւ  
երեւան եկաւ:

Իրապաշտութիւնը, իր ժամանակին  
կրցաւ, բացի յրազրական յաջող քրոնիկ-  
ներէ, տալ նաեւ գրական քանի մը յա-  
ջող գործեր, որոնք մեր ներքին կեանքին  
խօթութիւնները ձաղկելու կոչուած  
էին, առանց սակայն Հայ կեանքը առաջ-  
նորդելու չափ ուժ ունենալու:

Ճ

Իրաց այդ վիճակին մէջ, գրական  
քննադատութիւնը չէր կրնար պոյութիւն  
ունենալ, որովհետեւ, ան հարուստ, ծա-  
ւալուն գրականութեան մը անդաստանին  
մէջ միայն կրնար բողբոջիլ եւ բուրմ-  
նաւէտ ծաղիկ մը բլլալ: Իսկ գրական ա-  
ւանդութիւնէ զուրկ, սկսնակ նախափոր-  
մերու շրջանին, ան պարզապէս պերճանք  
մըն էր եւ այդ օրերուն, Արեւմտահայը  
նանրութիւններու պէտք չուէր:

Այս մեր պարբերական տեսակցու-  
թիւններու պարունակը կ'ընդլայնէր եր-  
բեմն, Յ. Օշականի այցելութեամբ:

Ան, ժամանակ մը Սկիւտարի Սէ-  
մէրճեան ազգ. վարժարանին Հայերէնի  
ուսուցիչն էր եղած: Ետոյ, նոյն պաշ-  
տօնով փոխադրուած էր Պոլսոյ կողմը  
եւ կը սիրէր շարք օրերը, յետ միջօրէի  
արձակուրդը անցընել Սկիւտար, շեռ-  
նաքներու հեղինակը մեծ յարգանք ու-  
նէր Արտ. Թարութիւնեանի Հանգէզ եւ

կու դար անոր հետ տեսակցելու ընթա-  
ցիկ գրական Հարցերու շուրջ:

Օրուան երկու գրական քննադատնե-  
րու այս Հանդիպումը անշուշտ շահեկան  
էր: Յ. Օշականի մէջ դեռ այնքան շեշ-  
տուած չէին այն որոշ մասնաշատկու-  
թիւնները, որոնք Հետագային իր Համ-  
բուրը պիտի ամրապնդէին իրրեւ քննա-  
դատ:

Անոնք երկու շրջաններ կ'որոշադրէին  
իրրեւ Հանգրուան: Արտ. Թարութիւնեան  
մինչեւ 1908, Հայ գրականութեան Հե-  
տեւած էր անձնապէս եւ խորապէս կը  
ճանչնար զայն, իսկ այնուհետեւ այդ  
զերը կարծես կը փոխանցուէր Յ. Օշա-  
կանի, որ տիրապետող կը դառնար Հե-  
տըզհետէ, Հասնելով իր կոչումին բարձ-  
րակէտին, իրրեւ առաջնակարգ ներհուն  
քննադատ:

Երկուքին զուգակշիռը ընել Հոս դըժ-  
ուար է:

Անոնք իրարմէ կը տարբերէին քն-  
նադատութեան դետնին վրայ թէ՛ մեթո-  
տով, թէ՛ արժեչափով եւ թէ՛ Հակացո-  
ղութիւնով: Թէեւ երկուքն ալ Փրանսա-  
կան գրականութեան հետեւող, անոր  
քննադատական ուղղութեան հետա-  
մբռնէին: Յ. Օշականի Համար տիպար  
քննադատը Բեմի տը կուրմոն էր, շք-  
ջանի խորհրդապալաներուն քրմապետը,  
որուն կարծիքը իրրեւ պատգամ կ'արձա-  
գանգէր ամէն կողմ: Անոր Փրանսական  
գրական պատմութիւնը, որ բազմաթիւ  
կուռքեր տապալած էր եւ նոյնիսկ խնա-  
յած չէր մեծն Վ. Հիւկոյին, օրինակ կը  
ծառայէր անոր, «Մնացորդացոյի հեղի-  
նակին:

Ա. Թարութիւնեան Համադրող միտք  
մըն էր եւ իր նախասիրած գրականու-  
թեան (կրաֆոլոյժի) ուղղութեան հետե-  
ւելով, ընդհանրացնելու ուժեղ Հակում  
ունէր իր քննադատական տեսութիւննե-  
րուն մէջ: Իսկ Յ. Օշականի մէջ վերլու-  
ծելու կարողութիւնը զարգացած էր եւ  
անոր մէջ հետզհետէ զօրացաւ ազգային  
երակ ու խորք որոնելու ձգտումը Հեղի-  
նակի մը արտայայտութիւններուն եւ  
մանաւանդ խորքին մէջ:





1915ի արեւածաղին հետ, քաղաքական մթին հորիզոնը տարազայման ամպոտեցաւ եւ փոթորիկի մը պայթումը փերահաս կ'երեւար: Բովանդակ կացութիւնը մտատանջութեան ալիքներու մէջ կը ծփծփար շարունակ: Հայ ուսուցիչը, իր դիմուորութեան հարցովը կը տազնապէք միշտ: Մարտին սկիզբը, ոստիկանութիւնը իմ հետքերու վրայ ինկած, կը փնտռէր դիմ: Մայրաքաղաքին մէջ առաջին հետապնդումն էր այս: Փնտրատուքը ա՛յնքան խիստ ու արտասովոր էր որ ամէնքը ահարեկած էին: Ինչո՞ւ...: Ալի դիտեր: Փախստական դարձած էի Հարկադրարար: Յաջողեցայ Սկիւտարէն անցնիլ Գոստրիլու եւ Հայ տուն մը ապաստանիլ: Մանր մտատանջութեան մէջ էի: Գրացիին տղան կը յաճախէր Արամեան վարժարան: Երկտողով մը հարցուցի Ա. Յարութիւնեանին թէ, հալածանքը կը շարունակուէ՞ր ինձի դէմ: Երեկոյին, տղան թիւզանդիանքի նոյն օրուան թիւր բերաւ: Վրան խազմզուած էր: Հալածանքը սասաիկ է: Այսպէս քանի մը անգամ կրկնուեցաւ նոյն հարցում-պատասխանը: Ա. Յարութիւնեան կը շարունակէր իր պաշտօնը եւ վախ չունէր որ զինքը կրնան հալածել, որովհետեւ կուսակցական մը չէր եւ քաղաքական վէճերու չէր խառնուած քնաւ: Մատնութեան մը հետեւանքով ես ձերբակալուեցայ վերջապէս:

Առաջին ձերբակալութիւնն էր այս, մայրաքաղաքին մէջ: Կեսարիայ Պատերազմական Ատեանէն եկած էր իմ ձերբակալութեան հրահանգը, ինչպէս, յետոյ երեւան ելաւ:

Այնուհետեւ Պոլսոյ անցքերէն ո՛չ մէկ տեղեկութիւն ունեցայ: Չարշարա-

կոծ խոչտանդումներէ հտքը, տասնըհինգ տարուան բերդարդելութեան դատապարտուեցայ (\*):

Զինադադարին (1918 Նոյեմբեր 18) ընդհանուր ներումէն օգտուելով, ազատեցայ բանտէն եւ Պոլիս վերադարձայ 1919-ի սկիզբը, Յունուարի մէջ:

Աննախատեսելի եւ ճակատագրին խաղերը:

Արտաշէս Յարութիւնեան չկար: Եղբայրը Վահան՝ պատմեց թէ ի՞նչպէս մը տաւորուած էր ան իմ ձերբակալման օրերուն: Ան կը շարունակէր իր ուսուցչական պաշտօնը, նոյնիսկ Ապրիլ 24-էն ետքը: Երկրորդ սեւ ցանկի մը մէջ անցուցած էին անոր անունը, իբրեւ ճկատամարտի խմբադրութեան համակիր մտաւորական մը: Զինքը ձերբակալուով աքորած էին: Իզմիրէն զիչ մը անդին, շարժարակոծ սպաննուած էր ան, բղիկ-բղիկ եղած:

Աղչեցուցիլ պարագայ մը Հայկական Սպանդին մէջ:

Մինչ Հայ ժողովուրդը քնաջնջելու մանրամասն պետական ծրագիր մը զործադրուելու վրայ էր անողոքօրէն, ո՛չ աքլուր ունէր կամ կը կասկածէր այդ աննախընթաց աղէտէն: Կը կարծուէր թէ պատերազմի հետեւանքով, վաղանցիկ խտութիւններ էին, որոնք վերջ պիտի գտնէին պատերազմին հետ:

Անխափանցելի էր Թուրքին դադարնապահութիւնը:

Գ. Թ.

(\*) Բայց այս անց՛նքու մասին մանրամասն տեղեկութիւններ տրուած են իմ մէկ գիրքին մէջ: Գորչ Գայը կառուր էր -, տպագրութիւն «Յաւաքիթ» 1953:

### Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ը

Հերոսներն են մարդկության գերագոյն կարելիութիւններուն հազարագիտ արտայայտութիւնները: Արջառը՝ արջառ է, հասարակաց ազգասիկ ու աննշան հանգամանքներով՝ բուսականացո գոյութիւն մը բաշխող երկրի վրայ: Անոր բազկացուցիչ տարրերն իրարու կը նմանին, եւ զիրար միայն կ'արժեան: Մէկը միւսին տեղ՝ խնդիր չէ: Անոնք որ չեն նմանիր ոչ ոքի, անոնք որ կը տարբարուին անհասկան մասնատութիւններով՝ անոնք ուշագրաւ միութիւններն են, եւ չեն շփոթուիր բնաւ: Երկրին տղն իսկ են անոնք: Առանց անոնց՝ համ հետ չէր մնար աշխարհի մէջ: Այդ պայծառ փարոսներն են որ՝ խաւարին տրտում միօրինակութիւնը կը լուսաւորեն ցանցառօրէն:

Քրիստափար Միքայէլեան: Սրտագին ուշադրութեամբ կը դիտեմ այդ ինքնագուստ կամեցողութեան մը ուժին մէջ խաղաղած համակերպի դիմագծութիւնը: Որքա՛ն երազ կայ իր կիսախուփ տնուշ նայածքին պայծառ միամտութեան մէջ, որքա՛ն խորհուրդ՝ իր լայն ու գոյնաւոր ճակատին վրայ, ու որքա՛ն կամք ու կորով՝ իր սեղմ շրթանքներուն վշտարեկ այլ վնասկան շրջագիծերուն մէջ: Անշուշտ էի, անգամ կը պատահի որ երազը ի սպաս իրեն ունենայ այն հանդարտ, աննկուն ու գործնական կամեցողութիւնը՝ որով Քրիստափոր Միքայէլեան կրցաւ արժեցնել իր կեանքն ու իր գործունէութիւնը: *Ինչի՞նչ* մըն էր անտարակոյտ, վեմտագոյն աւուրքի մը տեսիլքէն շանթահար, ու գայն հետապնդելու անդրդուելի հատուտով ամրացած: Եւ գնաց, մինչեւ վերջը, նայն ուղղութեամբ, ուխտի դժուարին նամբուն վրայ իյնալով՝ անպարտելի արհութեան մը առաքինութեամբ: Սուրբերուն Պանթէոնը, իր պատուանդաններուն ընտրելագոյնին վրայ կը բարձրացնէ Միքայէլեանի կիսանդրին, եւ մենք պատկառանքով կը խոնարհինք այս մեծ ու ազնիւ Հայու Զաւկին անուան տղին:

Կը թղթատեմ պատկերաշարը: Սերտը: Չեմ տեսած դէմք մը իրենին չափ հայեցի, իրենին չափ գեղեցիկ, իրենին չափ հանդարտ ու գիտակից ուժի առնագեղ արտայայտութեան մը մէջ պատկերացած:

Ո՞ր մէկն անուանեմ սակայն բոլոր այն պաշտելի նահատակներուն, որոնք անխտիր գացին, գերագոյն իտէլիան անուանով, մեծնիլ շագտութեան նախապարհին», որպէսզի ապրի գաղափարը, որպէսզի ապրինք մենք...: Ուշի ուշով կը նկատեմ իրաքանչիւրին դէմքը, հան իրենց հագին կարդալու բարեյօծարութեամբ: Ոմանք կ'արտայայտեն խանդավառ հագիններ, անգիտակից ու ինքնացայտ, վերացական ու երազատույն, ինքնամոռաց, ուռուցիկ եւ կուրօրէն բոլորանուէր:

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պ. ՄԱՊԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՐԵԱՆ



«Մեծապայծառ» դէմքերուն հետ նահատակուած, այլ դրական վաստակով քիչ մը նուազ կըսող զրազէս մը համարուած է Տիգրան Զէօկիրեան:

Որք՝ ի տղայ ակոց: Աշակերտ վանքերու եւ ոքրանոցներու, ու շրջանաւարտ՝ Պէրպլիբեան վարժարանէն: 1907-ին կը սկսի հանրային իր սպասը: Ուսուցիչ: Թարգմանիչ: Խմբագիր: Գրող: Սորվելու եւ սորվեցնելու տենդէն բրտնուած աշակերտի դպրոց, թաղէ թաղ, բնձէ բնձ եւ երկրէ երկիր հեւ ի հեւ վազքի մը կը վերածէ իր կեանքը: Սահմանադրութեան շրջանին, օգտուելով դպրոցական արձակուրդներէն, երկու անգամ առիթ կ'ունենայ Եւրոպա անցնելու:

Եւ հանաշունենքը ընդարձակելու նոյն ծարուին մղումով, կը շրջի քողաքակրթութեան հռչակուած ստաննները:

Տիգրան Զէօկիրեանի ստորագրութեամբ թերթերու մէջ երեւցած են արձակ ու շափածոյ բանաստեղծութիւններ ու զրափոսականներ: Առանձին հատորով հրատարակած է «Այլրեմի ձայնիք» խորագրով պոստմուածքներու շարք մը եւ «Վանքը» անուն վէպը, 1914-ին: Տարի մը ետք, հազիւ երեսունը անցած թաղեմտանդ այս խոսնուածքը գրչի իր միւս եղբայրներուն հետ կ'աջորդուի Այալի բանտը եւ իր նահատակութեամբ մաս կը կազմէ ընտիրներու փաղանդին:

Իր ողջուցը, ինչպէս նաեւ հիմա, Տիգրան Զէօկիրեանի մեծագոյն գործը կը համարուի «Վանքը»: 1933-ին, Հեռահատակ զրադէաներու բարեկամները շնորհը վերականգնելու հետ վերահրատարակեցին «Վանքը», իսկ 1962-ին, Պետհրատը առանձին գրքոյկով մը լոյս ընծայեց զայն 20 հազար տպաքանակով: Թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ մտաւորականութեան համարումին մէջ այդ գործը կը մնայ Զէօկիրեանի դրական ամէնէն ուշագրաւ նուաճումը:

Իր վաստակին միւս կողմերը մենագրողի մը դնահատութեան ձգելով՝ մենք կը խոնարհենք մեր գլուխը ու վերստին կը մտնենք իր «Վանքը»-ն ներս:

Բախտուոր են այն հեղինակները, որոնք ժամանակ կոչուած մեծագոյն գուսակիրին հարուածներէն չեն ազդուիր ու տիրականօրէն կը խառնուին յաջորդական սերունդներու ապրումներուն ու ճշմարտութիւններուն: Իրենց հոգիներուն հաւատարմաբար արձագանգելու փաստը եւ շրջապատի կեանքը թաւալքի հանած շարժիչ ուժերու էութեան թա-

փանցելու յատկութիւնները՝ իրենք կը կազմեն այդ բախտաւորութեան տարրերը:

Տիղրան Գէօկիրեան այդ բարեմասնութիւններէն անմասն չէ ու բախտաւոր հեղինակներու դասուն կը պատկանի անտարակոյս: Յիսուն տարի անցած է գործին առաջին հրատարակութեան վրայէն ու այսօրուան ընթերցողներուն տպաւորութիւնները հազիւ թէ կը տարբերին երէկուայ ընթերցողներու ստացած տըպաւորութիւններէն: Տրուածը մեր օրերու կեանքն է կարծես, մեր ժամանակը յատկանշող տաղանակներուն մէկ պատկերը, սէրը, ատելութիւնը, այս կամ այն հարցականը, որոնումը: Մարդկայնութեամբ օժտուած գործ մը, սաք՝ այդ արժանիքին պատճառով, ու սիրելի՛ այդ տաքութեան շնորհիւ:

Երիտասարդ վարդապետի մը կողմէ բռնուած ու Նոյեմբերէն մինչև Յունիս երկարող օրագրութիւն մըն է Վանքի բովանդակութիւնը: Արմաշէն շրջանաւարտ ու ատեն մը Գոլթայ մէկ աղքատ թաղին մէջ քարոզչի կարճատեւ պաշտօն մը կատարելէ ետք՝ անիկա կը կանչուի գաւառի մը մէկ անկիւնը գտնուող վանք մը, իբրև «ճարտար քրքանցիմ տեսուչ. իբրև հայր՝ ինքաւոր արքերէմ մէկ երկու տասնեակիմ»:

Վանքի սեմին սաք շրած օրէն կը սկսի ուշադրաւ դառնալ իր կեանքը ու անցնիլ թուղթին: Ու վանքէն մեկնած օրը կ'աւարտի նաև թուղթը:

Բայց բեղուն կ'ըլլան վարդապետին օրերը գաւառի այդ անկիւնին մէջ, 95-96-ի ջարդերուն յաջորդող տարիներն են ու ինք մէկը այն ընտիրներէն, որոնք ասպարէզ իջնան Աղէտին հետեւանքները մեղմելու կամբով: Նկարագրով աշխուժ, տէր՝ սրտի ու մտքի, քնարկող, թափանցող, հարցեր առաջադրող ու լուծումներու հետամուտ անձնաւորութիւն մը, որ ժողովուրդին հետ կ'ապրէ միշտ, անոր մեծագործութիւնները հասկնալու տենդով, մասնակից՝ վերականգնումի ճիւղերուն ու լուսատես՝ ազազայի հաշուոյն: Յուզիչ, ու տաք, ու հաղորդական

մթնոլորտի մը մէջ, կը կատարէ իրեն վստահուած պաշտօնը՝ կը խորացնէ ծանօթութիւնները ազգային մեր հանճարին ու բնութեան տարրերուն մասին, կը սիրէ, կը հիւանդանայ ու կը մեկնի...

«Վանք»ին մէջ ու վարդապետին կողքին կան ուրիշ վանականներ, ուսուցիչներ, որբեր, տնտեսուհիներ ու հաստապրական ապրումներու զուռ բացող աղջիկ մը: Այսինքն՝ հին մտայնութիւնը, նոր կորովը, վաղուան յոյսը, աշխատանքը ու սէրը: Վանքի ձեռագիրները սպա, ու շրջակայքը՝ Հողը: Մէկը իմաստութեան մեր ծարաւին դիմաց, միւսը՝ աշխատանքի մեր առհաւական եռանդը գրգռող զօրութիւն իբրև: Ոչ նոյն ուժգնութեամբ անուշտ, բայց վարդապետին հետ մեր մտքին մէջ կը մընան Վանքի մէջ գործող անձերէն մէկ քանին, ներկայացնելով կամ պատճառելով մտայնութիւն մը, կիրք մը, հեղեղային ապրում մը: Կը մասն՝

«Վարդապետադիմական» մտայնութեան պատմական ու աննահանջ բուրք՝ Վանահայրը:

Հին ձեռագիրներու վերծանումին նուիրուած անձնամուրը՝ Միլիազարը:

Հայկական ողբերգութեան մէկ ներկայացուցիչը՝ որբ Խաչերը:

Ու «Հրապուրիչ ու աստուածային էակ»՝ Երուանը:

Վանահայրը տոբ կու տայ ծոյլ ու նոյին բանի պրտարոյծ ներկայութիւններու դէմ ընդվզելու հարկի մը: Ու նաև համակերպող իր նկարագիրը հարուածելու տնայարանքին: Անիկա (Վորանիլի՛ ապուշ») կ'ատէ ցեղին արթնութիւնը, յուսատու շարժումները ու կ'ատէ մանաւանդ Խրիմեանը եւ մեծ վատարականցիին երկաթէ կտակը: «Հնարիսան շերտիս խառնի սարվեցուց հայ ազգիմ... Հեռուա՛մբը...»

Եղիազարը, ընդհակառակն, կը հաստատայ իր ժողովուրդի ապագային ու ինքզինքը նուիրած է մեր ցեղային ետին բողբոջուցիչ լոյսերը օտուզելու կիրքին:

Խաչերը կը մնայ միշտ յուշաբարձ

իր սրտատուչ դերին մէջ — «Եկամ... Եկամ... մայրիկ...»: Վէրք է, կարօտ է ու դատանցանք: Ու ըմբոստութեան արդար պատճառ. «Աստուածային կամէր այս սնիրներուն ինչպէ՞ս կը հանդուրժէ»:

Իսկ Շուշանը կը յուզէ այն բռնակալ ապրումները, որ շրջան առ շրջան կ'աշխարհէ «Սու պերճութեան» նուիրուած երեսասարդութիւնը, դուռ բանալով բարդ ապրումներու ու փորձիչ խորհրդածութիւններու: «Վամէ՞ին զգայի մէկ բաժինը նուիրուած է այս վերջին ապրումին տեղատուութեան եւ մահընթացութեան: Տարուած է անգործ պայքար մը սրտին անասնձէի տենչերուն ու անոր իրաւունքները մերժող կուսակրօնին միջև: → «Մէջս հիմա աւելի ամուր է այն բանը՝ ուրկէ՞ կը վախճամ: Տէր Աստուած, տ'արքեր, ես կը սիրեմ Շուշանը...»

Օրագրութիւն բռնող բոլոր անձերուն պէս վարդապետը ինքն է իր թուղթերուն կեդրոնական զէմքը ու սեռին յատուկ սուղումները պատիկ տեղ մը չեն գրաւեր անոնց մէջ: Այսուհանդերձ արտաքին ու ներքին ազդակներուն մղումով հոն մշակուած զաղափարներուն աստիճանական զարգացումը եւ զէպի յատակ վախճան մը առաջացող անոնց շարժումը դուրս կը բերեն Չէօբկերեանի գործը օրագրային անձուկ սահմաններէն ու զայն կը դնեն վէպի կալուածին մէջ: Բայց իր սեռէն անկախ, գրական գործ մըն է անիկա, կեանքով բարախուն, նրբերանդներով հարուստ ու մտածման իր բաժինով ինքզինքը պարտադրող:

Ամփոփուելով մեր սահմանափակ էջերուն մէջ՝ պիտի ուզէինք բուռ, թէ երկու խորունկ սէրեր լեցուցած են «Վամէսի էջերը»: Այդ սէրերէն մէկը ցեղն է, միւսը՝ կինը: Անհատ՝ երկուքն ալ: Առաջինը կարմիր ներկայութեան մը արդեւորով, երկրորդը՝ սեւ ներկայութեան

մը: Ու այդ երկու սէրերուն ու անոնց աճումն ու վայելումը անկարելի դարձրին այդ երկու բացասական ներկայութիւններուն միջև տուայտող հոգիի մը վէպն է ան, որ բովանդակ մթնոլորտի մը մէջ զարձեւալ ու անձկութեամբ կը սպասէ երկուքին ալ ծաղկումին: Յեղին «ձնուղիին» ու սրտին դարնան: «Ո՞ւր է մեր միմուռը», եւ յետոյ՝ «Ե՞րբ պիտի գայ գարունը քեզի իր վարդերովն Արտակ...»

Տարբերակ է մեր կեանքը, գիրքերուն մէջ ու գիրքերէն դուրս, խոտիչ, սղոյթապան, կախարդական մեր կեանքը:

Վայրենիներու բովանդակ զաղափարները մեր մէջն մի ծիլին, մէջն մի հասկին ու հոյակերտած Հրաշակերտներուն վրայ, առկախ՝ շնչաւոր ամէն էակի դիտուն, քաղաքակիրթ հանդիսատեսներու անխոտի կնարակին դիմաց ծով մը արիւն, աւեր ու որբ ամենուրեք, ու միւս կողմէն վերստին մենք, մեր գոյութեան զէմ արարիչին ու արարածներուն սարքած միացեալ ու մթին դաւադրութիւններէն ետք զարձեւալ մենք, լուստես, անպարտելի, անջնջիլ՝ մենք: Դարձեալ ըմբոստ՝ ինչպէս եղած են քաղաքակիրթութեան ու մշակոյթի ընդունակ ընտիրները, որոնց՝ ինչպէս կ'ըլլայ ըմբոստներուն առինքնող խոտերու զրէ ըմբոստութեան եւ որոնման բուռն տարերքը: Այսպէս եղած ենք ամէն տեղ ու միշտ, դարերէ ի վեր, պատմութեան մատեններուն մէջ, տրուեստի գործերուն մէջ: Այդպէս ենք նաեւ Տիգրան Չէօբկերեան վանքին մէջ՝ մենք՝ ամուր, անյուսահատ, յամառ՝ մենք:

Օր մը մեր Յեղը հսկայի մը նման պիտի վերականգնի անիրաւ աշխարհին առաջ»:

Գ. Ս.

## Վ Ա Ն Ք Ը

( Հ Ա Տ Ո Ի Ա Ծ )

Գիշերը խուցս փառանցայ, Նարեկէն հատուածներ կը կարգում:

Այլուր՝ երբեք այսքան բնականի եւ վսեմ երեւցած չէ ինծի այդ ստուածային գործը: Հիմա կը հասկնամ Նարեկի ճգնարանին արժէքը: Մարդկային ձեռքերէ դիտմամբ դուրս նետուած մեծաւոր եւ կորսուած կէտի մը վրայ է սր հոգին կրնայ գտնել անաշխարհիկ մտածումը ու երկնային ներշնչման անձնատուր կ'ըլլայ:

Գեանքի ձեռքերէն գուրկ այս մեծարանը՝ գիշերներու անսփռվ խաւարին մէջ, ճիւղի գթութեան ու հողմերու պահպանութեանը յանձնուած, սրտիս մէջ կ'արթնցնէ երկիւզածութեան կայծը, ու խռովելէ յետոյ հոգիս անոր վրայ, սպեղանիներու նման կը ծաւալէ իրերու իտէական եւ անշահախնդիր վայելումը:

Իրա՛ւ Նարեկէն առաջին անգամ ըլլալով գերբնականին նաշակը կ'ընդունիմ, նման մեղապարտի մը, որ ռսկեայ սկիւնէն կը ստանայ ծիրանի գինիով օծուն հաղորդութեան մասնիկը:

Այս հոգեկան վայելումներս քիչ կը տեսնեմ սակայն, կը պատահի որ գոցելու անմիջապէս վերջ՝ օրուան հոգեբով ընդմուտը ունի կամ թէ սիրոյ մը գորտուր հրապոյրն զգամ:

Ինչպէ՛ս մեզմէլ կիրքը երիտասարդի մը, ըլլա՛յ կզերական, կարմիր արիւնին մէջ, ինչպէ՛ս սպաննել մտածումը, որ երակններուն ջերմին սարսուտէն կ'արթննայ եւ կ'ըզայ բաներուն էն ամօթալին այլ անուշը, կինը:

Նարեկացին չտառապեցա՛ւ արդեօք կուսական մարմինին կարօտով: Այթամարի մէջ յայտնուող Աստուածամայրը իր երագին կինը չէ՛ր արդեօք: Ապաշարի այդքան հզօր ազազակներ հանելու համար, մեղքերու նշանքն ուժգին խածատումը զգալու է մարդ:

Ամօթալի բաներ կ'ըսես Արտակ... ամօթալի՛...

Ձեմ կրցած ծառանցնել մատղաշ տարիքն ու պարտքը՝ գոր կեղեցիցին դրած է մեր վզին՝ անուրի մը նման: Իրա՛ւ Նարեկն ու ըզբազումներս կը մոռցնեն շատ անգամ կիրք, բայց սպաննել չեմ կըրնար, անյաւաստի բույէի մը այնպէս կ'իլլեն նստելու մէջս՝ որ ես անոր ստացուածքը կ'ըլլամ: Պէտքը կը զգամ բաներու, գործնք վայելած չեմ, բայց համով ըլլալու եմ. սիրուիլ, շոյանք ստանալ, էգ մարմինի մը հետ անչակցիլ կ'ուզեմ:

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՒՐԵԱՆ

Յ. ԳԵՂԱՐԴ

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ



Զհասած տակաւին Գրիստոսի տարիքին՝ Գրիստոսի խաչն աւելի դաժանագոյն մահով մը անմահացաւ, գաղափարի ու քնարի ճամբուն վրայ, նոր օրերու անկրկնելի այս քրուպատուրը:

Տարիներով եւրոպական ուսաններու մէջ լոյս ճարակած, Արուեստի ու Գիտութեան ջինջ ակերէն իժմացական ու հոգեկան ծարաւը յագեցուցած՝ վերջին պահուն եկա՛ւ Պոլիս, մատաղջու պարարտ խոյի մը պէս, արեան կանչի մը կարծես անձնատուր, ջրմապիտ իր գոյք հոգեպայրներուն՝ Դ. Վարուժանի եւ

Սիամանթոյի հետ պատարաւ դառնալու գաղափարի բազինին, ահաւոր զիչեր մը, Գողգոթայէն աւելի՛՛ զժնեսեսիլի զժոխքէն աւելի՛՛ մահասարսուռ ու դժխեմ վայրի մը, Անատոլիի խորը՝ Զանդըրքի մէջ, որուն հողը կը զողայ տակաւին ողբ-ողջ թաղուած մեր բիրաւոր նահատակներուն խլրտող աճիւններէն...

Իանաստե՛ղծ ըլլալ Սիամանթոյի եւ Վարուժանի օրերուն, երբ Մեծարեանց կը հնչեցնէ տակաւին իր քնարին ոսկեհունչ լարերը, ու արժանավայել կերպով պահել անունը՝ անո՛նց անուններուն քովիկը, անջնջելի՛, մինչեւ այսօր... երբ՝ այդ ժամանակաշրջանին ճերթուածով մը անմահութեան գափնեկարակ խլոյ բանաստեղծներ կը տժգունին տակաւ (Փ. Պէշկէօթիւքեան), կամ ուռուցիկ ոտանաւորներու նորարար արտաքինով ընթերցողներու զգայարանքները իրենց ցանցին մէջ պահող ճեմքեր կը մանրուին ու ժողովրդական կը մատնուին արագօրէն (Ա. Զօպանեան): Ու դեռ՝ զարմանաւորան մը զոց դրան ետեւ կամ հիւստիկ երգիքի մը տակ հանդիպած ու ցաւերէ, ախտերէ տառապող էակներու կեանքէն քաղած բժիշկի էջերը տպել յանդաշնիլ նորավիպագրութեան իշխան Գ. Զուհրապի արձակի կողքին, արժանանալով Ռ. Զարդարեանի պէս խոտարիր քննադատի մը եւ դժուարահաճ արուեստագէտի մը անվերապահ դնահատանքին... Վերջին ու շեղագոյն խոտուածն էր 20-րդ դարու սկզբնակամարին լուսավառող մեր դրական համատեղութեան, եւ որուն շիմաց Ռուբէն Սեւակ արձանագրեց ու արձանագրուած պահեց իր անունը:

Գիպուածով իրեն վիճակուած վարկ մը չէր այս բարտաւորութիւնը, այլ տաղանապահար ուղացքէ մը արդար վարձատրութիւնը: Թ. Սեւակ երբեք նախանձոտ աչքերով չդիտեց Վրուսի թերթողները (Վահրամ Թաթուլ, Մ. Պարսամեան) որոնք միջին ընթերցողին մատչելի ոտանաւորներ հիւսելով՝ օրին, երջանկօրէն կը ջնանան պղտիկ համբաւէ փետուրէ ու բեհեզէ բարձին վրայ, վաղանցիկ փառքով: Այլ՝ ճշմարիտ բանաստեղծի ու արուեստագէտի խառնըւածքով այս դեղագէտ ջնարակարը՝ իր խնկ սիրտը բոնեց ափերուն մէջ, դրօշի պէս, ու նախընտրեց քաղել, ամբօրինեցրու առջեւէն՝ Աստուծոյ մատին լուսնուէն հեռքը իրենց ճակատին վրայ կրող մեծերու կայծակնակոփ ուղիներէն:

Քաղեց հեթանոս ջրմապետին՝ Վարուժանի հետ ոչչպի մեհնանները հին աստուածներու՝ երկրպագելու ազգային ուղիի զարթօնքին, բայց չչփոթուեցաւ անոր հետ, չզարձաւ շուքը: Զունէր ուսերուն դասական նրբարուեստ ոճաւորւածով անոր շքեղ ծիրանին: Բայց խորձոտ էին քալիքը ու անձնական կըշուսով, ու պտտեցաւ անոր հետ, անոր պէս՝ Պալաւ քրովայնիմ մէջ, փողոցի մը մայթին, անձրեւին տակ, կամ կապիւլայի մը դրան ետին՝ իրապաշտ սիրոյ մը բոցաժուս ծագիկները քաղելու, մեղքի աժան սափորէն բաժակ-բաժակ արբենալու, հուսի յետոյ մեղանշումի դիրտէն սթափելու եւ մարդկայնանալու:

Փոթորկաշունչ Սիւմանթոյի հետ դարձաւ փոթորիկ մը, միաւոր ասպետ մըն ալ ինք, սրբնիթաց հասաւ Կիլիկիա, ու հայկական ջարդերու կարմիր լուրերը, աղիողորմ ճիշերու եւ լացերու արձագանկը բերաւ Պոլիս, պոլսահայ զբոսկանութեան, ոչ թէ ողբի ու կոծի՝ այլ՝ ըմբոստացումի, ծառայումի իբր հրաւեր, նոյնիսկ Աստուծոյ դէմ: Ահաւոր անարդարութեան ցատումէն դարձած մութ շանթերու սերմնացում՝ բարձրացուց վրէժի դրօշակը ու շնորհեց խիզախօրէն՝ «բարձ մալի արդար է խաչն»:

Տրտում երգերու, տարտամ սէրերու մեղամաղձիկ ու քաղցրահնչուն արնագահրէն՝ Մ. Զարիֆեանէն տասնեակ մը տարիներ առաջ՝ Թ. Սեւակ անցաւ սիրոյ մութ դաշտերէն, ամայի ցամաքներէն, իրեն կարկառող պղտիկ աղբիկներու անմեղ սիրտերուն, ջինջ սէրերուն եղբայրօրէն կարեկցելով: Սիրելի երջանիկ, բայց ներշնչած անյոյս սէրերէն տանջահար քաղեց արագ-արագ, նախաճրչանք տալով եւ ճամբայ բանալով «Կեանքի ու մահուան երգիչ»ին, որ պիտի գար իրմէ ետք, աւելի ջնարականացած, մեղմ ու անօլ ճնշուներու յուզականութեամբ, իրեն պէս ստոյլիկ կենալով, արձամարհելով Ֆիզիքական մահը եւ հաստատելով արուեստի անմահութեան եւ արուեստագէտ հոգիի յախտանականութեան:

Հրանդի պանդուխտներով ու պանդուխտի ցաւերով տառապող հոգի՝ Լիւմանի կապոյտ ափերուն, Թ. Սեւակ երգեց հեռաւոր Հայրենիքը, Հայրենարարձուութեամբ ապրող տարագիր Հայրենիներուն ամօքեց Ֆիզիքական ախտերը եւ հոգեկան ցաւերը, եւ մացուց զանոնք մեր դրականութեան մէջ:

Տակաւին Տալիլայիմ քով բեմ հանեց Գիմովիմ Ազգիկը, եւ շնորհիւ իր արու եւ ջղուտ ոճին, արուեստագէտի կայծկըրտուն զգայարանքին եւ մաքուր ու մաքուրաւ խորքին՝ մեծ հետաքրքրութեամբ եւ դրական վայելքով կարգաւ տուաւ ընթերցող Հասարակութեան «Բժիշկին Գիրքէն Փրցուած Եղբորը» Զօհրապի «Լուսնաւերջուն», «Ողճմտանքի Զայներջուն» հետ, հանդիսանալով հիմնադիրը բժշկական մեր դրականութեան, ուր՝ հասկառակ կատարուած փորձերուն՝ ինք կը մնայ ամէնէն տաղանդաւորն ու վաւերականը:

Իր ջնարին սիրոյ եւ ազգային լարերուն թրթռացումներով եթէ Թ. Սեւակ կը ներդաշնակուէր իր օրերու շքեղ համերգին՝ «Բժիշկի Գիրքէն Փրցուած Եղբոր» խոր մարդասիրութեամբ կ'անջատուէր, որոշակի՛, այդ խումբէն, եւ աստուելարար որպէս Հասարակական կար-



գերու, Մարդու ապագայի տեսիլքով յաճախուած Հեռահայեաց աչք ու խոս-  
 վայրչք սիրտ՝ կը դառնար մենակատար-  
 ներէն մէկը այդ Համերգին: Անմաքուր  
 եւ անազնիւ կեանքէն, շահագործուող  
 մարդոց թշուառ դոյութիւններէն չիկա-  
 ցած զգացումներով եւ հրացայտ արա-  
 մադուութիւններով՝ իր ժամանակակից  
 քերթողներու հոյիւն մէջ մինակը՝ Ռ.  
 Սեւակ կը կանգնէր 20-րդ դարու սեմին,  
 խորիտ, նայուածքը հեռատոյղ, որպէս  
 ամէնէն զտարին զուսկը այս դարուն,  
 ամէնէն բարձրագոյն շեփորահարը անոր  
 տաղնապներուն ու Ոգիին:

Լուսափայլ նշդրակին ընծայած հը-  
 նարուորութիւններով պերճ ու փարթամ  
 կեանք մը ապահովելու ատակ այս Յէն-  
 բըլմէնը կ'արհամարհէր մարդկութեան  
 Հարստահարող դասին մէջ Հանդատուէտ  
 աթոռ մը գրաւելու հեղձութիւնը: Կ'ափ-  
 ստարը հասած ըլլալուն այնպիսի ատեն-  
 ներու՝ երբ փշուած էր ինչ որ կար վը-  
 սնմ, երբ արծաթը համած էր արուեստը  
 կախազամ եւ մեռած էին երկն գարերը  
 աստուածարնակ: Եւ բոլոր իրա՛ւ ար-  
 ուեստադէտներու արժանափայլ քաջու-  
 թեամբ, կոչումով՝ կ'անցնէր խոնարհ-  
 ներու կողմը, կը միացնէր սիրտը փոզ-  
 ցը աւլոյդիմ եւ անօրէններու կողմէ՛ հիւ-  
 ուած օրէնքի փշապանկէն տանջուհար ու  
 արհեստագամ բոլոր իրուապրկեաներու  
 սրտին՝ բողբոջի, պայքաբի՛ հրաւիրելով  
 զանոնք, տապալելու համար ոսկի հոր-  
 թը եւ անկէ ծնած բոլոր շարքները, եւ  
 վերականգնելու, վերահաստատելու՝ Բա-  
 բիի ու Վսեմի իրական Աստուածը իր  
 զահին վրայ, Աստուած մը որ կարծես  
 անսահման ժամանակներու մէջ՝ այդ  
 պահուն, 20-րդ դարու սկիզբը՝ կը բա-  
 ցակայէր երկնքի կապոյտ անհունէն:

Ռ. Սեւակ ժամանակ չունեցաւ ամ-  
 բողջացնելու իր դարու Մարդուն արտա-

ճանաչումը եւ կարգախօսելու վճռական  
 դարմանումը: Չկրցաւ մանաւանդ նրբա-  
 դոյն արուեստով մը սրելու, կոփելու իր  
 խօսքը եւ անբեկանելի ու հատու թուրի  
 մը պէս տալու զայն ժողովուրդին ձեռ-  
 քը:

Ոճիբի կայծքարերուն վրայ դարե-  
 րով յեսանուած թշնամիին եաթաղանը  
 անճիտեց վաղահասօրէն իմացակառու-  
 թեան ճոխ գանձերով, ոսկեղէն երազնե-  
 րով հարուստ իր դուին ալ, անուարտ  
 ձգելով եղակի պատուանդան մը զբաւե-  
 լու սահմանուած իր դրածը:

Եթէ ապրէր՝ աւթունամեայ ճերու-  
 նազարը զրչի՛ վաստակաւոր մը պիտի  
 ունենայինք իրմով, որուն մէջ աղջու-  
 նէինք, շատ հաւանաբար, մեր մեծադոյն  
 բանաստեղծներէն մէկը: Որովհետեւ՝  
 հեղհեռէ լայնցող շունչը, խորացող  
 ապրումները կու տային երաշխիքը, թէ՛  
 Ռ. Սեւակի քերթողութիւնը կրնար նը-  
 ւածել նոր հորիզոններ, ինչպէս վերադ-  
 րող իր զբնդրայններէն անցաւ եւ ուս-  
 ճացաւ Ահարոնի վաստակը, բարձրացաւ  
 ու դադարեացաւ Վ. Թէքեանի բանաս-  
 տեղծութիւնը:

Այսօր՝ իրմէ ժառանգ մնացած քեր-  
 թըւածի եւ արձակի գոխտ հատորն ալ  
 սակայն՝ շքեղ խոստումի մը վկայութիւ-  
 նը չէ՛ լուի: Ուստի օրէն ապրող կեանք  
 մըն է տակաւին, կենսաբուխ մտտեան  
 մը՝ խորունկ, զօրե՛ղ անհատականու-  
 թեամբ մը սթառուած տենդափար բանաս-  
 տեղծի մը, որ կրցաւ դուրս գալ անձնա-  
 կանի եւ ազգայինի խողակէն եւ ընդ-  
 լայնել մեր քերթողութիւնը մարդասի-  
 բականի եւ մարդկայնականի ուղղու-  
 թիւններով, եւ ինքնայատուկ համ եւ ջիղ  
 յայտնաբերած արձակադրի մը, որ չը-  
 քեղօրէն կատարեց բացումը բժշկական  
 մեր գրականութեան:

Յ. ԳԵՂԱՄԴ

## ԱՆՏԻՊ ՄԸ Ռ. ՄԵԻԱԿԷՆ

Մշակույթի Ռ. Մեուկին կողմէ 1912-ին դրուած յուզումով բարեսուն այս նամակը, ջարդ անարդ մը անցած, սրբազան Կլոսի մը համը ունի ևս դրուած է Լոզանէն, իր մտերիմ ընկերոջ Գարեգին Տերմիչեանին (այժմ Լանզուցեալ) :



Lausanne, le 22 decembre 1912.  
28. Decemb. 28

**HOPITAL CANTONAL**  
à Lausanne  
SUISSE

MÉDECIN

№ ——— Արևիկ Գրեղա:

Այն ժամ, որ քան ի վերջ անցանք  
 և միտք լցանք, ապա հոգի մտառարտ  
 խնայող և սուղ օրհն ընդ մարդ մը ևս  
 Եթե երբ : Երբ և արեւոյ ընդ մարդին  
 Կիտ ըտ և Ի վերջ անցանք թիւերուն  
 Երբ քան ի վերջ անցանք : Խորհրդ մը և  
 Երբ կարծի և Ի վերջ անցանք ընդ մարդ  
 Ի վերջ անցանք և Երբ կարծի ընդ մարդ  
 Երբ և Երբ կարծի ընդ մարդ և Երբ կարծի  
 Երբ և Երբ կարծի ընդ մարդ և Երբ կարծի  
 Երբ և Երբ կարծի ընդ մարդ և Երբ կարծի  
 Երբ և Երբ կարծի ընդ մարդ և Երբ կարծի

Les uns s'en font le point de vue d'un autre monde  
 et les autres s'en font le point de vue de la terre  
 les premiers se souviennent de leurs frères  
 à terre et les seconds de leurs frères  
 dans le ciel. Le premier point de vue est  
 celui de l'homme et le second est celui  
 de Dieu. Le premier est sentimental et le  
 second est philosophique. Le premier est  
 celui de l'âme et le second est celui  
 de la raison. Le premier est celui de  
 l'individu et le second est celui de  
 l'humanité. Le premier est celui de  
 la religion et le second est celui de  
 la science. Le premier est celui de  
 la poésie et le second est celui de  
 la prose. Le premier est celui de  
 la fiction et le second est celui de  
 la réalité. Le premier est celui de  
 la magie et le second est celui de  
 la magie. Le premier est celui de  
 la magie et le second est celui de  
 la magie.

The manuscript text is extremely faint and difficult to decipher. It appears to be a dense paragraph of handwritten notes, possibly in a cursive script. The text is contained within a rectangular border and is centered on the page.



Տ.՝ՈՍԿՈՒՆԻ

## ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ



տեղնազորութիւններու հետամտութիւն մը կը վկայէ, Հայ հոգին փնտռելու առաքելութիւն մը, որ եղաւ գլխաւոր յատկանիշը նաեւ այն միւս սիրելի դէմքերուն՝ Օշականներու, Զարդարեաններու եւ Միսաքեաններու:

Նոր պատկերներու եւ նոր ոճերու փնտռութեւնը, սր յատկօրէն կ'արտայայտուի գլխաւորաբար իր պատմութեան ժողովրդական մէջ, Գեղամ Բարսեղեանը կը դարձնեն խորհրդապաշտ սեւեռումներու դրաղէտը, որ զգալուն սրտի մը թախիժով ու դաճնութեամբ կը ներկայանայ ընթերցողին:

Բոլոր անոնց պէս, որոնք իրենց արուեստին լիութեան չհասած, գալիք մեծ նուաճումներու կանխիկ վկայութեամբ նետուեցան մահուան զիւրկը, Գեղամ Բարսեղեան չունեցաւ նոյնիսկ սիրտանքը իր գեղապաշտ պատմութեանը մէջ Հատորի մէջ ամփոփուած տեսնելու: Այդ նուիրական պարտականութիւնը պիտի կատարէին Փարիզի «Նահատակ Գրագէտներու Բարեկամները», որոնք 1931-ին Հրատարակեցին իր «Ամբողջական գործը», իրենց արժէքաւոր շարքին շարքով տեղը տալով գրական պարբերականներու մէջ «Գեղոս» եւ «Նետ» ծածկանուններով երեւցող այս գրագէտին:

«Հայ հագին՝ արուստի նորանոր ու բազմազան ձեւերում մէջ, - սեւ Հայաստանայց գրականութեան իտէլլը»:

Կրօնական երկիւղածութիւն մը եւ հանգանակի մը սահմանում կայ վերք

Գեղեցիկ ոճի մը նայլայնող բնութեանը մասնող գրագէտը եղաւ Գեղամ Բարսեղեան, Պոլիս ծնած բնիկ Ակնցի այս արձակագիրը, որ 32 տարեկան Հասակին զո՛ւր զնաց Հայաջինջ ըսպանդին:

«Ազգակցի, «Ազատամարտի եւ «Մեհեան»ի ողբապաշտ սերունդին ամէնէն Համակրելի երիտասարդներէն մէկն էր Գեղամ, որուն գործը Հայադբոյժ ըս-

տողերուն մէջ, որոնք հրատարակուած են 1914-ի «Մեհեան»ին մէջ, իբրև «Բաժակաճառ»:

Այս տողերուն մէջ, Գեղամ Բարսեղեան իր սերունդին հարազատ ներկայացուցիչն է: Հայկական վերածորոգութեան, հողեկան սպտազինման հաւատացեալը, որ կ'երկրպագէ միայն մէկ սրբութեան, Հայ հողին՝ վճիտ ու ինքնայրու՜մ, դարերու աղաւազումէն մաքրուած:

Նոյնը կը պատկանէին «Մեհեան»ի չորս հաւաքուած իր ընկերները՝ Յակոբ Օշական եւ Կոստան Չարեան, որոնք կը հաւատային, թէ Հայ դրականութիւնը պէտք է բխի Հայ հողին, մեր ողեկան արժէքներու ճանաչումէն, Հայ հողէն, եւ աւհաւական մեր պիծերով կազմէ Հաստատանոսյց մեր վաստակը: Գեղամ կը ձգտէր ցեղային տրուիք դնել իր տիպարներուն եւ ընդգրկելի բոլոր նիւթերուն մէջ: Կ'ուզէր որ «Հայ հողին, արտաբերուած ցարդ, ընդհանրապէս, ժողովրդային հանճարի արտայայտութիւններու մէջէն, եւ ա՛յնքան ջիշ անչամ անհատ-հանճարի բարախումներուն շընորհիւ, պանծայ դործերով զորս արուեստագէտը պիտի կառուցանէ»:

«Կարգը, կ'ըսէր ան, այսուհետեւ, արուեստագէտինն է»:

Սրբազան ուխտի մը ուժը ունի այս ձգտումը Գեղամ Բարսեղեանի մօտ, որուն համար ղեկավարչաւորակումը բառական իր իմաստով կ'արժեւորուի: Այսօր, երբ կը կարդանք իր արձակ էջերը, պատմուածքները եւ դանազան պատկերները, կը զգանք թէ երիտասարդ զրաւէտը զբիթէ փնտռած է իր բառերը, ըստեղծած է ի հարկին, որովհետեւ զժգուհանք ունեցած է միշտ ընթացիկ ու մա-

շած ձեւերէ: Հրապարակագրութեան մէջ իր ոճի եւ արտայայտութեան առանձնայատուկ միջոցներ որոնած է եւ ապաւինած՝ յաճախ, խորհրդապաշտ զգրուցի հանգանակներուն:

Արձակ Միամանթօ մըն է ան երբեմն իր պատկերներուն մէջ.

«Դահիճները վերադարձած էին, պղծութիւնները կը յառնէին հետզհետէ, եւ գարնարանքի ու մահուան եւ աւելի գերիշխանութիւնն էր որ յամբար կը տարածուէր վերստին»: («Այսպէս պատմեց զբիթարի պատմութիւնը»):

Կամ հեջիսթայի մը զգայուն.

«Կազանդները կու գան շքեղ կառնով, բայց չեն հանդիպիր բոյները չփաւրութեամ՝ որ սակայն ամռնց կը սպասէ, ակնկալութեամ գգուանմանիս փազայերուած»: («Կաղանդի պատմութիւն»):

Չափազանց բծախնդիր ու տքնալան աշխատող այս տղուն դրականութիւնը, նկարագրին պէս բացարկիկ, սովորականն տարբեր գործեր կը բերէր մեր դրականութեան: Պիտի բերէր տակաւին՝ անհատ-հանճարի դերագոյն ձգտումին սպասարկու, էթէ մարդակերպ զագտոներ, ուրիշներու կարգին, չկարէին նաեւ անոր կեանքին թելը:

Իրեն համար ալ պիտի ըսուէ ինչպէս ուրիշներուն.

«Լինելութեան մէջ էր ան, ապագայ կարելիութիւններու համար հասունցող պտուղի մը պէս, երբ ինքն ալ բռնեց նահատակութեան ճամբան, 1915-ին, որուն նախագագայումն ունէր եւ կը սպասէր, բազմաթիւ մտաւորականներու հետ»:

S. Ո.



### Բ Ա Տ Ա Կ Ա Ճ Ա Ռ

Եւ արդ, բոլորում մեծարանքի մահուր, այս օրում մտերիմ սե-  
զանքն շուրջը, գոր մեր խորհուրդները կը շխարհդին, լեցնենք սակեհունչ  
բաժակները մեր հուսափին ու յոյզերուն կարմրակայակ փրփուրներովը, եւ  
բարձրացնենք զանոնք վասն պանծացման Հայաստանեայց գրականութեան:

Անոր լոյսը մեր Մեհեհակիմ կիսաւածանկար ապակիներէն ներս կը  
բաժանցէ մինչեւ մեր ճակատները, եւ մեր մտածումները կը զինովանն:  
Մեր մտածումները կը բերափին անոր գոյնգոյն շառաւիղներուն վրայ  
եւ կը զինովան զարմանալի տեսիլներու յանախանովը: Այն ասան մեր  
աչքերուն առջեւ կը կերտուի *Անոր* պատկերը, պիրն ու հոյակապ: Նախ ճան  
անոր տեսուիլն իր լիւթեան մէջ, անոր ցոյլը, հախառաք աւետարեք, եւ  
բարի եւ հրացայտ, կ'երգէ մեր վրայ արի ու հայրենի քաղցրութեամբ:

Այնպէս չէ՞ որ մեր առաջին նիչն եղաւ — առաջին դաւանանքը գոր  
պատգամեցինք միտեազագ մեր ձգտած բազուկներուն եւ կամեքուն սի-  
նորուն մէջէն — պտտամունք ու արտայայտութիւն հայ հոգւոյն:

Եւ գիտէիք որ հայ հոգին պիտի վերածնէր ու պիտի ապրէր այս ան-  
գամ աւելի ներսօրէն՝ յանձին Հայաստանեայց գրականութեան, որուն  
տօգոյն էր դէմքը, բայց որուն աչքերուն անկիւնը կեանքի եւ ուժի հարը  
կը պահուրտէր: Մենք գիտէիք, որ վտարանդի առկայծումներուն անբա-  
ւակամութիւնը լրացնելով, մեր բնաշխարհի շուրջը մանուսանք պիտի գար  
դիեցնել հայ հոգին, անոր զարկերակը պիտի երազացնէր ու կշառարէր,  
անոր տենչերը պիտի դարբնէր, անոր գոյութիւնը պիտի հաստատէր ան-  
գամ մըն ալ, բայց ամէնէն աւելի անդիմադրելի անգամ մըն ալ:

Եթէ չարագործ խորշակը մեր գիտակցութիւնը կ'ողորայ ու կ'ապրա-  
տածրի անտ —, պտտութեան քառուղիներէն արշաւագնաց, քանդած էր ա-  
մէն բան, եւ անկարելի դարձուցած կառուցումներ հայ հոգւոյն հիւսան վը-  
րայ, չէր կրցած քանդել սակայն ինչ որ հիւսն էր, հայ հոգին: Բայց այդ  
հոգին կիսամերկ է եւ ուրացուած, ինչպէս առաքելական մեծութիւն-  
ները: Ատենն է, ուրեմն, անոր դառնալու, գայն նանչնալու: Եւ երբ նանչ-  
նանք գայն՝ պիտի սիրենք գայն:

Ըսինք. մենք իւրաքանչիւրին խորը կը բնակի ան, բա՛ւ է որ ուզենք  
լոյսին համել գայն, կախառակ հակընդդէմ ազդեցութիւններուն որ մեզ կը  
նուանեն զանազան միջավայրերու մէջ: Որովհետեւ մենք կը դաւանինք ան-  
հատը՝ եթէ ոչ բոլորովին, բայց շատ մեծ չափով մը անկախ միջավայրին  
առնչութիւններէ եւ ատակ՝ ինքզինքն ըլլալու, բա՛ւ է որ նկարագրին ու  
ստացանք անոր ուժ հայրայրենի: Բայց չէինք կրնար մտնուլ որ հայ հո-  
գին, եթէ գրուած է մենք իւրաքանչիւրին խորն ու կրճայ յայտնաբերելի  
դաննութեմ, առաւելապէս իսկօրէն պիտի բխի իր սկզբնական ազդիւրին  
գրկէն, բնաշխարհին մէջ ուր, անտարակոյտ, յարակից պայմաններ ու տար-  
բեր պիտի նպատեն անհատին դերին: Անոր համար կը հուշակենք Հայաս-  
տանեայց գրականութիւնը եւ կը մեծարենք գայն: Հայաստանեայց գրակա-  
նութիւնը, կը հուստանք, պիտի ըլլայ լայն ու բացարձակ արտայայտու-  
թիւնը հայ հոգւոյն եւ հանձարին: Ան պիտի գրագրէ ինքնաբայն եւ տան-  
միլի զիմագիծը հայ արւեստին ու գրականութեան, կը հուստանք:



կը հաւատա՛նք, եւ մեր հաւատքը կը տօնենք այսօր իրարու ձեռք  
սեղմած: Մեր եղբայրական ժպիտները ան՛նց որ հաւատացին մենէ առաջ,  
ան՛նց որոնց մէջ արձագանգ կրնայ գտնել մեր ձայնը:

Եւ կը յիշենք. այս առիթով, թէ մենէ առաջ, մեզ նախորդող սերուն-  
դէն մէկը հաւատաց Հայաստանեայց գրականութեան: Արտաշէս Յարութ-  
իւնեան, առաջին օրէն, մտահոգուեցաւ անով, Հայ գրականութեամբ, ա-  
ւելի ծախք ընդլայնելով իր մտածումները, ստեղծելով վերջապէս վարձան  
գրականութեան հարցը: Եւ ինչպիսի՛ խրտչում մը կը վրդովէր գրականու-  
թեան պոլսեցիները. ամէնէն երջանիկ պարագային, երբ վերջապէս կը բա-  
րեհասնէին հասկնալ զայն, «գաւառի գրականութիւն»ը այլազան նիշ մը  
մրայն բերելու կոչուած պիտի ըլլար հայ ընդհանուր գրականութեան մէջ,  
գաւառիկ շեշտ մը, գոր կարելի էր սիրել իրր տարաշխարհիկ ու վայրի  
ծողիկ մը՝ սաշտի շարքուած վայելքներու մէջտեղ: Պարագաները, քաղա-  
քական պայմանները, ծանօթ իրենց երէշայնութեամբ, այդ ընդհանուր տը-  
րտապարտութեան վրայ աւելցած, մոռցուցին «գաւառի գրականութեան»  
հարցը: Բայց մենք չենք մոռցած զայն: Հայաստանեայց գրականութիւնը -  
եւ ո՛չ թէ գաւառի գրականութիւնը, քանի որ Հայաստանէն դուրս գալ-  
թափառն է - գերազանցօրէն «վարձան գրականութիւն»ն է որուն կը տե-  
ւեսնենք մեր հոգիները - եւ որուն կը նուիրենք Մեհեանի ներկայ համարը:

Մեր գուրգուտանքն ու յարգանքը ան՛նց՝ որ, Միջնադարէն մինչեւ  
մեր օրերը, Քուչակէն մինչեւ Ջարդարեան, Հայաստանեայց գրականու-  
թեան ոգին բրթաւցուցին զանազան եղանակներով՝ հանճարեղ երգերու եւ  
գովայնիկ էջերու մէջ, եւ մեզի յուսալ տուին, մեզ միջբարեցին: Եւ թէ-  
պէտ այդ յայտն ու միջբարեցին հանդիքը կը դառնանայ կսկիծովը գոր  
կը գգանք՝ տեսնելով շիջած ստեղծագործ կրակը Հայաստանցի նոր սերուն-  
դին հագույն մէջ - հաստատենք եղբրականութիւնը վայրկեանին, բայց ցե-  
ղին ուժը, աւելի մեծ ու տեսական քան պատահական բարբերելոյթնե-  
րը - մեծ խոստումը կ'ընէ, - հայ հոգին, արտաբերուած ցարդ, ընդհան-  
րապէս, ժողովրդային հանճարի արտայայտութիւններու մէջէն, եւ ա՛յն-  
քան քիչ անգամ անհատ-հանճարի բարախումներուն շնորհիւ, պիտի պան-  
ծայ գործերով գորս արուեստագէտը պիտի կառուցանէ: Կարգը, այսուհե-  
տեւ, արուեստագէտինն է:

Հայ հոգին՝ արուեստի նորանոր ու բազմազան ձեւերուն մէջէն, -  
տես՝ Հայաստանեայց գրականութեան խտելը:

Եւ իր լոյսը տեսասիկ, տարօրինակ ու շքեղ, որ յայց կ'իջնէ մեր  
վրայ. իր լոյսն որ յայտի երեղէն թերթեր կը թափէ մեր վարսերուն վրայ:  
Ահաասիկ իր լոյսն որ հեռուր բռնկումներու բացովը կը ցոլայ մեր բա-  
ժակներուն մէջ եւ մեր յոռիւրդներու երկնքին վրայ:

Հուռա՛, ուրեմն:  
Քեզի՛, Հայաստանեայց գրականութիւն, ու քա՛ լոյսիդ ու քա՛ բա-  
ցիդ՝ մեր բիւրեղահունչ բաժակները, փրփրայեղց՝ հաւատով, տենչով,  
լոյզներով:

# Թ Լ Կ Ա Ս Ի Ն Ց Ի



Գիւղին բոլոր տիպարները — մասնաւորաբար էրանիկներու եւ պատմութեան ներքին իր վաստակին ճամբով — կու գան վերլուծուածի: Ակնբախ նկարագիրը այդ պարզաբարբառ պատմութիւն՝ բանաստեղծականութիւնն է եւ հեղեղութեան պէտք մը երկարաձգումը այդ էջերուն մէջ: Անոնք որ մօտիկ կեցած են գիւղին եւ գիւղացիին, հաստատած են վստահօրէն՝ որ այդ անդրազէտ ու կոյս մարդկէր հեղինակ շնորհ մը ունին միշտ, առօրեային ալ մէջ: Քիչատինցի, այդ հեղինակները կրցած է փոխանցել գիւղէն՝ իր տիպարներով, կեանքն ու մարդերը դատելու իր եզանակով, նոյնիսկ խորհրդածական էջերու մէջ գեղջկական իմաստութեան

զրաւիչ փաստեր փոխանցելով մեզի: Գոյնի դգայարանքը, այնքա՛ն շօշափելի կերպով ներկայ՝ իր էջերուն մէջ, այդ դէմքերուն ու դէպքերուն կու տայ արուեստի զրոյժը: Քիչատինցի կ'անցնի իրապաշտ կամ դատարկ տարազաւորումով լոճանցի զրականութեան մը սահմանը, եւ իր արուեստի արժանիքներով կու դայ արուեստագէտ անբունդին մօտիկ: Նոյնիսկ այդպիսիան եւ տեղազրական իր նիւթերուն մէջ՝ յառնուածք մը գգալի է, — բանաստեղծին, նկարողին, վերլուծողին ջոճիկ:

Նկարագիրներ տալու իր տարօրէն սրատեսութեան, զննական մօքքին եւ թափանցումի արագութեան մէջ, գրեթէ միշտ բացասական տիպարներ առած է իր պատմութեան շնորհով իրեն մեկնակէտ: Բարոյապէս խաթարուած, դժուած, ունայնամիտ, կեղծաւոր եւ ապարարոյ դէմքեր են՝ որ կ'իյնան իր դատումներուն տակ, կեանքին ու այդ կեանքը ապրելու մեր մարդկային կոշտութիւն հակադրուած: Գարշաք ունի թուր անոնց հանգէպ՝ որոնք բարոյականով մը չեն պայմանաւորած իրենց կեանքը, կամ՝ յանձնուած են աշխարհային իրենց ապականութիւններուն: Չարը, սուտը, կեղծը, վատը, ապարարտն՝ կեղտերն են մարդկային իրականութեան, ու ընկերային մեր կեանքը ասոնց պատուհասիչ ներկայութեամբ է որ կը մթազնի, կը ծանրանայ, կը խաթարի: Քատերական իր վեցէն եօթը փորձերուն մէջ (եթէ նրկատի չունենանք բեմական արուեստի անյարմարութիւնները կամ թատերական լեզուի մը լզոյթութեան փաստը)՝ յաջողած է մեղքեր կամ ապականութիւններ խարանելու իր ձգտումը վերածել Առաւելու մը:

Մ. ՔԼՈՒԼՈՒՆԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂ

*Հասարակական*

**ԾԱՄԲՈՐԴԸ**

Տարիներ, շատ տարիներ առաջ բարեկամիս, Վահանին հետ, Երուսաղէմէն ճամբայ ելանք Լիբանան երթալու համար, Դամասկոսի ճամբով: Փօքսին տէրն ու վարիչը սուտանցի արար մըն էր – Հասան: Եկած էր Երուսաղէմ, վաստակ ընելու ու վերագանձալու իր ընտանիքին: Ունէր բարակ հասակ եւ նոյնպէս բարակ դէմք՝ որուն ձախ աչտին վրայ տուղուած էր պայտի ձեւ գրուած մը: Ունէր հաւատարիմ ծառայի մը ժպտալ բերինձի դոյն աղաններով:

Վահանն էր, որ կապը կը պահէր վարիչին հետ իր շատ խեղճ արարերէնով: Երկար տարիներ, Վահանը ապրած էր Եգիպտոսի մէջ եւ սակայն հազիւ կրօցած էր իր ճամբուն վրայէն վերցնել մի քանի արարներէն բառեր ինչպէս մէկը՝ արծաթ դրամ մը պիտի վերցնէր:

Ծամբան ուրկէ կ'անցնէինք դորը հընութիւն մը ունէր ուղտի գոյնով եւ ունէր նաեւ ուղտի խոշոր գլուխի ու աչքերու թախտոտ մտածողութիւն մը, բան մը, որ անապատը տուած է մարդարէններուն եւ Աստուծոյ, իր իմաստուն լըուութիւնով: Գորշ էին ճեղքուած հողերը ուղտափուշերով եւ անհանդարտ մողէսներով: Մեզի այնպէս կը թուէր, որ կարծես նոր անցած էին երկնքի հրեշտակները անտառներով, յայտնուելու համար դեռ նոր արբունքի հասած Մարիամին: Եւ կարծես Յովհաննէս Մկրտիչը նոր անցած էր այդ ճամբէն իր հսկայ հասակով, ծանր շուքով, մէջքը փոստով մը ծածկած ու ոտաբուրդիկ:

Այդպէս էր նաեւ Երուսաղէմ քաղաքը իր նեղ ապառաժուտ ճամբաներով ուրկէ կ'անցնէին Արարանքը, Հրեաները, Քրիստոսի աշակերտներու մտածկոտ դէմքերով ու տարազներով: Վժ վերինն բան մը կար քաղաքին եւ ճամբաներուն վրայ: Կարծես քարերը կը շնչէին եւ արդէն բան մը պահած էին Աստուծոյ շունչին պէս: Մեր աջ կողմին վրայ Համբարձման լեռը, սարդի թեխրու գորշութիւնով թափանցիկ մշուշի մը մէջ բըռնուած էր, ուրկէ Քրիստոս իր ուղտը կ'անէր մեր երեւակայութեան մէջ, ճերմակին հետ խառնուած թեթեւ կապոյտ պարեգոտով ծալածալ, թեթեւ կապոյտին հետ խառնուած: Հովին ձգած քղանցքին մէջէն մարմնի մատղաշ ներկով կ'երեւէին մատները սոքերուն: 2000 տարի առաջ դացած էինք ու մենք ալ մտած պարեգոտի տարազին մէջ: Պահ մը երեւակայեցի Վահանը, Քրիստոսի աշակերտներու պարեգոտով ու սանտալներով: Անոր յորդ մազերը եւ թաւ յոսքերը մոլեզին քրիստոնեայի մը արտայայտութիւնն ունէին:

– Կարծես Քրիստոս իր աշակերտներով այս ճամբէն անցած է:

Վահանն էր որ խօսեցաւ եւ ինծի այնպէս թուեցաւ որ անոր ձայնին մէջ եւս գորշ հնութիւն մը կար:

– Ես ինքս Վահան, արդէն Քրիստոսին հետեւող աղքատ ու բորոտ, կաղ ու անկար ժողովուրդին հետ էի, իսկ քու դէմքը տեսայ Յիսուսի աշակերտներուն մէջ: Ինծի այնպէս կը թուէր, որ եթէ

վար իջնենք այդ Հոգոս ճամբուն վրայ պիտի գտնենք Յիսուսի եւ աշակերտներուն սուրբնու հետքերը:

- Չըսե՞ս, 2000 տարի առաջ ես ինքս ալ անցեր եմ այս ճամբէն, կատակեց Վահան:

- Դուն ինքզ ինչքա՞ն ժխտես երկինք կամ Աստուած, քու մէջ կտակարանային լրան մը կայ: Եւ արդէն կտակելու տըրամադրութիւն չունէի եւ աւելցուցի՞ «Վահան, ինծի այնպէս կը թուի, որ սա ուղտափուշերը 2000 տարուայ ուղտափուշերն են եւ նոյն դորշ մողեսները, որ ճեղքուած Հողերուն մէջ մտած ու դուրս ելած՝ են եւ տեսած ճամբէն անցնող Քրիստոսը իր աշակերտներով»:

- 2000 տարի առաջ եւ յետոյ, այս ճամբային անցնողները աստուած մը փնտրած են փոխանակ հացի: Իսկ մե՞նք, - խօսեցաւ Վահանը ու աւելցուց.- «Անոնք երկնքէն ներշնչուած Քրիստոս մը ծնան իսկ մեր դարը... փունճ փունճ», ու կարճ լռութենէ մը յետոյ կարծես խրդճացած աւելցուց - բայց ո՛չ Հայ Ժողովուրդը: Ան չի՛ դադրիր փնտրելէ եւ այդ է իր ուժին գաղտնիքը...

Այս խօսքերով շարունակեցինք մեր ճամբան: Մենք էինք միակ ճամբորդը եւ որպէս շարժում կար շատ թեթեւ հով մը ուղտափուշերուն մէջ, և ահա հովտին հզերքը կենդանի նկար մը - ուղտի մը հսկայ կմախքը դորշացած եւ այդ կմախքին թով նոյնպէս դորշ աղուէս մը՝ ահանջները չթանձ՝ ճամբէն անցնող Փորտին կը նայէր ճիշդ այնպէս ինչպէս 2000 տարի առաջ Քրիստոսի եւ աշակերտներուն անցքը պիտի դիտէր:

Երբ դուրս ելանք Հոփտէն, տեսանք հեռաւոր փոքրիկ կերպարանք մը: Գուցէ ծառ մը անաստի իր համայնքէն դատուած այդտեղ ճգնելու եկած է, Ս. Անտոնիոսի մը պէս:

- Եւ զուգէ. այն ծառն է, ուրիշ Յուդան ինքզինք կախեց 30 արծաթը քարերուն մէջ նետելով, Եթէ այն ծառն է, մարդկութեան կարեւոր ծառայութիւն մատուցեք է իր ճիւղէն կախելով Յուդային սրտիկը, խօսեցաւ Վահանը:

Քանի մօտեցանք այդ անորոշ ձեւը, ճամբորդի մը կերպարանքն ստացաւ: Հասակը աւելի որոշ եղաւ, կազմուեցաւ նաեւ դուրսը եւ դեռ մարդկային կերպարանքը լրիւ չէր: Կոնակին վրայ անհասարար լայնութիւն մը կար: Երբ աւելի մօտեցանք, հասակը աւելի բարձրացաւ ու տեսանք կոնակին շաղկած կլայտազորներու յատուկ փքոց մը:

Անտարակոյս արագ կլայտազոր մը, որ դիւղէ դիւղ կը շրջի ամանները կլայտելու: Մեր դիւղի ճամբաներէն՝ իրական պատկեր մը: Անոնք առհասարակ երկու Հողի կ'ըլլային մութ կանանչ, մամուռի գոյն հազուատներով եւ քոլոզ զլխարկներով: Քիչ մըն ալ հապտաներու կերպարանքն ունէին եւ սուր էին իրենց կատակներով: Փոքրիկ էջի մը վերայ բնուցուցած կ'ըլլային փքոցը, մի քանի ամաններ ու տապակներ:

Մտա մէկ թմին առաջ տեսած էի մեր հայրենի հարադատ գոյներով նկար մը վերին Եգիպտոսի մէջ: Հողէ տուններով փոքրիկ դիւղ մը, Հոգոս նեղ ճամբաներով ու կապոյտ ներկ խրախրայի թքոնիքներով, մանաւանդ սանտրը պուխներուն՝ նաչտուն յուզուներու հապնեպ շարժումներով: Իմ հայրենի երկրէն բաժնուելէս ի վեր տեսած չէի այդ գուռաւոր պատկերները: Գոյներն ու շարժումները աւելի կատարեալ եղան երբ տեսայ դիւղի բարակ ճամբէն կ'անցնէր Սկար մը, լեցուն պէխերով, խոշոր աղեղ մը ուսէն կախ: Լպուս մըն էր - հարած մը, որ արեւածագին՝ բամպակ աշնելու կ'երթար ծխաններուն մուխերը ետեւ ձգած:

Գաւառի բարբառով, խալանին՝ իմ դիւղի պատկերներէն մէկն էր գունաւոր տասնդուրսի մը ներկուած: Հազած էր լայն, հինցած շաղկար մը, զլխին՝ դունաթափ Փէս մը: Կը քայլէր մի քիչ առաջ ծառ: Ունէր լաւ, արձանաչին գլուխ մը չկտրուած մազերու առատութիւնով: Անտարակոյս, յոգնած բանուոր մը պառակներու տէր, ճամբայ ինկած է իր հացը, ճարիտը եւ արդէն իր ծանր քայլերուն մէջ յոգնութիւն կայ եւ մտաւ

Հոգութիւնն Մօտաւոր դիւզ շտեանք: Ուրեմն երկար ճամբայ ունի քաշիլիք:

- Մեր կառքին մէջ առնենք, խօսեցաւ Վահանը:

- Ի՞նչ լաւ մտածեցիր Վահան: Ինծի աւելի հաճոյք պիտի պատճառէր Եթէ առաջին անգամ ես կարենայի մտածել այդ: Կտաքը կեցնենք: Միայն թէ պիտի կարենա՞նք այդ խոշոր խալաթին իր կըռնակի փքոցով տեղաւորել կառքին մէջ:

- Ո՞րմ էդ փքոցով ծնած չէ էդ մարդը, խօսեցաւ Վահանը, ու շատ գոհ էր իր կատակէն:

- Ընչդ ես, Վահան, քայց էդ խեղճ քանուրդները երբեմն իրենց փքոցներով կը ծնին, խօսեցայ, դուքս դայու համար իմ միամտութիւնէս եւ աւելցուցի, որ փքոցը, էդ մարդուն կարեւոր դրայարանքն է:

- Ուսուճա-խաւաճա, ձայնեց Վահանը, եւ արդէն կանգնեցուցած էինք կառքը:

Ճամբորդ խալաթին կը շարունակէր քալել առանց ուշադրութիւն դարձնելու, որ մէկը իր Հետ կը խօսէր:

- Պաւաճա՛, խաւաճա՛ - այս անգամ Վահանը աւելի բարձրացուց իր ձայնը ու կառքին դուռը բանալով դուրս ելաւ: Ըամբորդը կանգ առաւ, շատ կարճ պահ մը զլուխը մեզի դարձնելով, նորէն իր ճամբան շարունակելու դիտաւորութեամբ: Կարծես կ'ուզէր ըսել, որ չխանդարենք իր խաղաղութիւնն ու անցնինք: Տեսայ անակնկալ՝ ծանր դէմք մը երկար մազկտուն Հետ խառնուած մօրուսով: Մազկտուն ճերմակները աւելի շատ էին կարծես - արծաթէ գոյն հաճելի դորշու՛ւականութիւն մը: Աչքերը տխուր էին նոյնպէս ուղտի աչքերուն նման: Եթէ չըլլար անոր կոնակի փքոցը, մեր օրերու լայն արարական շայվարը, ու Հինցած դոյն Փէսը՝ կրնայինք ըսել, որ Եւրոպայէ մի ճամբաներուն վրայ աստուած մը կը փնտռէ:

Չգիտեմ, խալաթի Եւ Վահանը ի՞նչ խօսեցան իրարու Հետ: Տեսայ Վահանը,

յոգնած. ճամբորդին թեւէն մտած միասին կառք կ'իւն:

Սաւաճեթին նոյն ծանր դէմքը: Ի՛նչ, ի՛նչ խօսէր, մտածեցի, մանաւանդ Վահանին արտերէնը յուսահատական էր: Օղնեցինք, որ վար առնէ կանակին փքոցը որ ուսերուն կաշուէ կապերով կապուած էր: Ձեռքը բռնած էր, մաշած կաշուէ տուրակ մը, որ աւելի շատ խաւաքարտի դոյն ունէր եւ լեցուն էր յղի փքոցի կենդանիի մը նման: Անտարակոյտ իր ուսելիքն է եւ կամ կըլայադործներուն յատուկ տեսակ մը փոշի, որ կը գործածեն տաք պղինձի մէջ ցանկելով: Մեր կողքին տեղաւորեցինք զինքը ու փքոցը դրինք վարիչին կողքին, իսկ կաշիէ տուրակը առաւ իր ծունկերուն վրայ կարծես շատ թանկագին բան մը ըլլար անոր մէջ, անուագն փարսուսներէն՝ ձուլ ոտկի եւ կամ թանկագին քարեր Հեղկաստանէն: Եւ դեռ ոչ մէկ շարժում դէմքին վրայ: Արձանային քարէ գծեր՝ ճիշդ Քրիստոսի աշակերտներուն նման որ տե՛սած էր Քրիստոսի շարչարանքն ու խաչուութիւնը եւ այդպէս ալ պահած էր այդ քարէ գծերը:

Իսկապէս յոգնած էր: Քրտինքի Հոտ ունէր ու Հանեց կապոյտ խոշոր թաշկի՛նակը իր դէմքին յոգնութիւնը սրբերու: Փռչի կար կարկտնուած խոշոր կօշիկներուն վրայ՝ Հաստ կութներով: Յայտնի էր, որ ինքը կարկտնած էր:

- Ձեր երթալիք գիւղին անձնը, Հարցուց վարիչը:

- Միւլէյմանիէ, Միւլէյմանիէ, կըրկունեց ճամբորդը իր ծանր ձայնով - եւ կարծես այդ լեցուն ձայնը զիս Հեռացուց ծովի ափերէնուն նման ու Հնադարէան վանքի մը պատերուն զարնուեցաւ: Չէ՛. կըլայադործի ձայն չէր եւ ո՛չ ալ անոր շարժումները երբ ծխախոտի փոքրիկ տուրակը Հանեց, ձեռքի տուրակը աւելի տեղաւորելով ծունկերուն վրայ:

Ուսուճէ՛ եւ վարիչը մի քանի քսառներ փոխանակեցին: Նկատեցի, որ խաւաճեթին արարական Հնչիւններուն մէջ չկար արտերէնի Հազազային երաժշտութիւնը:

Վարդը ծանօթ էր Իսմայէլա դիւ-  
ղին: Մեր ճամբէն շատ հեռու չէր: Այս  
ժողոն հեռաւորութիւն ունէր. ճամբան կը  
զատուէր ուր օթոմսպիւններու կայանն  
է, ուր կանգ կ'առնեն վարիչները մեքե-  
նաներուն պէտք եղած շտկումներն ընե-  
լու:

- Քեզի բան մը ըսե՛՛մ, Վահան: Ձգի-  
տեմ, արհեստն է որ կը յարմարի նկա-  
րազրին թէ նկարագիրը արհեստին: Այս  
մէջը իր շարժումներով, ուժեղի ու ձայ-  
նի արտայայտութիւնով խալաֆի չի կըր-  
նար ըլլալ...

Ինչ ցրացուցած չէի ըսելիքներս երբ  
մեր խաւանն, առաջին անգամ ըլլալով  
լրիւ կերպով մեզի դարձուց իր ծանր  
դէմքը եւ ես աւելի նկատեցի ազուոր  
արծուէքի՞թը եւ կարծես քակուեցան ար-  
ձանային քարէ գծերը: Աչքերուն մէջ  
ջերմութիւն մը ինկու ինչպէս արեւի ա-  
ռաջին ջերմութիւնը կ'իյնայ զի հողոյն:  
Այդ արտայայտութիւնը արդէն օտար  
չէր մեզի համար: Գիտէինք, որ շատ կա-  
րեւոր եւ անակնկալ բան մը ունի ըսե-  
լիք:

- Ուրեմն Հայեր էք: Ձրո՞՛ք: Ուրբա  
եմ, այնքան ուրախ, որ մեզի նման պի-  
տանի Հայերու կը հանդիպիմ: Ես եւ Վա-  
հանը զարմանքով իրարու երես նայե-  
ցանք եւ մեզի այնպէս թուեցաւ, ճամբու  
եզերքի ծաւն էր որ յանկարծ լեզու ե-  
լաւ իր թեւերու նման ճիւղերը երկինք  
բռնած:

- Ի՛նչ, լաւ բան է Հայերու հանդիպիլ:  
Աւելի քան վեց շաբաթ է արաբ զիւղերու  
մէջ եմ: Մարմինս ու հոգիս կարօտով  
մը բռնուած է հայերէն խօսելի մեզի հետ  
եւ մարմնիս մէջ զգալ հայ բարբառին  
ջերմութիւնը:

Մինակութեանս մէջ երբ ճամբորդ  
եմ արաբական ճամբաներուն վրայ, ես  
իննի համար նարեկացին կ'արտասանեմ  
բառերուն իմաստուն տիրութիւնը զգա-  
լու համար եւ կ'արտասանեմ «Հայի դիւ-  
ցազն» լսելու հայ ուղիքի չեփորը: Հը-  
նական է մեր լեզուն եւ միշտ թարմ, որ  
կ'աճի մարմնի մը պէս: Ա՛յ, պարոններ,

արդէն կը սկսիմ շատախօսել: Հը՞ - ճիւղ  
եմ, հէ՛...:

Վերջին բառերուն մէջ բռնած էր  
շատ ազուոր ու զուպ ժպիտ մը, կար-  
ծես կ'ուզէր պիտակ թէ արդեօ՞ք կը բաժ-  
նենք իր ապրումները:

Մեր մէջ խորունկ հրճուանք մը սկը-  
տաւ: Ձայնին մէջ կար հայերէնի շատ  
հարազատ շեշտ մը, որ դրարարէն, զըպ-  
րոցներէն կու դար եւ կարծես հայկա-  
կան վանքերուն մէջ պատրաստուած հին  
պիւնի գաւաթ մը կը տանէինք մեր շրթ-  
ներուն: Ու շարունակեց:

- «Հայոց լեզուն, պարոններ, մեր  
հայրենի թոնիրներէն ելած թարմ հացի  
նման է: Անպատաներու քաղցր մանանայ  
զի վերուտ ցօղեալ»:

Եւ արդէն իմ մէջ տարածուեցան ու  
մարմին դարձան մեր զիւղի բարկ թո-  
նիրներէն ելած հացերը պօպուռն ու կը-  
րակի դոյնը իրենց մէջ բռնած, հաց ե-  
փող սանիկին լուսու պէս երեսին նման  
- Հայոց լեզուն նման:

Շատ հարցումներ ունէինք եւ սա-  
կայն երկուքս ալ չճամբարակեցանք,  
Մովսէսի հրաշքով ապառաժէն բխած ազ-  
բիւրի այդ ազուոր ընթացքը խանգարել:

Ճամբորդը իր խօսած պահուն, զըր-  
պանէն հանեց ծխախոտի կաշիէ փոքրիկ  
տոպրակը: Թուղթը Սուրբ Փրկչի հիւան-  
դանոցին թուղթն էր: Փաթթելու տտան,  
նկատեցինք, որ մեր հին պապերու ա-  
ւանդական եւ քիչ մըն ալ ծխական շար-  
ժումներն ունէր: Միկարէթը փաթթեց  
վարժ մեղով եւ տուփը մեզի երկարեց:  
Ես եւ Վահանը ուղեցինք անոր պէս փաթ-  
թել, քիչ մը ծխական, և սակայն խեղճ  
բան դուրս եկաւ:

Ճամբորդին եւ սիկարէթին ծուխին  
մէջ հողեկան մտերմութիւն մը կար: Ու  
շարունակեց.

- Էդ Սիւլէյմանիէ գիւղը, որ պիտի  
երթամ, մի քանի զիւղերէն մէկն է ուր  
կ'այցելեմ յաճախ: Այդ զիւղերուն մէջ  
մի քանի հայ կիներ կան, Արաբներէն յա-  
փըշտակուած եւ կամ պաշտպանուած եւ  
արդէն զաւակներու տէր մայրեր զար-  
ձեր են: Մայրականը հօր է բոլոր զգա-

ցումներին եւ Հաւատայիքներին աւելի: Երբ կ'երթամ, կը հաւաքուին իմ շուրջ եւ կը մանկանան ինծի հետ Հայերէն խօսելով: Սիւլէյմանիէին մէջ երեք հայ կիներ կան: Երկուքը ճամբաներէն յափըշտակուած եւ նոյնպէս մայրական զգացումներով լեցուած իսկ երրորդը Հայկանուշն է ուժեղ նկարագրով. Հայկական դեղեցիկ եւ արթուն աչքերով. կարծես Հայկական դեղեցիկ աւանդութիւնները անոր մարմնին ազուր կերպարանք մը տուած են եւ արդէն Հայկանուշն քաւական բաներ հաւաքած եմ մեր ժողովրդական երգերէն, Ակնայ երանգով, նաեւ՝ մեր լեզուի բարբառներէն: Այդ բոլորը այնքան թարմ են անոր մէջ: Հայկանուշին համար ամէն ինչ յաւանանկան է, մանաւանդ Հայկականութիւնը: Այն սեւ օրերուն՝ Հայկանուշը իբր մէկ զաւակով - Արամով, կը պաշտպանուի արար ծերունի վրանագործի մը տան մէջ, գեղին միակ բանիմացը, որ զիտէ Ղուրան կարգաւ եւ ունի բնական իմացականութիւն մը, որ մարդկային է: Հետաքրքրական գրոյցներ կ'ունենամ վրանագործ Արարին հետ եւ այդ գրոյցներուն մէջ կը գտնեմ Միքայիլի պաշտամունքի մնացորդները: Արեւապաշտ մըն է վրանագործ Իւսուֆը: Ես այդ տունին մէջ է, որ կը հիւրասիրուիմ մի քանի շարաթներ: Տան տէրն ու տիրականը ինքը Հայկանուշն է:

- Ի՞նչպէս կ'ըլլայ, որ Հայկանուշը տակաւին Արարին տան մէջ է իր զաւակով, հարցոյց Վահանը տնհամբեր:

- Հայկանուշը ինչքա՞ն հայ նոյնքան ունի մարդկային գիծ մը: Բան մը, որ նոյնպէս Հայկական է: Երբեք չի՞ մոռնար, որ այդ ծերունի Արարը իրեն եւ զաւակին օգնութեան հասած է իր կեանքը վտանգելու զենով: Հայկանուշը կրնայ մզել Սիւլէյմանիէն՝ այդ ծերունի Արարը հող գերեզման զննել յետոյ եւ այդ ծերունի ալ պէտք ունի Հայկանուշի պաշտպանութեան եւ յետոյ այն երկու հայ կիներն ալ իրենց զաւակներով Հայկանուշին կապուած են: Այսօր երբ հասնիմ, անոնք եւս Հայկանուշին տան մէջ են:

Տեսնելու բան է, պարոններ, անոնք նոյնպէս կը մանկանան երբ իրարու, եւ ինծի հետ Հայերէն կը խօսին եւ իրենց հետ կը բերին զաւակները: Տօնական օր ըլլար կարծես: Երբ ներս կը մտնեմ խօճա Իւսուֆը դիւ Հայերէն բառերով կը դիմաւորէ թափած ակօսանքու բարի մպրտով: Այն կրակաունք ուր կը նստինք հանիք երեկոյ մը անցընելու համար, կիսապատով մը բաժնուած է ախոռէն, այնտեղ, Իւսուֆին էջը եւ կովը գլուխին լուրջ բռնած, մեր գրոյցներուն կը հետեւին:

Ուրեմն պարոններ, հպարտանքով կ'ուզեմ ինչզի՞նքս ծանօթացնել որպէս ուսուցիչը Հայկանուշի զաւակին - Արամին, որ կը պատրաստուի տարիէ մը Հայկական դպրոց յաճախել: Արդե՞ք զգացեր էք այն մեծ հաճոյքը երբ կը սկսին Ա. Բ. Գ. ու մանկան լեզուն բանալ: Ինծի այնպէս կը թուի, որ այդ պահուն Ս. Մարտիկ աշակերտներէն մէկն եմ, Եղնիկի ու Կորիւնի կարգին նստած:

Այդ հաճոյքը զգացի երբ իմ որդեգիր Մինասը առաջին Ա. Բ. Գ. ու սկսուա խօսիլ ինծի հետ: Կարծես առաջին անգամն էր, որ կ'ըմբռնէի մեր տառերուն իմաստը, զգացի իմ մարմնիս եւ իմացականութեանը մէջ, ես որ տարիներով գրաբար եւ գրաբար մատենագրութիւն զաստանդած էի իմ աշակերտներուն: Կեանքը, պարոններ, իբր մէջ թաքնուած փոքրիկ հաճոյքն ունի նման փոքրիկ տունկի մը, որ հզօր պայթարներով իր գոյութիւնը կը պահէ տալու համար փոքրիկ կապոյտ ծաղիկ մը: Այդ փոքրիկ ծաղիկները կու գան մեր գոյութեան իմաստ տալու: Գուցէ տառապանքին տըւած իմաստուն հաճոյքներէն մէկն է այդ...

Այս անգամուայ իմ այցելութեան Հայկանուշը խօսեցաւ միւս երկու հայ կիներուն արար զաւակներն ալ բերել իմ կարեւոր դասարանին: Ինչպէս կտրող կապող է Հայկանուշը եւ արդէն այդ փոքրիկ զիւղի մէջ որոշ հեղինակութիւն ստեղծած է, շարունակեց ճամբորդը եւ

ուրիշ, հանելի շարժումով՝ մը ձեռքի փոքրիկ տապրակը բռնելով Արդէն նոր գրքեր վը տանիմ անոնց տաբանաւ խորհրդաւոր ատարակը: Մէջը բաւական դրքեր կային: Աջքիս զգան թորենային եւ նարեկ-կացին: Վենետիկեան սպազութիւնով: Երբուս զանդէս Ամսորեայ, գերմաներէնով գրքեր եւ հասարակատր մը, թիթեղի կտորներ, մուրն մը եւ «Յուսարբեր» թիւ մը: Մէք հետաքրքրութիւնը աւելի սանահամբ, դարձաւ: Բայց որ զպեղինք օրագրութեանը մեր ձայնը:

Վերջապէս ո՞վ է այս անձանօթը: — «Յուսարբեր» ալ կը կարգաք, հարցուց Վահանը: Անոր ձայնին մէջ դո՛ւրսնակութիւն մը կար զարմանքին հետ:

— Վանքին մէջ բարեկամ վարդապետ մը սչնիմ, ան, կը բերէ ինծի հարթեր-թիւրան աւերորդ թիւերը:

— Աւրեմ ծանօթացնեմ «Յուսարբեր» իմ բարդիւր, Վահան նաւասարդեան: Ինծի համար լաւ առիթ էր ծանօթացնողու գուցէ զանաւ փրանունը:

Ի՞նչ առաջ, որ շատ հանելի գծեր գրանած էր փր. դէմքին վրայ: Երբ տապրակէն հայերէն դասագրքերը կ'ուղէր ցոյց տալով: Եւսարբերը գծերը սքրտեպան յանկարծ:

— Հա՛, շատ ուրախ եմ: Գուշակեցի, արդարեանի Հայերու հանդիպած Կեմ. Երկու... շտապի ստաջ: Մայիս 28-ը տօնեցիք: Երուտողէնի մէջ: Եստ կ'ուղէի դալ հասակայն օրգեղերս: Մինասը, այդ օր զերմ սենէր: Գէտք էր ինձի տանէի: Այդ ատիկով «Յուսարբեր» մնաց տապրակին մէջ:

Օտարականը տապրակէն դուրս հանեց «Յուսարբեր»ը, ծանր լրջութեամբ բացաւ: Եւսն էջը ուր մատիտով նշաններ դրած էր:

— Մտիկ ըրէք, պարոն խմբագիր՝ — մաւրդէն հին ուսուցչի մը խիստ դէմքը առաւ: Եւ սկսաւ վարդալ երկուր պարբերութիւն մը, — բնէ՛ք պարոններ, դուք բան մը հասկցա՞ք, ու նախցաւ մեզի ձեռքին ծանր թերթին զարնելով ու շարունակեց: «Այս պարբերութեան մէջ կան մէջ ծրարագրութեանները եւ ամէն տեսա-

կի կէտեր բացի վերջակէտէն. վերէն վար քերականական անճշտութիւններ. քերականութիւնը լեզուի դիտական մասն է, ճիշդ այնպէս ինչպէս շտապական հայերէնը: Վերջը ճարտարագիտութիւնը ուր կայ արտուես եւ քերականութիւն: Արիտաստելի ու Գիտելիտո: Թրակացու օրերուն, քերականութիւնը նոյնիսկ մաս կազմած էր փիլիսոփայութեան: Թրակացին՝ որ մեր հին պապերը հայերէնի թարգմանած ձեռք: Ու ահաւ վերլուծումի ենթարկել քաղաք եւ քաղաքեալ քերականական օրէնքներով եւ ամբողջ պարբերութիւնը աղտոտ լաթի մը պէս մէկ կողմ: Գեց, փակ մեք քութ աշակերտներու պէս մտիկ կ'ընէինք: Ես թէլը արդէն կորնցուցած էի: Զգիտէի, որ հայոց շեղուի քերականութիւնը այնքան անհասկնալի բարդութիւններ ունի: Ինծի համար հայոց լեզուն ուրիշ դասարանք մըն է, որ աչքի կամ սկիւնի օղէս էր բնական դերը կը կատարէ: Այդ բարդ բարդութիւններէն յետոյ, աւելցուց օտարականը նոյն խիստ ձայնով: «Ըսէ, պարոն խմբագիր, ո՞ր կ'երթայ մեր շեղուն»:

— Երբէք էք, շատ ճիշդ էք: Փնացեր ենք, փնացեր: Եթէ այսպէս էրթայ, մեր լեզուին հետ շատ բաներ պիտի փնանան, խօսեցաւ Վահանը ու վերջապէս հարցուց:

— Ըսէ՛ք, ինդրեմ, դուք ո՞վ էք: Ձեր անունը:

— Ներեցէք Պրն. խմբագիր, իմ դիտողութիւններուն, որովհետեւ Հայոց լեզուն մեր աշխարհ Հայաստանն է որուն պէտք է տէր կանգնել: Մանաւանդ լեզուական սխալներ տեսնել իմ հիւանդութիւնն է, տարիք առած մարդու հիւանդութիւն... Ընթերցանութեանս ատեն երբ սխալ մը կը տեսնեմ դժուարութիւնով կը շարունակեմ իմ ճամբան, կարեւուրտաբար տակ փուշ կը մտնէ յանկարծ եւ կամ ոտքիս մասը քարի մը կը դարնըրի:

Նկատեցինք, որ օտարականը կը խօսափէր իր անունը: Եւ ըսաւ, «Էէն, ի՞նչ կարեւոր է անունը պարոններ, ես



ինքն ալ երկար ատեն չեմ գործածած, գրեթէ մոռցեր եմ: Այժմ խալածիի էս փրօցն է իմ անունն ու մականունը: Չգիտեմ, առաջին անգամ ո՞վ կանչեց անուն մը, զուցէ կատակ մը ընելու համար երբ յաճախ մեռնալ գիրք մը տեսած են: Այժմ ինծի «վարժապետ» կը կանչեն: Այդքան, այդքան: «Վարժապետ» կը կանչէ նաեւ Արարը, Հրեան - «խալածի վարժապետ»:

— Ինչպէ՞ս ձեր կոնսկին առիթ այդ փրօցը, Պրն. վարժապետ, նորէն հարցուց Վահանը այդ կերպով ստուգելու համար. բան մը:

«Սէ՛, չեղաւ, առանց «պարոնի» «վարժապետ» կամ «խալածի վարժապետ»:

Փերթը իր տոպրակին մէջ կրք կը տեղաւորէր, տեսանք նաև դեղնած թուղթերով հաստ կապոց մը ձեռագիր: Ո՞ր նամբով գոցեց տոպրակը, նորէն իր ծունկերէն վրայ առաւ ու սկսաւ ուրիշ ծխախոտ մը փաթթել, ծխախոտի կաշիէ տոպրակը մեղէ երկարելով: Մեր սիկա-փէթերէն չէր տակը: Կը նախընտրէր իր ծխախոտը որ մութ դոյն ունէր ու շատ խիստ էր:

— Վերջապէս պիտի ըսէ՞ք թէ ո՞վ էք, նորէն հարցուց Վահան այս անգամ յուստիմ գնելով իր ձայնին մէջ:

— Մի՛ յուզուիք պարոն խմբագիր: Հայ մարդ ենք. ո՛չ աւելի եւ ոչ պակաս - հայ կլայագործ մը: Մենք զիւրար շատ լաւ կը հասկնանք մեր սքանչելի լեզուով, մեր տառապանքներով եւ հայկական տըխուր աչքերով: Ձեր խօսած ատեն զգացի այդ տխրութիւնը: Կը յուսամ դուք բախտաւոր Հայերէն էք որ անցած չէք տեղահանութեան ճամբաներով: Ամէն հայ մատան մըն է: Նոյնն է, եթէ անցած չէք:

— Իսկապէս ի՞նչ անպէտ Հայեր ենք, որ անցած լինք այդ տառապանքի ճամբաներէն, ըսի կարճ կապելով, որովհետեւ նկատեցի, որ վարժապետը արամադրուած էր աւելին ըսելու:

«Ը՛հ, շատ երիտասարդ աւարտեցի Գէորգեան ճեմարանը, Յետոյ չորս տարի գերբանական համալսարանին՝ մէջ հե-

տեւեցայ պատմութեան եւ հոգեբանութեան: Կինս աւարտած էր մանկավարժութիւնը եւ մենք նուիրուած էինք Հայ մանուկներու դաստիարակութեան: Ունէինք երկու զաւակներ հայկական իմաստուն աչքերով եւ ուշիմութիւնով»:

Պօսած ատեն ձայնը հետզհետէ կը տկարանար, կարծես արցունքի թացութիւն կար: Սիկարէթ մը եւս փաթթեց, ժամանակ առաւ ձայնին մէջէն արցունքը սրբելու համար ու շարունակեց.

— Երեսակայեցէք, պարոններ, մեր տան հոգեկան բարկ ջերմութիւնը: Տան կարասիները այդ ջերմութեան եւ մեր շունչին մաս կազմած էին:

Օր մըն ալ ժանտարմներով 300 հոգի ճամբայ ելանք առաջին կարաւանով: Դուք արդէն ծանօթ էք անապատներու պատմութեան: Այդ ահաւոր դժոխքին, ուր Տանդէի հանճարն անգամ պիտի տրկարանար, միայն լռելու համար, որովհետեւ լռութիւնը Աստուծոյ նման հզոր է: Անապատին մէջ կորսնցուցի արդէն կմախք դարձած իմ կինն ու զաւակներս, մէկը 10 տարեկան իսկ միւսը 12: Ինձ կը մնար անոնց կողքին երկնալ ու անոնց հետ աւազներուն հետ խառնուիլ: Այդ պահուն կիանքը ընազդին, ներքին տարերային շարժումներուն մէջ կը մտնէ: Ներքին բութ ճիւղ մը անկախ ըստ կամեցողութենէդ, կիանքը ինքզինք ապրեցնելու համար: Կեանքը կազմելու նախնական շարժումներն են: Բթացած էինք ճամբաներուն վրայ մեռելներ տեսնելով: Տարերային ու նախնական այդ բութ պայքարն էր, որ ինծի քայել տրուաւ նոյնպէս անկախ իմ կամեցողութեանէս: Իմ կնոջս ու երախաներուս հետ ինծի հետ վերցուցի ձեռագիր մը որուն վրայ աշխատած էի ամբողջ 10 տարի: Կորսնցուցի նաեւ այդ՝ իմ սրտի հաստորներուս հետ: Գիտական նոր մեթոտի կիրարկումով ուսումնասիրած էի մեր Եւրոպայու մատենագրութիւնը՝ մէջը առնելով նաեւ կարեւոր թարգմանութիւնները: Լրացուցած էի աւելի քան 800 էջ, Ու քայեցի կիսամերկ ու բոպիկ չզիտեմ ո՛ւր, չզիտեմ ինչու: Հաւատքն ու յոյ-

սը, որպէս կմայքներ իմ ընտանիքի կը-  
մայքներուն հետ ձգած էի աւազներուն  
վրայ: Հսկայ դերեզման մը կար իմ մէջ:  
Իմիններուն եւ մեր ժողովուրդի դերեզ-  
մանն էր այդ: Եւ սակայն միայն բնազ-  
դին յանձնուած այդ բուժ օրերուն կը  
զգայի դիս կեանքին կապող շարժում մը:  
Հողին շարժումին պէս բան մը, կարծես  
ծիւ մը հողն ու խիճները հրելով իր կա-  
նանը կ'ուզէր կազմել արեւով: Այդ բը-  
թամատի չափ փոքրիկ կանանչը իմ մէջ  
զգացի: Այդ՝ իմ Հաւատքն էր որ պիտի  
կարենայի յարուսթիւն տալ գէթ այդ իմ  
երրորդ դակիս - իմ ձեռագրներուն:  
Եւ արդէն ըմբռնեցի իմ ճամբաս եւ իմ  
միակ նպատակս: Երուսաղէմ պիտի եր-  
թայի այնտեղի մատենադարանով վերըս-  
տին սկսելու իմ բանասիրական աշխա-  
տանքին:

Արդէն Բասիլ-Այն հասած էի,  
նախ՝ Հալլայ երթալու համար: Ուղտա-  
փուշի մօտ տեսայ 7 տարեկան մանուկ  
մը, որ կենդանիներուն ձգած թրիքին  
մէջէն ցորենահատերը կը զատէր բերա-  
նը տանելու համար: Երբ մօտեցայ, փա-  
խաւ յանկարծ վայրի կենդանիի ձագի մը  
պէս. ատեն ատեն սարսափելի վախով  
մը ետեւ կը նայէր, թէ արդե՞ք կը Հա-  
լլածուի: Գոռացի հայերէն. այն ատեն  
ինձ Հաւատաց երբ Հացի կտոր մը ցոյց  
տուի. եւ այդ Հացով բարեկամ դար-  
ձանք: Ան կորոնցուցած էր իր խօսելու  
կարողութիւնը: Գիտէր միայն իր եւ մօ-  
րը անունը - Մինաս եւ Մարթա: Եւ ար-  
դէն եղաւ, Մինաս Մարթայեան: Ու ձեռ-  
քէն բռնած քայլեցինք միասին: Գոյու-  
թեան տենչը՝ փոքրիկ կենդանիի մը յա-  
մառութեամբ թաքնուած էր նաեւ այդ  
փոքրիկ մանուկին մէջ:

Հալլայի մէջ ինձի համար ճարտե-  
ցաւ արաբ Փելլաւհի մը շաւարը: Կրուն-  
կը ծուած Ֆրանսական կօշիկ եւ թուրք  
դինուորի հողազոյն ժաքէթ մը նեղ,  
զինուորական կոճակները վրան:

Բայց ես կ'ուզէի Երուսաղէմ երթալ:  
Անձանօթ էի վանքին: Գաղթական  
հայ կին մը ինձի ցոյց տուաւ վանքին  
այն պաշտօնատունը ուր պիտի խօսէի,

թէ արդեօք ուսուցիչի մը պէտք ունի՞ն  
Ժառանգաւորացին մէջ: Կ'ուզէի նաեւ  
փոքրիկ Մինասը վանքի դպրոցին մէջ  
տեղաւորել: Երբ փոքրիկ Մինասին ձեռ-  
քէն բռնած ներս մտայ, տեսայ ախոռ-  
ներուն վրայ լուծ մի քանի դաղթական-  
ներ. տարիքը առած եկեղեցական մը  
կը պատրաստուէր դուրս ելլել կաշիէ  
պայուսակ մը անութին տակ, ժանդոս  
ժօրուսով, բուժ ու խիտտ արտաքինով  
մէկը:

- Տեղ չկայ, տեղ չկայ բոլոր խո-  
ցիքը բռնուած են դաղթականներով: Ա-  
ճապարանքով նետեց երեսին՝ մեկնելու  
համար:

- Մենք խուցի համար եկած չենք...  
ըսի եւ արդէն կարճ կապելու համար,  
որովհետեւ կոշտութիւն կար իր ձայնին  
մէջ:

- Հապա, Ո՞ր իստիյօրըն...

Հայերէն բառերու շեշտէն Հաւացայ,  
որ թրքախօս է եւ որովհետեւ տառապան-  
քը ինձի քիչ մը աւելի իմաստութիւն տը-  
լած էր, ներեցի խօսելու ձեռքն ու ըսի,  
որ ուսուցիչ կղած եմ, կրնամ օգտակար  
ըլլալ: Քիչ մը աւելի զարմացայ երբ խօ-  
սեցաւ. - «Հիմա բոլոր ետպանները ու-  
սուցիչ եմ ըսելով վանքին դուրս ափ  
կ'առնեն: Վարժապետ չենք ուզեր: Վե-  
սիլալ...»

- Բայց, վարժապետ... Եւ ահա ու-  
րիշ պայթուցիկ մը:

- Վարժապետ մարդ ես եւ տակաւին  
չգիտես, որ եպիսկոպոսին «սրբազան»  
կ'ըսեն», ըսաւ ու մեկնեցաւ հողաթափե-  
րու աղմուկով հով տալով Փերլչէին:

Աթոռին վրայ մնացինք ես եւ փոք-  
րիկ Մինասը: Ձէչէններու յարձակումին  
պէս բան մը: Այդ եպիսկոպոսը ներքին  
մէկ պատկերն էր վանքին:

Այդպէս կղած են մեր վանքերուն  
ներքին կեանքը միջին դարէն սկսեալ  
մինչեւ մեր օրերը եւ միջին դարու մէջ  
այ ուզած են պահել իրենց անքննելի հե-  
ղինակութիւնները Աստուծո՞՛ք տրուած:  
Այնպէս ալ ուզած են պահել իրենց հա-  
ւատացեալները: Պատարազ, աղօթք,  
բուրժաւ եւ արդէն կախարդական կյար

չընտանակ մը որ կը դառնայ: Երուսաղէ-  
մի վանքը մեր հին վանքերէն եղած է: Եւ  
նա հիւստիստիոսեցայ երբ տեսայ մի քա-  
նի հայատառ թուրքերէն զրքեր միայն -  
ինչպէս «Սուրբ Յակոբաբարձն հիբայասի»  
եւ նման հրատարակութիւններ: Բայց որ  
մեր հին ու նոր վանքերուն մէջ ունեցած  
ենք սրբազան անձնաւորութիւններ եւ  
մանաւանդ զաստիարակներ որ կարեւոր  
կեդրոններ դարձուցած են մի քանի վան-  
քեր: Ինչպէս Գլաձորի վանքը իր Յասի  
Նչեցիով եւ Տաթեւը՝ Գրիգոր Տաթեւա-  
ցիով: Այդ հին իմաստուններէն՝ կար-  
ծես մեկն ու մէկին հանդիպեցայ երբ  
առաջին անգամ այցելեցի Դուրեան պատ-  
րիարքին, - որ այն օրերուն ճիգ կ'ընէր  
մշակոյթի ձեւ մը տալ արդէն ձեռքէ ե-  
լած Երուսաղէմի վանքին: Այդ վանքին  
մէջ ամէն ճարտիկ վանական, դոնապա-  
նէն սկսեալ, անկիւն մը զբաւած էր եւ  
զարձուցած էր իր պապենական սեփակա-  
նութիւնը: Ինծի դրեթէ ամիս մը առիթ  
չտրուեցաւ Դուրեանին հանդիպելու: Ը-  
սին, որ ծեր մէկն է եւ յաճախ հիւանդ:  
Ըսին, որ զբաղուած է: Ըսին, որ պէտք  
էր նախապէս ժամադրուիլ: Այդ զբոյժ-  
ները գուցէ անոր համար որ ես անծա-  
նօթ մըն էի եւ վրաս գլուխս զազթակա-  
նի վեճակ ունէր: Կ'ուզէի միայն իմ յար-  
գանքը տանիլ այդ մեծ եկեղեցականին  
եւ մեծ դատարարակին: Մանաւանդ, որ  
Դուրեանէն շատ բաներ տուած էի իմ  
զբաւարի աշակերտներուս: Զարմանալի  
կերպով ճմուռ մէկն է բայց որ բանա-  
սիրական կարեւոր աշխատանք մը տուած  
չէ: Գուցէ իր մէջ ամբաստիք եկեղեցա-  
կանն է կամ բանաստեղծը, որ բան մը  
բռնած է:

Ինծի կը մնար ազէկ զէջ զործ մը  
ճարել եւ ճար մը գտնել փոքրիկ Մինա-  
սը դպրոց դնելու համար: Պալատեան  
եպիսկոպոսին խօսքերը խելափառ ճան-  
կերուն պէս ուղեղիս խրուեցան: Որոշե-  
ցի այլեւս գործ չունենալ վանքին հետ  
եւ մնալ մատենադարանին համար: Այս  
անգամ ուրիշ անապատ մը բացուեցաւ  
իմ անորոշ քայլերուս առջեւ, թէ ի՞նչ  
կրնամ ընել: Անուշ փողոցի մը աւելի

անշուք անկիւնը տեսայ մէկը, որ կլայի  
զործ կ'ընէր եւ կարծես ուրիշ անգամ  
տեսած էի վանքի դրան առջեւ: Փոշե-  
գոյն երեսով նիհար մէկը որ չէր խօսեր:  
Կիրակնօրեայ արեւին տակ, ոտքերը  
փարտ կը նստէր, կռնակը պատին:

- Բարեւ աղբեր, ըսի, երբ ներս մը-  
տայ:

- Հպար բարով աղբեր ճան:

Լաւ բան մը կար այդ ձայնին մէջ  
ու իր տխուր աչքերուն: Չէ', ուրիշ ան-  
գամ խօսած չէիք իրարու հետ: Տառա-  
պանքը մեզ եղբայրացուցեր էր: Անա-  
պատներէն կու գայինք: Ուրֆայի ճամ-  
բուն վրայ ան կու կորսնցուցած էր իր  
կիւնն ու զաւակը, եւ կը հաւատար էր  
այնքան վստահ, որ անոնք կ'ապրին տեղ  
մը եւ իր ճամբուն կը սպասեն: Իմ նոր  
բարեկամը անմիջապէս իմ հողը առաւ  
եւ թելադրեց, որ օրուայ ապրուստի հա-  
մար անմիջական գործ մը կայ, սպան-  
դանոցէն երթալ այնի եւ ոչխարի դուռ-  
ներ առնել, ջերթել եւ շուկայ հանել:  
Եւ այդ աշխատանքին համար իր խանութ-  
ին մէկ անկիւնը ինծի յատկացուց: Մի  
զարմանալի, պարոններ, այդ աշխատան-  
քին մէջ բաւական մեծ շնորհք ցոյց տուի  
եթէ ո՛չ տաղանդ: Միտքը ինծի եւ Մի-  
նասին համար ճարեց նաեւ սենեակ մը  
իր քնակած տան մէջ: Քերթուած գլուխ-  
ները փողոցները կը պտտցնէի տախտա-  
կի մը վրայ շարած ու վզիս անցուցած:  
Եւ այդ ինծի առիթ տուաւ այնի եւ ոչ-  
խարի գլուխները ծախելէս յետոյ մա-  
տենադարանը մտնէի նորէն նոր իմ կոր-  
սուած ձեռագիրը կենդանացնելու: Վան-  
քի մատենադարանապետը երիտասարդ  
վարդապետ մըն էր, Անդրիա ուսանած եւ  
արդէն շուտով մտերմութիւն մը ստեղծ-  
ուեցաւ իմ և երիտասարդ մատենադարա-  
նապետին միջեւ երբ ես սկսայ հետաքրք-  
րորուիլ այն գրքերուն մասին որոնք ին-  
ծի ազդելու պիտի ծառայէին իմ բանա-  
սիրութեանս, որոնց մէկ մասին ծանօթ  
էի: Այդ տարի երիտասարդ վարդապե-  
տը իր տւարտական թէզը կը պատրաս-  
տէր, նիւթ ունենալով «Հելլենական լեզ-  
ուի եւ ոճի աղբերութիւնը հայ լեզուի

Վարդմանական գրականութեան մէջ՝  
 «մենք կարեւոր գրոյցներ կ'ունենայինք  
 մանաւանդ որ ես անդրադարձած էի այդ  
 նիւթին, իմ ձեռագիր աշխատանքիս մէջ:  
 Երիտասարդ վարդապետը նոյնպէս աշ-  
 խատեցաւ, որ Մինասը դպրոց ընդուն-  
 ուի եւ միասին գագինք Դուրեան սրբա-  
 դանին այցելութեան: Մըրազան էր նաեւ  
 անոր ծերութիւնը: Ծերացած Յիսուս  
 մը: Անոր բոլոր շարժումներուն, ժպի-  
 տին, ձայնին մէջ ազնուականութիւն մը  
 վարձ էր այնքան սուր էր իր յիշողութիւ-  
 նը որ յիշեց իմ Յ տարի առաջ Հրատա-  
 րակած յօդուածաշարքը «Հանգէս Ամ-  
 տօրեայի մէջ, Վերջինի եւ Ազաթան-  
 փեղոսի: Երեւոյնումն ժամին»: Այդ ա-  
 ոքիթով շատ հետաքրքրական գրոյցներ  
 ունեցանք նաեւ այն աղբիւրներուն մա-  
 տին, որոնցմէ օգտուած է Յովիկը իր  
 «Յոգո՞ւ աղանդոցին մէջ: Ինձ այնպէս կը  
 թուէր որ Եսայի Նշեցու հետ էր որ գը-  
 րոյց կ'ընէի: Ի՛հ, խօսեցանք իմ կոր-  
 սրած ձեռագրին մասին, որ եկած եմ Ե-  
 րուստայէմի մատենադարանին մէջ իմ այդ  
 աշխատանքը վերակազմելու: Մատենա-  
 դարան էր նաեւ ինքը, սրբազանը: Ան  
 ո՛ր միայն ծանօթ էր վանքի մատենադա-  
 րանի կարեւոր գիրքերուն այլ ծանօթ էր  
 «Պերժեմանական եւ Ֆրանսական վերջին գի-  
 տական գրքերուն, Հրատարակուած վեր-  
 փոխերկու տարիներու ընթացքին: Վեր-  
 շին երկու տարիները ես կորսնցուցած  
 էի հետքը՝ նոր Հրատարակութիւններուն:

- Ի՛հ, ի՛նչ կ'ընես Հիմա, Հարցուց  
 սրբազանը, Հեղ մը վրաս գլուխս նայե-  
 լով:
- Ինձ մը կ'ընեմ, սրբազան: Այժմ  
 իմ գլուխը այդ բանասիրական աշխա-  
 տանքով բռնուած է: Կրացնէիս ետքը  
 միայն կրնամ մտածել թէ ի՛նչ կրնամ ը-  
 նել:
- Գուք կրնաք օգտակար ըլլալ Ժա-  
 տանդաւորացին մէջ: Ես կը խօսիմ: Ու  
 «տաւառային կաթակոպտին անունը որուն  
 Հետախուսած էի: Ես այլեւս ձայն չհանե-  
 ցի ու թաժուեցայ: Գրան առջեւ երբ  
 ձեռքը կը նեղմէի, ուղեց որ յաճախ ա-

ջիւն իրեն, շարունակելու համար մեր  
 հետաքրքրական գրոյցները:  
 Երկրորդ անգամ շատ ուշ գացի որ  
 այլեւս իրօքը չընէ Ժատանդաւորացի ու-  
 սուցչութեան, որովհետեւ երբեք միաք  
 շունէի այդ կաթակոպտին քով երթալ:  
 Եւ յետոյ երիտասարդ աքեղաններ եւ  
 ինչո՞ վանականներ լեցուն վանդատներ  
 կը յայտնէին վանքի ներքին կեանքէն,  
 որոնք մինչեւ սրբազանին չէին հասներ:  
 Որոշեցի շկապուի վանքին հետ նոյնիսկ  
 որպէս ուսուցիչ, հակառակ անոր, որ  
 ես կարօտն ունէի աշակերտներու կա-  
 բող մը, որմէ շատ էի զրկուած եւ օս-  
 կայն նախընտրեցի իմ խաղաղութիւնս ու  
 մատենադարանի աշխատանքը: Ու ես  
 սարեցայ խալաճի Միսաքին հետ, ոչ-  
 խարի կամ այժի գլուխներ քերթելով ու  
 շուկայ հանելով: Եստ անգամ ալ Մի-  
 սաքին խանութը կը պահէի երբ ան ին-  
 ծի պէս փոքր կանակին արաբական գի-  
 ղերք կ'երթար մի քանի շաբաթներ: Յա-  
 ճախ ես ինքս ալ կը տանջուէի Միսաքին  
 հետ: Ան գիւրերները կը պրտար յանկարծ,  
 որ կուրի մտած էր թուրքի մը հետ, որ  
 իր ճամբան բռնած էր Հասնելու իր կնոջ  
 եւ գաւակներուն: Անոնք Հոն են Չէչէն-  
 ներուն մէջ, եւ ինծի կը սպասեն, Հե-  
 տեւութիւններ կը Հանէր երազներէն եւ  
 իմ կարծիքս կը Հարցնէր. եւ օր մըն ալ  
 ինծի ձեռք իր խալաճի խանութը ու հե-  
 տացաւ: Խանութը պիտի պահէի իրեն  
 համար մինչեւ վերադառնար: Գոաց իր  
 կրնն ու գաւակը փնտռելու: Մտն է տա-  
 րիէ լուր չունիմ թէ ի՛նչ պատահեցաւ  
 եւ ես կը պահեմ խանութը Միսաքին Հա-  
 մար: Ահա թէ, պարտններ, ինչպէ՛ս խա-  
 լածի դարձայ:  
 - Հետաքրքրական է գիտնալ, վար-  
 ժապե՛տ, լրացուցա՞ծ էք ձեր ձեռագիրը:  
 Ես ինքս պիտի աշխատիմ, որ Հրատա-  
 րակութեան արուի:  
 - Ծնորհակալութիւն Պրն. խմբագիր:  
 Իմ ունեցած նոր աղբիւրները աւելի  
 կ'ընդարձակեն աշխատանքս: Դուրեանը  
 կը հետեւի իմ աշխատանքիս եւ կ'ուզէ,  
 որ իրենց յանձնեմ Հրատարակութեան  
 համար: Կարծեմ երկու տարուայ աշ-

խատանք եւս կայ, Եթէ լրացնեմ, կարծես բան մը պիտի պարպուի իմ մէջ: Զիս կեանքի կարող երկու բան կայ. մէկ այդ ձեռագիրը որ այս պայուսակին մէջ ինձ հետ կը տանիմ, մէկ ալ Մինասը որ աւելի կը մեծնայ եւ անոր նոր արբունքի հասած ձայնին մէջ իմաստուն բան մը կայ, ուսումնական ըլլալու վստահութիւն մը: Է՛հ, շատ խօսեցայ պարոններ, կը ներէ՞ք, ըսաւ ու ձեռքը ծխախոտի տուփին տարաւ. եւ արդէն կը պատրաստուէր ինքզինք հաւաքել, որովհետեւ կայանը կը հասնէինք:

- Բայց մենք ձեզ կրնանք մինչեւ Սուլէյմանիէ տանիլ, ըսաւ Վահանը: Համաձայն էր նաեւ վարիչը, միայն թէ քան զայրկեան մը պէտք էր սպասել կէ-  
 ՎԱՂԻՑԻ ԱՌՆԵՂՈՒ և ՕՐՈՒՄԱԿԻՆԻ ՆՐՈՇ ԸՐՏԻՎԱԿԱՆԵՐ ԲՆԻՅՈՒ:

- Ա՛յ, էնտեղ է արդէն, հազիւ երեք մղոն: Ենորհակալութիւն: Լաւ հանդիպում էր, պարոններ: Տեսաք որ, մենք հինէն, շատ հինէն ծանօթներ ենք: Կը ներէ՞ք իմ շատախօսութեանս, Պրն. Վահան, ըսաւ ճամբորդը, փքոցը. կռնակին տեղաւորելով, այնքան հեշտ, որ մեր օդնութեան պէտք չունեցաւ: Առոյգ էին անոր շարժումները եւ մենք շատ մօտ բարեկամներու պէս բաժնուեցանք:

Ու ճամբայ ինկաւ փքոցը կռնակին, հնացած կաշիէ տոպրակը ձեռքին, ճիշդ այնպէս ինչպէս տեսած էինք հեռուէն: Մենք կը նայէինք անոր ետեւէն երբ հետըզհետէ կը հեռանար: Արդէն այն միջանկ ծառին կերպարանքն առաւ երբ աւելի հեռացաւ, հետզհետէ կարծես շուքի մը պէս թեթեւ կը ծալուէր ու կը քացուէր թեթեւ հովի մը: Կարծես պիտի դառնար ամպի կտոր մը անապատային միջոցին մէջ: Մենք շատ հեռուն կը տեսնէինք Սուլէյմանիէն: Երեւակայեցինք, որ Հայկանուշը իր զուկին ձեռքէն բռնած, գերեզմանոցին մօտ անոր կը սպասէ:

- Բայց ո՞վ էր այս մարդը, հարցուց Վահան, այնքան տարուած, որ կարծես այդ անձնանօթը մեզմէ բան մը տարաւ իր հետ:

- Ո՞վ պիտի ըլլայ, Վահան, նոյն Հայ ճամբորդը որ ասկէ 1000 տարիներ առաջ Դուրինի ու Վսղաբշապատի ճամբաներուն վրայ տեսնուած է, իսկ այսօր՝ Երուսաղէմի ճամբուն վրայ:

.Յարխութախլամ Հայ Գաւառիկը:

ՀԱՄԱՍՏԵՂ



## Չիտայե՛ք շրս

Պիտի բախեմ, պիտի բախեմ այս գիշեր  
 Երազներու դուռը փակ,  
 Որ պահ մը գէթ ձեր խիզներուն հեշտատեր  
 Խորունկ քունէն արթննաւ:

Ձե՛ք մանչնար զիս, ես այն մանչուկն եմ սիրուն,  
 Որ յոգնասպառ, կիսամերկ,  
 Անպատին մէջ Տէր-Ձօրի մտաւ քուն  
 Եւ չարթնցաւ ալ երբեք:

Մի՛ սարսափի՛ք կմախակերպ իմ տեսէս,  
 Հոգ չեմ մտած ես քնաւ,  
 Կը շրջէի դիակներու մէջ այսպէս  
 Միշտ անօթի ու ծարաւ:

Սովի բու՛հն փոքս դարձած էր արդէն  
 Ուռած քմբուկ ու կաշի,  
 Եւ սրունքներս ալ մերկացած մտանէ՛ն՝  
 Մէյ-մէկ ցպիկ ճուագի...

Օրե՛ք անվերջ, կարօտ պատառ մը հացի,  
 Տեսայ արիւն, տեսայ մտն,  
 Քստառ այծի պէս միայն խոտ ծամեցի,  
 Խոտն ալ յետոյ չգտայ:

Ծեծը՛ ոչինչ, կը բուժուի վերջը սուրբին,  
 Ոչինչ է վախն իսկ մտեռան,  
 Սարսափելի՛ն՝ երբ սովասանջ կը մարին  
 Փսթրիկ տղաք ինձ նման...

Ո՛չ գարդ կ'ուզեմ եւ ոչ տաճուկ բրդեղէն,  
 Կմախքներ միշտ մերկ կ'ըլլան.  
 Բայց երբ առնէ՛ք տաք հացիկներ դուք փառէ՛ն՝  
 Յիշեցէ՛ք զիս անպայման:

Պիտի բախեմ, պիտի բախեմ շարունակ  
 Մարդոց դունքը բոյսը,  
 Որ ունեմայ ստէն մանչուկ, ազգնակ  
 Կտար մը հաց ստէն օր...

Մ. ԻՇԵԱՆ

Ա. ՆԱԳԱԶ

Մուշեղն ալ Կեսայանայան  
իր զեռնի շայնին

Քիւրտիստանէն Պոլիս դարձիս, Ենայան վարժարանի մէջ, ուր պատըպարուեցայ ժամանակ մը, Հանդիպեցայ ինծի պէս աջտը տեսած բազմաթիւ արզոց՝ Անոնցմէ ոմանք եկած էին արարական անապատներէն ու արեւշատ դաշտերէն՝ ուր ուղտ էին արածած: Ոմանք եկած էին արտավարակ Անատուլի գանազան անկիւններէն. ու ոմանք ալ՝ ինծի պէս, հեռուոր ու կիսանկախ Քիւրտիստանէն: Վարժարանի բակին մէջ, ուր ամէնքս միասին փոշիի ամպեր բարձրացնելով կը խաղայինք բազմազգի դըրացիներու խաղաղ քունը վրդովելով, մայրիկ պղտիկ ծառ մը կար: Ամբան տաք օրերուն, անոր նիւար շուքին տակ հաւաքուած կը խօսէինք մեր անցեալէն ու ապագայ երազներէն. խանգաժառ ու լաւատես պատանիի երազներ բոլորն ալ, որոնք, գոնդակ ու սեւ օրերու յաջորդած ըլլալուն համար, աւելի քաղցր էին: Բայց այս քաղցր երազանքի պահերը երկար չէին տեսեր. խօսակցութիւնը նորէն կը վերադառնար անցեալին՝ որուն ամէն մէկ պահէն արիւն կը կաթկթէր... Հակառակ տարիքով մեր դեռ շատ մատղաշ ըլլալուն, բոլորս ալ ունէինք մեր պատմութիւններն ու կենսագրականները: Բոլոր այս պատմութիւններուն ու կենսագրականներուն ըսկըցրնաւորութիւնը նոյնն էր, հայրենի երջանիկ տուն, սիրելիներ, հայր, մայր, քոյր, հղբայր, հօրեղբայր ու մօրեղբայր, մեծ հայր ու մեծ մայր... Մէկ խօսքով, երջանիկ մանկութիւն՝ սիրելիներով ըրջապատուած ու մինչեւ 1915 թուականը երկարող. այդ աղիտալի թուականին էր որ երջանկութեան գիրքը կը փակուէր ու կը սկսէր ան միւս էջը, սեւ

էջը՝ ուր կը սկսէին կենսագրականները տարբերիլ:

– Գարիի արտերը դեղնիւ սկսած էին երբ Թուրքերը լեբան կողմէ իջան կիրակի օր մը ու մեր դիւղը տակնուվրայ ըրին, կ'ըսէր մէկը իր աղու աչքերը լայն բացած:

– Մեր քաղաքին մէջ նախ մեծերը ժողովեցին ու յետոյ, աջտը տանելու պատրուակով, ճամբայ Հանեցին մնացածները... Քալեցուցին մեկ մինչեւ որ մէկով, երկուքով, ճամբան մնալով հատանք, – կ'աւելցնէր ուրիշ մը:

– Երբ մեկ ճամբայ Հանեցին, մեր մէջ գտնուող բոլոր այրերը, մանչերն ալ մէջը ըլլալով, գատեցին ու ճորը իջեցնելով դեղակահարեցին:

– Մեծ մայրս ճամբան ես մնալուն համար ոստիկանը սպաննեց զայն ու, զիս գերիկէն առնելով, տարաւ մօրս յանձնեց. – կ'ըսէ տղայ մը պզտիկ ձայնով մը ու իր աչքերը կը լիցուէին:

– Երբ դեռ մը հասանք, մայրս գրկի երախան, պզտիկ քոյրիկս ջուրը նստեց որ ազատուի անոր բեռէն:

– Կեանքիս մէջ ես մեռած մարդ առաջին անգամ արտրի ճամբան տեսայ. ցորենի արտի մը քով, սպաններ էին երկու գիւղացի ու ժերկացուցեր. մէկը կին էր, միւսը՝ այր: Վախցայ: Մայրիկս աչքերս գոցեց որ չնայիմ – Մի՛ նայիր, մա՛նչս, գիւղերը երազդ կու դայ, ըսաւ... Բայց ես իր մատներուն արանքէն տեսայ... Մէկը կին էր, միւսը՝ այր... – Երկու մեռել տեսնելէ ի՞նչ կ'եւրայ, – կը պարծենար ուրիշ մը, – ես երեք օր, հարիւրաւոր մեռածներու միջեւ ու տակը մնացած եմ... – Երբ մենք Զօպանը անուն գիւղին

մտակցանք, հոն բազմաթիւ թուրքեր կամուրջի մը վրայ կ'աշխատէին, մեզ տեսնելով գործերնին ձգեցին ու վրանիս յարձակելով սկսան կողոպտել... Աս իրարանցումին մէջ, կարաւանին ընկերացող ոստիկանը, փոխանակ մեզ պաշտպանելու, նկաւ մօրս քով ու ըսաւ որ զեթէ անմիջապէս իրեն հինգ կարմիր ոսկի շտանք, եղբայրս պիտի սպաննէ: Մայրս մեր ունեցած լուծեցածը հաւաքեց, ու լաւով իրեն տուաւ. ու որովհետեւ մինչեւ հոն չարեքնիս տասն անգամ կողոպտուած էինք, մեծ քան չէք մեր մտ մտացածը: Ոստիկանը մօրս տուած դրամներու ընդամենը ու: բարկացած, զէջ կերպով հայտնեց. - Դուն գիտ խարէ՞լ կ'ուզեմ, ապտալ կնիկ: Ղուե. գիտ շարժելի դո՞ղ կարծեցիր, բաւ, ու մարթինը ոտսին դնելով կրակեց. եզրօքս վրայ. դինտ դաղը անոր կողորդէն մտաւ ու միւս կողմէն դուրս ելաւ... Երբ եղբայրս գետին ինկաւ, գնդակին ծակած տեղէն, եղբօրս արիւնը առուի պէս կը հոսէր... Բերնէն ալ արիւն կու գար, մայրիկս, ինկաւ մարկուտ... Երանի թէ աչքերս: Ենթ ըլլային ու բնաւ, բնաւ չտեսնէի ինչ որ այդ օրը տեսայ... Չեմ կարծեի թէ երբեքէ կրնամ մտնալ եղբօրս վերջէն հոսած կարմիր արիւնը...

Ու այսպէս անվերջ... Ամէն մէկը ըսելու կամ պատմելու սղաւոր պատմութիւն ունի: Անոնք կենսապրակտն ու պատմութիւն ունէին՝ որովհետեւ տառապանք էին: Միայն երջանիկ մարդերն են որ պատմութիւն չեն ունենար... Այս սուհանդերձ, մեր մէջ կար Մուշեղ առնուն պատանի մը որ, կը թուէր թէ, պատմութիւն չունէր: Լուս ու մեծահասակ քրտնաբերում, մտիկ կ'ընէր բարբիւն, բալլերին՝ ու ինք չէր խօսեր:

Օր մը, երբ առանձին էինք, հարցուցի թէ ինք պատմութիւն չունի՞, արտաքին չէ՞ պացած:

- Գացած եմ, ըսաւ:
- Ո՞ր:
- Բիւրտերու մէջ:
- Ես ալ հոն էի:
- Ո՞ր մասը:

- Ղուկեր:
- Ես ալ:
- Ո՞ր գիւղը:
- Իմրանիէ:
- Ես Գարաճա Վերան էի:
- Շատ հեռու չեն իրարմէ:
- Որքա՞ն ժամանակ մնացիր հոն:
- Երկու տարի:
- Ձարմանալի է որ բնաւ չհանդիպեցանք իրարու:
- Հանդիպելու իսկ պարագային, ինչ չէ՞ն պիտի գիտնայինք թէ Հայեր ենք...
- Իրաւունք ունեւ, ինչէ՞ն պիտի գիտնայինք...
- Համեմատաբար երջանիկ էիր այդ երկու տարիներու ընթացքին, շատ քան քաղցի՞ր, տեղի լա՞ւ էր:
- Գէշ չէր:
- Շատ զարմանալի տղայ ես, Մուշեղ, ամէն մարդու պատմութիւն հետաքրքրութեամբ մտիկ կ'ընես, բայց երբ կարգը քեզի գայ, քերանդ բանալով բան մը չես ըսեր... Գու հոն եղած ատենները բնա՞ւ հետաքրքրական բան չպատահեցաւ, բնա՞ւ մարդու չհանդիպեցար, բնա՞ւ հետաքրքրական, յիշատակելի դէպք մը չպատահեցաւ:
- Անշուշտ պատահեցաւ, բայց ի՞նչ խօսիմ անոնց մասին, հին վերջերք ինչո՞ւ նորոգեմ... Ես ամէն բան մտնալ կ'ուզեմ...

Այլ չպնդեցի՝ ու հարցը փակուեցաւ: Տարի մըն ալ անցաւ: Մենք սկսանք կեդրոնական յանախել ու Բերայի սկաւառները եկան ու մեր որբանոցն ալ կազմակերպեցին: Հպարտ ու ներկայանալի խումբ մըն էր մերինը: Ձարքաշուքեան ու տառապանքի բովէն անցած, ամբողջով տղաք էին բոլորն ալ՝ ու անպիտոյ Հայ: Ես ու Մուշեղը մեր խումբի վարիչներն էինք. ան իրրեւ խմբապետ, ու ես՝ իրրեւ օգնական կամ յաջորդ: Ամառ օր մը Մեծ Գողի բանակումի տարինք մեր տղաքը: Գիշերը պիտի մնայինք հոն: Հարթավայրի մը վրայ վրանները յարեցինք ու պարտասած տղաքը դրինք անկողին: Հետեւ ծովը կը փրփրէր լուսնի կաթնաքով լայրին տակ ու երկնքի թաւ:



շանձան կապոյտին վրայ սասողերը կը շողային:

- Հոս ալ սասողերը խոշոր են ու փայլուն, ըսի ես երկինքն ի վեր նայելով, բայց չեմ կարծեր թէ աշխարհի վրայ կայ տեղ մը ուր անոնք Քիւրախասանի երկնքին վրայ իրենց շողարձակածին պէս շողարձակեն, ըսի ես իմ ըսածիս վրայ խնդարով:

- Այո, իրաւունք ունիս, ըսաւ Մուշեղ, հոն եղած տաննս, ես ալ, յաճախ կարծած եմ թէ, եթէ մազլիֆ ուս կամ նա շեռը ու թեւս երկարեմ վեր, կը հասնիմ անոնց:

Հառութիւն:

- Գիտե՞ս, երբեմն կարօտով կը յիշեմ ան տեղի կեանքս... Բնութեան մէջ անցուցած օրերս, ազատութիւնս... Մինակութեան ու կորուստներու ցաւին վարժուելէ, Համակերպելէ ետք, դուրսուս ուսիս վրայ կարենալ պահելու հողէն զատ ուրիշ հող չունէի կարծես. ու հաւատաս կամ ոչ, գրեթէ երջանիկ էի... Թերեւս անոր համար որ, ահաւոր մըղձաւանջէ մը ետք եկող համեմատական խաղաղութեան եւ սպառնալուստեան օրեր էին անոնք, ըսի:

- Իմ տպաւորութիւններս խառն են՝ լաւ յիշատակներ ալ ունիմ, դէշէր ալ՝ կան բաներ՝ որ մոռնալ կ'ուզեմ՝ ու չեմ կրնար, կան ալ բաներ՝ որ մոռնալ չեմ ուզեր, ըսաւ ան:

- Գիտե՞ս, Մուշեղ, որբանցին մէջ աւելի քան ութսուն տղայ կայ որոնց կէսէն աւելին աքսոր տեսած են. անոնց դըրեթէ բոլորին պատմութեան տեղեակ եմ... Կը յիշե՞ս ինչպէս կը հաւաքուէինք բազի մայրիկ շուքին տակ ու կը խօսէինք... Դուն մտիկ կ'ընէիր ու բերանդ չէիր բանար Այն օրերուն կը մտածէի թէ անբուժելի վիշտի մը տակ ընկնուած ես. բայց հիմա ատոր ալ վստահ չեմ. դուն հանելուկ մըն ես ինծի համար:

- Հանելուկ ըլլալու հարց չկայ, աքսորի օրերուս մէկ յիշատակելի գէպք է պատահած ու ես դայն մոռնալ կ'ուզեմ. բայց քանի որ կը պնդես, եթէ խոստանաւ տղաւոր պատուով վրայ թե՛ չես

տարածայներ, առ գիշեր կը պատմեմ քեզի. քան ունի՞ս:

- Ոչ, չունիմ:

- Ուրեմն մտիկ ըրէ: Աքսորէն առաջ՝ հինգ եղբայր էինք, Զորք կորան: Մընացի ես՝ մինակ: Փինկենցի գիւղացի մը զիս զատեց կարաւանէն ու տարաւ իր տունը ուր քիչ մնաց մեռնէի ծանր դաշտային աշխատանքի տակ: Անգամ մը դիւղը հարկահաւաք մը եկած էր. անոր հետ համամայնելով փախայ գիւղացիին քովէն: Քանի մը ամիս ետք, անոր քովէն ալ փախելով, մտայ հանդատեան կոչուած Հարիւրապետի մը ծառայութեան մէջ: Հարիւրապետը երեք կին, երկու աղջիկ դաւակ՝ ու ինձմէ՝ զատ, երկու ալ սպասուոր ունէր: Երեք կիներն ալ ունէին իրենց սպասուհիները՝ որոնցմէ մէկը Մարիամ անուն հայուհի մըն էր. 13-14 տարեկան նուրբ ու հրեշտականման աղջնակ մը: Առաջին անգամ զիս տեսնելուն բան մը չըսաւ, բայց երկու օր ետք, գիշերը, երբ քակին մէջ առանձին դտաւ զիս, ձեռքբաւ դարձով համբուրեց ու ըսաւ որ իր եղբայրն եմ ու քանի որ ես կամ, ալ քանի չի վախար: Վերջը տեսայ որ ձեռքս թայ էր: Լացեր էր ձեռքս համբուրած պահուն... Ես ալ, մտքես դիմքս քրոջ տեղ գրի ու ինքզինքիս խոստացայ տէր ըլլալ անոր: Մառանին բանալին իր մօտ էր՝ ու յաճախ խորտիկներ կը փախցնէր ինծի համար: Քանի մը անգամ զինքը զգտու շացուցի, բայց ան շարունակեց ինծի հող տանիլ... Մեր տունը, գիւղի սահմանին վրայ, գրեթէ մեկուսացած գիւղք մը ունէր. Հարիւրապետը այդ կէտը ընտրեք էր որ իր կիները, առանց մեծ նեղութեան, ազատ ըլլան յայրատ աչքերէ... Հասկնալի է անշուշտ որ ինձմէ նամեհարամ չէին, մինչ ինձմէ աւելի փոքր քիւրտ սպասուորէն ու նաեւ զինուորական տարիքի մէջ զանուող Հասանէն՝ կը պահուէին: Ի՞նչ բան զիս աւելի վստահելի կը դարձնէր իրենց աչքին՝ չեմ գիտեր, բայց տունին մէջ սպորող հինգ կիներն ալ, ամէն առիթը ներկայանալուն, կ'ընէին թէ ճես իրենց եղբայրն եմ ու

հարեմական ժանր գաղտնիքներ ալ կը վստահէին ինծի :

Ըսի թէ տունը գիւղի սահմանազըլ-իին վրայ էր : Անոր մէկ կողմը ձոր մը կար՝ ուրկէ ուռնիներով եղբրուած առու մը կ'անցնէր : Այդ տունէն կ'առնէինք լուսացքի, լողանքի ու նման պէտքերու համար անհրաժեշտ ջուրը : Զուրիս ու մեր տան գրեթէ կէս ճամբուն վրայ կար կիտակործան գոմ մը՝ որուն մէջ ամառը հովիւները կը մակաղեցնէին նախիրը : Հոտած, դարչահոտ տեղ մըն էր՝ որմէ ներս ոտք չէի դրած : Օր մը, երբ ձիերը ջրհյու համար անոր մօտէն կ'անցնէի, կնոջական լացի ու ճիչի բեկորներ հասան ականջիս . ձիերը ձեռքս, մօտեցայ գոմի դրան ու նայեցայ ներս : Արիւնս սառեցաւ : Հարիւրապետին անձնական սպասաւորը, Հասան, 24-25 տարեկան արտակարգօրէն հմայիչ արտաքինով ու կազմով Գիւրտ մը, հակեր էր հայ աղ-լիկան, Մարիամին վրայ՝ ու կը ջանար մերկայցնել զայն : Որոշ եղաւ ինծի թէ, երբ հայ աղլիկը ձոր կ'իջնար տան պէտքերուն համար ջուր առնելու, Հասան զայն քաշած էր գոմ :

- Ի՞նչ կ'ընես, ծօ՞ . Աստուծմէ՛ շվախցող, պոռայցի իրան վազելով :

- Քու ինչո՞ւդ պէտք, կեանքո՞ւր :

- Ի՞նչպէս թէ ինչուս պէտք... Մեղք չէ՞ երեխային...

- Ի՞նչ երեխայ . երբ ցորենչափի կոտիկին վրայ նստեցնես ու սաքերը դեպի հասնին, ալ երախայ չի համարուիր : Յետոյ քու ինչո՞ւդ պէտք . կեանքը ըլլալուն համար է որ զինքը կը պաշտպանես :

- Ինծի նայէ, Հասան, հիմա որ հոս եմ, ալ ախորժակդ ուրիշ ատենուան պահէ : Յետոյ քեզի քիւրտ աղլի՞կ կը պակտի... Գապտաայի ես, գեղեցիկ, հրապուրիչ... Անցած ատենդ աղլիկները ետեւէդ ախ-վախ կը քաշեն... Մեղք է աս աղլիկան... յետոյ աւելի շիտակն ըսելով, իմ աչքս վրան էր, կը սպասէի որ քիչ մըն ալ մեծնար...

- Հիմա շիտակ խօսիլ սկսար . նայէ՛ հիմա կը հաւատամ ըսածիդ, եթէ շիտա-

կը չիօսէիր, վալլաե-ի, պիլլաե-ի, երկուքդ ալ կը սպաննէի ու կը բարձրանայի լեռ : Զեր արեան զինը ո՞վ պիտի պահանջէր ինձմէ, մինչեւ հիմա սպաննուած կեանքներուն հաշիւը ո՞վ պահանջեց, մինչեւ հիմա իմ սպաննած կեանքներուն հաշիւը ո՞վ ուզեց ինձմէ որ ասկէ վերջ ալ ձերինը ուզէ... Զիս ուրկէ՞ պիտի գտնեն որ հաշիւ ուզեն... Երկու կեանքուր աւելի կամ երկու կեանքուր պակաս...

- Իրաւունք ունիս, ճիշդ ես, ըսի, մենք երկուքս ալ ոչնչութիւններ ենք, կրակ ըլլանք՝ չենք կրնար քեզ վառել... Մի կարծիք թէ բրած բարութիւնդ կը մոռնամ, կը մոռնանք... Երբայք մը, ամիս մը, ուղածիդ չափ երկար ժամանակ, քու կատարելիք շխատանքներդ ես կը կատարեմ տեսակէտով մը վարձահատոյց ըլլալու համար . դուն կե՛ր, խմէ՛ ու քէյֆդ նայէ : Համամի՛տ ես :

- Համամիտ եմ, ըսաւ ակներեւ դոհունակութեամբ :

- Միայն թէ, իստացիր որ աս աղլիկան զլիտուն փորձանք մը պիտի չբերես, զայն ինծի պիտի ձգես...

- Ոնտաացայ, թող քեզի ըլլայ : Բայց շատ մի սպասեր . որքան պզտիկ ըլլան, այնքան համով կ'ըլլան :

Ու ելաւ դուրս :

Մօտեցայ Մարիամին որ օգնեմ վերայ դուրսը կարգի գնելու, սիրտ ամա՛ն ու մխիթարեմ զինքը, սպասուելուն համար խնդակցութիւն յայտնեմ : Մօտենալըս տեսնելով, ան ահաբեկ փախաւ փրկուած գոմին մէկ հեռաւոր անկիւնը ու սկսաւ լալ ու պոռալ . պոռալ որ իր մօտ չերթամ, իրեն չմօտենամ :

Հարկ եղաւ երկար բարակ համոզել զինքը . բացատրել թէ Հասանի ըսածներս սուտ էին՝ ու ես իր վրայ աչք չունէի, իր մեծ եղբայրն էի եւայլն :

Համոզուեցաւ ու գիրկս նետուելով լացաւ, խնդաց, նորէն լացաւ...

- Ես ալ կարծեցի թէ, կ'ըսէր ան արցունքներուն մէջէն ժպտելով, ես ալ կարծեցի թէ...

- Է, ալ մի լար, անցաւ վտանգը : Ա-

ուղ Խոստումը ես անոր հաշիւը կը կարգադրեմ շուտով. միայն թէ քեզմէ խընդրանք մը ունիմ, խոստացիր որ պիտի կատարես :

- Կը խոստանամ, կը խոստանամ, եթէ կենքս ալ ուզելու ըլլաս, Մուշեղ արարար, կու տամ քեզի :

- Շատ մեծ բան մը չէ ուզածս, միայն խոստացիր որ այսօրուայ պատահածին մասին մէկու մը բան պիտի չըսես :

- Ա՞ն է եղածը... չեմ ըսեր, մէկու մը բա՞ն չեմ ըսեր. եթէ ըսեմ՝ թող լեզուս անուի, բնուի՛... :

- Աղէկ : Իսկ եթէ հարցնելու ըլլան թէ ինչու ջուրէն ուշացար, սուտ մը յարմարցուր. ըսէ թէ դրացիներու հետ խօսքի բռնուցար, սաքո ցաւցուցիր՝ ու սպասեցիր որ ցան անցնի, կամ ջուրը պզտոր կը հոսէր, սպասեցիր՝ որ պարզուի, յստասխանայ :

Համաձայնեցանք : Ես միերն առած իջայ ջուրը. յսկեցուցի՝ ու օրը ու մինչ անոնք մեծազմուկ դարի կը ծամէին, ես ընկիւքիս որոշումը առի :

Էնոնքը աւազակներով ու զինուորութեան փախստականներով յեցուն էին. ամէն դիշեր շատանն ու ես կը հսկէինք միմեկու կէս գիշեր, ու աւելի ուշ՝ մինչև որ ոտտիկանառունէն մէկը զար մեզ փոխարինել :

Այդ գիշեր այ, երբ ամէն մարդ պտուկեցու քնանալու, ես ու Հասանը մեր գէնքերն առած կլանք դուրս : Երկու եղբոր պէս անուշ էր մեր յարարերութիւնը այդ օրը : Խօսեցանք ալէն ու ձախէն : Ծիւղեցինք, դիւղի կիներուն եւ աղջիկներուն, ու նաեւ բողբոլուն քարեր նետեցինք. ոմանք դնահատեցինք, ոմանց հանդէպ արհամարհանք ցոյց տուինք... :

Քաղազ, Ղերմիկ գիշեր էր : Մայիսի վերջերն էինք, հովին մէջ զարուն՝ ու լեռնէն եկող օդի զով հասանքին մէջ՝ բուրում կար :

- Հասան :
- Դ՞նք վար, ի՞նչ կայ :
- Գիտե՞ս, անգամ մը ինծի զինավարժութեան զոս մը տուած ես. ցու-

ցուցած ես թէ եթէ ճամբան աւազակներ գէժս ելլեն ու ինձէ պահանջեն որ գէնքս յանձնեմ իրենց, ինչպէս հրացանիս փողը իմ կողմս բռնած՝ բունը պէտք է երկարեմ իրենց՝ ու վերջին պահուն արագ մէկ շարժումով փոխեմ անոր դիրքը ու մատն բլթակին՝ զնդակահարեմ դիմացինս. եկուր նորէն փորձենք անանկու համար թէ կրնամ հարկաւոր արագութեամբ կատարել այդ շարժումը :

- Աղէ՛կ, նախ գէնքիդ ապահովութեան բանալին դոցէ :

Ձրիկ, դոցեցի :

Դէմ դիմաց կեցեր էինք հիմա. օիրտարս արագ կը բարախէր ու ճակոտս կ'այրէր : Մթնելէ ի վեր չորս ժամ անցած էր ու այդ չորս ժամուան մէջ անդադար մտածած, վարանած ու ասնջուած էի. արարքիս անխուսափելի հետեւանքներուն մասին կը մտածէի ու ամէն անգամ թուշալուս, ականջներուս մէջ կը հնչէր Մարիամի լացը : Կը մտածէի թէ ի՞նչ կրնար պատահել՝ եթէ այդ օրը պատահմամբ զոմի մօտէն չանցնէի, ու արիւնս կը սասէր երակներուս մէջ : Իբրև էր թէ, ան առաջինը պիտի չըլլար, եւ ոչ ալ՝ վերջինը, բայց այդ բանը պատճառ մըն էր որ ճատ մը աւելի հաս մը պակասը ըսելով լուսյինք մեր ձեռքերը Պիղատոսի պէս... Մէկ բան մինչև այսօր ալ չեմ կրցած հասկնալ, այդ օրուայ իմ միջամտութեան առջև Հասան ինչո՞ւ տեղի տուաւ... Ձէ՞ որ քսու մեզի թէ զեթէ երկուքդ ալ զնդակահարեմ ո՞վ հաշիւ պիտի պահանջէ ինձմէ, միմեկու հիմա սպաննուած կամ սպաննած Հայերու համար ո՞վ հաշիւ պահանջեց... :

Ըսի թէ գիշեր էր, մութ, լուսինը դեռ չէր բարձրացած : Քիչ մը եւս ժամանակ շահելու համար, իր պատուէրին համաձայն, զէնքիս ապահովութեան բանալին չըղկ գարձնելէ հաք, ըսի .

- Ինծի անգամ մըն ալ ցոյց տուց :
- Տուաւ ցոյց : Ինծի երկարած գէնքին բունը յանկարծակի շարժումով մը իր կողմը դարձաւ ու իր մատը արդէն բըլթակին վրայ էր. բլթակը չեկաց՝ բայց

որովհետև փակ էր, գէնքը չպայթեցաւ։  
 Հերթը իմա էր։ Ես ալ ըրի նոյն բա-  
 նը, բայց երբ ժառս բլթակին վրայ ճըն-  
 շեցի, լոյս մը, պայթիւն մը եւ աղաղակ  
 մը իրար յաջորդեցին։ Հասան, երկուքի  
 ծալլուած, ինկաւ գետին ու սկսաւ աը-  
 քալ։ Գնդակը հանդիպե՞ր էր մէջքը կապ-  
 ուած փամփշտակալին եւ ուրիշ փամ-  
 փուշտ մըն ալ պայթեցուցեր ճիշդ իր  
 պորտին վրայ։ Փորի պատուուածքէն  
 դուրս էին թափուած սեւ աղիքները ու  
 Հասան կ'աշխատէր ափով գանձո՞ք մղել  
 ետ՝ իրենց տեղերը։ Երկուքիս ալ գէն-  
 քըր նման էին, պետական գինարանէն  
 վերցուած, այնպէս որ, արձակուած  
 փամփուշտը պարունակող իմ գէնքը ձը-  
 վեցի իր ջով՝ ու իբր առնելով, կը պատ-  
 րաստուէի տունին ետին անցնիլ ու ձորն  
 ի վեր կրակել Հասանը վերաւորող երե-  
 ւակայական թշնամիներու վրայ, երբ  
 յանկարծ տունին դուռը բացուեցաւ ու  
 հարիւրապետը, գէնքը ձեռքին, «այս  
 ի՞նչ մայն էք» ըսելով ելաւ դուրս։

- Հասանը զարնուեցաւ, ըսի առանց  
 մտածելու ժամանակ ունենալու։
- Կեալուր օղլու...

Ու ծռեցաւ Հասանին վրայ՝ ստուգե-  
 լու համար անոր վիճակը։

Ձար բախտէս, ան դեռ չէր մեռած,  
 ու անընդհատ անունս կու տար՝ հաս-  
 կըցնել ուզելով թէ գինքը զարնողը ես  
 էի։

Այդ որ լսեցի, ձգեցի հեռացայ։ Ը-  
 սելիքս ու ընելիքս որոշելու համար ժա-  
 մանակի պէտք ունէի։ Յետոյ անհրաժեշտ  
 էր որ գիտնայի թէ ի՞նչ պիտի անցնէր  
 դառնար։ Հասան որքա՞ն ատեն պիտի  
 ապրէր, հարիւրապետը ի՞նչ պիտի ը-  
 նէր, գիւղին մէջ ովքե՞ր պիտի գիտնա-  
 յին կատարուածին մասին։ Ես կը յուսա-  
 յի՝ թէ հարիւրապետը պէտք եղած արթ-  
 նամտութիւնը պիտի ունենար հաշուելու  
 համար որ՝ Հասան գինուորական տարի-  
 քի մէջ գտնուող փախստական մըն էր  
 իր ծառայութեան մէջ զոնուող, ու ինչ  
 իբրեւ ալ՝ ծանր ամբաստանութեան  
 տակ էր։ Կրնար պատերազմական ստ-

հան կանչուելով գլուխը վրայ տալ իր-  
 րեւ դատաւի՞ք պատասպարող...

Հաւազոյն լուծումը պիտի ըլլար զայն  
 դադանօրէն տեղ մը թաղելով հարցը փա-  
 կելը։ Ձէ՞ որ արդէն մեր գիւղին մէջ մէ-  
 կը չունէր ան։

Շինականներու տուները, մտնաւանդ  
 բլուրներու կողերուն շինուածները, առ-  
 հասարակ կ'ըլլան ցած ու կիտով, իր  
 յետնամասին մէջ՝ խրուած հողը։ այն-  
 պէս որ բնակարանին տանիքը հասասար  
 կ'ըլլայ բլրան կողին հետ՝ ձեւով մը  
 կազմելով անոր շարունակութիւնը։ Մե-  
 րինն ալ տարբեր չէր. այնպէս որ, ես  
 վեր վազելով, ամբողջ հասակովս պտո-  
 կեցայ տանիքին վրայ ու, խաւարին մէջ  
 աչքերս ու ականջներս լայն բացած, կը  
 դիտէի բակը։ Հարիւրապետը հակած էր  
 Հասանին վրայ ու յուսադրիչ խօսքեր  
 կ'ըսէր անոր։ Յետոյ շտկուեցաւ ու մեր  
 միւս սպասաւորը, Աւմէտը զրկեց ժան-  
 տարմաներու զոմուլը՝ պատուէրելով որ  
 հոն ով որ կայ, կանչէ։ Այդ որ լսեցի,  
 սիրտս կանգ առաւ։ Հասանի մահը ալ  
 գաղտնիք ըլլալէ կը դադրէր։ Գէն էր  
 ինծի համար։ Ու աւելի գէն՝ հարիւրա-  
 պետին համար։ Ինծի ուրիշ բան չէր մը-  
 նար ընել եթէ ոչ փախիլ ու հետքս կոր-  
 օրնցնել։ Փախիլ, բայց ո՞ւր... Մարդ  
 չէի ճանչնար, բարեկամներ ալ չունէի...  
 Հոս հոն ինկած Հայեր կը ճանչնայի  
 թէեւ, բայց իմ ներկայութիւնովս չէի  
 ուզեր զանոնք վտանգել։ Ճամբաներն ը-  
 սես՝ լեցուն էին աւազակներով, ու ծակ  
 տրեխի մը համար, մարդիկ, առանց  
 խղճահարութեան, իրա՞ր կը սպաննէին։  
 Իսկ բռնուելու պարագայիս, յանցանքս  
 ընդունած պիտի ըլլայի փախուստիս  
 փաստովը։

Պատանի Աւմէտ երբ վերադարձաւ,  
 երկու ժանտարուներ կ'ընկերանային ի-  
 րեն. զոմուլի հրամանատարը՝ ու չո-  
 բուժցի Իբրահիմը. շատ բարի ու շատ  
 տղէտ Թուրք մը։ Եկան, քանի մը խօսք  
 փոխանակեցին հարիւրապետին հետ ու  
 վերաւորը տարին ներս՝ դռն։

Այ ինծի ընելիք չմնաց։ Ձորի առուն  
 եզրող բազմաթիւ ծեր ուռենիներէն սա-

դարձախիտ հատ մը ընտրելով, մազըլ-  
ցեցայ վրան՝ ու որոշեցի գիշերը հոն ան-  
ցընել:

Լուսինը բարձրացեք էր: Գետը ար-  
ծաթ լայն դօտիի մը պէս կը շողար ու  
կասկամները հեռուէն իրար կը կան-  
չէին. ու ձորակին ջուրը, վրան թառած  
ուռնիիս արմատները լիզելով, կ'եր-  
զէր:

Աչքերս գոցած, կէս ջուն կէս ար-  
թուն, լուռ աղօթեցի. ընելիքին մասին  
Տիրոջմէն ուղղութիւն խնդրեցի... Գեռ  
աղօթքս չէի վերջացուցած երբ տեսայ  
որ Փանտարմները շորս կողմ ինկած՝ գիս  
կ'որոնեն. Եկան նոյնիսկ վրան եղած ու-  
ռնիիս տակ ու փախալով խորհրդակ-  
ցեցան. սկանջներս ու ուշադրութիւնս  
լարեցի՝ բայց բան մը չկրցայ հասկնալ:

Կ'ենթադրեմ, զնացայ քիչ մը:

Առաւօտուն, երբ լուսինը գունատած  
էր, անտառին ծառերը սեւ սանաթի պէս  
խրուած ըլլալ կը թուէին արշալոյսէն  
ձերմկող երկնքին ծոցը, արթնցայ: Մը-  
սեր էի: Թեւերս ու սոքերս դժուարու-  
թեամբ կրնայի շարժել: Զդուշութեամբ  
իմայ վար՝ ու զացի մեր տան մուտքը  
սլաշտպանող ցանկապատին ետեւ կիսով  
պահուեցայ, սպասելով որ մէկն ու մէ-  
կը կ'արթննայ ու կու գայ դուրս: Հա-  
սանի ինկած տեղը, որ թաց ըլլալու էր  
արիւնով, վրան հող էր թափուած հո-  
գածութեամբ: Խորհեցայ որ լուսնան  
էր. խորհեցայ որ որոշած էին ծածկել,  
դադանի պահել անոր մահը:

Անպատեհառ Աստուած հետո ըլլալու  
էր, որովհետեւ հազիւ հինգ բույլ սպա-  
սած էի երբ տան դուռը զգուշութեամբ  
բացուեցաւ ու Մարիամը, զնատ աչքե-  
րով, էլաւ դուրս: Ինծի թուեցաւ. թէ  
հայ աղջնակը չէր դուրս ելնողը, այլ  
հրեշտակ մը, բարի՛, բարի՛ հրեշտակ  
մը:

— Մարիամ, ճանիկս, երէկ գիշեր  
ի՞նչ ըրին, ի՞նչ որոշում տուին, ի՞նչ  
պիտի ընեն...

— Հասան երեք ժամ ապրեցաւ ու մե-  
ռաւ, ըսաւ: Զիս ու Իբրահիմը քովը ձը-  
գեցին ու իրենք զացին պառկեցան: Նախ

ուզեցին զեզ ձեռք ձգել ու սպաննել...  
Փնտառուքե ալ ելան...

— Գիտեմ, ես ծառին վրայ էի, տակս  
Եկան՝ ժողով ըրին:

— Եթէ զեզ անմիջապէս բռնէին պի-  
տի սպաննէին, բայց յետոյ միտքերնին  
փոխեցին: Հանրմը ըսաւ թէ զվատահելի  
պահապան մը ու ծառայ մը արկածի զոհ  
զնաց: — Կը հաւատան թէ արկածով  
զարկիր զինքը — մէկն ալ մենք սպան-  
նենք, աղէ՛կ, բայց մեզի ո՞վ տէր պի-  
տի ըլլայ... մեր վրայ ո՞վ պիտի հակէ  
սակէ ետք, սա տղէն աւելի վատահելի  
մէ՞կը պիտի գտնէք...» Հարիւրապետն  
ալ համաձայն դտնուեցաւ ու ժամատար-  
մաներուն հետ երկար բարակ խորհրդակ-  
ցելէ ետք, որոշեցին մեռելը վաղ գիշեր  
զազտնօրէն թաղել: Ու եթէ հարցնողներ  
ըլլան թէ Հասան ի՞նչ եղաւ, պատաս-  
խանել թէ զիր զինուորութեան տարբեր  
եկած էր. երբ իրեն իմացուցինք այդ  
բանը, զէնքը առաւ ու փախաւ չղիտենք  
ուր»:

Ուբախացայ: Փրկուած էի:

Բայց կ'ուզէի վատահ ըլլալ:

— Բայցիկ, գոմին մէջ պատահածին  
մասին մէկուն բան մը չե՞ս ըսած...

— Զէ, խեղճ եմ... Եթէ ըսած եմ՝  
թող Աստուած հոգիս աննէ:

— Ծնորհակալ եմ. կը հաւատամ.  
Բայց չըլլայ որ սակէ ետք ալ բերնէդ  
բան մը փախցնես:

— Խեղճ եմ:

Գնաց ներս:

Գրեթէ երջանիկ էի: Դրան կողին,  
իրբու նստարան ծառայող քար մը ու-  
նէինք. անոր վրայ նստեցայ ու սպասե-  
ցի:

Արեւը բարձրացաւ: Ծակտիս, զէմ-  
քիս, զիտերուս եւ ուսերուս վրայ ա-  
նոր ջերմութիւնը տյնջան անո՛ւշ էր...

Աւելի ետքը, երբ հարիւրապետը  
դուրս ելաւ, կաթ թափած կատուի վախ-  
կոտ, վարանտս քայլերով, մօտեցայ ի-  
րեն. ծռելով սոսի իր ձեռքը, համբուրե-  
ցի՝ ու յուզումէս թրթռացող ձայնով  
մը, ըսի.

— Էֆէնտիս, տէ՛րս, ներեցէ՛ք. զիտ-

մամբ չըրի. արկած մըն էր ելաւ ձեռքէս. ներեցէ՛ք, օճախդ եմ ինկեր...

- Աղէ՛կ, աղաս, աղէ՛կ, գիտենք որ դիտմամբ չըրիր. արկածներ միշտ ալ կը պատահին. չըլլաք աղէկ էր, բայց եղաւ... Գնա ցերեկը անտառին մէջ գայն թաղելու յարմար տեղ մը գտիր՝ ու գիշերը Հայտարին ու Իբրահիմին Հեռ տարէք թաղեցէք: Խոտած եմ իրենց այդ մասին ու խոստացած են օգնել քեզի:

- Միտն թէ, շարունակեց ան ձայնը ցածցնելով, Հարկաւոր է զգոյշ ըլլալ... Թերեւս անտառին մէջ մեր զէմ մարդիկ ելլեն, թերեւս փախստականներու Հանդիպէք ու ստիպուած ըլլաք դիակը մտել ու փախիլ. այդ պարագային գործերնիս զէջ կ'ըլլայ. կը ճանչնան գայն՝ ու զըլլալու ցաւ կու տան մեզի. բայց երբ դիակ մը Հաղուտ ու գլուխ չունենար, ոչ ոք կրնայ ճանչնալ գայն. կը հասկնա՞ս թէ ինչ ըսել կ'ուզեմ:

- Այո, էֆէնտիս, կը հասկնամ: Պատմութիւնը Հոս Հոտած էր երբ Մուշեղ դարձաւ ինծի.

- Քունդ եկա՞ւ, կը ձանձրացնե՞մ քեզ...

- Քունս չեկաւ, ոչ ալ՝ ձանձրացուցիլը զիս, բայց չեմ կարծեր թէ կրնամ այս գիշեր քնանալ:

- Կը ցաւիմ ըսելու, թէ պատմելու չէի քեզի այս բոլորը:

- Ինեղճ բարեկամս, ինչե՛ր ես քաշեր. աղէկ որ այդ գիշեր մագերղ չճերմակեցան:

- Մագերուն ճերմակիլը ի՞նչ կարեւորութիւն ունի...

- Ետտ բան մը չմնաց կարծեմ, պատմէ վերջացուր:

- Կէսօրուան մօտերը, շարունակեց Մուշեղ, - Հարիւրապետը դիս ներս կանչելով շատ սիրուն փոքր գորգ մը եւ երկու կարմիր սկիւտալ տուաւ ինծի: Գորգը ոտականապետին, իսկ սկիւտերը՝ Իբ-

րահիմին տուր. քու կողմէդ Խուէր. ըսաւ աչքին մէկը քթթելով:

Հասկցայ: Մարդիկը կը կաշառէինք: Տարի տուի:

Ոստիկանապետը առարկեց, չուզեց զորքը առնել, բայց իր ըրածը ձեւ էր կարծեմ, որովհետեւ առանց երկար բարակ Համոզելուս Համաձայնեցաւ.

- Լաւ նամադի սէտճատէ կ'ըլլայ, ըսաւ:

Իսկ Իբրահիմը, սկիւտերը նետեց գրպանը՝ ու առանց իմ յիշեցումիս, ըսաւ թէ Էերբ միմէ՛՛ պիտի գայ ինծի օգնելու:

Այդ գործն ալ տեսնելէ ետք գացի շիտակ գիւղի կոնակն ի վեր մազլոյող անտառը: Տունէն ոչ շատ հեռու, յորդ անձրեւներէն փորուած փոս մը կար. մըտածեցի որ, եթէ գայն քեզ մըն ալ խորունկցնենք, Հոտանի Համար յարմար գերեզման կ'ըլլայ: Գրեթէ թեթեւ սըրտով վերադարձայ տուն: Հասանը տեսնելու մեծ փափաք ունէի: Գոմը, ուր գայն դրեր էին, կը պուտած էր: Բանալին ուզեցի ու դուռը բանալով մտայ ներս: Կենդանիներու չորցած աղբին վրայ վերմակ մը փոսեր էին որուն կեդրոնը, կըտնակի վրայ, պատկած էր Հասանը: Մեւ ու կանաչ Հարիւրապետ ճանճեր կը դառնային իր շուրջը: Քիչ մնաց փսխէի:

Ամբողջ օրը բան մը չկրցայ ուտել:

- Այդ բաները պատահած ատեն քանի՞ տարեկան էիր:

- Տասըեօթը:

- Մարիամը ի՞նչ եղաւ վերջը:

- Մնաց Հոն: Գերի... Մինակ ի՞նքը... Հարիւրներ, Հաղարներ կան իրեն պէս... հազարնե՛ր...

Առաւօտը ծովուն վրայ ճերմակիլ ըսկըսած էր երբ բաժնուկեցանք ու մասնք մեր վրաններուն տակ: Ես չկրցի քնանալ, չեմ գիտեր թէ Մուշեղ կրցա՞ւ...

Ա. 2.

## ՄՆԵՂՎԱԿՆԵՐ *Գորուստայ*

Տեսէ՛ք, կը նայի լեռն հայարնակ,  
 Լեռն այդ կապոյտի, լեռն այդ անդունդի՝  
 Քիչ մը ամէն դի:  
 Կը նայի սակայն խոր ուշագրութեամբ,  
 Դարերէն եկած, այնքա՛ն պզտիկցած,  
 Մաշած, լնցած՝ Անտիոք քաղաքին.  
 Կը նայի անվերջ,  
 Շքեղ սեռակերտ՝  
 Մարմարակրօն հին Հելլեններու կայտառ բազուկին:  
 Կը նայի լեռն իմ,  
 Արդ թուրք քաղաքի քարի եւ մտքի քի՛ւր մամուռներուն,  
 Սրտի ժանգոյրուն,  
 Ազրի պէս դիզուած սեւ տգիտութեան  
 Եւ ստոր քարքին:  
 Կը նայի լեռն իմ, հին գորանցին,  
 Կռուավարական նորակերտ շէնքին, լայն շքապատին:  
 Հարուստ լին գրկած Ամբղի դաշտին:  
 Կը նայի ապա,  
 Միլիթոսի խանձած զառիթաններուն,  
 Խորված քարերուն,  
 Քուրս Ռոմանդոսին՝  
 Որ կ'անցնի հեռուն, հայա՛վ առ հայա՛վ,  
 Խաչակիրներու ստուերով լեցուն,  
 Յուշով կայսրերու,  
 Ու խուլ ձայներու խենթ ձայնարկութեամբ:



Ողջ ճէպէլ Մուսան  
 Կը խնայ խռով՝  
 Բանի մասին հին, մեծ ու պատմական – տիեզերակա՛ն:  
 Ջայն կ'առնէ կարծես, կը տեսնէ տեսիլք,  
 Դարերու վիհէն: –  
 Տիգրանը թագով ազամանդակուռ,  
 Իր Արմէններով,  
 Իջաւ Հելլենի քաղաքն այդ շքեղ,  
 Բառ ըսաւ հայու,  
 Ու կայսերական արձակեց վնիռ:  
 Այդ քաղաքին մէջ, այդ գետի ափին,  
 Լոզցաւ հայկական անհուն այրուճին:  
 Սօսիին տակէն ճէպէլ Մուսայի՝  
 Տիգրանը գրեց ողջ Արեւելին հզօր հրահանգ...

Կայսերական մեաց այնուհզ հայ,  
Տիգրանի՛ օրէն, ախարժակով բորբ:  
Հայկական վաշտի տեսիլք կ'ունենայ,  
Տեսիլքով կ'ապրի,  
Յաւիտեան անտառ,  
Յաւիտեան գմբուխտ,  
Յաւիտեան կարօտ՝ լե՛ռն իմ ծնունդիս:

❖

Կը մայի, խոհուն, դէպի արեւելք...

❖

Եզած է Անտիոք  
Աղտոտ ափ մը տեղ,  
Տխուր յիշատակ.  
Եզած է Անտիոք  
Գունատ, մառախոլ:  
Հին փառքէն ոչինչ,  
Քարի վրայ գիր, թուղթի վրայ գիր,  
Մեռելի ուրբով նկարագրութիւն:  
Մզկիթ, սրճարէ,  
Ու ֆէս մը կեղտոտ՝  
Որ տանկի գլխուն ելած կը պարէ:

Անտիոքն այն շքեղ՝  
Հելլէնի օրուայ  
Տիգրանի՛ օրուայ  
Եզած է հիմա  
Ոչլուտ մօրուքով տանկներու տեղ:  
Անցած են ատկէ, տարիներ առաջ,  
Գեղամաւրթ բարձր կարծր մօլլաներ,  
Կենէշ քնազղով ֆէսաւոր մարդիկ,  
Կինն'ը ցանկամուլ:  
Խուժանն այդ մթին, անցած է ատկէ,  
Մարդու տանջանքի եւ անպատուութեան  
Խոշոր ահագին,  
Մարտու մը սքսին:

Դէպի արեւելք, քսան քիւմուքք...

Հաւաքուած են հող,  
Դեզին, գարշահատ,  
Մարոյսներ դաժան, ամբոյսներ գուժկա՛ն.  
«Ալլա՛հ» են կանչած  
Եւ գայն միշտ մոռցած՝  
Վագած հայու տուն,  
Քարուքա՛նդ ըրած:



Ո՞ր, քուականներ մթին օրերու,  
 Մթին ուռիսի:  
 Ո՞ր, քուականներ հեռուէն եկած  
 Մոռ'յլ տանիկի:  
 Ո՞ր, քուականներ, հայ ժողովուրդի  
 Անպատում վիշտի...



Տէօրք-Այագի մէջ  
 Կայ հայ երակի արիւն մը անշէջ.  
 Աստուծոյ կողմէ, բնութեան կողմէ,  
 Հայոց պատմութեան բարկութեան կողմէ,  
 Հոն կ'իջնէ անեծք, մահացնող կրակ...

Այդ խաւար խղճով խաւար քաղին մէջ  
 Հայ եկեղեցւոյ տրտում տեղ մը կայ,  
 Բայց այնքան տրտում, բայց այնքան տրտում,  
 Մարդ ի՛նչպէս ըսէ...  
 Ճէպէլ Մուսան յար՝ կայսրութեան պահակ,  
 Հայկական աչքով Հոսմի՛ն հսկող,  
 Կը մայի այգտեղ,  
 Սրտին մէջ սեղմած իր վէրքը անբայժ,  
 Ի՞նչ վէրքը անդե՛ր...

Ատեն մը առաջ, խաւար օրերուն,  
 Անհուն տանիկի տանի՛կ օրերուն,  
 Կրակ կէտորին՝  
 Հոն հայ ջարդեցին:  
 Մտան դռնէն մերս, խուճեցին խորան,  
 Ազահ մայաւածքով մարդ որոնեցին.  
 Ելան վերնատուն՝ ստարմահոգութ.  
 Քրքիջի մրբիկ, քրքիջի կրակ,  
 Ջրվէ՛ծ քրքիջի՛  
 Իջան անոնք վար,  
 Մորքած ըլլալու համոյքով ուռած:  
 «Ալլա՛հ» պառացին, Ալլանը մտացած,  
 Արաբք գործեցին Ալլանին ընդդէմ...



Մուրք վարդապետին արիւնը յամառ,  
 Արիւնը արդար,  
 Արիւնը ըմբաստ,  
 Արիւնը Հայո՛ւ՛:  
 Մնաց միշտ այգտեղ, վեմերու վրայ -  
 Անեծքի նշան, բողոքի կնիք,

Աղագամ ցնցող անցեալի կտոր,  
 Յեղափոխական ստարագրութիւն՝  
 Կարմիրով գրուած - :

Եւ ամէն ձմեռ, ամպ ու ամպրոպի գծոխք օրերում,  
 Սասկազա՛յն պսեփ,  
 Երբ զարհուրամէ՛ղ դողալ կը սկսին լեռ եւ Որոնդէս,  
 Ու Միջերկրական, ու կարծես աշխարհ՝  
 Արեամ խնդրամբով,  
 Այդ Քաղիմ վրայ,  
 Ալլահն ուրացուած՝ կը զարնէ կայծակ:  
 Իր իսկ մարդերում գիմաց զրգռուած:

\*  

Կայծակներով ու որսուով ամէն ձմեռ Ալլահը մեծ,  
 Տէօրք-Այագի վրայ գրեց.  
 - Թումու խաժաններ ամէն երկրի, երբ զիս մռնամ,  
 Կամ անուսն իրենց բերմին՝  
 Անգրաման, ամասման,  
 Լա՛ւ իմանան,  
 Հայեացքիս բորբ կայծակներով պիտի այրին եւ ածխանան:  
 Կայիմ առաջ,  
 Պրտի չըլլան...»

\*  

«Գիտմա՛ն, գիտմա՛ն»...  
 Բայց չգիտցան.  
 Ո՛վ Ալլահներ, ո՛վ Աստուածներ ամէն երկրի,  
 Բայց չգիտցա՛ն.  
 Զէ՛ որ յետոյ, չորս տարի ետք,  
 Միլիոն Հայեր վտարուեցան,  
 Կտորուեցան.  
 Զէ՛ որ յետոյ,  
 Ծննդավայր շէն մահամզներ կողոպտուեցան,  
 Զէ՛ որ Կարին, չէ՛ որ Տարօն, ու չէ՛ որ Վան,  
 Զէ՛ որ Ուրֆա, չէ՛ որ Խարբերդ, Տիգրանակերտ,  
 Ողջ Կիլիկիա,  
 Աստուածահող բարի կայքեր յաւերժական Հայաստանի՝  
 Ամայացա՛ն...»

ԵՒ. ՊՕՅԱՆՅԱՆ

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԱՇԱՇԵԱՆ

# Մայր Հայաստանի Մանուկները

Հայնոգի բարեկամ մը, մէկը վերապրողներէն, ամիսներ առաջ, ինծի յանձնեց բարակ թղթիկէ մը վրայ Ֆրանսերէն մեքենագրուած հին ճառի մը մասունքը:

Ճառը խօսուած էր Փարիզի մէջ, 26 Յունիս 1915ին, ազգասպանութեան օրերուն, նախկին վարչապետ Փօլ Բէնլըվէի կողմէ:

Կը ներկայացնենք նշխարը թարգմանաբար, վստահ ըլլալով որ այդ դիւանին թուականին, Հայերը (բացի Ֆրանսաբնակներէն) չեն կարդացած Բէնլըվէի ճառը, խօսուած մեծ մարդկայութեամբ, եզական եզրայրութիւնով ու պատմաբան պոետի մը դեզեցկութեամբ:

Անա արտասանուած ճառին մասունքը. պոստիւստմէ:

«Աւելի քան հինգ հարիւր տարի առաջ, երբ Քամէլյան (Քիմուք Լէնկ) հասաւ հարիւր հազար վարդենիներու քաղաքին՝ Սերաստիոյ առջեւ, որ մարդրիւն էր Հայաստանի, Պատմութիւնը կը հաղորդէ որ դարհուրած բնակիչները քանդողին առջեւ դրկեցին, անոր սիրտը շարժելու համար, հազարաւոր տղաք, ամբողջովին սպիտակազգեստ ու ծաղկաբարձ:

«Քիմուք Վաղր» իր վայրագ աչքերով երկարօրէն դիտեց այդ հազարաւոր դուռիները, որոնք երկնոտ կը ծածանէին իր ծոկով ձիւտքներուն յանձնարարեց կենդանիներուն սմբակներով կոխտուելով մանրել այդ գումարտակ մը մանուկները, որոնց բազիկները բարձուած էին վարդերով:

«Հին քրոնիկագիրներուն մեզի ձգած այս եզելութիւնը՝ կը նէ ամէնէն հրէ-

շային մահափորձերէն մին մարդկութեան դէմ, կատարուած աւելի քան բարբարոս ժամանակաշրջանի մը:

«Անկարելի է ընթեռնուլ այս առգիրը, առանց կարծելու որ օմֆինամոյի մը սատանայական երազն է կամ արիւնաթաթախ մղձաւանջ մը, որ կը խաւարէ օրոտան լոյսը:

«Մղձաւանջը այսօր դարձաւ իրականութիւն: Զարդերը որոնք տարիչ մը ի վեր արեամբ կը թաթաւեն Հայերը, կը հաւասարին, ի՞նչ կ'ըսեմ, կը գերազանցեն իրենց անշնորհամբ, ամէնէն վարդ հեցիաթները բոլոր դարերուն, բոլոր երկրներուն»:

»

Սերաստիոյ մէջ կատարուած այդ կոտորածը մեծ ու ահաւոր (որուն ըսկըզնամասը տրուած է միայն, որուն ամբողջութիւնը ամբողջական մահն եղաւ Սերաստահայոց, շուեւ հողերու գերեզմանատունով), եւ սակաւին դարերու ընթացքին հայաշխարհի այլ ոստաններու, քաղաքներու, ուաններու եւ շէնքերու մէջ կատարուած կոտորածները մեծամեծ, դարձան մանրանկալներ, բազմաթիւ 1915-ի Ապրիլին սկսուած մեծադոյն սպանդին:

Քիմուքին յաջորդած էր իր ճիւղ ճետերէն ուրիշ մը, հարիւր անգամ գերազանցելով իր վարպետին ոճրամոլութիւնը: Քիմուքին յաջորդած էր Քալէաթ մը, Էնվէրով, Պէհմետին Շաքիրով, Ճաւիտով, Ճէմալով, Գաբա Բէմալով, Նազրով, Հասան Տէհմիով եւ Էթեմբուլ Ղուլբով, որոնցմէ իւրաքանչիւրին դանկը որջ մըն էր ոճերի, որոնցմէ ա-

մէն մէկուն ուղեղը օձ մըն էր թունաւորապի :

Եւ անոնց հրէշային հրամանով Փոքր Ասիոյ, Հայաստանի ու Հիւսիսային Միջագետքի բոլոր վայրերէն դուրս ելան Հայերը, մանուկներով միասին, աչ թէ ծաղկաբարձ, այլ կրելով խաչ մը, անտեսանելի խաչ մը, ամէն մէկուն ծանրութեան բազմապատիկ աւելի: Ուշերը բեւեռուած էին իրենց ուսերուն վրայ, իսկ Գողգոթան հետու էր, տասը գետերէ, տասը լեռներէ անդին, հեռուն...

Արդէն մեծատարած, յայտարձակ երկաթէ խաչ մը նետուած էր երկրի վրայ, Կառպից Մովսէս Կիլիկիա ու Սեւ Մովսէս ինչուան Մոց Պարսից: Այդ երկաթէ խաչին վրայ կը բեւեռուէին հազարուամէկ տանջանքներով՝ Հայք:

Ոչ մէկ երկիր կրնար դիմանալ ճշմարտութեան ծանրութեան այդ խաչին, բացի քարեղէն Հայաստանէն:

Եւ այդ երկաթեայ խաչին Յիսուան էր Հայութիւնը:

Քաղեցին խաչակիրները Ճանապարհէն խաչի, դնացքը ունելի չարչարակից քան խաչելութիւնը: Ձի յանձնուած էին ոչնչեղէն արարածներու անվախճան անողորմութեան: Եւ ենթակայ՝ յարձակումներու, նոյնքան ոչնչեղէն արարածներէ:

Հազար հատը մէկ ջրոտա անասուն չարժող շուտակալներ եղան հայտապան, մանկասպան, կնասպան, ծերասպան, մինչեւ անգամ հանճարասպան: Գանձարաւոր գլուխները մէյմէկ քարով ջանջարիող յուսասպաններ:

Ուշին վարնամար կ'անցնէր անպատէն Տէր Զօրի, ուր կը զլուէին մնացորդները մարտիրոսներուն:

Ձինայուեցաւ նոյնիսկ արգանդներու մէջ զանուող Հայկակներուն եւ Հայկուհիներուն: Ձինայուեցաւ նոր լոյս տեսած մանուկներուն, որոնցմէ խումբեր ըրին ծովամոյն, խումբեր ալ արձակեցին կատաղած շուներու առջեւ, որոնք դիտմամբ սոված էին պահուած:

Մայրեր ու մանուկներ կ'մախացան եւ խելազարեցան:

Հասարակ գործիք մը շինելու անընդունակ մակարոյժներ, ստեղծեցին տեսակներ տանջանքի, հնարեցին մեքենայութիւններ մահու:

Մեծ Տառապանքը փոքրացաւ ու փափկացաւ՝ Հայուն տիտանեան տառապանքին քով:

Տառապանքին հետ այնքան հակադրացաւ քնդվզումը, որ հաւատքին հիմերը խախտեցան, նոյնիսկ կրօնաւորներուն հոգիներուն մէջ, եւ պատարագաւոր հայ քահանայ մը, տաճարին բեմին վրայ նահատակեալ, մատը իր սեփական արեան մէջ թաթխելով՝ խորանին վրայ գրեց. — Աստուած չկայ...

Ճ

Համատարած գեհնին մէջ, բարբախտարար, եղան ընտրելագոյն ընդվզողումներ, տեղ աեղ:

Ընդվզումներ դուրսգնական, որոնց մեծագործութեան նմաները ոչ միայն չկան աղքատ պատմութեան մէջ, այլ ազգերու հերոսութեան գումարը չի հաւատարիք հայ հերոսներուն անհնարին պայմաններու մէջ մղած անհաւասարի գոյամարտին զազաթներուն:

Եւ Համատարած գեղեզանատան մէջ Մանուղը Մանուկ Հայաստանի...

Եւ Մանուկին մղած յաղթաշունչ, հրաշապատում հերոսամարտերը...

Մինչդեռ Մոզերը Մանուկին տարին սով, սաղրանք ու ստորնութիւն, իբրեւ ընծայ:

Ճ

Ուզել սպաննել ազգ մը, ազգ մը մտքով ողջ, հոգիով ողջ: Այդ մը ազնուական, քանզի շինարար, խաղաղասէր քանզի: Եւ հանճարաւոր: Ըշմարտապէս եւ ոչ կարծեօք: Ազգ մը դեղեցիկ ու գեղեցկաչէն, եւ բարբարօրէն պիտանի: Մանուկն իր զահեմներուն համար այնքան անհրաժեշտ, կարծէք պարզեւ երկնատուր: Ուզեցին սպաննել ապրիլ դիտող ազգ մը, ապրիլ՝ ծնելով, շինելով, ստեղծելով...

Եւ արդ, Հայերը կ'ը Հայաստանի, եւ ի սփիւռս աշխարհի, անհրաժեշտ է

որ դուրս ելլեն իրենց անսարքերութեան պատեաններէն, իրենց եսամտութեան պատերէն, իրենց շահու եւ հեշտութեան վայրերէն դուրս գան, ո՛չ թէ ծաղկաբարձ, ո՛չ թէ խաչակիր, այլ նման ջահակիրներու: Ո՛չ թէ սպաննուելու կամ ընթանալու համար ճանապարհէն խաչի... Այլ պահանջելով ապրելու իրաւունք, պահանջելով համախումբ ապրելու իրաւունք մեր ամբողջական հողերուն վրայ, խլուած ամէն կողմէ, մեր լուսարուիւ հողերը, որոնք վերածուած են ակերակի, գերեզմանի, խուժի, խուպանի, խուարի:

Մեր այդ պահանջը պիտի ըլլայ անվերջ, մինչեւ իրականացում: Ջահերը միշտ պիտի վառին մեր մէջ, մեր վրայ, թէ՛ հայրենիքի մէջ, թէ՛ ի սփիւռս աշխարհի...:

Մենք ցարդ միանալ չկրցանք, քանզի օտար սաղայնէնքը սաղբեցին ու խանչարեցին:

Արդ մեզ պիտի միացնեն մեր մեռելները, մեր մարտիրոսները, մեր մայրերը, մանաւանդ մեր մանուկները:

Սերաստիոյ ծաղկակիր մանուկներէն մինչեւ մեր այն մանուկները, որոնք կը լլուկեցան, կերուեցան ծովէն, սովէն, եւ գիշատիչներէն ամէն տեսակի:

Ու միլիոնաւոր ձեռքերով միլիոնաւոր ջահերով, միլիոնաւոր միութեամբ պիտի բարձրագոյնակենք:— Արդարութի՛ւն...:

Արդարութի՛ւն՝ որուն արժանի՛ կնք տեսէ ազգէ աւելի, Արդարութի՛ւն՝ որմէ զրկուած ենք ամէն ազգէ աւելի, հակառակ մեր անգերազանցելի մարտիրոսութեան, հերոսութեան եւ լուսադործութեան:

Ճ.

Երբ կը խօսուէր Յիսնամեակի մասին, հայ մամիկ մը պատմեց իր մէկ երազը, որ նման է տեսիլի.

— Օրը բարի էր, երազս ալ՝ բարի: Աստղերով լեցուն գիշեր մըն էր: Ողորմած հողի հօրս հետ կեցած էի դաշտի մը մէջ: Մեր գիմացն էր մեր աստուա-

ծաշէն լեռը: Կարծես հազած էր լուսեղէն ծիրանի: Կարծես լեռան ետեւէն պիտի ծագէր արեւը, այնքան լեռը լուսերու մէջ էր: Եւ հայրս ըսաւ.

— Նայէ՛, Մաղթիկ, լա՛ւ նայէ՛...:

Նայեցայ: Մօտեցած էինք լեռան, որուն կողերէն վար կ'իջնէր ջրվէժ մը գոյնզգոյն գոհարներու, եւ միսմամանակ վեր կ'ելլէր շատրուան մը զոյնզոյն գոհարներու:

Հրաշք էր, հրաշալի հրաշք:

Հայրս սեղմեց ձեռքս ու նորէն խօսեցաւ.

— Մաղթիկ, հի՛մա նայէ, հի՛մա...:

Եւ ես տեսայ Մայր Հայաստանը, որ տասպանաբար մը տապալած՝ թեւեց թըրթըռալով, բարձրացաւ ու կեցաւ:

Երկինքը լեցուեցաւ զուարթութիւններով, անհամար գլուխներով մանուկներու, սփռքիկ, ճերմակ թեւերով, լոյսերով ողողուած:

Հայրս ըսաւ.

— Հրաշափառ Յարութիւնն է Մայր Հայաստանի, շրջապատուած մեր մարտիրոս մանուկներով, զուարթաց զօրագունդով...:

Ճառագայթէ սանդուխներ կախուեցան երկինքէն երկիր... Հնչեցին սփռքեր... Կը թեւէին աղանիներ... Լեռը լեցաւ ձիթենիներով...:

Դաշտը ողողուեցաւ հայ մանուկներով, ապրող մանուկներով, որոնք կը ծափէին ուրախութեամբ: Դաշտը կղած էր ծափերու ծով, ու ծով ծաղկաներու...:

Ձեռքս կը խաղար մեր մանուկներուն գանգուր գլուխներուն մազերուն մէջ... Հայրս կու լար ուրախութիւնէն...:

Ըսաւ.

— Աւետիս տանիմ սամ...:

Երբ արթնցայ, տակաւին կը շարունակէի լսել մեր միլիոնաւոր մանուկներուն ծափահարութեան ձայները...:

Յուզումնահար ըսինք.

— Մամիկ, դուն բարի, երազը՝ բարեբարի... Տեսիլը իրականանայ... Հայոց հողիներուն մէջ ծաղկին անշէջ ժպիտներ...:

Ն. Պ.

## Քայսարություն

Ահա առիկ, վերջացա՛ւ...: Այլ չկարծե՛ք՝ ձեզ մոռցայ,  
 Ո՛վ դու՛հ, որ օր մը այնքա՛ն անշքօքե՛ն հեռացա՛հ...  
 Ձեզ չմոռցա՛յ... դայց կը գգամ, կը գիտակցի՛մ այժմ, առա՛գ,  
 Որ ձեր անծի՛ր մահն ի գո՛ւր էր եւ անգո՛ր եւ յանցա՛նք...

Դո՛ւք մզտա՛նցըս էք արդ, իմ սեւեռուն գաղափարս՝  
 Դո՛ւք բաժակիս մէջը թո՛յն էք ու խզնիս վըրայ խա՛յթ...  
 Ես ամենուր, ամէն պահ ձեր յանսխմամբ եմ հիւանդ...  
 Բայց ներեցե՛ք... ներեցե՛ք... որ ձեզ երգել... չե՛մ կրնար...:

Գիտե՛մ, բէ ի՛նչ կրնայ տալ հոգիներուն ձեր՝ հանգիստ...  
 Այդ ոչ քերթուած է, ոչ ճառ եւ ոչ կոթող լայնամիտս,  
 Այդ ոչ աղօթք է, ոչ խունկ... այլ ուրի՛շ դեզ, ուրի՛շ ճար...

Մերթ կը փորձեմ ձեզ մոռնա՛լ, ձեզ ուրանա՛լ՝ չեմ կրնար...  
 Որովհետեւ կը սիրե՛մ ձեզ, ատելո՛ւ առտիճան...  
 Ու դու՛ք կու գա՛ք հետս, յամա՛ռ, մինչեւ ի փռաք ու վախճան...:

## ԸՆԴՎԶՈՒՄ

Կը հայեռյետ ձեզի միշտ, ձեզմէ, ինձմէ կ'ամբշնամ,  
 Պատմագիրքնե՛ր եղեռնի, պատմագիրքնե՛ր պարսութեանց,  
 - Այդ ի՛նչ փռաք է, ի՛նչ անբառ ժառանգութիւն, վարկ ու գրանձ,  
 Որ կը փրկե՛ք, կը բողո՛ւք մեզ շառլուսեանք տարածան...:

Ու կը գրբե՛ք, կը գրբե՛ք խլամբտութեանք դիւակամ՝  
 Պատկերագա՛րդ, փառակա՛զմ, վաւերական մտանաններ,  
 Որոնց ըսկիտըր յանախ կը դըրոշմէ՛ք ցուկը ձեր,  
 Որ ձեր կաշին ձեր թռոններն օր մը դիտեն ու տակա՛ն...:

Այսքան տարի... եւ ինչպե՛ս դեռ չէք ուզեր ըմբռնել  
 Թէ այդ գիրք չէ՛, այդ գռչք չէ՛, այլ՝ սքնանկի նեղ տամար,  
 Զոր լաւագոյն է այրե՛լ, մեր փրկութեան իսկ համար...:

Ո՛չ, կը սրտե՛ք դուք բոլոր. գագանը մե՛նք էինք նեղ...  
 Ո՛վ սերունդներ, իմացե՛ք, բարդազը մե՛նք էինք, մե՛նք...  
 - Աստուած, ինչպե՛ս, ես ինչպե՛ս իմ ցրմաբխ հաւատում...:

Ս. ՄԱՀԱԿԵԱՆ

24

Հրդեհումըսայ

Ինչպէ՛ս կրցար այս անել,  
Այս անյատակ վիհին մէջ  
Իսկ վառել ջահըդ անշէջ  
Ու գայն լոյսով լեցրնել...

Երկիւզը գիս կը պատէր,  
Վըրաս յանկարծ կու գար դող,  
Կառքն օրերուս քաւալող  
Երբ այդ վիհին կ'ըլլար մերձ...

Կ'ուզէի կո՛յր ըլլալ, խե՛ղք  
Ըլլալ, խրցե՛լ ականջներս,  
Իմ օրերուս տալու վերջ  
Կ'ունենայի տենջն ու տենդ...

Բայց վախ չունիմ ալ վիհէն  
Քանի որ քեզ ունիմ ես -  
Կ'անցնիմ այդ վի՛հը այլեւս  
Սիրոյդ կամանչ կամուրջէն...

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ



Թողէ՛ք հանգիստ  
Փռչին անունց,  
Ու բազմախոց  
Սրտերը մեր:

Հերի՛ք ճառէք  
Չախտն, աջէն -  
Թողէ՛ք ննջե՛ն  
Ձոռերը հէք:

Մի՛ վայէք ալ,  
- Տաւերը մեծ  
Պէտք է սրգալ  
Լըսուքեան մէջ:

Ինչո՞ւ՝ զերբ օձ՝  
Ամէն գարուն  
Կը քարէք քո՛յն  
Անմեկ տըզոց...

Սո՛ւտ է ձեր սուգն  
Ու վիշտը՝ կեղծ -  
- Խօսի պատուք,  
Արցունքի գեղձ...:

Ինչի ի սէր  
Որ կ'ուզէք, մի՛,  
Ալ մի՛ հիւսէք  
Անունց դափնի,

Թողէ՛ք հանգի՛ստ  
Ձոռերը հէք...:

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

## Գիշեր մ'Ապրիլի

Գիշեր մ'Ապրիլի գարունի բոյբը ծառերում վրայ,  
Բերկրանքը հողին ու ծլարձակման խռովքը անուր,  
Տարածուած ինչպէս կանանչ ալիքներ դաշտերում վրայ,  
Հոգիներու մէջ ծաղկոյ նշնի եւ մշտական հար,  
Յայտի բռնկոյ բոցեր կապտաւուն եւ գարուն, գարուն:

Գիշեր մ'Ապրիլի երբ բեղմնաւորման սարսուռը սակայժ,  
Երդիքներու տակ կը վառէր լոյսը վազուան կեանքներուն,  
Շրք սրտերու մէջ սէրը հրաբորբ՝ ակօսներ բացած  
կը սերմանէր հոն ապրումի տեղը գարնան յայգերուն –  
կեանքը հոն կ'երգէր, հովի շրթներով, երգերն իր անհուն:

Գիշեր մ'Ապրիլի – սակայն այդ գիշեր ձեռք մը **ոճրափիւռ**,  
Հոգիի ժանրով ֆոզարկած գոյքն իսկ աստղերէն հասող,  
Մարեց յայտըր հայ երդիքներուն եւ խաւարն անհուր՝  
Սփռեց տունէ տուն եւ դաշունահարեց գարունը ծաղկոյ,  
Հայուն սրտին մէջ – գարունով լեցուն, գարունով ապրող:

Գիշեր մ'Ապրիլի դարձաւ խստաշունչ ձմեռ անբերրի,  
Բերկրանքը հողին՝ մթամած դարբան սերմերուն սառած,  
կեանքը փրացաւ նայուածքներու մէջ՝ գիշեր մ'Ապրիլի  
եւ այրիացած գարունն այդ դժիւմ, գարունն այդ խոցուած,  
Դարձաւ շիրմաբար, դարձաւ փայտայտաչ մեր լոյսին մարտ:

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԵՆ



ԵՂ. ՏԱՄԱՊԵՏԱՆ

# Մտնայնայն

Մեր աշխատակիցը այս գրութեան ձեռագրին կցուած նրկա-  
զով մը կը յայտնէ թէ մեր յատուկիկայ քիւնքէն մէկուն համար  
սկսած է սրբէն պատրաստել գրութիւն մը որ պիտի կոչուի--  
«Ապրիլեան եղեմագործութեան պատմական քաղաքագրութիւնը»:

Մեռելնէ՛րը...

Բայց անո՛նք, որոնց մտեղէն գոյու-  
թիւնը ճենճերեցաւ զաղափարական պայ-  
քարի մը կրակներուն մէջը.

Անո՛նք, որոնք այդ պայքարի յա-  
ռաջական դիրքերուն վրայ ինկան՝ ի-  
րենց փուշէ կամ դափնիէ պատկով.

Այսինքն՝ մեռելնէ՛րը, երբ նաճա-  
տակ են տեսնը...

Անոնց ձայնը չի խեղդուիլը հողին ու  
քարին ճնշումէն եւ միշտ թելադրական  
կը հնչէ ապրողներու ականջին.

Անոնց պատկերը չի խաթարուիլը  
տարբալուծման օրէնքէն եւ միշտ կը մը-  
նայ պայծառ տեսիլքը սերունդներու ե-  
րազին:

Անոնք «մահուամբ զմահ կոխեն»:  
Այսինքն՝ մնայուն քաղաքացիները կ'ըլ-  
լան ապրողներու աշխարհին, բայց, այս  
անգամ, իրենց ոգեղէն անձերուն բազ-  
մապատկուած զօրութեամբը ներգործե-  
լով այդ աշխարհին: Անոնք իրենց կեան-  
քին օրինակով ժողովուրդներու զաղա-  
փարական շարժումները կը լարեն: Ա-  
նոնց կենսագրութիւնը պատմութիւնն է  
իրենց ժողովուրդին. անոր անցեալին  
դաշտը, ուր իր արմատները կը խրէ ապ-  
րող ազգային զանգուածը՝ անկէ քաղե-  
լու համար իր ներկան կենսագործող ա-  
ւելչը: Եւ վա՛յ այն ժողովուրդին, որ  
չինքը մեռելներուն կապող հաղորդակ-  
ցութեան երակը կը փրցնէ:

••

Մեր մեռելնէ՛րը, մեր ազատագրա-  
կան պայքարին նահատակնէ՛րը...

Ազգ մըն են անոնք իրենց համարե-  
լով ու որակով եւ անաւարտ պայքարի  
մը պարտուած զոհերն են տակաւին:

Անոնք ուխտը ըրին՝ եղեմագործ  
ցեղերէ վայրենարար յօշոտուած իրենց  
հայրենիքը վերստին օժտելու՝ իրենց ժո-  
ղովուրդին բարօրութեան եւ մարդկային  
քաղաքակրթութեան սպասարկու ազա-  
տութեամբ մը, բայց ինկան իրենց խո-  
յանքի ընթացքին՝ իրենց տեսիլքին վը-  
րայ բաց մնացած աչքերով: Անոնք, ի-  
րենց առաքելութեան ճամբուն վրայ,  
մեր պատմութիւնը արիւնի պատարագ  
մը ըրին, բայց իրենց պղպղացող արիւ-  
նի գեռ չէ սփոփուած ոճրագործին աբ-  
ցունքով:

Ահա թէ ինչո՛ւ, այսօր, մեր նահա-  
տակներուն վիթխարի թափօրը խոռովա-  
յոյզ ովկիանոսի մը պէս կը տատանի իր  
ցաւին ու բողոքին փրփուրը թքնելով մեր  
աշխարհի գործերը կարգաւորող մեծ ազ-  
դերուն պղտիկ խցճմտանքին վրայ:

Եւ անա թէ ինչո՛ւ մեր նահատակ-  
ներուն ուխտը իրենցմէ մեզի աւանդ-  
ուած նուիրական կտակ մըն է այսօր:  
Ձիրենք ներշնչող տեսիլքը մե՛րն է հի-  
մա. տեսիլքը ազատ ու ամբողջական  
հայրենիքին: Ու մե՛րն է վճիռը այդ տե-  
սիլքը վերածելու մեր ժողովուրդին նիւ-  
թեղէն սեփականութեան:

Նւ այսօր, երբ համազգային պաշտամունքով անլամ մը եւս կը խոնարհինք մեր մեռելներուն առջեւ, անոնք միակ պատղամ մը ունին սպրող սերունդներուն.

Հաւատարի՛մ մնացէք մեր կտակին:

Այդ պատղամը կ'ըլլայ զսպանակը թուլցած հաւատքներուն, կ'ըլլայ խթանը վհատած կամքերուն, կ'ըլլայ կրակը մարած ոյժերուն: Բայց անիկա կ'ըլլայ մանաւանդ մաքրուանչ փոթորիկ մեր հոգիներուն մէջ: Դուքս կը ջշէ հոնկէ փոխադարձ ատելութեան եւ կիրքի աղբակոյտը, կը բանայ մեր ցեղային զգայութիւններուն մաքուր ենթահոգը, կը բանայ մեր դաղափարական ապրումներուն պայծառ մթնոլորտը, ուրկէ կը կարկաչէ երգը համազգային եղբայրութեան.

Եղբայր եմք մեմք, որ մըքիտու էինք  
զատուած.  
Բախտիմ ամէն յիս շարաննգ ի մի  
հաղթայր ցրտիմ ի բաց:

Պաշտամունքի հանդիսաւոր պահուն, հայ հոգիներէն ճանաչող սա երգը յաւերժանա՛ր հայ շրթունքներուն վրայ. ըլլա՛ր՝ հայ հոգիներուն վրայ կամաբուող խաղաղութեան եւ համբարաշխութեան ծխածան. ըլլա՛ր՝ հայ հոգիները եղբայրութեան պսակով կապող նարտի հանգոյց. բայց ըլլա՛ր, մանաւանդ, ուղեղէն կամուրջ մայր երկրի սահմաններէն նետուած Սփիւռքի հեռաւոր ակերուն:

Կամուրջ՛ ուրկէ այլեւս մեր ժողովուրդին տարադիր զանգուածները զա-

լէին՝ իրենց կոնակը տուած օտար աշխարհներու խարդախ հրապոյրներուն եւ իրենց ճակատը դարձուցած Արազածի յաւերժայտ կանթեղին, կամ իրենց նայուածքը նետած Արարատի աստուածամերձ բարձունքին, ուր իտէային Բեազաները աստուածներու ձեռքով մշակուած էտրվայսները կը ճարակին՝ զալէին մտնելու համար վերջապէս այն երկիրը, ուր օր մը մեր բոլորին պապերը մտան թափառիկ ցեղի մը վաչկերով, բայց ուր հոյակապ արուեստի մը կոթողները կանգնեցին. ուր նիւթին անկերպարան զանգուածէն մեր պալատներուն շքեղութիւնը կերտեցին, ուր ամէնէն բիրտ, ամէնէն նիւթեղէն նիւթէն մեր տաճարներուն ողեղէն խորհուրդը յօրինեցին:

Կամուրջ՛ ուրկէ այլեւս թափառական այս ժողովուրդը զալէր ընդառաջելով մայրենի կողին, զալէր հաստատ ու վճռական զայլերով, մտնելու համար այն երկիրը, ուր օր մը մեր բոլորին պապերը մտան հովիւ ժողովուրդի մը նախնական ցուպովը, բայց ուր ազատ ու անբռնակալ իշխանութեան մը ժականը ունեցան իրենց ձեռքին:

Կամուրջ՛ ուրկէ հայրենակարօտ այս ժողովուրդը զալէր, բայց զալէ՛ր հայրենադարձ պանդուխտի անվերադարձ ջայլերով, մտնելու համար այլեւս այն երկիրը, ուր օր մը մեր բոլորին պապերը ծնան զաղաքակրթութեան նախնական խանձարուրով, բայց ուր ազնուական մշակոյթի մը ծիրանի ստապնը հիւսեցին:

Ե. Տ.

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

**ՍԵ Ա.Լ ԱՄԻՍԸ...**

Դժուար է խորհրդածութեան նիւթ դարձնել Թուրքը:

Հայ կամ օտար գրողին համար՝ արժանապատուութիւն վիրաւորող գոյութիւն մըն է ան:

Պատմութեան ճամբով ու ականատեսներու վկայութեամբ մեզի հասած սպաւորութիւնները այնպիսի հոգեվիճակ մը ստեղծած են մեր մէջ, որ անըմբռնելի ճաշակ մը կը տեսնենք ամէն անոնց մօտ, որ զանազան հաշիւներով, ասպրելու իրաւունք կ'ուզեն տալ իր թրջութեամբը միայն ծանօթ այդ խուժանին:

Ի՞նչ ունի Թուրքը, որ ներշնչումի աղբիւր ըլլայ գրողին: Բարոյական արժէքի մտօին առաւել կամ նուազ հետաքրքրութիւն ցոյց տուող կոյս անտառներու բնակիչներէն ու լուսինը ջուրի ճամբայ դարձնել ուզող սպաւորէն ո՞ր մէկուն կրնանք բարեխօսել, որպէսզի տեղ մը արուի այդ սեւ ենթակային:

Թուրքը եւ գիտութիւնը, Թուրքը եւ արուեստը, Թուրքը եւ... այլ լստիութիւնը, ստեղծագործութիւնը, վերջապէս՝ Թուրքը եւ մարդը մարդու ստորճանին վրայ կանգուն պահող պայմաններուն ամէնէն աննշան նըկատուածը ի՞նչ կապ ունին եւ ո՞ր կէտի վրայ կրնան հանդիպել իրարու: Այդ բոլորին համար ու այդ բոլորին... դէմ՝ ան ունի ճիշդ այն ատելութիւնը, ինչ որ ունէր անցեակին, երբ օրեց իւրայատուկ իր եաթաղանը, որուն վրայ սաք է տակաւին արիւնը մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

Միայն ենք բոլորս եւ յանցաւոր: Թուրքին արարքը գրական մթնոլորտի մը մէջ տալու մեր ճիգը՝ ազնուութեան մէջքին իջնող անխնայ հարուած մըն է եւ աւելորդ աշխատանք մը՝ երեսակայութեան համար: Որովհետեւ՝ Թուրքին ըրածը արիւնի բաղմապատկութեան հասարակ գործողութիւն մըն է, որուն համար շարժեր շարժման մէջ զննել գրողին երեսակայութիւնը:

Թուրքը պէտք է ներկայացնեն անդրազէտները, հազիւ պատմել կըրցողները, որպէսզի արար աշխարհ դիտնայ թէ գրականութեան ու արուեստին ծանրութիւնը իր թեւերուն վրայ բարձունքէ բարձունք տանող երեսակայութիւնները չեն միայն որ կրնան ցնցել հոգիները, այլ անոնց կողքին կան անժամանակ շրջաններէ մեզի հասած անասնական բնազդի արարքներ, Թուրքինը օրինակ, որոնք իրենց չոր էրականութեամբը՝ շուքի մէջ կը ձգեն կարողութեան սահմաններէն ճամբայ ելլող ամէն տեսակի երեսակայութիւնները:

Աշխարհի բոլոր գրադէտները եւ ամէնէն առաջ հայ գրադէտը՝ պարտւածներ են միայն Թուրքին գիմաց, որովհետեւ պիտի չունենան իրենց տրամադրութեան սակ զայն բնորոշող համապատասխան բառեր:

Կարելի չէ ներկայացնել Թուրքը: Թուրքը՝ որ իր անցեալին մէջ կ'ապրի ներկան եւ որուն ապագան՝ խոշորացոյց մըն է իր անցեալին վրայ:

Այո՛, դժուար է թրջադրութիւնը: Որովհետեւ ապրելու սահմանուած ստեղծագործութեան մը ատաղձը հողիէն կ'անուրի եւ կը կրէ անոր ազնուութեան կնիքը: Ո՞վ պիտի ուզէր բանալ մաքուր իր ներաշխարհին դուռը եւ հակադրելով Թուրքը իր եսին՝ քաջութիւնը ունենար արեան ճապաղիքի մէջ խնդրելու դրողին այլապէս ճշմարիտ ստեղծագործութեան սահմանուած ամէնէն ազնիւ դրացումները:

Ոչ մէկ ազամանը կրնայ դիմ քաշել Թուրքի ապսկիին վրայ: Կարելի չէ շարժման մէջ դնել այլասիրութեան որեւէ մէկ բարեացակամութիւն, որպէսզի կարելի ըլլայ մօտենալ Թուրքին, առաջինութեան հետք մը դըռներու ակնկալութեամբ: Ֆիդիքական արտերէ միայն ի՛նք վարակուող այս արքայուշը, բարոյական սնանկութեամբ... այրող հասարակ մտքացկան մըն է: Թուարանական ամէնէն պարզ դումարումի ատեն, երբ անսնական բնագրի նոր տեսակ մըն է աւելցուելիքը՝ բազմապատկութիւն ուզող անպատկան է Թուրքը, իսկ երբ մարդկային դիմ մըն է առաջարկուածը՝ հանումի գործողութիւն պահանջող լիբը մը, միւսին... անուշութիւնը չկորսընցնելու մտահոգութեամբ:

Մարդ էակին ծնունդէն առաջ դոյութիւն ունեցած բան մըն է ան, մարդատեսաց շատուածի մը դաւաւորութեամբ ու մեր հասցէին ծրարուած, անբարոյութեան ու թոյնի որպէս լաւադոյն նմուշ:

Թուրքը թրջացնող բառամթերքին անբաւարարութիւնն է հայ մարդուն միակ տաղնապը, որուն փոխարէն սակայն ու որպէս հակադրեցութիւն՝ լծուած է աշխարհաչն այն տեսակ գործի մը, որ Թուրքին ողնասիւնը ալիւրի վերածած է այսօր:

Անկարելի է անոր մասին առանց սեւադրութեան բան մը դրելը, ինչպէս որեւէ նիւթի մասին, եթէ բծախնդրութեան մտահոգութիւնը կայ դըրողին մօտ: Թուրքին սեւադրութիւնը սակայն, տարբեր է միւսներէն, որովհետեւ անկարելի է զայն... մաքուրի քաշելը: Նիւթ մըն է ան, որուն համար գործածուող մեխանիկ կաթիլ մը եթէ թափի Սեւ Մովուն մէջ՝ չանձուկեր կը վիտան շուրջը:

Այսօր մտածածը նուազ դաւադիր է ու անաւոր՝ քան վաղուանը: Անոր սեւ պատմութիւնը ամբողջական պիտի չըլլայ եւ միշտ պարապ էջեր պիտի ձգուին արիւննապիր նոր արձանագրութիւններու համար:

Հարցաքննութեան կանչուած ոճրագործ մըն է ան, որուն գործելիք ոճիրները եւս կրնաս բարդել վրան, առանց նսեմացնելու արդարադատութեան այն օրէնքը, որուն տրամադրութիւնը յստակ է լղործուած յանցանքներու նկատմամբ:

•

Միակ սխալը՝ իր ծրագրին գործադրութեան համար ընտրած... ամիսը եղաւ: Նահատակուեցանք, սակայն թաղուողը եղաւ ինք: Ապրիլը եղաւ իր ոճերի միւսը, եւ նոյն այդ ապրիլը փոխանցուեցաւ մեզի, որպէս միակ ժառանգութիւնը մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

Ա. Ն.

**Բ. Վ. ԱՆԻԱՍԱՐԴԵԱՆ**

**Ռազմաբարձր Կայսրություն**

Մարդկային պատմության մեծ կայսրությունները կիրտողները դարձած են պատմարժան մանաւանդ այն ատեն, երբ յաջողած են, որքան հնար է՝ ընդունելի դարձնել տիրողին լուծը, ենթակայ ու հպատակ ժողովուրդներուն համար:

Հին Հռոմէական կայսրութեան 500 տարիներու երկարամեայ շրջանի բարձրագոյն ժամանակներէն մէկն ալ այն է, որ ամէն այնտեղ, ուր կը հասնէր Հռոմի դրօշը, հոն՝ հռոմէական լեզուներուն հետ միասին Հռոմէական Օրէնք կը հաստատուէր:

Եթէ Բիւզանդիոնն ալ տոկաց շուրջ 500 տարի, ասոր անառարկելի պատճառներէն պէտք է նկատել, որ երկիրները զբաղող անոր վաշտերը՝ Բիւզանդիոնի իշխանութեան եւ արուեստին վեհապետութիւնը միասնաբար կը հաստատէին:

Նորագոյն ժամանակագրութեան մէջ սուսնձորէն ուշագրաւ է Բրիտանական կայսրութիւնը՝ շուրջ 12-500-000 քառ. մղոն ծաւալով եւ մօտ 500-000-000 բընակիչներով: Հիներու չափ երկար շտեւեց այս կայսրութիւնը, հասկնալի պատճառներով: Հակապղծատիրական պահանջներով ու պայքարներով յորդարուի այս դարը չէր կրնար թոյլ տալ, որ կանգուն կայսրութիւններ մնան: Եւ սակայն, այն փաստը, որ չկազմալուծուեցաւ ու չկործանեցաւ բրիտանականը, այլ փոխակերպուեցաւ Հասարակապետութեան՝ ապացոյց է այն իրողութեան, որ իր ատենին երկիրները զբաղող բրիտանական նաւատորմիչները՝ զօրքի հետ միասին ցամաք հասած էին նաեւ այլ բան՝ կանոն ու կարգ, եւ դիտակցութիւն կարգապահութեան:

Ինչպէս ասոնց, այդպէս ալ այլ կայսրութեանց պարադային, անոնցմէ

իւրաքանչիւրը ունեցաւ իրեն յատուկ չազգային հանճար՝ մը, որմէ բխող բարիքները – որպէս համամարդկային արժէք եւ առաքինութիւն – թերեւս չափով մը մեղմեցին ո՛րեւէ ժողովուրդի համար այլապէս անընդունելի օտար լուծը:

Ամենահամառօտ զբնդհանուր պատմութեան հատորն իսկ հարկադրաբար պէտք է յիշատակէ նաեւ Օսմանեան կայսրութիւնը, որ 1326-ին հիմնուած ըլլալով, շուրջ 600 տարիներու կեանք մը ունեցաւ:

Մոնղոլածին Թուրքին ձեռակերտը ըլլալով, լուրջ պատմաբաններու միաձայն վկայութեամբ՝ Օսմանեան կայսրութիւնը տոկաց ու տեւեց այսքան երկար, շնորհիւ իր ռուբ ու հուրքին:

Եւ այս ռուբ ու հուրքն ալ՝ այդ կայսրութեան արգային հանճարը համարուեցաւ:

Որով, հարկաւոր է այդ ռուբ ու հուրքը առնել անտուտ մանրացոյցի տակ, եւ զայն Կնաւատել անկողմնակալ կըլռաքարով:

Ինքնին հասկնալի է, որ անհնար է ռուբ ու հուրքէն անջատել կռիւ եւ պատերազմ, կործանում եւ աւեր. վայրագութիւն, նոյնիսկ: Միւս կողմէն, բարձրակարգ ճշմարտութիւն է, որ չէ զբառնում կայսրութիւն, որ զփրաբուժական ձեռնոց հազնելով հողամաս մը ուրիշէն անդամահատած ու իրեն կցած ըլլալ:

Եւ սակայն, եթէ ամէն կռիւ ու պատերազմ անպայման նաեւ աւեր ու կործանում կ'ենթադրէ, ան կրնայ ապացոյցն ըլլալ նաեւ այլ իրողութեանց:

– Որ կուտոնն ու պատերազմողը ստովուրմակ է, քաջ, արիտափրտ ու անվախ, արկածախնդիր այնքան, որ կ'ար-

համարիւն մտիր եւ իր դրօշի յաղթանակի սիրոյն՝ սիրով սեփական կեանքը կը Ուիրարքերէ :

Եւ այս ալ անուրանալի հանճար է . մանաւանդ՝ ազգային հանճար :

Կր մնայ ստուշի, թէ արդեօք Քուրքին ճուր ու հուրն ալ ա՛յս իմաստով ու բովանդակութեամբ կը ներկայանայ պատմութեան մէջ :

Այս պրութիւնը խորագրին վերլուծում մը չէ Յինկիզ Սաներէն ու Քիմուր Լիւնկերէն սերած ասպատակողներու գինուորական յաղթութեանց բնոյթին : Դարերէն քաղուած վիճակագրական տախտակներով չէ, որ պիտի ստուգենք մարտական նկարագիրը այդ յաղթութեանց հեղինակներուն :

Պարզապէս, ամբողջական օրգանիզմէն պիտի առնենք մէկ հատ նմոյշ : Եւ սակայն, ան պիտի ըլլայ ախտաճանաչումի ծառայող այն վոքաբոյնն նմոյշը, որ մանրադիտակի տակ դրուելով, կը բացայայտէ, որ կա՞յ թէ չկայ՝ ամբողջութիւնը վարակած «բաղակեղ» :

Հարիւր կլոր թիւը կարգ մը հետքեր ձգած է պատմութեան մէջ :

Օրինակ, կայ այն պատերազմը, որ մղուեցաւ Փրանսայի եւ Անգլիոյ միջեւ եւ որ ծանօթ է Հարիւրամեայ Պատերազմ յատուկ անունով :

Կան Նափոլէոն Պոնափաբթին կապուած այն Հարիւր Օրերը, որոնք երկարացան 1815 Մարտ 20-էն մինչեւ Ուաթերլուի վերջնական պարտութիւնը՝ Յունիս 28-ին :

Գուցէ մեզի անծանօթ՝ պատմարժան «Հարիւր ժամեր» գոյութիւն ունին : Թուրքն ալ կոչուած է մասնակցելու այս հարիւրներուն, բացառաբար զինք ընտրող ու յատկանշող, եւ մարդկային պատմութեան մէջ տակաւին եզակի «Հարիւր վայրկեան»ով մը :

Այս տարի պիտի հրատարակուի Հայր Գրիգոր վրդ. Կէրկէրեանի հաւաքածոն՝ 1918-ի Զարդերուն առնչուած հաղարարու անտիպ վաւերագրերով : Նոր փաստերու այս անսպառ հանքը ունի մէկ հատ փաստաթուղթ, որ անպարզանցե-

լի է, որպէս անուու ախտացոյց եւ հարգատ հայելի թրքական ճուր ու հուրն ի հարազատ էութեան :

Կարելի է յայտարարել՝ անվարան ու ստոյգ՝ թէ համամարդկային պատմութեան մէջ չկա՞յ աղբ, չկա՞յ ցեղ, չկա՞յ ժողովուրդ, չկա՞յ համայնք ու չկա՞յ մարդկային որեւիցէ՝ հաւաքականութիւն, որ ունենայ իր նկարագիրը այսօր անոր բացայայտող վաւերագրի . ան ալ՝ «Հարիւր վայրկեան»ի :

Բայց, ինչի՞ մասին է խօսքը :

1914-ի աշիան ամիսներն են : Իթթի-հատի Կեդրոնական Կոմիտէն արդէն տըւեր է իր միաձայն որոշումը՝ «բովանդակ հայ ժողովուրդը բնաջնջելու մասին : Կազմուած է հրեք անհատներէ բաղկացած «յատուկ» մարմին՝ «Երազիրը կիրառելու պարտականութեամբ :

«Յատուկ» մարմինն կ'անդամակցին Տօքթ. Պեհաէտտին Շաքիր, ոստիկանական նախարար Տօքթ. Նազըմ եւ Շիւքրի պէյ : Կէրկէրեան վարդապետի հրատարակելիք հատորին մէջ կայ «առնագրութիւնը այս մարմինի մէկ «պրօզագրան» նիստին, որ տեղի ունեցած է 1914-ի Նոյեմբերին . - ստոյգ թուականը արձանագրուած չէ :

Առնագրութեան դատելով, նիստը տեւած պիտի ըլլայ մէկ ժամ եւ 35-40 րոպէ, այն է՝ Հարիւր վայրկեան :

Ստացեալ վեց դար ամբողջ՝ հայելիացած են այստեղ :

«Հարիւր վայրկեան»ը կը բացուի Պեհաէտտին Շաքիրի սա խօսքերով .

«Սիրելիներ, մեր վրայ առած իմ պատասխանատուութիւնը՝ շատ կարեւոր եւ շատ ծանրակշիռ պարտականութեամբ մը : Եթէ պատահի, որ զայն կատարենք թերի կամ կիսով, իմպլու եղաւ առաջիմ բարդերու ատեն, ակնթարթի մը կտակածը յռնեմաք, թէ աննար կ'ըլլայ յուսափիլ Հայոց փոյլը՝ իմ» :

Նախաբանէն ետք, Պեհաէտտին Շաքիր անմիջապէս կ'անցնի երբեք «պարտականութեան» առնչակից հանդամանքներուն . կարճ ու կտրուկ .

- Աշխարհ պատերազմի մէջ է : Խըն-

դէր չկայ ունէ մէկուն հաշիւ տալու մասին: Մէկ հարուածով՝ մարդկութիւնը կը դառնի կատարուած իրողութեան անջեւ: Նման առիթ պատմութիւնը յաճախ չ'ընծայիր:

Սակայն:

Իր խօսքին թափը զիտաւորեալ «սակայնոյ» սահմող Պեհաշտտին Շաքիր արդէն յաջորդ է սնոր լուծումը: Տարաւոր չունի, թէ չարիւր վայրկեան հոք, ապահոված պիտի ըլլայ իր գործակիցներուն լրիւ ու անվերապահ հաւանութիւնը: Միայն վստահ չէ, թէ կրնա՞յ այդ հաւանութիւնը տասը-քսան վայրկեանէն ունենալ:

Հարկադրութեամբ, խնդրին կը մօտենայ անուղղակի՝ սեփական հարց ու պատահանով:

Կը խօստովանի, թէ «ամէն մարդու գործ չէ» ողջ ժողովուրդ մը բնաջնջել: Կը հարցնէ իր գործակիցներուն.

«Ո՞րն է այն ուժը, որուն կարելի է վստահիլ բնաջնջումը բոլոր Հայերու, մինչեւ յետիմը անոց մէջ, եւ տոանց բացառութեամբ»

Կը մտախօսէ, մէկ առ մէկ թուելով.

- Բանա՞կը արդեօք, ո՞չ, չ'ըլլա՞ր: Գուցէ ոստիկանութի՞ւնը՝ ո՞չ, դարձեալ չ'ըլլա՞ր: Միթէ՞ ինք, Թուրք ժողովուրդը՝ ո՞չ, այդ եւս չ'ըլլա՞ր:

Այս մտածուած «չ'ըլլար»ները անմիջապէս կը հասնին իրենց նպատակին, երբ անհամբեր Շիւքրին կ'ընդմիջէ Պեհաշի խօսքը հետեւեալ բացազանչութեամբ.

«Եթէ բանակ ու ռազմաբանութիւն պիտի չօգտագործես, այն ատեն դժոխքի ո՞ր մէկ ուժիմ պիտի վստահիս բոլոր Հայերը՝ մարդ, կիմ, երեխայ ու երեց բնաջնջելու գործը»:

Այս հարցումին սպասող Պեհաշ ունի տրամաբանական ու ճշմարտախօս պատահան.

«Ճիշդ է, զիմուսը վարժուած է ըստ պանծելու: Սակայն Յայը չեմ ոճիրն ու պատերազմը: Այս պարագայիմ՝ յոնիք չկայ Հայութեան դէմ պատերազմելու

մասին: Մեզմէ պահանջուածը այն է, որ մէկ առ մէկ Հայերը առնեմք, կայսերմ անոց ձեռքերը եւ այդ անպաշտպան վիճակիմ մէջ՝ գանձեմ յողջոյն տանք: Այս ձեռով պիտի յօշոտեմք կիմ, երեխայ, մարդ՝ մինչեւ ամենավերջիմ գառամեայ հայրմանք: Անհնար է պատերազմի մը տարազը հագուեցնել այս կարգի գործողութեան մը: Պարզ ըսած, արիկա վայրեմի ռմբագործութիւն է»:

Եւ այդ, կը բացուի Պեհաշի մտքին մէջ արդէն արբուսքի հասած լուծումին առաջին ծախքը.

«Նման յատուկ գործի համար հարկաւոր է յատուկ ուժ: Յատուկ ուժ մը, բազիլացած յատուկ, մասնագիտացած մարդացմէ»:

Ճշմարտութեան դէմ մեղանշած ընդլայն համար, պէտք է արձանագրենք, որ այս Հարիւր վայրկեանին մէջ կայ այն բոլորն, երբ Թուրքին՝ Շիւքրին՝ խեղճը կը... խրտայ:

«Կը խնդրեմ, Պեհա, եթէ կ'ակնարկես այն մարդոց, որոնց մեր վարիչները գրկած են քաղաքացիական ամէն իրաւունքէ... այժմէն ըսեմ, որ հակառակ եմ», կը բացազանչէ Շիւքրին:

Սակայն, երբ Պեհա կը բացատրէ, թէ ինչպէս՝ մէկ ամտուան մէջ՝ հնարաւոր է կազմել տանեակ հազարաւոր զմանազան ոճրագործներէ՝ բազիլացած «յատուկ ուժ»ը, թէ Թալէաթ ամէն կերպ պիտի աջակցի անոր, թէ ինչպէս պիտի կիրառուի տեղահանութեանց, թալանի ու ջարդի ծրագրերը, Շիւքրին խեղճը արագ ու անմիջապէս շիտակ տեղը կը դառնայ, եւ այս անգամ, ան իր հիացումը կը վկայէ.

«Լուծած ես հարցը, սիրելի Պեհա, եւ ինչ արմատական ձեռով: Կը շնորհաւորեմ քեզ յաջացած յատուկ ուժիդ համար: «Յատուկ ուժ» ա ինչ արդիւնեղմ բանա՞ն. պրաւօ, պրաւօ»:

Հարիւր վայրկեան. եւ կը ճշդուին ու կը լուծուին «չափ կարեւոր ու շատ ծանրակշիւ պարտականութեան» բոլոր մանրամասնութիւնները:

Հարիւր վայրկեան. եւ կը ճշդուի

ու կը լուծուի նաեւ այն, թէ ո՞րն է իսկական բնոյթը Թուրքին յատուկ շարքի ու հուրքին:

Հարիւր Վայրկեան. եւ կը ճշդուին ու կը լուծուին վեց զարբերու զաղտնիքն ու բանալին:

- Մեր, Թուրքերուս ընելիք զործը այն է, որ առնենք Հայերը մէկ առ մէկ, կապենք անոնց ձեռքերը եւ անպաշտպան այդ վիճակին մէջ՝ զանոնք խողխողել տանք ուրազործներու ձեռքով:

Եւ որովհետեւ անհնար է առարկել, թէ գերագանցօրէն թրջարար՝ է շարք ու հուրքի նման լոբաւում եւ կիրառում, ինքնաբերաբար կը հետեւին ստուգում պահանջող հարցումներ:

- Ինչպիսիք արտայայտութիւն մըն է Պեհաւի Երազիրը: Անոր մէջ ի՞նչ կայ ճշմարտօրէն մարտունակ մարդը յատկանշող: Արիւթեա՞ն վկայութիւն է առաջարկուած - ու ետքէն զործարդուած - ձեւը՝ ողջ ժողովուրդը մը բնաջնջելու:

Ո՛չ:  
Պատմութեան տակաւին լրիւ չհերքուած մեծ սուտերէն է, որ Թուրքը ճշմարտունակ է, ճշմարտակարգ կրուող, բայց մանաւանդ՝ ճանվախ ու արիւն:

Ճիշդ է, միջազգային լուրջ պատմազրութեան մէջ չկայ որեւէ արձանագրութիւն, թէ Թուրքիա տուած է Աղէքսանդրներ, Կեսարներ, Ժան Արքեներ, Սուլթաններ, Ռաշիդներ ու Արապի փաշաներ: Ոչ ալ Վարդաններ ու Փէորդ Չաուշներ է տուած, երբեւէ:

Այնուամենայնիւ, եթէ ոչ լուրջ պատմազրութեան, սակայն բազմաթիւ գրական երկերու մէջ Թուրքը ներկայացուած է որպէս անարասփ ու անազնացի կռուող, մէկը, որուն ճշմարտին հանճարը որեւէ այլ առաջինութեամբ եթէ յատկանշուի, սակայն օժտուած է ռազմական խստօրէն խիտ խառնուածքով:

Սո՛ւտ:  
Միայն Փոթիովքիներն ու Սուլթո-

րովները չեն, որ Հարդուփշուր ըրած են Թուրքը:

Տակաւին 1683-ին լեւ Սուլթանքին, միայն 50.000 անկանոն ուժերով խելահորոյս փախուստի մատնեց 275.000 զինուորիկներէ բաղկացած օսմանեան կանոնաւոր բանակը: Սերպ Ուրեկովիչի ճիշտութեանը զայբայցին այդ հարկնաւորի հայրենիքին մէջ հաստատուած օսմանեան հակայական ուժը: 1831-ին, Մոհամետ Ալի եւ զօրավար Իպրահիմ փաշա խորտակեցին Օսմանցիներու անհամեմատ գերակշիռ զինուորական ուժերը: Եւ այսպէս, մինչեւ փոքրիկ կրէտէի մը ապստամբութիւններն ու պալքանեան պատերազմները: Այսպէս մինչեւ անմոռանալի այն քանի մը օրերը, երբ բուռ մը վերապրող հայութեան իսկապէս արի՛, կախարդօրէն քաջ ու ռազմունակ բազուկը Հախիշիտեց ու փախցուց Թուրքիոյ բանակիկը՝ Ղարաբեղիւնէի, Սարտարապատի եւ Բաշ Ապարանի առջև: «Սուր ու հո՛ւր»:

Այո՛, ասոնք անքակտելի ու անեղծ յատկանիշներն են Թուրք ճազգային հանճարի: Անոր ամենատիրական բնորոշիչն են՝ անպայման:

Սակայն այնպէ՛ս - ու միայն այնպէ՛ս - ինչպէս այդ «հանճարը» կ'արտացոլուի թրջօրէն պատմարժան Հարիւր Վայրկեանի հայելին մէջ:

Ահա այդտե՛ղ, ճողազերծ կ'երեւի Թուրքին ճաշմութիւնը:

- Առնել Հայերը մէկ առ մէկ, կապիլ անոնց ձեռքերը եւ անպաշտպան այդ վիճակին մէջ խողխողել տալ զանոնք:

Որքան հարազատօրէ՛ն թրջալայել...

Անհնար է, որ այս մոլորակի վրայ դոնուի ուրիշ ժողովուրդ մը, որուն պարագային՝ բաւարար ըլլար անոր պատմութեանն առնուած լոկ «Հարիւր Վայրկեան»՝ միայն այդքանի՛ հիման վրայ վկայելու, թէ իր խօսքով, խորքով ու խառնուածքով մերկացուած է այդ ժողովուրդը:

Բ. Վ. Ն.



**Բ. ՔԱՇԵԱՆ**

**ՊԱՏՃԱՌԸ ԵՒ ԱՐԴԻՒՆՔԸ**

Կարծողներ կան, թէ Թուրքիոյ մէջ հայկական շարժերուն բուն պատճառը Հայ յեղափոխութիւնն էր, Հայ յեղափոխականներն էին:

Այս կարծիքը կրնար ճիշդ ըլլալ, եթէ Հայ յեղափոխութիւնն եւ յեղափոխականներէն առաջ, մենք Թուրքիոյ մէջ ապրած ըլլայինք իբրեւ հաւատար քաղաքի ընդհանրութիւն հետ:

Բրողութիւնն այն է, որ այդ երկրին մէջ մեր վիճակը գոնէ տանելի դարձաւ ո՛չ թէ յեղափոխութիւնէն ԱՌԱՋ, այլ յեղափոխութիւնէն ԵՏՔ:

Հայկական եղանակ օրերուն Պոլսոյ ամերիկեան դեսպանը Հենրի Մորկըն-Քուե իր յուշերուն մէջ կը գրէ.

«Երբ Թուրք մը փողոցին մէջ քրիտոնեայէ մը պահանջէր իր կոշիկները մաքրել, այս վերջինը պէտք է հնազանդէր, եթէ ոչ մահուան պատիժ կար»:

Դեսպանը կը շարունակէ.

«Երբս ուշադրաւ պաշտօնական վաւերացումները մըն է այն արտօնագիրը, զոր օսմանեան կառավարութիւնը մինչեւ Հարիւր տարի առաջ (1815) սովոր էր հանել իր քրիստոնեայ հպատակներուն համար: Անոր տառացի թարգմանութիւնն է հետեւեալը. «Ո՛վ դուն անկրօն քահանայ, որ արտաքսուած ես Աստուծոյ ներկայութիւնէն, զուն որ սատանային թագը եւ սեւ զգեստներ կը կըրես, պիղծ անհաւատներու հօտէդ (այսինչը) մեռած ըլլալով, — թէեւ իր օլորապիղծ մարմինը հողէն ընդունելի չէ, բայց քանի որ սոսկալի դարձանտութիւնը հանրութեան վնասակար պիտի ըլլայ, — տար պիղծ դիակը, փոս մը փորէ, նետէ զայն անոր մէջ, ստաբրովդ կոտորուէ անոր վրայ եւ ետ դարձիք, անհաւատ խողք»:

Այսպէս կ'ապրէին Հայերը Թուրքիոյ

մէջ, Հայ յեղափոխութիւնէն առաջ: Յեղափոխութիւնէն ետք, այս վիճակը փոփոխեցաւ: Կոշիկ չմաքրող Հայը այլեւս մահուան պատիժ չէր կրեր: Թաղման արտօնագրին մէջ ջնջուեցան «սատանային թագը», «պիղծ դիակը» եւ «անհաւատ խողք»:

Գարեգին եպիսկ. Սրուանձտեանց, Հայոց Պատրիարքարանին քննիչը, որ հայարնակ գաւառները զրկուեցաւ մասնաւոր առաքելութեամբ, 1878 Ապրիլին, ուսուեթուրք պատերազմի վաղորդայինն, կը գրէ իր արժէքաւոր մէկ գործին՝ «Թորոս Աղբար»ի մէջ.

«Թուրքերը նախատանօք կը վարուին Հայոց հետ, մարդու տեղ չեն դրնել. կը զրկեն, կը խլեն, կը հայհոյին, կը ծեծեն, եւ Հայք խոհեմութիւն կը համարին կրել ու լռել, որպէսզի կարող լինին ապրիլ, եթէ ապրիլ է այս» (մասն Ա., էջ 74):

Անգամ մը որ մարդ հաստատէ ապրելու եւ չապրելու այս յարամերձութիւնը, այլեւս ուրիշ բան չի մնար ընել, բայց եթէ համակերպիլ իր վիճակին, ընդունիլ զայն իբրեւ ճակտի գիր (զոչ իմացեալ մահ) եւ կամ չհամակերպիլ ու մտածել ճակտի գիրը փոխելու եղանակին վրայ (գիմացեալ մահ):

Այս եզրակացը յեղափոխութեան առաջին հանգրուանն է:

Աշխարհի բոլոր յեղափոխութիւնները պատճառի մը արդիւնքն են: Պատճառ չեն, արդիւնք են:

Յեղափոխութեան զգացումը ջնջելու ամէնէն կարճ եւ ամէնէն ապահով ճամբան ջնջելն է զայն ծնցնող պատճառները: Մորչափ գոյութիւն ունին պատճառները, գոյութիւն պիտի ունենան նաեւ յեղափոխականները:

Գո՛ւ՛ս ու երջանիկ փողովուրդները չեն

խոհ մտածեք յեղափոխութիւն ընելու մասին: Այդ մասին կը մտածեն - եւ այդ ուղղութեամբ կը գործեն - դժգոհ ու ապերջանիկ ժողովուրդները միայն:

Հետեւեցէք աշխարհի պատմութեան, յեղափոխութիւնները իրարու կը յաջորդեն այն երկիրներուն մէջ, ուր ժողովուրդը ենթակայ է բռնութեան, կեղեքումի ու հալածանքի:

Մենք ապրեցանք այդ երկիրներէն մէկուն մէջ: Ու հիմա կրնանք ըսել դարձեալ - Հայ յեղափոխութիւնը հայկական ջարդերուն պատճառը չէր, արդիւնքն էր: Կարմիր ու սպիտակ ջարդերը, ամբողջ ցեղ մը անճիտելու արհեստ քաղաքականութիւնն էր, որ ստեղծած էր Հայ յեղափոխութիւնը: Եւ ստեղծած էր աւելի ուշ, քան պէտք էր:

Փոխուած է թուրք Հերովդէաներու հայաջինջը, նենդ ու դաւադիր քաղաքականութիւնը: Ո՛չ, փոխուած չէ: Մինչեւ Ապրիլեան Եղեռնը, մեր հայրերն ու նահապարհը փրկութեան ելք մը փնտռեցին: Ելքը մէկ չէր, չորս էր.

- ա. Գաղթել:
- բ. Ապրիլ իրրել ստրուկ:
- գ. Մեռնիլ իրրել յեղափոխական:
- դ. Տանկնալ:

Մենք հետեւեցանք այս չորս ճեղքներէն մէկուն կամ միւսին, փոխն է փոխ: Գաղթեցինք իմաստին: Ապրեցանք իրրելու այս: Մեռանք յեղափոխութեան դրօշին տակ: Եւ կամ տանկեցանք:

Անցեալ տարի, Ապրիլին, Սասունի Աճառ դիւղին մէջ կրօնափոխ եղան ՈՒԹ-ՍՈՒԼՆՈՒԹ Հայեր, Վերջին միջոցն էր ասիկա չմեռնելու: Չենք ըսեր ապրելու, այլ չմեռնելու: Թուրքիոյ ներքին դաւաճանքուն մէջ դեռ կան, գոյութիւն ունին 55-60 հազար Հայեր: Այսօր Հայ են, վաղը կրնան այլեւս Հայ չըլլալ, եթէ շարունակեն ապրիլ երկրի մը մէջ, որ հայրենիք չէ մեզի համար, այլ բնակավայր է միայն:

Նոյն բանը պատահեցաւ ասիկ հարիւր տարի առաջ, երկու հարիւր տարի առաջ, երեք հարիւր տարի առաջ:

Հոգիով առողջները կուտեցան ու

ապրեցան կամ մեռան, ապառողջները փակեցին Ազգութեան ու Եկեղեցիին ահուժը եւ ընդմիջաւ կորսուեցան:

Սրուանձտեանց եպիսկոպոսը յիշատակէ այս ապառողջներուն պարագան եւ կու տայ բաւական երկար ցանկ մը «տանկեցեալ» Հայերու:

Այսպէս.

ա. «Կոչույի (Ակնայ շրջան) բնակիչներ իբր հարիւր տարի առաջ - 1780 - տանկեցեալ Հայք են, կ'ըսէին, եւ ամէն մարդ գիտէ, թէ տակաւին թաղեր ու տոհմեր կան Հայ անունով:

բ. «Կան եւ քանի մը գիւղորայք, որոնց բնակչաց համար նոյնպէս կ'աւանդեն, թէ տանկեցեալ Հայք են եւ իրենց բարբառոյն մէջ հայերէն բառեր շատ գործ կ'ածեն:

գ. «Բ. դիւղը (Արարիկի շրջան), որ քարերուն մէջէն կ'երեւի, ասոր ալ բնակիչը տանկեցեալ Հայք են եղած:

դ. «Եւ ահա Աշտուկայ դիւղ, զիբը սիրուն եւ շէնքերը վայելուչ. բնակիչը տանկեցեալ Հայք են:

ե. «Չմշկածագի կարգ մը գիւղերու համար դրուած է արդէն, թէ տանկեցած են ժամանակաւ:

Եւ այլն, եւ այլն:

Այս բոլոր «տանկեցեալ» Հայերը յեղափոխութեան դոհերը չեն, քանի որ յեղափոխութենէն շատ առաջ արգէն տանկեցած էին: Իրապէս անոնք զոհերն են ոչ-յեղափոխութեան: Եւ թիւով շատ աւելի են, քան յեղափոխական շարժումին դոհերը յիսուն տարուան ընթացքին:

Եթէ միլիոն զոհ տուինք մէկ հընդամեակի մէջ, պատճառն այն չէր, որ յեղափոխական էինք. պատճառն այն էր, որ յեղափոխական Ձէլնիք:

«Տուն չունէինք, հաց չունէինք, հաղնիք չունէինք, մերկ ու անօթի էինք, բայց հայրենիք ստեղծեցինք, - ատիթով մը կ'ըսէր ինծի Վահան Նաւասարդեան:

Վահան Նաւասարդեանի բերնով կը խօսէր Հայ Յեղափոխութիւնը:

Բ. ԹԱՇԵԱՆ

## Ա Պ Ր Ի Լ 24

**Մ**եր կեանքին ահագին սեւեռ է ան, մեր պատմութեան ահագին ցուրտը: Ահագի՛նը միշտ՝ տխուր բաներու իր ամէն ինչով:

Ահագին՝ վասգի չպատմուած եւ տեսատմելի՛: Ահագին՝ վասգի չգրուած եւ անգրելի՛: Ու դեռ չկշռուած եւ անկշռելի՛: Հայութեամբ միայն նուաճուած եւ Հայութեամբ միայն նուաճելի: Ուրիշ ո՛չ մէկ խորութեամբ, ո՛չ մէկ առեղծուածով, ո՛չ մէկ հրաշքով:

Այո, տարբեր է աշխարհի եւ իր պատմութեան բոլոր սեւերէն այս մէկը, գիշերօթէն մութ, գիշերօթէն վտանգաւոր ու գերիվեր՝ մարդկային ամէն իմացումէ:

1915, Ապրիլ 24.-

Ուղեղի եւ արեան կարելի եւ անկարելի՛ անխզուութեամբ՝ հիւսուեցաւ օր մըն ալ դաւադրութեան ու դաւաճանութիւններու այն ամենում կտաւը, ազգի մը եւ անոր դատին իբրեւ վախճանական ու մշտնջենական պատմութիւն:

Թուրքը, ցեղային ու ֆազափակ իր գործարքի *սատիզով* ու համաբարանական մտայլ խտւայներու ի խնդիր, ստեղծեց մեզի համար անպատմելի:

Այսպէս: -

Բոլոր բերաններն ու բոլոր ուղեղները անգոր են մեր բուն ըսելիքին առջեւ. բոլոր հանճարները քիչ են, կարեմալ ընդգրկելու համար անընդհըրկելի լայնֆը Հայութեան այս գերեզման-բուսականին: Տարբ, մարդկային պատմութեան բովանդակ երկայնքին, ոչ մէկ ազգ այնքան դաւադրուած եղաւ, որքան Հայը. եւ ոչ մէկ ազգ այնքան տեսարար մտն մտածեց ու ոնիր բազմապատկեց, իր հպատակներն ու անոնց սեփականութիւնը ոչընչութեան դատապարտելու համար, որքան Թուրքը:

Զո՛ւր է սակայն պատմել անպատմելին:

Ձկա՛յ ըսելիք, չկա՛յ բառ: Մեռելներ կան: Ազգի մը ծով մտեր կայ եւ այդ ծով մտէն ծով մը կեանք եւ յարութիւն գամնուզ հրաշքը Հայուն, յաներժապայծառ արիւնով:

Ձի՛ պատմութիւն:

Ոչ ոնիրը Թուրքին, եւ ոչ ալ ոնիրին յազբող վերալինելութեան կամֆը Հայուն: Մեծ սուգերը, մեծ բարկութիւնները եւ լաւ կամ գէշ բոլոր ֆակտորական բաները չեն գիտեր խօսիլ: Լուռ են, իբրեւ յղութիւն եւ իբրեւ աստուած: Հոներոսներն ու Տանդէներն անգամ ստիպուած են ազֆառանալ, այսքան մը մտեռուան ու այսքան մը կեանքի առջեւ:

Ըսուած են Պատմութեան դիմաց երկու խօսքեր, վնասկան ու վերջնական շեշտով: Թուրքիւնը մահուան խօսք էր, Հայունը՝ կեանքի եւ ազատութեան:

Անցած է յիսուն տարի:

Պայծառ էին մեր հայրերը, ու պայծառ ենք այսօր մենք. պայծառ է մեր կամքը, որ Հայկական Դատ կը կոչուի եւ անբռնարարի ու անկործնելի իրաւունք:

Հարկ է հիմա որ աշխարհ գիտնայ --

Պատմութեան մէջ, մեր քշնամիներէն եւ ոչ մէկը յաջողեցաւ մնալ անպատիժ, մարդկութեան ընդհանուր կեանքն ու անոր ընթացքը գծող անազարձ օրէնքներուն առջեւ: Զգիտցան, ու տարաբախտաբար կ'անզիտանան նաեւ այսօր՝ որ հայրենիքներ գրաւելով ու մահ ու ւտերակ դիզելով, ինքնասպանութեան կը դատապարտուին ամենամեծ եւ ամենագոր քաւաքաւանութիւններն անգամ: Անկարելի է, որ Արդարութեան ձեռքէն դուրս որեւէ սուր՝ վտանգաւոր սուր մը չըլլայ ի վերջոյ զինք կրողին համար:

Անցած է յիսուն տարի: Պատասխանած ենք մահուան եւ համապիմացման մարտաքառերին եւ յազօրած: Ու կ'ըսենք հիմա քուր ազգերու բալմ'ր գաւակներուն --

Բոլոր մտաւորականները, քուր դիւանագէտներն ու քուր զինուորականները հանուր աշխարհի՛ պէտք է գիտնան հիմա, գիտնան այլեւս, որ մեծ ըլլալը չի բաւեր բնաւ, որ սուկալի ըլլալը հերիք չէ երբեք, աշխարհ կործանելու վերջնագիրներն իսկ ոչինչ են ի վերջոյ՝ եթէ տեղ մը արդարութիւն պիտի ըլլայ եւ տեղ մը ոչ: Եթէ կարգ մը իրաւունքներու առջեւ լեզի: Եթէ արտօնութիւններ տալու եւ ջնջելու հին եւ աշխարհին կեանքը վտանգելու անը պիտի շարունակուի դարձեալ, քաղաքական հին տգիտութեամբ ու դիւանագիտական նախկին ու նախանախկին անբարոյութիւններով:

Այսպէս --

Յեղասպանները կը պատժուին: Արդա՞ր է սակայն որ մնայ անպատիժ՝ Հայո՛ւն ցեղասպանը. ցեղ չէի՞նք մենք. ո՞ր ցեղասպանին դէմ էիք կռուեցանք, ո՞ր արդարութեան համար տուինք նուազ գոհ. ե՞րբ մեր նախապնդանք, -- հայրենական ու համամարդկային --, չեղան հարիւր հազարուոր: Ո՞վ համրեց յսնուն եզօր դաշնակիցներու եւ յսնուն ազգային պատուի ու գերագո՛յն քաղաքակրթութեան՝ իր չորս միլիոն փոքրիկ ընդհանուր քիւի մէջէն մէկ ու կէս միլիոն մեռել:

Ձիներու ու գո՞հ շտուիմք Արդարութեան անուանով պատերազմ մղող Արեւմտաւորին: Տուինք, չտայի՞նք երանի: Զտուի՞նք զինուոր ու գոհ, քանի՞ մը հարիւր հազար՝ Ռուսին ու տկարները ծուղակող իր համայնավարութեան: Տուինք, չտայի՞նք երանի: Զգջալը այսօրանէն ետք, ամէնէ՛ն առաջին եւ ամէնէ՛ն նուիրակա՛ն բանն է Հայուն, ուժի նոր ապրիւր մը քերելու:

Մարդկութիւնը եւ իր մեծերը պէտք է յիշեն, որ արդարութեան հին պարտք մը ունին մեզի հանդէպ: Ազատութեան եւ ազգային վեհապետական իրաւունքներու այս լուսնալէն ժամանակաշրջանին, երբ ցեղասպանները հատուցում կ'ընեն իրենց գոհերուն՝ Հայութեան ցեղասպանը կը պահէ իր գոհերուն հողը բռնագրաւուած:

Կը պահանջե՞նք բռնագրաւուած այդ հողը:

Մեր հայրենիքը մենք աժան չե՞նք գնած. որեւէ հայրենիքէ աւելի՛ սուղ արժած է ան մեզի, եւ դարերէ ի վեր դարձած է իմանալի գեղեցկութիւններուն ամէնէ՛ն քանկագիրը: Գիտե՞նք. աւելի բարձր գին քան Հայուն վճարածը իր կտոր մը հողին՝ չէ վճարած ուրիշ ո՛չ մէկ ազգ, մարդկային բովանդակ պատմութեան մէջ: Պէտք է հետեւաբար արար աշխարհ գիտնայ այսօր, եթէ այդ Հողը չի՛ կրնար ուրիշինը ըլլալ. Հայունն էր եւ պէտք է վերադարձուի Հայուն:

ԾԻ. ԳՅԵԱՅԵԱՆ



**ԿՏԱԿՆ ԷՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ**

Ա. ՇԻՐԱԿԵԱՆ

ՊԷՏՐՈՒԹ - 1965

Տեսքս որ այսպէս, քաղաէ քաղաէ  
եւ հրապարակէ հրապարակ  
եւ հորհրդմէ հորհրդմ,  
հնր յամկարծակամ հրեւումը, ձեր  
քաղկահարւածը եւ ձեր  
յարուցած խառնմն անմեկիմ,  
Բոյոր դարւամանները գիտկեացուց,  
բոյոր վասակները հոգեց  
եւ մարդակեր ամրոթներ քորացուց...  
ԱՆՈՐԿԻՆԻՆԵՐ  
ՍԻԱՄԿՆԹՕ

խանդավառութիւնը կը կրկնուի այսօր  
անոր պատմութեան առջեւ: Զարգեբէն  
վերայրած մարդը, շարդերուն Հեռե-  
ւանը երէկուան որբը, առնց թոռներն  
ու որդիները, նոյն յուզումով, անհամ-  
բերութեամբ եւ սանձարեկ ոգեւորու-  
թեամբ Հեռեւեցան Շիրակեանի էջերուն,  
Հեւ ի Հեւ, քայլ առ քայլ, թրջութեան  
թուրք մայրաքաղաքէն մինչեւ Թուրքե-  
րուն թրջօրէն ապաստան առւած եւրո-  
պական մայրաքաղաքները:

Մռայլ անդրադարձումներու այս օ-  
րերուն, արիւնտութեանի մը սա յիս-  
նամեակին՝ անպամելի բերկրանքով  
մըն է, որ կը բանանք նահատակներուն  
կտակին կատարումը պատմող Արշաւիր  
Շիրակեանի գիրքը: Զուհերուն յատկաց-  
ուած էջերուն մէջ, պզտիկ Հպարտու-  
թիւն մը չէ իրապէս կարենալ միտա-  
մանակ խօսիլ դաշխները Հարուածող  
քաջայայթ քաղուկին մասին:

Արշաւիր Շիրակեան ճիշդ ժամուն  
տուաւ իր շանթաւարող Հարուածը, ու  
զարմանալիօրէն ճիշդ ժամուն կը պատ-  
մէ մեզի Հարուածին Հրաշալի պատմու-  
թիւնը:

Իրէկ իր Հարուածը գիրք մը կ'ար-  
տէր, այսօր իր գիրքը Հարուածի մը տա-  
րողութիւնը ունի:

Մէկ երկու ամիսներէ առջին մեր  
տեսածն ու յսածը ընդհանրացնելով՝ պի-  
տի ըսենք. — մարդ չմնաց որ չկարգայ  
«Նահատակներուն կտակը», եւ թերեւս  
չմնաց օրինակ մը, որ կարդացուած չըլ-  
լայ: Օրին գործին Հանդէպ ցոյց արուած

«Կտակն էր նահատակներուն» անու-  
նով գործին դասած ընդունելութեան  
պատմութիւնը ինքնին գիրք մը պիտի  
լեցնէր ապահովաբար, այնքան շատ խօ-  
սեցնել տուաւ անիկա, յուզեց, աշխո-  
ծեց, տարածուեցաւ այնքան շատ: Անի-  
կա երկար ատեն պիտի շարունակէ Հա-  
ւանաբար իր այս ընթացքը, ու Հեռուոր  
ժամանակներու մէջ եւս պիտի Համա-  
խըմբէ ու Հազորդէ արդարութեան ծա-  
րաւ Հողինները: Պիտի գտնուի այն ատեն  
ալ մէկը, որ սա երիտասարդին պէս ու  
բարձրամայն պիտի կարդայ «Կտակնին»  
այս կամ այն էջը, երկրորդ մը երէկ-  
ուան իր կարդացածը մտիկ պիտի ընէ  
նոյն խանդավառութեամբ, եւ ուրիշներ,  
փոխ առ փոխ ու Հերոսին մէկ շարժու-  
մին ի լուր, մէջընդմէջ պիտի պոռան՝  
— ...Ուտե՛մ...:

Սրտոտ, ինչուցի, Հնարամիտ, բմ-  
բրունելու եւ կիրարկելու գործողութիւն-  
ներուն մէջ արապ, կարգապահ ու դադա-  
նապահ: Բոյոր այս յատկութիւնները  
միաժամանակ յայտնաբերող երիտասար-

զը եղաւ Արշաւիր Շիրակեան, եղաւ աւարեկական գործին ամբողջական մարշալը, որ ճիշդ ժամանակին երեւցաւ հայ կեանքին մէջ, գործեց ճիշդ ժամանակին ու ժամանակը արհամարհող արութեան գործ մը եւս աւելցուց Հայոց պատմութեան էջերուն, նահատակներուն կտակին կատարումով:

Շիրակեանի զոտակներն մէջ իրողործուած վսեմ գործին հետ՝ մենք պիտի ուզէինք ընդգծել նոյնպէս աւարեկներին ներքին մաքրութիւնը, որ քառասուն ու այսքան տարի ետք՝ կը մնայ անապարտ ու զերծ, մահկանացու մարդուն յատուկ սկարութիւններէն: Կ'ուզէինք ըսել, որ իր արդար բազուկը շարժած ատեն կուրծքին տակ արոփող սիրտը նոյն արդարութեամբ կը արոփէ եւ այսօր, երբ բազուկին տեղ գրիչ կը շարժէ Շիրակեան, Պակուցանող է մանաւանդ, երբ կը խօսի իր ընկերներուն, գործակիցներուն ու զպաշտօնակիցներուն» մասին:

Աւարեկական պատմական այդ գործին ընդհանուր պատկերը ուրուագծային ձեւով մը արուած է «Նահատակներու կեսնային» մէջ, ցանցին մաս կազմող ու քանկագին ծառայութիւններ մատուցանողները հոն են, ոմանք բոլորանուէր եռանդով Հրաչ, Շահան, ոմանք մարդկային սկարութիւններով Գ. Մերձնոֆ, Ա. ու իր ընկերները, անմիջական գործակիցը նախ, Արամ Երկանեանը, պաշարին, անաղձուկ, վճռական ու մեծագործ Արամը, ու Քէչիքեանը, որ իր գրչին՝ տակ «հաշիպար Առզումնն է» միշտ, յետոյ միւսը՝ «Մեր Միաբեր», մեղի թիչ ծանօթ շորթորդ կարիճը տակաւին — «Ընկերս պիթիսցի Արշակը կամ Եգիտ Արշակը, ինչպէս կը կամչէինք, վիքերան առարկիլ մըն էր, աճ էր որ դժոխք զրկած էր հնչակեան «խափիէ» Հմայեակ Արամեանը, ընկերակցած էր ինծի վախէ ինտանի դէպքին ու կատարած էր մասն առկար վլատիմիքին առարկիլութիւնը: Մթանչիլի է ու առինչող մանաւանդ Արշակին ոչքը, երբ Պերլինի մէջ անյարմար կը նկատուի իր ներկայութիւնը ու ճաճբու կը գրուի:



— Դուք դուք, դուք բոլորը փաշաներ կ'ուտէք եւ մըգի էլ խլեգներ կը բռնուք...

Այսպէս կը մտածէին ու կ'ապրին այսպէս ցեղին վրէժով յորդած վրէժաբորբ այս կտրիճները, ամբողջ հայ երիտասարդութիւնը այդ օրերուն: Պէհա-էտտին Շաքիրի եւ ձեմալ Աղմիի ահարեկութեան յետոյ, ուրիշ մը, այցելութեան մը համար Միւնիխէն Պերլին եկած Պէրպէրեան առունով երիտասարդ մը՝ իր կարգին պերճ վկայութիւն մը կը բերէ օրուան երիտասարդութեան հողեկան կորովէն: Ուրիշներու հետ՝ իբրեւ կասկածելի կը բռնուի նաեւ Պէրպէրեան ու սօտիկանութիւնը այնքան կը նեղէ զինք, որ «Օր մը, կտրիմ տղամ, այ կամքերուքիւնը հատած պառացած էր սօտիկանութեան երեսին — Ջարմաղը ես չեմ... քայց պատիւ կ'ըմէք ինծի վերագրելով այդ դէպքը...

Այսպէս էին նաեւ սրբազան գործին հողեպէս մասնակցողները, բայց անպատմելի են միւսներուն արի ու արու արարքները: Դիակնացնող ու հողող քաղերուն քաղազորութիւնները:

Ապրողներուն ապրելու յոյսը իրենց սկնարկներուն մէջ ու մեռելներուն ծո-

վածաւալ արեան բովանդակ եռքը իրենց  
երակներուն, ամբողջ անդ դարձած,  
ամբողջ քաջութիւն դարձած ու կրակ  
դարձած, օ՛ր ցեղին այս ընտիրները, ու-  
րոնք իրենց երևումով չձգեցին, որ յու-  
սալքումին ու նուաստութեան կեր դառ-  
նանք ու իրենց անվրէպ զնդակներուն ա-  
ւերիչ սոյլով վերահաստատեցին ազգին  
կեցուցիչ արժանապատուութիւնը:

Այն օրերուն, երբ ցեղին կէսը ծոր-  
թոտուած էր դժոխային պայմաններու  
տակ ու ցեղասպանները անպատիժ ման  
կու դային երոպական ոստաններուն մէջ  
ու ճովանաւոր նախածքներու տակ, այն  
օրերուն իրապէս պէտք ունէինք աստ-  
ուածային այս տղոց վճռական դատաս-  
տանին ու արարքներուն:

Ասո՛նց՝ եւ ուրիշ ո՛չ մէկ բանի:  
Ոչ բանաստեղծութիւնը, ոչ վէպը,  
ոչ երգը, ոչ աղօթքը եւ ոչ ալ այլ գո-  
րութիւն մը ի վիճակի էր բուժել մնա-  
ցորդացին վիրաւոր հոգին, որ պէտք ու-  
նէր

Ուրիշ բառի՝ փամփուշտին.  
Ուրիշ թուղթի՝ դահիճներու ճակա-  
տին.

Ուրիշ երաժշտութեան՝ շանթաւա-  
րող որոտումին:

Բայտարոջ այդ օրերուն բախտարեք  
այդ ձայնը լսուեցաւ յանկարծ, ձայնը  
լսուեցաւ քանի մը կէտէ ու անոր օրհ-  
նութիւնը տարածուեցաւ ամէն անկիւն  
ու կեանքի կոշեց աշխարհէն ու իր ճա-  
կատազրէն յուսահատ ազգը:

Պիտի կրնայի՞նք արդեօք մեր ճա-  
կատները բարձր պահել այսպէս, երէկ  
եւ այսօր, պիտի մնայի՞նք արդեօք այս-  
պէս կատաղի Հայեր, երէկ եւ այսօր, ե-  
թէ երբեք այս անձնամոռ տղոց խորտա-  
կող Հարուածը չըլլար, ու չըլլար այդ

Հարուածը լարող, զօրացնող, հօկայա-  
ցընող թիկունքի հսկայ ու թեւաւոր ու-  
ժը:

Բռնուիլ, բանտարկուիլ, զնդակա-  
Հարուիլ, փախչիլ ու իյնալ փախուստի  
ընթացքին, բայց ո՞վ կը մտածէր այդ  
բաներուն մասին ու կեանքի մասին, երբ  
հոգիի մէջ կը կրէր նահատակներուն կը-  
տակը եւ բռնուած էր դայն կատարելու  
անապարանքէն, պիտի ըսէինք զինովու-  
թենէն, վերացումէն: Գործին այս վսե-  
մական յառաջաբանը, ցեղին համար ի-  
րենց կեանքը արհամարհելու այս իրո-  
ղութիւնը նոյնքան սիրելի կ'ընծայէ այդ  
տղաքը, որքան իրենց անվրէպ զնդակ-  
ներէն շահած յաղթական ծիրանին:

Երկուքը բռնուեցան ու դատուեցան:  
Լաւ որ բռնուեցան ու դատուեցան: Աչ-  
խարհը վերջին առիթ մը ունեցաւ ճանչ-  
նալու մե՛ր արդարութիւնը եւ քիչ մը  
մաքրելու ի՛ր խիղճը:

Երկուքը չբռնուեցան: Ու լաւ որ  
չբռնուեցան: Աշխարհը գիտցաւ, որ մե-  
ռած չենք սակաւին ու ահաւո՛ր ենք տա-  
կաւին:

Քանիմենի Արշախր Երեանի  
պարազան բաւ էր, որ մարդիկ ապրէին  
զարմացումի ու զարհուրանքի պահեր:  
Թուրք սոսիկանութիւնը առաւել խտա-  
լացի ոստիկանութիւնը, գերման ոստի-  
կանութիւնը առաւել թուրք սոստիկանու-  
թիւնը միասին, ու իրենց մայրաքաղաք-  
ներուն մէջ խաղի բերած տղան է ան ու  
ամբողջ աշխարհը ապշուեցան ժառանգ  
բազմահար ոգին: Տրուած մահացու  
Հարուածներուն չափ նշանակալից չէ՞  
արդեօք սոստիկաններու ցանցին մէջ չի-  
նալու փաստով ստեղծուած աներեւոյթ  
ուժին խորհուրդը:

Պ. ՄԱՊԵԱՆ

### ... ՈՒ ՀԻՄԱ

Եղծնի ու բողոքը նահատակներու յիշատակութեամբ սկսած Ազրբէյի Երեսմանկի մեր այս բացառիկ ու զայն կը փակենք հիմա, ապրտաճրութեան եւ անարեկիչներու քանի մը լուսնի տնտեսներու արձանագրութեամբ եւ նշկարներով:

Ամփոփան կ'ըլլանք թերեւ տնտեսփոփելին՝ երբ ըսնք, որ 1915-ի ահաւոր Ազրբէյը նահատակներով սկսած ու վերջացուցինք անարեկիչներով:

Բայց ամենազէջ մեր օրերուն իսկ, լծեանք շարունակ: Նաեւ մեղացիներ:

Ֆողաքանիս խարդաւանանքի եւ Հայկական միամտութեան այդ եզերական օրերուն, գտնուեցան բարեբախտաբար չընտնանք՝ որոնք նախընտրեցին մեղացիներով մեռելը:

Այսպէս, ետեւ ետեւի, ապստամբութեան զբոյ պարզեցին եւ ապստամբան ու պատուի երկնց աստուածամարտը մղեցին թուրքին դէմ՝

Մասու՛նը.— Կարելի՞ էր թշնամարտը Մասու՛յ ձեռքով ինքնզական աշխարհը ոտք դնել. կարելի՞ էր մտանայ յեղափոխական այդ ամենազօր Ողիմպոսին եւ մնալ անպատիտ:

Վասպուրականը.— Որտաց ապստամբութեան զինակը, չէր կրնար շորտալ Արծրունիներու փառքով ու հպարտութեամբ ապրող այդ շքեղ ոստանին մէջ:

Շապին Գարահիսարը յետոյ.— Հայ յեղափոխութեան համար Անգրանիկ մը նամբայ հանած այս վայրը փնտցնելով միայն կը փնտնար, փրճացնելով...:

Մուսա-Տաղը ապա.— Այն հեռո՛ւ գիշազնաժայռը, որուն վրայ ափ մը Հայեր մղեցին ըմբոստական մարտնչութեան ամենէն օրհասականն ու զարհուրելին:

Ռեֆան վերջապէս, Ծօթնեղբայրեաններու հերոսական եւ ջնրճ Ռեֆան.— Հայկական ուժի հին եւ արքայական ձայնը մղեցին զինք ընդ-վրդումներուն նուիրակածորէն կատաղի եւ կատաղորէն նուիրական մէկ տեսակին:

Չինկա՛նք միայն, չինկա՛նք շարունակ, նաեւ մղեցինք: Ապրելու ա՛յս ոճն էր զեղեցիկը եւ մաս մը Հայեր վերատորկեցան զայն մեր թուականներու ամենէն տիրազօյն թուականին: Սորված են զայն այսօր բոլոր Հայերը: Կէտք է սորված ըլլան, Ապստամբան եւ Ըմբոստութեան այդ յատկանական ոճը մտցող սեւէ մարդ մարդ չէ՛, սեւէ աղջ աղջ չէ՛:



Զարհուրածքի օրերուն չեղազոյն մէկ բերքը եթէ ապստամբութիւններն էին, միւսը՝ պատական իսկ անարեկիչութիւնները եղան անկասկած, որովհետեւ՝

— Վա՛յ անոր որ այժմամիս Երան կը բռնէ...: Անարեկիչները...:

Կարծիր քոյերու մէջ կիզուող աստուածային այդ սղաքը, որոնց աչքը քուն չմտաւ բնաւ, որոնք տարիներով թարթիչ թարթիչ վրայ լինեցան զան, մինչեւ որ լուծեցին օր մըն ալ իրենց միլիոնաւոր ինկածներուն վրէժը:

Սողոմոն Թիւրքան էր վրէժիմարութեան մէկ աստուածորդիին անունը,

Արշաւիր Շիրակեան կը կոչուէր երկրորդ աստուածորդին,

Թորլաբեան Միսաճն էր երրորդ գահակը Հայկական Նեմեսիսին,

Երկանեան Արամ շորթ՛րը աստուածորդին էր,

Մաղիկեան Ստեփան հինգերորդ տղան՝ մեր արիւնի կարմիր աստղուն:

Պէ՛տք էր էրանին այս տղոց յանձնուած սեւ ցանկին բոլոր անունները մէկիկ մէկիկ, մէկը Պերլինի մէջ, մէկը Հոռո՛ւ, ուրիշ մը Պոլսոյ, շորթորդ մը Թիֆլիսի, եւ այսպէս բոլորը, բոլորը...:

Ռեֆիր եւ պատիտ... Ահաւորապէս զործուած էր մէկը,

Ձէր կրնար ահազօրէն չգործադրուիլ միւսը:



Վ Ե Ր Զ Ա Կ Է Տ



**Մենք՝ Վրէժիենցիութեան Տղամբ**



Վագրան Թէխիբեան



Արամ Երկանեան



Միսաք Թորանեան



Արշակիր Շիրակեան

# 1915 - 1965

Ի ՅԻՇԱՏԱԿ 1915-Ի «ՄԵՄ ԵՂԵՈՒՆԻ» ՅԻՄՆԱՄԵԱՑ ՏԱՐԵԼԻՑԻՆ

**ԱՊՐԻԼԵԱՆ ՍԳԱՏՕՆ**

• • •

**Հ Ա Մ Օ Ր Է Ն Հ Ա Յ Ո Ց**

ԵՒ Ի ՄԱՍՆԱԿՈՐԻ

**ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ**

**Հ Ա Ց Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ա Ց Հ Ո Ի Ի Ո Ց Ն**

• • •

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԸ ԿԸ ԿԱԶՄԵՆ**

---

ՏԱՐՕՆ	(ՄՈՒՇ, ՅԱՇՏԻՇԱՏ, ՉԸԽՈՒՐ)
ՍԱՍՈՒՆ	(ԽՈՑԹ, ԴԱԼԻՈՐԻԿ, ԲՈՒՍԱՆՔ)
ԱՍՊԱԿՈՒՆԻՔ	(ԳԻՆՋ, ՓԱՍՈՒՐ, ԽՈՒԼԲ, ՎԱՐԴՈՑ, ԿՈՅՆՈՒԿ)
ՀԱՐՔ	(ԽԱՄՈՒՐ, ԽՆՈՒՍ)
ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ	(ԽԱՄՈՒՐ, ԼԻՋ, ԲՈՒԼԱՆՈՒՊ)
ԱՊԱՀՈՒՆԻՔ	(ԲՈՒԼԱՆՈՒՊ, ՄԱԼԱԶԿԵՐՏ)
ԲԶՆՈՒՆԻՔ	(ԱՆԼԱԹ ԿՈՒ ԽԼԱԹ)

Ի ՅԻՇԱՏԱԿ 1915-Ի «ՄԵՄ ԵՂԵՈՒՆԻ» ՅԻՄՆԱՄԵԱՑ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ 1915-Ի «ՄԵՄ ԵՂԵՈՒՆԻ» ՅԻՄՆԱՄԵԱՑ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ 1915-Ի «ՄԵՄ ԵՂԵՈՒՆԻ» ՅԻՄՆԱՄԵԱՑ ՏԱՐԵԼԻՑԻՆ

ԵԳԻՇԷ Յ. ՄԵԼԻՔՅԱՆ ԵՒ ԸՆՏԱՆՈՒՔ  
Ֆիլանկիճա, Ա. Մ. Ն.

## ՍՈՂՈՄՈՆ ԹԷՂԻՐԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՖՕՆՏԻՆ

Եղեռնի Յիսմամեակի այս օրերուն «Բազմն»-ի միջոցով Թա-  
լեաքի ահաբեկիչ Սողոմոն Թեղիբեանի Յաշարձանի ֆոնտին կը  
նուիրեն .-

	Լ. ՈՍԿԻ
Տօքթ. Վարդգէս Կիւրեղեան	100
Մանուկ Տէտէյեան	50
Վարուժան Աղասարգիսեան	50
Յարութիւն Մարկարոսեան	50
Տօքթ. Յարութիւն Գազանեան	50
Անդր Նստիւն «Բազմն»-ի բարեկամ խումբ մը	100
Տիկին Յասմիկ Արսլանեան	25
Հայկ Պալեան	25
Սերոբ Երէցեան	25
Մարտիրոս Սնայեան	25
Խանամիրեան Գուլէնի երկրորդականի Ա. կարգ	25
Կ. Սաաունի	20
Եղ. Պօյանեան	20
Պ. Սնայեան	20
Ժ. Աբբարեան	20
Վ. Օշական	20
Տիգրան Ոսկունի	20
Աշոտ Նուրեան	20
Օր. Պերնուսի Փափազեան	10
Տօքթ. Մելգոն Էպիլդաբեան	10


### ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ ԲԱԳԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Պրն. Հրայր Պօյանեան (Պէյրուք), *Տէր Աբուէն Յակոբեանի (Յիւստիֆիւս)*
- Տիկ. Մաքրուհի Պալիկեան (Մ. Նահանգներ), *Տիկ. Վարդուհի Տօնասեանեանի (Մ. Նահանգներ)*
- Պրն. Վարդգէս Թաշազեան (Պաշտատ), *Պրն. Սեթօ Պօյանեանի (Մ. Նահանգներ)* :
- Պր. Տիգրան Էկոյեան (Պէյրուք), *Վահան Շիկոյեանի (Պոսթըն)*

ՍՈՅՆ ԲԱՏԱՌԻՒԻՆ ԹԻՒԸ 3 Լ. ՈՍԿԻ (ՀԱՏԱՎԱՃԱՌ) :

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒՐ  
ՀԱՏԻՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ՝

**DIKRAN KOUYOUMDJIAN**

B. P. 587, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@